Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԷՄՄԱ

ՎԷՊ

Ժամանակակից բարքերից

ԹԻՖԼԻՍ
Տպարան Կ. Մարտիրոսեանցի

ТИФЛИСЪ
Типографія К. Мартиросіанца
Орбеліановская ул., № 1—2
1901

891·99
Փ-31

10 NOV 2011

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Է Մ Մ Ա

Վ Է Պ

Ժամանակակից բարքերից

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Կ. Մարտիրոսեանցի

ТИФЛИСЪ
Типографія К. Мартиросіанца
Орбеліановская ул., № 1–2

1901

28.08.2012

59.977

Дозволено цензурою.
С.-Петербургъ, 28 мая 1901 г.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

9651-73

ԷՄՄԱ

ՄԱՍՆ I

Ա

Զուիցերական Լօզան քաղաքի ոչ մի տան մէջ գուցէ այնքան ձանձրալի ճաշ տեղի չէր ունեցել այդ օր, որքան տիկին Հանրիէթի պանսիոնում:

Ջղային գրգռւած դրութեան մէջ էր Էմման: Ամպոտ եղանակն ու սեղանակիցները, մանաւանդ դիմացը նստած մեծ ծնօտով բուլղար ուսանողի լայն ժպիտները արկացնում էին նրան: Տանտիկինն էլ սկսել էր պաշտօնաան հարցեր տալ.

—Լաւ զբօսնեցի՞ք, օրիորդ:

Հարկ էր պատասխանել:

—Անշուշտ օրիորդը չմշկելու (patiner) էր գնացել, վրայ էր տալիս սեղանի վարի կողմը նստող կուզ գերմանացին:

Եւ ահա սկսւում էր գռեհիկ խօսակցութիւն: Այս անգամ րիորդ Էլլիզն էս մէջ էր մտնում բարոյախօսի դէմքով:

—Հէրր Հանն, ձայնեց խրատիչը—չմշկում են կէսօրից տոյ. այդ է վայելչութիւնը. երևի ձեր կեանքում երբէք չէք մշկել:

—Ի՞նչպէս չէ, յարգելի օրիորդ. պատասխանեց Հանն կըծու ձայնով—շա՜տ, շատ տարիներ առաջ, երբ ես և դուք դեռ երիտասարդներ էինք…

Օրիորդ Էլիզը ոչ թէ գրգռւում էր Հաննի շեշտից կամ կծու խօսքերից, այլ որ ամենքը, կարծես խօսքը մէկ արած, իրան «յարգելի օրիորդ» էին կոչում։

Նրանից պրծած, Էմմայի կողքին նստող կաղապարից նոր դուրս հանած ձուլածոյի նման սերբիացին էր սկսում. առանց շարժւելու՝ աչքերը միայն դարձնում և հարցնում.

—Օրիորդ Էմման երևի ս. Ֆրանսուայի տաճարն էր գնացել…

—Ախ ոչ… գոչեց Էմման գրգռւած ձայնով—Արլօզի միւզէն էի, պատկերներ էի դիտում։

Բայց հազիւ թէ ասել էր, որ աջ կողքում նստած անգլիացի ձիամոլն ու պատկերամոլը գոչեց.

—Ա՜, պատկերնե՜ր… Արլօզի միւզէ՜ն։ Լաւ նկարներ կան. Դիդէյ, Կալամ, Անկերի…

Էմման անհամբերութիւնից պատառաքաղով անձեռոցիկն սկսեց ծակոտել։ Ի՞նչ անտանելի էին այդ բոլորը։ Տիկին Հանրիէթի պանսիօնի պէս, իրաւ որ ձանձրալի տեղ չկար ամբողջ Լօզանում։ Ո՛չ մի բնական բան, ամեն ինչ պաշտօնական էր ու կեղծ—սկսած իւղէց, որ մարգարինի համ էր տալիս—մինչև իւրաքանչիւր սեղանակցի շարժւածքն ու խօսքերը։ Եւ ոչ ոք չէր զւարճանում. բոլորը, կարծես դասարանի մէջ նստած աշակերտների էին նմանում։ Աւելացրէք դրանց մի ինչ որ օրիորդ Սիւզան Լս, որ միշտ կպած էր լինում տանտիկնոջ փէշերին, գլուխը կախ, աննպատակ և յարատև ժպիտը դէմքին։ Միշտ կարմրում էր այդ աղջիկը կարմրում էր, եթէ մէկի թաշկինակն էր վար ընկնում, եթէ մէկը մի «սխալ» էր գործում «վայելչութեան» դէմ և կամ նոյն իսկ հաճոյախօսութիւն անում ուրիշ օրիորդի։

Էմմայի ջղերը, վերջերս մանաւանդ, կատարեալ դիւրագրգիռ էին դարձել այդ բոլորից։ Հինգերորդ ամիսն էր որ Լօզան էր, այդ պանսիօնում և դեռ ո՛չ մի հետաքրքիր, իր

ուզածի պէս նորանշան, ինքնուրոյն անձի հետ չէր ծանօթացել. ամեն օր նոյն պաշտօնական—անտանելի, ձևած ու չափած շարժումներով և խօսակցութեամբ անձերը, նոյն «վայելչութեան» համար՝ մեքենայի պէս նստող-կանգնող տիպերը։ Հանն էր միայն, կուզը, որ քիչ ինքնուրոյնութիւն, ինքնատիպութիւն էր արտայայտում և պանսիօնի մէջ կեանք սըփռում։ Պանսիօնի «չարաճճին» էր. գոնէ գիտէր համեմատաբար, իրեն բոլորից ազատ պահել, երբեմն խաղեր էր հնարում, երբեմն էլ, սովորական, բուսական-կեանքից դուրս ելնող խօսակցութիւններ գիտէր անել։

—Հէրր Հա՛նն. դարձաւ նա կուզին—ճաշից յետոյ մի խաղ մեզ համար, չէ՞… մի նոր, բոլորովին զւարճալի խաղ։

—Պատրաստ եմ ծառայելու, սիրուն օրիորդ…

Էմման զզւել էր արդէն այդ պաշտօնական հաճոյախօսութիւնից, բայց զւարճութիւն զգաց, երբ Էլիզան, տանտիկինն ու ձողաձև սերբիացին, հաճոյախօսութիւնը «շատ համարձակ» համարելով, «օ»-ի նման բերան կազմեցին և օրիորդ Սիւզանը գլուխը քիչ թաղցնելով տանտիկնոջ թևի մօտ, գաղտնապէս ամաչեց։

Երբ քաղցրաւենիք բաժանեց, յետոյ սուրճը եկաւ, Էմման բարձրացաւ սեղանից և սրահն անցաւ։ Նրան հետևեցին բոլորը. օրիորդ Սիւզանն ու Էլիզը մնացին տանտիկնոջ կողքին նստած։

Սրահ մտնելով, Էմման նախ մօտ գնաց լուսամուտին և ծածկւած ապակեայ փեղկից դուրս նայեց։ Երիտասարդները կապկօրէն բռնեցին միւս փեղկերը։ Հաննը կանգնեց Էմմայի կողքին։

—Զզւելի եղանակ է, չէ՞.

—Բայց լաւ տեսարան է։

Ու լռութեամբ նայել շարունակեցին։

Դէպի Ուշի նաւահանգիստն իջնող զառիվայր լայն փողոցի վրայ էր պանսիօնը. իր լուսամուտներով նայում էր Լեման լճին։ Չընայելով զառիվայր դիրքին, նա իշխում էր մի ամբողջ խոր տարածութեան վրայ, որ սկսւում էր լճափից և

հանգում Սավոյական լեռներին։ Մեծ քանակութեամբ ձիւն էր եկել. լեռների տեսքը սիրուն էր։ Հայելու պէս անապակ լիճը ջրի նուրբ փրփուրներից սպիտակ երիզ էր կապել կողքերին. դէմ առ դէմ Սավոյական ապառաժոտ լեռները սպիտակափառ-դաժան ծերունիների նման կնճռոտ, ցցել էին իրանց կատարները. դիմացի ափի վրայից անցնող երկաթուղու գնացքը ըսպիտակ ու թանձր ծուխի մի շերտ էր ժայթքում օդն ի վեր և միմեանց վրայ թաւալող երկար ամպի ձև տալիս։

Անշարժութիւն էր ջրերում. հանդարտ էր նաև քաղաքը։ Կիւրակէ էր, բայց կծու ցուրտը և ճաշի ժամը ամայացրել էին փողոցները։

—Քիչ նւագեցէք մեզ համար, օրիորդ, խզեց ընդհանուր լռութիւնը Հաննը։

Էմման ինքն էլ մտածել էր այդ. թողեց լուսամուտն ու նստաւ դաշնամուրի առաջ։ Պանսիոնում գիտէին արդէն որ Էմման շատ լաւ է նւագում։ Տիկինները մի առ մի աթոռի վրայ, սեղանատան դռան առաջ նստեցին, երիտասարդները տեղ բռնեցին բազկաթոռների վրայ, իսկ Հաննը կծկւեց վառւող վառարանի կողքին, լայն թիկնաթոռի մէջ։

Մի րոպէ լուռ՝ Էմման մատները լեզւակների վրայ, կարծես երազում էր, յետոյ, շօշափեց սև լեզւակները, մելամաղձոտ թրթռումների մի հեղեղ դուրս հանեց դաշնամուրի սրտից, և սկսեց նւագել։

Դուրս ծորող ձայների մի հանդարտ հոսանք էր այդ, որ գալարուն՝ տարածւում էր սրահի մէջ, երբեմն խուլ ու շշուկի մեղմութեամբ, երբեմն աճելով, որպէս հեռւից մօտեցող որոտման ձայն։ Եւ ահա որոտումը աճելով ոստոստում էր, կռանում, բարձրանում, հազարաւոր դայլայլներ մեղմ և ուժգին, լճացած ջրի մէջ ճղփացող անձրևային կաթիլների, ժայռը ծեծող ու նրա կրծքի դէմ պայթող կոհակների պէս՝ թաւալում էին, նորից մեղմանում, հանդարտւում, հեռանում ու կաքաւելով, թռչկոտելով՝ հալւում էին, անհետանում...

Ամենքը, շունչներին պահած՝ լսում էին. և երբ Էմման ետ քաշեց ձեռքերը, մի կոյտ ներդաշնակաւոր խազեր երկա՛ր

դեռ ծածանւեցին սենեակի մէջ և օրօրւելով մտան-թաղնւեցին կարծես՝ մեծ դաշնամուրի սև պատեանի մէջ։

Որքա՜ն գեղեցիկ էր ինքը—Էմման այդ րոպէին իր երազող դէմքով։ Գեղեցիկ՝ որպէս վերջալոյսի մռայլ լոյսի միջից ելնող անտառային խոհուն դիցուհի։ Հագել էր սև, պարզ շըրջազգեստ, գորշ մազերը ցրած էին ուսագլխին և երազող որոնող աչքերը վճիտ ու յստակ, նման էին անդնդի խորքերից դիտւող երկնակամարի մի անարատ կապոյտ տարածութեան։

Երբ ելաւ տեղից, գունատ էր. շրթունքները արիւնաքամ եղած՝ դողում էին և աչքերը անթարթ՝ դեռ երազում էին...

Բ

Տանտիկինն էր որ խզեց տիրող լռութիւնը։ Նա, որ նըւագածութեան վերջում ոտքի էր ելել, այժմ սրահ մտաւ երկու երիտասարդների հետ, որոնք նւագելու ժամանակ ներս էին եկել, բայց չըխանգարելու համար մնացել էին սեղանատան և սպասում։

Տիկին Հանրիէթը ներկայացրեց նրանց՝ բոլորին։ Նրանցից մէկը սակայն ծանօթ էր ամենքին։ Հաստլիկ, վարդագոյն թըշերով՝ կենսուրախ մարդ էր Ճարլը, որ ժպիտը դէմքին, սկսած Էմմայից, սեղմեց բոլորի ձեռքը, յետոյ մի կողմ քաշւեց և ներկայացրեց իր հետ եկողին.

—Խնդրեմ ծանօթանալ. պ. Սուրէն։

Բոլոր երիտասարդները ոտքի ելան և գլուխ տւին. Սուրէնը բոլորին բարևեց։ Էմման սակայն նոր միայն սթափւում էր և բոլորովին ուշադրութիւն չըդարձրեց եկողների վրայ։

—Հիանալի էր, օրիորդ, խօսեց Ճարլը և տեղաւորւեց մի լայն բազկաթոռի մէջ։

—Այո... լսեց վառարանի կողմից մի խուլ ձայն—երազել է տալիս։

Օրիորդ Էլիզան առիթից օգտւեց գերմանացուն խայթելու.

—Երևի հէրր Հաննը քնել էր. նետեց նա կծու ձայնով՝ սեղանատան դռան մօտից։

Բոլորը մէկէն ծիծաղեցին։ Հաննը պահ մի շփոթւեց, բայց յետոյ ինքն իրեն ուղղեց։

—Ներողութիւն, օրիորդ—եկեղեցու մէջ չեմ, որ ձեզ պէս ննջեմ։

—Ի՞նչպէս... ասաց Ճարլը դրդուիչ շեշտով—օրիորդը արարողութեան ժամանակ ննջո՞ւմ է։

—Երևակայեցէք, պարոններ, գոչեց Հաննը քաջալերուած—օրիորդը ժամերգութեան ընթացքում միշտ ննջում է. տեսել եմ. և նրա գլուխը ամրապէս կպչում է աղօթագրքին. իսկ երբ քահանան իր խոշոր ձայնով գոչում է «Dominus Vobiscum!» (Տէր ընդ ձեզ)...

—Չա՛ր, չա՛ր. միջահատեց տանտիկինը—չար էք, Հա՛նն. Հանգիստ թողէք օրիորդին։

Այդ միջոցին լուսամուտի մօտից լսւեց մի ձայն.

—Կաթոլիկ եկեղեցւոյ երաժշտութիւնը ջղեր է հանգստացնում և զարմանալի չէ՝ եթէ քնեցնում է։

Նոր մտնող երիտասարդն էր. Սուրէնը։

—Այդպիսի դէպքում, ասաց տանտիկինը—հարկաւոր է երաժշտութիւնն էլ գործածել իբր բժշկական միջոց։

—Եւ երբ է արդեօք այդ «ֆօնօտերապին» – ահա մի նոր բառ էլ ստեղծեցի—այդ ֆօնօտերապին գործադրւում. ասաց Հաննը ժպտելով—երբ անքնութիւն ունի մարդ։

—Եթէ չեմ սխալւում, մէջ մտաւ բուլղարը—գործադրւում է կատաղի խենթերին հանգստացնելու համար. երաժշտութիւնը շա՛տ է ներգործում նրանց վրայ և քնեցնում է... ես բժշկական ուսանող եմ։

—Այդ ի՞նչ է, բացականչեց կուզը—ուրեմն ենթադրում էք որ օրիորդ Էլիզը...

—Օ՛, օ, օ...

Այս անգամ բոլորն էին։ Ամենքը նայեցին օրիորդ Էլիզին, որ բարկութիւնից կարմրեց և ասաց.

—Շնորհակալ եմ, Հէրր Հանն, ինձ խենթ էլ շինեցիք։

—Բայց ո՛չ, օրիորդ, բայց երբէք, յարգելի օրիորդ...

Իմման սկսեց սաստիկ ծիծաղել. միւսներն էլ վարակւեցին և մի ընդհանուր ծիծաղ բարձրացաւ։ Տանտիկինը տեսաւ որ անախորժ էր լինելու այդ ծիծաղի հետևանքը, շարեց մի վայրկեան, յետոյ, կամենալով միջադէպքը մոռացնել, մօտեցաւ Ճարլին և խնդրեց նրան մի բան նւագել ջութակի վրայ։

—Բայց ի՞նչ նւագեմ, տիկին...

—Օրիորդ Իմմայի հետ մի կտոր. ինչ որ կուզէք։

Ծիծաղը դեռ շարունակւում էր, բայց Իմման էլ շուտով զգաց Էլիզի դրութիւնը և նստաւ դաշնամուրի առաջ—Ճարլը ջութակը ձեռքն առաւ, ու սկսեցին մի մազուրկա։

—Պա՛ր, պա՛ր .. ձայնեց Հաննը.

Օրիորդ Էլիզը չըկարողացաւ շարունակել նեղացած դրութիւնը և ասաց կծու կերպով.

—Ահա Հաննը [1], որ կամենում է պարել և այն էլ Շօպէնի մազուրկայով։

Մի քանիսների դէմքի վրայ ժպիտներ միայն երևացին. բառախաղի վրայ շատերը չանդրադարձան։

Երբ մազուրկան վերջացրին, Ճարլը առաջարկեց նոյն հեղինակի մի նոկտիւրնը նւագել։

Իմման լռութեամբ սկսեց։ Ծիծաղները լիովին անհետացան. յետոյ դէմքերի զւարթութիւնն էլ ցնդեց և փոխարինեց նրան մի այնպիսի լուրջ, խորհրդածական արտայայտութիւն, որ միայն Շօպէնի գիշերերգները կարող են պատճառել։

Բաւական երկար տևեց։ Վերջանալուն պէս, տիկին Հանրիէթը Ճարլին խնդրեց նւագելու Էրնստի էլէգիան։

—Ի՞նչ է այս. հարցրեց Իմման, նւագածութեան կտորը տեսնելով։

—Մի՞թէ ձեզ ծանօթ չէ այս էլէգիան. հարցրեց Ճարլը։

—Ո՛չ, երէկ միայն տեսայ. դաշնամուրի համար չէ գրած։

—Իրաւունք ունիք. միջամտեց Սուրէնը, որ մօտ էր եկել.—այս կտորը ազդու է միայն ջութակի կամ վիօլօնչէլի վրայ... բայց հետաքրքիր է թէ դուք ինչպէս կըհասկանաք նրան։

---

[1]) «Հանն» գերմաներէն նշանակում է նաև «աքաղաղ»։

Իմման, առաջին անգամը լինելով, քիչ աւելի երկար զըն-նեց նոր երիտասարդին, յետոյ մատները լեզւակների վրայ դը-րաւ և ասաց.

— Տեսնենք ուրեմն. սկսեցէք, պարոն Ձարլ:

Այնքան նուրբ և այնքա՛ն տխուր էր սկսում էլէգիան, որ հէնց սկզբում շատ դէմքեր՝ յուզմունքից գունատւեցին: Իմման խորապէս զգացւեց. դողդող՝ ընկերանում էր, մինչ ամբողջա-պէս լսողութիւն դարձած՝ ականջ էր դնում ջութակի նւագին:

Խոր լռութիւն էր. Հաննը թաղւել էր իր թիկնաթոռում և գլուխը ձեռքերով ծածկել: Իլիզը, անկիւնում կծկւած, գը-լուխը դրել էր աթոռի բարձր թիկունքի վրայ, իսկ Սիւզանը խոնարհել: Միայն լայնածնոտ բուլղարն էր, որ ծիծաղաշարժ դէրք էր ստացել հիացումից—բերանը բաց, աչքերը վիր և ձեռքերը ծնկների վրայ:

Քառորդ ժամ տևեց նւագը: Այդ քառորդը կարծես մի ճնշող, վշտալից րոպէ եղաւ ամենքի համար: Երբ վերջացաւ և վերջին սուր խազը ճօճեց երկար, լայնածնոտ բուլղարը ասաց.

—Որքա՜ն գեղեցիկ է... ու փակեց բերանը:

—Այո. աւելացրեց սերբիացին—այդ կտորը ես էլի լսել եմ. Ձարլը շատ լաւ է նւագում:

—Գիտէք, պարոննե՛ր. խօսեց այն ժամանակ Ձարլը, ա-ռանց ջութակը ձեռքից ցած դնելու—այդ կտորի հետ կապ-ւած կայ մի փոքրիկ պատմութիւն. մի տխուր զրոյց... կուզէ՞ք պատմեմ, օրիորդ:

Իմման գլխովը հաւանութեա՛ն նշան արաւ:

—Պատմում են, սկսեց Ձարլը—որ այս կտորը հեղինակե-լիս, Էրնըստը բնակւում է եղել մի ընտանիքի մէջ: Մի գիշեր, կէս գիշերւանից անց, տանտէրն ու տանտիկինը յանկարծ զարթ-նում են քնից, տարօրինակ ձայներ լսելով տան մէջ: Կարծես հրեշտակ էր իջել այնտեղ և հնչեցնում էր սրտապատառ ողբ: Զարմանում են թէ ո՞րտեղից պիտի գար ձայնը: Փնտրելով, հասնում են Էրնըստի սենեակի դռան առաջ: Կռանում են և բանալիի ծակից ներս նայում. ի՜նչ տեսնեն... Էրնըստը, գը-րեթէ մերկ, շապկանց, կուրծքը բաց, մազերը ցիրուցան, դէմ-

քըն այլայլւած, ակնարկն անհունութեան մէջ մոլորւած, ջու-թակը սրտի վրայ, ինքը յատակին նստած՝ նւագում էր. և որպէ՜ս նւագում, աստուածնե՜ր... Եւ արտասուքը որպէս ցօղ, կաթիլ առ կաթիլ հոսում էր նրա աչքերից՝ վեր ուղղած աչ-տերի վրայ:

Էլէգիան էր այդ. մի յուսախաբ, գուցէ անյոյս, գուցէ... բայց ո՞վ գիտէ. սէր էր երգածը, սէր ու տանջանք էր հա-ռաչում նրա ջութակը... Ահա ամբողջ պատմութիւնը:

Իմման արձանի նման անշարժ և անթարթ, ոչ մի ձայն իսկ չըհանեց. տանտիկնոջ աչքերը թրջւել էին.

—Խե՜ղճ... մռմռաց նա:

—Այո... մի նոր թափով շարունակեց Ձարլը—այդ էլէ-գիան Էրնըստի ոգին, տանջւող, ապերջանիկ Էրնըստի վիշտը չէ միայն. դա ամբողջ տանջւող մարդկութեան վշտերի ար-տայայտութիւնն է...

Իմման, որ լուռ էր, յանկարծ մատները լեզւակների վը-րայ դրաւ և ասաց.

—Մի անգամ էլ նւագենք:

Ամենքը հաւանութեան ձայներ հանեցին, ու նորից հըն-չեց ողբալից երգը: Իմման ընկերացաւ և այդպէս շարունակե-ցին մինչև առաջին կրկնակի խազերը: Բայց այդտեղ Իմման մէկէն, առանց դառնալու, դադարեցրեց նւագը և գոչեց Ձարլին.

—Բայց դուք լաւ չէք նւագում...

Ձարլը ջութակը ցած թողեց և կարմրեց:

—Այո, կրկնեց լրջութեամբ Իմման և դարձաւ—դուք լաւ չէք նւագում. դուք չէք հասկացել երգը... Ինձ այդպէս է թւում:

—Ե՞ս... թոթւեց Ձարլը—բայց աւելի քան 40-րդ ան-գամն է որ նւագում եմ:

—Ի՞նչ հոգ, ասաց Իմման նեղացած ձայնով—խնդրեմ մի նեղանաք. դուք խազերը ճիշտ էք հանում. մեքենականը ճիշտ է. բայց արտայայտութիւնը ու. չէք հասկացել... Ձեր կարծի-քով այս երգը ողբո՞ւմ է, արտասւո՞ւմ...

—Բայց ի հարկէ...

—Ո՛չ... մէջ մտաւ Սուրէնը—օրիորդը իրաւունք ունի. երգը չէ ողբում, այլ զայրանում է և տանջւում:

Էմման նրան նայեց զարմացմամբ:

—Այդ ճիշտ է, ասաց նա—պարոնն է հասկացել... Էլէգիան չէ ողբում, այլ մի մեծ փափագի հասնելու անկարողութիւնը զայրացնում է և այդ զայրոյթն է որ խորունկ վրշտի հետ արտայայտւում է նրա իւրաքանչիւր խազից... Իսկ դո՛ւք... Դուք խաբւած սէր էք դարձնում այդ մեծ ու վսեմ զայրոյթը...

Նա թևը դրել էր դաշնամուրի լեզւակների վրայ և կիսովին բոլորին դարձած, աչքը յառել էր երաժշտական կըտորին:

—Ո՛չ. սա խաբւած սէր չէ որ երգում է... շարունակեց նա կարծես ինքնովի... Սա իդէալն է երազում և ցանկանում, ցանկանում է. ո՛րքան—անչափ, մինչև ե՛րբ—յաւիտեան: Տոչորւում է այդ ցանկութիւնից, գոհ չէ եղածովը. եղածը ոչինչ է երազների մեծութեան առաջ... Եւ զայրանում է, կատաղում, ճչում է, ապա՝ տանջւում, ջղերովն ամբողջ տանջւում և ուզում է մեռնել...

—Ես կարծում եմ, օրիորդ...

Չը գիտէր ինչ ասել Ճարլը: Ուզում էր մի բան ասած լինել:

—Լռեցէք. ընդհատեց Էմման... Եւ նկատեցէք, երգը չէ վերջացած, կարծես կիսատ է, կարծես դարձեալ ուզում է զայրանալ, տանջւել, անէծք ժայթքել, և այդ՝ աւելի խիստ, աւելի բարձր ձայնով... Դուք կարծում էք թէ սա չէ հասել իր սիրածին, չէ սիրւել և այլն և այլն... Բայց այո՛, սիրւել է, գուցէ շատ սիրւել, բայց ուզածը այդ չէ, որոնածը ա՛յդ սէրը չէ, այլ մի աւելի բարձր, աւելի վսեմ բան... Գուցէ մի երազ...

Ու լռեց, յետոյ յանկարծ ոտքի ելաւ, փակեց ուժգնութեամբ տետրակը և հեռացաւ դաշնամուրից:

Այն ժամանակ բոլորը նկատեցին թէ ինչպէս Էմման գունատ էր և շրթունքները մոխրագոյն, դողում էին:

—Ներեցէք... ասաց նա բռնազբօսիկ ժպիտով—կարծեմ

քիչ մոռացայ ինքզինքս... բայց այդ էլէգիան... անտանելի կտոր է. հիւանդ մտքեր է վերարտադրում, այլանդակապէս բարձր է սլացնում, գլուխ պտտեցնելու չափ հեռու...

Ամենքը լուռ էին և զարմացած. տանտիկինը մօտ գնաց նրան:

—Ո՛չ... թողէք ինձ... գլուխս դառնում է... ինձ ներեցէք:

Ու քայլեց նստողների միջից դէպի դուռը: Այդտեղ յանկարծ կանգ առաւ, աչքերովը փնտրեց նորեկ երիտասարդին—Սուրէնին, պահ մի նայեց նրան և ասաց.

—Այդ պարոնը հասկացել է... և վա՛յ նրան՝ եթէ նոյնն է զգում ինչ որ ես...

Յետոյ արագութեամբ դուրս գնաց, մինչ բոլորը միմեանց երեսի էին նայում զարմացած:

—Ա՜հ, բա՛հ... արեց Ջաննը թիկնաթոռի միջից—ջղե՛րը...

Գ

Համալսարանի այդ սրահը, ուր ժընէւից յատկապէս եկած այդ երեկոյ ժողովրդական դասախօսութիւն էր անում պրոֆէսոր Ֆլիւրնուան—գրեթէ լիքն էր:

Դասախօսութեան նիւթն էր—«*Դարավերջի ջլախտութիւնը*»: Եւ պրոֆէսորը, որ սկսել էր հանդարտ, այժմ ուժգնութեամբ և շեշտելով, կռացած դէպի ունկնդիրները, վերջացնում էր դասախօսութիւնը այսպիսի խօսքերով.

—... Տիկիններ և պարոններ... Դարավերջի հոգեկան տանջանքներից մէկն էլ այն է, որ մարդկային միտքը (raisonement) հաշտ չէ գնում զգացումների հետ, կշռադատութիւնը՝ սրտի հետ: Եւ այդ է պատճառը այն բոլո՛ր եղկելի հակասութիւնների, որոնցով տանջւում է զարգացած մարդը և որոնց արդիւնքն է ջլախտութիւն և անհաւասարակշռութիւն (inéquilibrité)...

Այդ խօսքերը ասելուց յետոյ նա կանգ էր առնում մի րոպէ, որ լսողները լաւ հասկանային ասածները և ապա աւելացնում.

—Եւ այնուամենայնիւ, պարոննե՛ր—ժառանգապէս համակարգուած ջղերը, միջավայրի և ինստինկտների իշխանութեան տակ կազմուած զգացմունքները յաղթող են հանդիսանում։ Ո՛րքան մարդ քաղաքակրթուած է, այնքան նա իշխում է իր զգացումներին. ո՛րքան նա անքաղաքակիրթ է—այնքա՛ն գերի է իր սրտին, իր կրքերին... Սա կարծես մի օրէնք է, որ ստեղծել է սիրտը իր բռան մէջ ունեցող մարդը։ Իմ կարծիքը այս է, որ քաղաքակրթւենք, բայց չըմեռցնենք կրքերը (passions)—դա մեզ կըտանի անզգայութեան։ Իշխենք նրանց—ահա բոլորը...

Ու բուռն ծափահարութեան տակ՝ իջնում էր ամբիօնից։

Սրահն սկսեց դատարկուել։ Ուսանողները շտապում էին սանդուղքների ստորոտում կամ բակում հանդիպել իրենց ծանօթ օրիորդներին և տիկիններին։ Վերարկուներ և գլխարկներ էին մատուցանում նախադաւթի մէջ կաւալերները և ապա Լօզանի այն հնամեայ համալսարանի ոլորապտոյտ սանդուղքն ի վար՝ իջնում էին վիճողներ, գոչողներ ու ծիծաղողներ...

Բազմութեան միջից մի կարճլիկ հաստ պարոն, ամեն կողմ ներողութիւն սփռելով, յաջողեց գնալ դէպի դուռը և մօտեցաւ Իմմային, որին արդէն շրջապատել էին լայնածնօտ բուլղարը, սերբիացին և անգլիացին։

—Դուք էլ այստեղ էք, մսիւ Ճա՛րլ, ասաց նրան անգլիացին—մենք ձեզ չըտեսանք սրահում։

Խումբը դուրս գնաց։ Իմման առաջ անցաւ Ճարլի հետ և երբ փողոց հասած՝ սոսկալի զառիվայրից իջնում էին դէպի ներքին քաղաքը, Ճարլը ասաց.

—Հաւանեցի՞ք պրոֆէսորի դասախօսութիւնը, օրիորդ։

—Այո՛, հետաքրքիր էր. պատասխանեց Իմման—ինձ էլ երբեմն թւում է, որ մարդ քանի քաղաքակրթուած է, այնքան աւելի է իշխում իր ջղերին... Քաղաքակրթութիւնը կարծես մի մամուլ է դարձել բոլոր թռիչքների, ամեն երազի... Մի ճնշիչ, բռնաւոր, զզւելի մամուլ... Ատում եմ յաճախ այդ քաղաքակրթութիւնը...

—Ո՛, ո՛չ... մէջ մտաւ անգլիացին — քաղաքակրթութիւնը ի զուր էք ատում. և ջղերին ու կրքերին զսպելը ամեն մի կրթուած, զարգացած մարդու յատկութիւն է։

—Ուրեմն, ձեր կարծիքով, ասաց սերբիացին—երբ մարդ անձնատուր է լինում իր ուժեղ զգացմունքի, նա անկիրթ է...

—Ահա պ. Սուրէնը. բացագանչեց այդ միջոցին բուլղարը որ վեր էր նայում—ի՜նչ բարակ է հագնւել...

Եւ իրաւ, վերից հանդարտութեամբ իջնում էր Սուրէնը, պարուրուած շվէյցարական՝ շվիօտից շինած հասարակ թիկնոցաւոր վերարկուով։

Իմման կանգ առաւ դարաստանի վրայ և ամենքը սպասեցին Սուրէնին։

—Դո՞ւք էլ էիք եկել... կանչեց նրան հեռուից սերբիացին—շուտ եկէք, ցուրտ է։

Սուրէնեանը մօտեցաւ, թօթւեց բոլորի ձեռքը։

—Մեր վիճաբանութեան կամենո՞ւմ էք մասնակցել, հարցրեց Իմման լրջութեամբ և առանձին զննող հայեացքով։

—Ի՞նչ վիճաբանութիւն է այդ։

—Ահա թէ ինչ. ասաց սերբիացին—օրիորդը պնդում է, որ պրոֆէսորի ասածների մէջ ճշմարտութիւններ կային և որ քաղաքակրթութիւնը մի ճնշող բռնաւոր է, որ կտրտում է ամեն թռչունի թեւեր...

Ու ծիծաղում էր իր այդ այլաբանութեան վրայ։

—Յետոյ, շարունակեց նա—պարոն Վէրլէյը իր կողմից պնդում է որ քանի մարդ իշխէ իր կրքերին—այնքան նա քաղաքակրթուած է և զարգացած... Իսկ մսիւ Ճարլը...

—Բայց ես դեռ ոչինչ չեմ ասել, ծիծաղեց Ճարլը։

—Ա՛խ, այո. Ներողութիւն... Մնում եմ ես, նաև պարոն Իւանովը—շարունակեց սերբիացին և կատակօրէն աւելացրեց —Իւանովը գտնում է, որ ճանապարհը շատ սահուն է և որ սրահի մէջ ծաղրական դէմքեր շատ կային... Ահա բոլորը։

—Բայց պարո՛ն... բերանը մեծ բանալով ասաց բուլղարը —ես այդ դեռ չեմ ասել։

—Ոչինչ, վրայ տուաւ սերբիացին—եթէ չէք ասել, մըտադիր էք ասել. մտածում էք որոշ դէպքում ասել... Այո,

ինչ վերաբերում է ինձ, ես գտնում եմ որ մարդ կարող է շատ զարգացած լինել և շատ էլ րոպէներ ունենալ ինքնամոռացութեան... Սրան ինչ կասէք:

—Ինքներդ էք այդ րոպէներին «ինքնամոռացութեան րոպէ» կոչում. ասաց Սուրէնեանը—բոլոր խնդիրը նրանումն է, որ մարդ չունենայ կամ շատ քիչ ունենայ այդ րոպէները...

Էմման մի վայրկեան լուռ նայեց նրան և ապա փորձիչ կերպով առարկեց.

— Չունենալ այդպիսի րոպէներ՝ իմ կարծիքով ապուշը միայն կարող է... Ի՞նչ կլինենք մենք, որ միշտ գիտակից ենք, օրինակ, մեր անտանելի դրութեանը, եժէ չերազենք, միշտ չերազենք և միշտ ցանկանք... ցանկութիւնը, այդ երազները կիրք չեն...

— Բայց ոչ, օրիորդ, ծիծաղեց Սուրէնեանը—դրանք կրքեր չեն. դրանք երազելու տրամադրութիւն, որոշ ջղային դրութիւն են... Ես ինքս չըգիտեմ ինչ են, որովհետև ես էլ այդպէս եմ... Բայց կիրքը—դա այլ բան է. առանց կրքի, իմ կարծիքով քաղաքակրթութիւն չէր լինիլ, ոչ էլ առաջադիմութիւն...

Եւ լռեց շփոթւած, յայտնի չէր թէ ինչու: Էմման պահ մի զարմացած տեսաւ նրա շփոթութիւնը, յետոյ քայլեց և ասաց.

—Իջնենք... ես ձեզ դեռ չեմ հասկանում... և ինձ թըւում է որ դուք մի բան ուզում էք ասել՝ ու խօսք չէք գըտնում...

Սկսեցին ծռւել դէպի մի բարձրութիւն, որի վրայից երեւում էր լիճը: Լուսինը սքանչելապէս արծաթազօծել էր լճի ջրերը և նրա ճառագայթների մի հետքի մէջ, ջրի երեսին՝ կարծես արծաթէ դրամներ էին ոստոստում:

Էմման բարձրութեան վրայ կանգ առաւ, աչքը սևեռեց լճի վրայ և ասաց կցկտուր.

—Կարելի է հըզմայլել այս տեսարանով... Եւ երբ այսպիսի պահուն մարդու սիրտն ուռչում է անհուն, անբացատրելի կըքերով, երազներով, ցանկութիւններով... պարտաւոր

ենք յիշել որ քաղաքակրթւած ենք, որ «կրթւած» մարդը չըպիտի գերի լինի իր կըքերին... Սա անտանելի է, բռնակալութիւն է... և վատ... դուք ոչինչ չէք ասում, պարոն Սուրէն...

— Ես լսում եմ, օրիորդ:

—Այդ բաւական չէ, պարոն, դարձաւ նրան Էմման նեղացած ձայնով—յայտնեցէք մեզ ձեր կարծիքը, որոշ... Անգոյնութիւն չեմ սիրում... Դուք միայն մի քանի բառ ասացիք և ոչինչ չըհասկացրիք... Ասացէք, ինչ էք կարծում, կարելի է քաղաքակրթութեան իբր չափանիշ գործածել՝ նաև կըքերի իշխողութիւնը կամ սանձարձակութիւնը:

Սուրէնեանը քիչ լռեց, յետոյ չոր ձայնով ասաց.

—Եթէ դուք վերջին բառի փոխարէն ուրիշ բառ գործածէիք, կասէի՝ ոչ: Օրինակ, եթէ ասէիք «կըքերի ուժգնութիւն»: Կըքերի սանձարձակութիւնը վայրենութեան, անկըրթութեան և ինքնամոռացութեան նշան է. սանձարձակ կիրքը վնասում է թէ իր տիրոջ և թէ ուրիշի. նա չէ յաղեցնում, այլ յոգնեցնում է, ջլատում ամեն ոյժ. կըքերի ուժգնութիւնը կարևոր է ոչ միայն հաճոյքի, ոչ միայն հոգեկան բաւականութեան, այլ քաղաքակրթութեան, առաջդիմութեան համար իսկ: Թմրած, կիրք չունեցող մարդը ապուշն է... Ես այդպէս եմ կարծում:

—Էրնըստը ինչ էր, քաղաքակիրթ թէ վայրենի, հիւանդ թէ ողջամիտ... հարցրեց մէկէն Ժարլը խուլ ձայնով:

Էմման ցնցւեց և սկսեց շտապով քայլել:

— Հիւանդ անշուշտ... մէջ մտաւ բուլղարը—և կարիկատուրայի արժանի հիւանդ... Մարդ էլ մերկ կընտի դետին և ջութակ կընւագի...

— Լռեցէք, դարձաւ նրան խստութեամբ Էմման—ձեր մէջ բանաստեղծութեան նշոյլ չըկայ...

—Իրաւ է. ասաց բուլղարը—ես բանաստեղծ չեմ և... այստեղ պիտի ասեմ, որ ճանապարհը խիստ սահուն է...

—Վերջապէս ասացիք... քրքջաց սերբը:

Ոչ ոք չըխօսեց: Իջնում էին ներքին քաղաքը. սանդուղքներից պրծել, հրապարակն էին [illegible]

Гос. Библиотека
Арм.ССР
им. А. Мясникяна

—Դուք ո՞ր կողմը. հարցրեց անգլիացին Ճարլին:

—Դէպի ձախ. կամուրջի այս կողմը:

—Իսկ դո՞ւք, պարոն Սուրէն, հարցրեց Իմման:

—Միւ Ճարլի հետ միևնոյն պանսիօնումն ենք. բայց ես ձեզ կընկերանամ մինչև ձեր բնակարանը, եթէ դէմ չէք... Ուզում եմ թարմ օդի մէջ քիչ զբօսնել...

—Լա՜ւ թարմ օդ!... մռմռաց բուլղարը:

—Ի՞նչու դէմ. համեցէք. ասաց Իմման—սակայն ցուրտ է և դուք տաք չէք հագնուած:

—Ոչինչ. ես չեմ մրսում:

Դ

Ու քիչ քայլեցին խշրտացող ձիւնի վրայ: Քամի չըկար, բայց բաւական ցուրտ էր: Իմման քայլում էր Ճարլի և Սուրէնեանի մէջ տեղից, իսկ ետևից գալիս էին միւսները:

—Երկա՞ր կըմնաք Լօզանում. հարցրեց Իմման Սուրէնեանին—լսեցի որ Ցիւրիխի համալսարանումն էք:

—Այո, օրիորդ:

—Սակայն ֆրանսերէն լաւ էք խօսում... Միթէ ձեզ մօտ դասախօսութիւնները դադարել են:

—Ո՛չ. շարունակւում են:

—Եւ դուք թողել՝ հեռացել էք. ինչու:

Ու նայեց երիտասարդի երեսին: Սուրէնեանը քիչ վարանեց. ապա, մեղմութեամբ ասաց.

—Յոգնել էի քիչ... Լօզան եկայ հանգստանալու:

Իմման ոչինչ չըխօսեց: Սուրէնեանը զգաց, որ չըկարողացաւ հաւատացնել:

Կամուրջն անցնելուց յետոյ, հետզհետէ ցուրտը մեղմանում էր, որովհետև լիճն այլ ևս չէր երևում. տները ծածկում էին նրան: Պանսիօնից մի քանի քայլ էր մնում միայն:

—Կըգա՞ք մեզ մօտ քիչ գւարճանալու. դարձաւ Իմման Ճարլին:

—Ուշ չէ՞. հարցրեց Ճարլը Սուրէնեանին:

Библиотека АрмССР

—Մտնենք. ասաց Սուրէնը:

—Ա՛հ, այդ լաւ եղաւ. գոչեց բուլղարը—Ճարլը քիչ կընուագէ. ուշ չէ. ժամը 9-ն է միայն:

Դռան մօտ այնպէս եղաւ որ Իմման ու Սուրէնեանը առաջ անցան, իսկ Ճարլը ետ մնալով սկսեց սերբիացու հետ խօսել: Մենակ մնալով, ո՛չ Իմման մի բառ արտասանեց և ոչ էլ Սուրէնեանը: Երկուսն էլ շտապեցին դէպի ներս:

—Սրահը մտէք. ասաց Իմման—ներսում կըխօսենք. ես այս րոպէիս կըգամ:

Յետոյ մի քանի աստիճան ելաւ և անհետացաւ երկրորդ յարկում: Սրահումն էին տանտիկինը, օրիորդները և Հաննը: Վերջինս, ընկղմած բազկաթոռի մէջ, վառարանի կողքին՝ կարդում էր: Տանտիկնոջ կողքին ձեռագործով էին զբաղուած Էլիզան և Սիւզանը: Խոր լռութիւն էր տիրում այնտեղ, երբ բուլղարացին ու սերբիացին աղմկալից ներս մտան:

—Ահա՛ վերջապէս. ասաց տանտիկինը ելնելով—վերջացա՞ւ դասախօսութիւնը:

—Վերջացաւ. գոչեց բուլղարը—և մենք մեզ հետ բերինք Ճարլին և Սուրէնեանին: Ճարլը կընուագի, իսկ մենք թէյ կըխմենք:

Յետոյ ձեռքերը շփելով՝ վազեց դէպի վառարանը:

—Ցո՞ւրտ է դրսում, հարց տւաւ տանտիկինը:

—Օ՛հ, այո... Բուլղարիայում այսպէս ցուրտ չունինք... ինչ լաւ կրակ է. իսկ եթէ թէյն էլ շուտով պատրաստուի:

—Շուտով... Ի՞նչպէս էր դասախօսութիւնը, պ. Իւանով:

—Օ՛, շատ լաւ, տիկին. պ. Ֆլուրնուան գիտնական է և լաւ բժիշկ. այո... Խօսեց ջղերի, ջղային հիւանդութիւնների մասին, որոնցից, փառք Աստծոյ, ես ոչինչ չեմ հասկանում:

Այդ միջոցին Իմման էլ ներս մտաւ. հանել էր վերարկուն ու գլխարկը և մնացել սև շրջազգեստի մէջ:

—Չեմ զարմանում, պ. Իւանով. ասաց Հաննը բուլղարին—ձեր ջղերը չափից աւելի առողջ են:

—Ահա՛ աթոռ. ցոյց էր տալիս Իմման Սուրէնեանին՝ իր կողքին—նստեցէք ինձ մօտ:

Եւ երբ նստել էին, յանկարծ հարցրեց.

—Դուք հայ էք. չէ՞։

Խմբեր էին կազմել։ Ճարլը սերբիացու և անգլիացու հետ՝ դաշնամուրի մօտ կանգնած՝ վիճում էին. Հաննը ծաղրում էր բուլղարին և սա պատմում էր նրան դասախօսութեան ժամանակ տեսած ծաղրանկար դէմքերի մասին և տանտիկինը լսում էր նրանց։ Իմման և Սուրէնեանը մի կողմ էին նստել առանձին։

—Այո, հայ եմ. պատասխանեց Սուրէնեանը։

—Անշուշտ Հայաստանցի։

Սուրէնեանը ժպտեց.

—Աւաղ, օրիորդ, ասաց—այլ ևս Հայաստան չըկայ. գոնէ քաղաքականապէս գոյութիւն չունի նա առ այժմ։

—Ի՞նչպէս...

Յետոյ կարմրեց քիչ և ապա աւելացրեց.

—Ներեցէք... Խոստովանում եմ, ես շատ քիչ, գրեթէ ոչինչ գաղափար չունիմ այդ երկրի, ձեր մասին. Հին պատմութիւնից միայն մի քանի բան յիշում եմ և այդ է բոլորը... Եւ առաջին անգամն է որ մի հայ եմ տեսնում... Տարօրինակ դէմքեր ունիք. բոլո՞րն էլ այդպէս են ձեր երկրում։

—Գրեթէ... Թուխ, սևամազձոտ, քիչ էլ կասկածոտ։

—Այո.... սև, տանջալից և կարծէք միշտ մի վտանգի սպասող... Շատ էլ նախանձոտ կըլինիք. ձեր դէմքի արտայայտութիւնները դրանք են. մի քիչ հրէական տիպ ունիք... Ասում էիք որ այլ ևս Հայաստանը չըկայ. պատմեցէք խնդրեմ ձեր երկրի մասին։

Բայց հազիւ թէ Սուրէնեանը խօսել էր կամենում, որ Ճարլը, երևի ձանձրացած վէճից, կիսատ ձգեց և թողնելով ընկերներին, մօտեցաւ նրանց։

—Գիտէ՞ք, պ. Ճարլ. դարձաւ նրան Իմման—պ. Սուրէնեանը ուզում է պատմել ինձ իր հայրենիքի մասին. ես կարծում եմ որ մենք բոլորս, նոյն իսկ Հաննը՝ շատ քիչ տեղեկութիւններ ունենք հայերի և նրանց երկրի մասին. Հայաստանի մասին էլ միայն հին պատմութիւնից գիտենք։

—Այո, ասաց Հաննը, որ լսել էր և մօտենում էր—Քսենոֆոնից, Պլուտարքից...

Խօսակցութիւնը ընդհանուրի փոխեց, բուլղարն էլ մօտ եկաւ։

—Ես բաւական ճանաչում եմ նրանց. մէջ մտաւ նա—Բուլղարիայում շատ կան. վաճառականներ են և վաշխառուներ են բոլորը։

Սուրէնեանը դէմքը կնճռեց և այդ նկատեց Իմման։

—Իւանով. ասաց խստութեամբ օրիորդը—այս երեկոյ յիմարութիւններ շատ էք ասում։

—Միայն այս երեկոյ... ծիծաղեց Հաննը։

Իւանովը շփոթուեց. հասկացաւ որ վիրաւորել էր Սուրէնեանին։

—Ներեցէք, թոթովեց նա—ես...

—Հանդարտեցէք, պարոն Սուրէն. խօսեց Ճարլը — պ. Իւանովը, ըստ իր սովորութեան, միայն վաշխառուներին է ճանաչում։

Տանտիկինը նորից միջամտեց.

—Իրաւ, պ. Սուրէն. ասաց նա—բարի եղէք մեզ ձեր երկրի մասին խօսելու. ո՞ր կողմն է այդ Հայաստանը։ Իրա՞ւ է, որ այնտեղ ժողովուրդը կիսավայրենի դրութեան մէջ է դեռ... Չընեղանաք խնդրեմ։

—Ի՞նչու նեղանալ. ժպտեց Սուրէնը—ձեր լսածը մասամբ իրաւ է. բայց եթէ ցանկանում էք, ձեզ մի քանի խօսք կասեմ մեր երկրի մասին։ Ամենքդ գիտէք Փոքր-Ասիան, Տիգրիսի և Եփրատի, Կուրի և Երասխի հովիտներն ու բարձրավանդակները։ Դա Հայաստանն է. այժմ քաղաքականապէս՝ ոչնչացած, բաժանուած Ռուսիոյ, պարսիկի և Թիւրքի մէջ։ Մեծ մասը վերջինիս ձեռքումն է...

—Գիտէք ինչ, միջամտեց Հաննը—ինձ թւում է թէ աշխարհագրութեան մէջ այդքանը ամենքս գիտենք. դուք, պ. Սուրէն, մեզ ասէք թէ ինչ դրութեան մէջ են այժմ հայերը Թիւրքիայում. ես բաւական կարդացել եմ այդ մասին լրագրներում։

— Ես էլ. ասաց Էմման—յիշում եմ… Կարծեմ Թիւրքերը գազանաբար միշտ հալածում, կոտորում են հայերին. այդպէս չէ՞, պ. Սուրէն… Եւ միթէ այդ բոլորը ճիշտ են։

— Շատ ճիշտ, օրիորդ. եթէ մանրամասն պատմւի, քնել չէք կարող յուզմունքից. կոտորել, մորթել, մանուկներին նիզակների ծայրը անցկացնել, ծերերին կենդանոյն այրել, ամեն բան աւերել, ամեն գեղեցիկ կին առևանգել, անպատւել…

— Աստուա՜ծ իմ. բացականչեց Սիւզանը—ի՜նչ սոսկալի բաներ…

— Ճիշտ բուլղարական սոսկումների նման. ասաց Իւանովը—այդ Թիւրքերը միշտ այդպէս են. միթէ չէք յիշում թէ ի՜նչեր արին նրանք 1876 թւականին՝ Բուլղարիայում։

— Այո՛, ասաց Էմման—յիշում եմ… Եւ չեմ զարմանում եթէ հայը զւարթ լինել չէ կարող, որ նրա սիրտը արտասւում է, իսկ դէմքը արտասւեցնում տեսնողին… Եւ ձեր այդ բոլոր թշւառութիւնների մէջ դեռ սիրտ ունենո՞ւմ էք ուսանելու գալ. գալ տեսնել այս երկիրները, ուր այդպիսի սոսկումները կոշմարների կարգն են անցել, ուր ձեր վիշտը չեն ըմբռնիլ, անհասկանալի կըգտնեն և ձեր տանջանքը՝ անբացատրելի… Շա՞տ էք որ ուսանելու էք գալիս։

— Բաւական շատ են. ասաց Շարլը։

— Եւ ո՞վ է ձեզ միջոցներ տալիս. հարցրեց սերբիացին—մենք յաճախ տէրութեան հաշւով ենք գալիս. իսկ դո՞ւք։

— Մենք. ժպտեց դառնութեամբ Սուրէնը—մենք գալիս ենք մուրալով։ Չէ՞ք հաւատում։ Սակայն դա ճշմարտութիւն է։ Երիտասարդը, աւարտած միջնակարգ դպրոց, դիմում է հարուստների, խնդրում է, աղաչում, ամսական մի չնչին գումար ձեռք բերում, յետոյ, ծարաւի ուսման, վազում է այստեղ… Շատերն այդ էլ չունեն. այս-այն կողմից մուրում են, մի չընչին գումար գտնում և վազում… Այնպէս ուսանողներ կան, որոնք աւելի խեղճ են ապրում, քան ձեր ծառաները։

— Դա հերոսութիւն է սակայն. գոչեց տանտիկինը։

— Օրինակ. շարունակեց Սուրէնը—գիտեմ ես մէկին, իմ ընկերը Ցիւրիխում. արհեստաւորների մէջ գումարել է ամսական մի 75 ֆրանկի չափ և եկել է. գիտէ՞ք ինչպէս է ապրում… Սակայն կըգիտենաք, ինչ հարկ ասել. 75 ֆրանկով ինչպէս կարելի է ապրել, համալսարանի վարձ տալ, հագնւել, գիրք առնել…

— Եւ կարողանո՞ւմ է նա լաւ պարապել. հարցրեց անգլիացին։

— Այո, գուցէ աւելի լաւ՝ քան բոլորս։ Նա, ի հարկէ, ո՛չ թատրոն է գնում, ո՛չ չմշկում է [1]), ո՛չ ձի նստում, ո՛չ պտոյտների գնում… Փող չունի, ապա թէ ոչ նա չէր կամենալ ապրել պանսիօնում ձեզ պէս, զւարճանալ, ծուլանալու հաճոյքն ունենալ…

Էմման աչքը չէր զատում խօսողից և հետաքրքրութեամբ զննում էր նրա դէմքի իւրաքանչիւր գիծը, իւրաքանչիւր արտայայտութիւնը։ Այդ նոր տիպը սկսել էր հետաքրքրել նրան։

— Բայց, բաւական է. շարունակեց Սուրէնեանը տխուր շեշտով—այս բոլորը կարող է ձեր քունը խանգարել… Մի ուրիշ անգամ. աւելի լաւ է, թող Շարլը մի բան նւագէ մեզ համար։

— Խնդրեմ. խօսեց Ջաննը—ինձ շատ հետաքրքրում է հայերէն լեզուն. արդեօք չէ՞ք կարող մի քանի տող արտասանել. մի ոտանաւոր, մի երգ։

— Այո, այո, հետաքրքիր է. ասացին բոլորը – մի բանաստեղծութիւն։

— Ի հարկէ կունենաք. ասաց մեղմ ձայնով Էմման—այդպէս տխուր կեանքով ժողովուրդը անշուշտ պիտի ունենայ բանաստեղծութիւն։

— Ունենք. ժպտեց Սուրէնեանը։

— Իսկ լեզո՞ւն. շարունակեց Էմման—նոյնպէ՞ս տխուր է հնչում, ինչպէս ձեր կեանքը։

— Չըգիտեմ… Ինձ ոմանք ասել են թէ նա կոշտ է, մի քանիսներն էլ՝ թէ մելամաղձոտ է։

---

[1]) Նոր շինած բառ. Ֆր. patiner և ռուս. кататься на конькахъ բառի համար. կազմած հայերէն չմուշկ (կօշիկ) բառից։

—Դէհ, ապա... գոչեց Հաննը – ես ուզում եմ լեզւաբանօրէն լսել. սկսեցէ՛ք:

Սուրէնեանը քիչ մտածեց, յետոյ ծանր, արտասանեց.

... «Եւ ասէին. «զՀայրենեացդ ասա մեզ բան, ո՛վ քեր-
թող. Հայաստանեաց եմք սիրող»:
«Օրհնեա՜լ էք դուք, ասպնջականք իմ պատւական.
Օրհնեա՜լ՝ որ սիրին զհէգ Հայաստան:
—Եւ հեծեցի, և գնային արտասուք.
Եւ ասէին. «Զի՞ քերթողին այսքա՛ն սուգ».
Զի՞ քերթողի՛ն այսքան սուգ...
Թողէ՛ք. յորդին Հայկայ գի՛ւր արտասուք»...

Ու լռեց, զգացւած խորունկ երգի արտայայտած վշտից:

—Թարգմանեցէք մեզ այդ. ասաց Իմման:

—Տէ՛ր, մելամաղձոտ լեզու է, խօսեց Հաննը—հետաքրքիր է թարգմանութիւնը:

—Թարգմանութիւնը սա է.

Et ils me disaient. „Poete, parle nous de ta patrie
Nous aussi nous aimons l' Arménie".
—Soyez bénis, mes hôtes vénérés.
Bénis soient qui aiment la pauvre Arménie!
Et j'ai soupiré et mes pleurs ont coulés;
Et ils disaient entre eux: „Pourquoi ce grand deuil
du poete"?
Pourquoi ce grand deule du poete ?
—Ah! laissez! les pleurs sont la seule consolation
de l' enfant de l' Arménie...

—Ա՛հ... ասաց Իմման—զգում էի որ այդպէս բան պիտի լինէր... Որքա՜ն խոր վիշտ կայ այդ տողերի մէջ... Այո՛, պարո՛ն, խօսէք մեզ ձեր հայրենիքի մասին, մենք ևս սիրում ենք Հայաստանը...

—Soyez bénis [1])!... կրկնեց երգի խօսքերը Սուրէնեանը:

—Դուք անպատճառ վաղը կըգրէք ձեր լեզւով այդ տողերը իմ ալբոմի մէջ... շարունակեց ջերմութեամբ Իմման—թարգմանութիւնն էլ տակը, իսկ ես այնտեղ կընկարեմ ձեր պատկերը... Եկէք ինձ մօտ վաղը, կէսօրից յետոյ...

Այդ միջոցին թէյն էին բերում: Թէյի ընթացքում այլ ևս ոչ մի խօսք չեղաւ հայերի մասին: Նախ, մի քանի րոպէ ամենքը լուռ, ճնշւած, չըխօսեցին, իսկ յետոյ խօսակցութիւնը դարձաւ զանազան նիւթերի վրայ:

Երբ միւսները խօսում էին, Իմման, մի քանի վարանումներից յետոյ, կռացաւ դէպի Սուրէնեանը և հարցրեց ցած ձայնով.

—Դուք ուրիշ պատճառներ ունի՞ք Ցիւրիխից հեռանալու համար, չէ՞...

Սուրէնեանը շփոթւեց:

—Չէ մի ասէք. խոստացէք ինձ որ կըպատմէք... Բարեկամ լինենք:

Ու դողդոջուն, կարմրած՝ ձեռքը պարզեց դէպի նա: Սուրէնեանը շփոթւած, յուզւած, ջերմութեամբ սեղմեց պարզւած ձեռքը:

—Գիտէք, շարունակեց Իմման—ես չեմ զարմանում որ Իրնստի էլէգիան դուք հասկացել էք... Ձեր սրտի մէջ, ինձ թւում է, որ կայ մի աւելի զօրեղ, աւելի խիստ էլէգիա... Երևի ձեր հայրենիքի վշտերն են այդ... Ինձ մի տեսակ բաւականութիւն է պատճառում մտնել այդպիսի վշտերի մէջ և տանջւել նրանցով...

Սուրէնեանը ուզեց խօսել, սիրտը ուռում էր, մի նոր ըզգացմունք, մի հաճոյալից բան մղում էր նրան դէպի այդ աղջիկը:

—Չըխօսէք... ասաց Իմման—աւելորդ է զռեհիկ բաներ ասել... Թողէք այդ...

Յետոյ նայեց նրան գրեթէ սիրալիր և ոտքի ելաւ, թէյի գաւաթը ցած դրեց ու բոլորին դառնալով՝ ասաց.

---

[1]) Օրհնեա՜լ լինէք:

—Լսեցէք, պարոննե՛ր, խնդրենք որ Ճալըը մի բան նուագի մեզ համար, մի զուարթ բան և դրանով վերջացնենք մեր երեկոյթը։

Կէս գիշեր էր, երբ երկու հիւրերը դուրս էին գալիս տիկին Չանրիէթի պանսիոնից։

Լուսինը դեռ լողում էր երկնակամարի վրայ. մի սառը քամի լճի կողմից փչելով՝ սկսում էր բուք կազմել փողոցների մէջ. լապտերները սկսում էին հանգել, անցուդարձը լիովին դադարել էր և հեռաւոր կառքերի խուլ շշուկներ միայն երբեմն խանգարում էին քաղաքի մէջ տիրող հանգիստն ու լռութիւնը։

Ե

Երբ Լօզան իջնող ճանապարհորդները դուրս եկան, շոգենաւակի նաւաստիներից մէկը, որ կանգնել էր նեղ կամուրջի ներսի ծայրին, կանչեց.

—Նա՛ւ մտէք...

Սկսեց ներս մտնել Ուշի կայարանում ժողովւած մեծ բազմութիւնն ու ցրւել շոգենաւի մէջ։

Օրը գեղեցիկ էր և տօն։ Մօնտրօյից, Վէվէից և շրջակայ այլ գիւղերից Նիօն կամ Ժընէւ գնացողներով լի էր տախտակամածը այնքան, որ նոր ներս մտնողները հազիւ կարողացան տեղ գտնել։ Չընայելով դրան, երկրորդ կարգի պատշգամի վրայ ճանապարհորդներ քիչ կային։ Աւելի շատ կանայք էին. մանաւանդ անգլուհիներ և գերմանուհիներ, որոնք պտոյտից էին վերադառնում։

Լիճը հանդարտ չէր, ջրերը ծփում էին, շոգենաւակը օրօրուելով, քիչ յետոյ թողեց նաւահանգիստը և սահեց ալիքների վրայ։

Պահ մի ճանապարհորդները խառնւեցին իրար, բայց քիչ յետոյ ամեն մարդ բռնեց մի անկիւն. շատերը իջան ներքնայարկ բիւֆէն և սենեակները. այդպիսով, Սուրէնեանը կարողացաւ բարձրանալ երկրորդ կարգի պատշգամի վրայ և ցուցին մօտենալ։ Այնտեղ մի անկիւն կար, որտեղից կարելի էր դիտել նաւի՝ ջուրը պատռելը։

Բայց հազիւ նստել էր, որ լսեց մի ձայն իր ետևից.

—Այդ դո՞ւք էք, պ. Սուրէն...

Դարձաւ։ Էմման էր։ Ախորժից յառաջացած կարմրութիւն երևաց երիտասարդի դէմքի վրայ։

—Դո՞ւք ուր էք գնում, հարցրեց աղջիկը։

—Ժընէւ, օրիո՛րդ. իսկ դո՞ւք.

—Ե՞ս... Նիօն. իմ մի բարեկամուհուս մօտ... Չլինի՞ արդէն զզւեցիք Լօզանից և Ժընէւ էք փոխադրւում։

Ու նայեց երիտասարդի ոտքերի մօտ, տեսնելու համար թէ ունէ՞ր հետը ճանապարհորդական պարկ։

Երկուսն էլ ոտքի կանգնած, մօտեցել էին ցուցին։

—Ո՛չ. ասաց Սուրէնեանը—մի քանի օրւայ համար եմ գնում։

—Ուրեմն շա՞տ կըմնաք այնտեղ։

—Գուցէ մի շաբաթ։ Հայրենակից ուսանողները մի երեկոյթ են տալու, գրել են ինձ որ գնամ։

—Ի՞նչ երեկոյթ. գրակա՞ն։

—Խառն նաև երաժշտական։

—Դուք ինչով կարող էք օգնել. մի՞թէ երգում էք։

—Ոչ. սակայն ես կօգնեմ նրանց՝ երեկոյթի կարգադրութիւնների մէջ։

Էմման լռեց մի վարկեան, նստեց և ասաց.

—Իսկ հետաքրքիր կըլինի՞ երեկոյթը։

—Երևի հետաքրքիր կըլինի. ամեն տարի լինում է այդպիսի երեկոյթ. նորօրինակ բաներ լինում են. ժողովրդական պարեր, երգեր... Այժմ ամեն կողմից եկած կըլինեն նաև հայեր. Լօզանից էլ կըգան... Դուք Ժընէւ եղե՞լ էք երկար, օրիորդ։

—Եղել եմ մի ամբողջ ձմեռ իսկ. սակայն այդպիսի երեկոյթներ չեմ տեսել։

—Ուրեմն եկէք գնանք. ձեզ հետաքրքիր կըլինի աւելի։ Այնտեղ շատ կըլսէք հայկական լեզուն, երգեր. կըտեսնէք շատ հայ երիտասարդներ, նաև օրիորդներ։

—Օրիորդնե՞ր… Հետաքրքիր է: Իսկ հայ օրիորդները գեղեցի՞կ են լինում:

—Մեր երկրում՝ այո. ժրնեւում գեղեցիկներ չըկան:

—Եւ ձեզ պէս նրանք էլ հայրենասէր են ու… մելամաղձոտ և տխուր:

—Բայց ես տխուր չեմ բոլորովին, օրիո՛րդ. ծիծաղեց Սուրէնեանը—ընդհակառակն, այսօր լաւ տրամադրութեան մէջ եմ:

—Տեսնում եմ…

Ասաց Իմման լրջութեամբ և քիչ լռեց: Յետոյ յանկարծ աւելացրեց.

—Ո՛չ. ես չեմ կարող գալ. ինձ սպասում են: Ե՞րբ է ձեր ճրեկոյթը:

—Հինգշաբթի երեկոյ… Դուք գուցէ կարդացի՞ք նորերս, որ Հայաստանում նորից սկսել են ճնշումներ և Վան քաղաքում թիւրք կառավարութիւնը բազմաթիւ ձերբակալութիւններ է արել:

—Այո. կարծեմ կարդացի. այժմ ինձ հետաքրքրում են կարծես հայերի վերաբերեալ լուրերը:

—Շնորհակալութիւն, օրիորդ… Ահա, երեկոյթը յօգուտ այդ բանտարկեալների է:

—Շատ լաւ… Դուք տոմսակներ ունի՞ք ձեզ մօտ:

—Ո՛չ, օրիորդ:

—Այնուամենայնիւ ես ձեզ 50 ֆրանկ կըտամ և կըխնդրեմ յանձնէք մասնախմբին իմ կողմից. անունս մի տաք սակայն. աւելորդ է:

Եւ ձեռքին բռնած դրամապանակից հանելով մի 50 ֆրանկանոց, պարզեց երիտասարդին:

Սուրէնեանը շփոթւեց այդ առատաձեռնութիւնից:

—Առէք… ասաց Իմման տխուր—ցաւում եմ որ աւելի չեմ կարող առ այժմ… Լուրը սոսկալի էր, լաւ յիշում եմ:

Եւ երբ Սուրէնեանը առնում էր, Իմման աւելացրեց մեղմ ձայնով.

—Գիտէ՞ք, երբ ուէէ պէտք ունենաք… Ո՛չ ձեզ համար, մի՛ վիրաւորւէք. եթէ պէտք ունենաք նպաստելու ձեր թշուառ

հայրենակիցներին, ինձ մի մոռանաք. ես կարող եմ միշտ, թէև ոչ շատ…

—Շնորհակալութիւն, օրիորդ. ասաց յուզւած Սուրէնեանը—դուք շատ բարի էք…

—Լռեցէք խնդրեմ. ասաց խստութեամբ Իմման, յետոյ, կամենալով խօսքը փոխել՝ հարցրեց.

—Իսկ դուք պարելո՞ւ էք:

—Ո՛չ, օրիորդ. ես վաղուց է որ այլ ևս չեմ պարում:

—Այլ ևս չէ՞ք պարում. և ինչու, կարելի՞ է իմանալ:

Երիտասարդը ոչինչ չըպատասխանեց:

—Չէ՞ք կամենում ասել. ասաց Իմման—… Գիտէք, պարոն, որ դուք շատ գաղտնիքներ ունեցող մարդ էք. դա լաւ չէ. ծածկամիտ մարդկանց ես չեմ սիրում. դուք ինձ հանելուկ էք թւում երբեմն. գուցէ սխալւում եմ, բայց ձեր բռնած դիրքը այդպէս է ենթադրել տալիս, և եթէ ենթադրութիւնս ճիշտ չէ, այն ժամանակ ձեր արածը դերասանութիւն է և դա ամօթ բան է…

—Բայց սխալւում էք, օրիորդ, բացագանչեց Սուրէնեանը նեղացած—ես նախ՝ ոչ մի այնպիսի ծանր գաղտնիք չունիմ, որ հանելուկ լինիմ. փոքր ինչ վշտեր, մասնաւոր բաներ… և եթէ ծածկում եմ, պատճառն այն է որ դրանք երբէք և ոչնչով չեն կարող ձեզ հետաքրքրել… Այստեղ դերասանութեան ոչինչ չըկայ:

Իմման և ոչ իսկ ներողութիւն խնդրեց Սուրէնեանին վիրաւորած լինելու համար. լռեց, քիչ նայեց ջրերին, ապա աչքերը սևեռելով Սուրէնեանին, ասաց.

—Իսկ եթէ հետաքրքրո՞ւմ են… Ես շատ հետաքրքրւող աղջիկ եմ. մանաւանդ ինձ հետաքրքրում է ձեզ ճանաչել: Ինձ թւում է որ դուք մեծ վշտեր և… մեծ մտքեր ունիք. թւում է որ այդ մտքերը սաստիկ տանջում են ձեր ուղեղը, ուզում են դուրս սլանալ, իրագործւել… Այդ լաւ է. դուք հետաքրքրում էք ինձ… Ասացէք բոլորը…

Սուրէնեանը դարձեալ լռեց և ակնարկը դարձրեց: Իմմայի խօսքերը սկսեցին շոյել նրան:

—Ես շարունակում եմ. ասաց Էմման—բայց չըվիրաւորւէք և եթէ մի բանում սխալւում եմ, ուղղեցէք. այդպիսով ձեզ աւելի շուտ կըճանաչեմ... Իսկ ես ուզում եմ ձեզ ճանաչել...

—Բայց... ի՛նչու, օրիո՛րդ:

—Ի՞նչու—չըգիտեմ. հետաքրքրում էք ինձ... Եւ խընդրեմ, գռեհիկ բաներ չըմտածէք. այդքանը ճշմարիտ կըլինի, եթէ իմանաք, որ դուք ինձ սաստիկ հետաքրքրում էք և երբ ես ձեզ հետ խօսում եմ, ուզում եմ միշտ խօսել. ձեր սըրտի եղածը իմանալով՝ իմն էլ ուզում եմ ասել... Գնանք այս կողմը նստենք:

Երկուսն էլ տեղ բռնեցին մի նստարանի վրայ:

—Այո. շարունակեց Էմման—ես ուզում եմ երկար, երկա՜ր խօսել ձեզ հետ: Չըգիտեմ ինչու, բայց ուզում եմ... Գիտէ՛ք, այդ տիկին Հանրիէթի պանսիոնը իր բոլոր բովանդակութեամբ և մանրամասնութեամբ ա՛յնքան զզւեցրել է ինձ, որ ես վաղուց է ոչինչ չեմ խօսել... Ձեզ ես չե՞մ ձանձրացնում:

—Բայց ո՛չ, օրիո՛րդ. ընդհակառակն:

—Խնդրեմ լռեցէք. հաճոյախօսութիւն մի՛ անէք. ջղերս են գրգռում հաճոյախօսութիւնները և եթէ մի հատ էլ լսեմ, կըսկսեմ ատել ձեզ:

Սուրէնեանը դողալ սկսեց յուզմունքից.

—Ես չըգիտեմ էլ անել. ասաց նա դողդոջիւն ձայնով:

—Աւելի լաւ: Դուք չըգիտէք թէ որքա՜ն անտանելի են այն բոլոր տղամարդիկ, որոնք հաճոյախօսութիւններ են հնարում, հաճոյանալ ճգնում՝ մեր մի ժպիտը ունենալու համար... Նրանք բոլորը կարծես իբր քաղցրեղէն են նկատում մեզ և ձեռք բերելու համար՝ շոյում են, իսկ ձեռք բերելուն պէս՝ ուտում, ոչնչացնում... Չէ՞ք ծիծաղում այս այլանդակ համեմատութեան վրայ:

—Իրաւունք ունիք, բաւական ծիծաղելի է... Սակայն ճիշտ է և այն, որ մենք տղամարդիկս, մեծ մասամբ, կանանց վրայ նայում ենք իբր հաճոյքի առարկայի վրայ: Նրանց շոյում ենք—վատ կողմերն իսկ շոյում. Նրանց քմահաճոյքները

քաջալերում. և այդ բոլորը նրա համար, որ գրաւենք նրանց ու մեր ձեռքը ձգենք. իսկ յետոյ...

—Այո, միջահատեց Էմման—գերի էք դառնում ձեռք ձգելուց առաջ, որպէս զի գերի դարձնէք ձեռք ձգելուց յետոյ... Բայց մենք խնդրից շեղւեցինք... Ես ասում էի որ մի տեսակ պահանջ եմ զգում, հաճոյք նոյն իսկ, երբ կարողանում եմ խօսել այս բոլորը և այլ շատ բաներ... Շատ է կուտակւել և երկար ժամանակ է որ չեմ խօսել: Ես սիրում եմ պեղել ուրիշի սրտերը. ամենքին, որոնց հանդիպել եմ, պեղել եմ և... գռեհկութիւն միայն գտել: Ուզում եմ ձերն էլ պեղել. զգում եմ որ նոր, լաւ բաներ կան այնտեղ... Բայց տեսէք, երբ այդ փափագը ծագեց իմ մէջ, դրա հետ միասին ծնեց նաև իմ սիրտը ձեր առջև բանալու ցանկութիւնը... Եւ այդ ինձ ուրախացնում է... Օհ, ես շատ բան ունեմ ասելու, շա՜տ... Եւ չըգիտեմ որտեղից սկսել...

Սուրէնեանը լուռ էր և չէր հասկանում այդ բոլոր կըցկտուր, միմեանց չըկապւող, աստոտուն խօսքերի շարժառիթը:

—Գիտէք ինչ. շարունակեց Էմման—ամենից առաջ ասեմ ձեզ որ ես շատ էլ անկեղծ աղջիկ չեմ: Ինձ մանկութիւնից, ամեն տեղ, բոլոր շրջաններում՝ սովորեցրել են կեղծել. չասել այն՝ ինչ մտածում եմ. ոլորապտոյտ խորամանկութիւններով հասնել խօսակցութեան կէտին, բուն նպատակին, ծածկել երազներս, մտածութիւններս: Սովորցրել են չանել այն, ինչ որ սիրտս է թելադրում, այլ այն, ինչ որ նրանք «վայելուչ» են անւանում և «քաղաքավարութեան պահանջ» ածականով նւիրագործում: Այսպէս, ես կիսովին փչացած եմ. և եթէ վարմունքիս կամ խօսելիքներիս մէջ հակասութիւններ գտնէք, խնդրեմ դա վերագրէք նրան, որ երբեմն անկեղծութիւնը յաղթում է կեղծութեան և երբեմն վերջինս առաջինին:

—Իսկ ինչպէս իմանալ այդ «երբեմները». ժպտեց Սուրէնեանը:

—Ես ինքս կասեմ իսկոյն յետոյ, կամ առաջ: Գուցէ և չասեմ. այնպէս, ըստ սովորութեան, ըստ վարժութեան՝ չասեմ: Սակայն այս րոպէիս իմ մէջ անկեղծութիւնն է տիրում և...

ես զգում եմ, որ քանի հեռու լինիմ այդ պանսիոնից, այդպիսի շրջաններից, այնքան աւելի անկեղծ կըլինեմ։ Բայց վախենում եմ անկեղծ լինելուց... Ձեզ հետ ես անկեղծ եմ... Այո. այժմեան Նիմման այն չէ, ինչ որ տեսել էք ուրիշների ներկայութեամբ կամ ինչ որ պիտի տեսնէք մարդկանց մէջ։

—Ուրեմն դուք անկեղծ էք այն ժամանակ, երբ մենակ էք...

—Դուք ծաղրօրէն էք ասում, բայց այդ ճիշտ է. երբ մենակ եմ իմ երազների, իմ զգացումների հետ, երբ հեռու եմ այդ բոլոր «վայելուչ» և «քաղաքավարի» մարդկանցից... Օ, ինձ փչացրել են. տեսէք. ես մինչև իսկ հակւում եմ էլի անկեղծ չըլինելու...

Եւ մանկական մի ցաւալի, ամօթահար հայեացք նետեց երիտասարդի վրայ։ Սուրէնեանը ուզեց խօսել։

—Ոչինչ չըխօսէք... արգելեց ձեռքով Նիմման – գուցէ դուք էլ հէնց փչացած էք ինձ նման, կրթւած վայելչութեան ու քաղաքավարութեան մէջ և վախենում էք անկեղծութիւնից... Ա՜խ, ո՜րքան կուզէի ապրել անկեղծ մարդկանց, գաղափարներով՝ յիմարութեան չափ ոգևորւող, վայելչութեան Աստծոյ վրայ միշտ քար նետող, քաղաքավարութեան կուռքը ցեխոտող մաքուր, ազնիւ ու մեծ մարդկանց մէջ. մարդիկ, որոնք անկեղծ ու մինչև մահ՝ զոհեն ինքզինքնին ուրիշի, հասարակութեան, մարդիկ՝ որոնք այնքան անկեղծ լինեն, որ իրանք իրանց սրտի առաջ իսկ՝ իրանց մեղադրելու ոչինչ չունենան... Մարդի՛կ, որոնք եռանդով գործեն, շարժւեն, ո՛չ ուտելու, ո՛չ հագնելու, ո՛չ վայելչութեան և ո՛չ էլ քաղաքավարութեան ուշք դարձնեն և որոնք միշտ հալածւեն, կռիւ մղեն, ընկնեն, կանգնեն... Կռի՜ւ, կռի՜ւ... Ո՜րքան սիրում եմ կռիւ և կռւող մարդկանց... Դուք այդպէս չէ՞ք, սխալւե՞լ եմ արդեօք մտածելով որ դուք այդ մարդկանցից էք... Ձեր ծածկամտութիւնը ինձ հիասթափեցնում է։ Ես նկատել եմ որ անկեղծ եղել էք ինձ հետ, բայց ծածկամիտ, չէ՞ք վստահում ինձ. վախենում էք որ ծիծաղե՞մ ձեր ոգևորութիւնների, երազների վրայ... Ո՞չ... Ուրեմն ինչու ծածկամիտ էք, ինչու էք ծածկում ինձնից ձեր

մտածածը, ձեր ապագայի ծրագիրը... Ա՜խ, եթէ հնարաւոր լինէր ոչինչ գաղտնի չունենալ աշխարհում. ամեն ինչ բանալ, բաց լինել, անկեղծ և ուղիղ...

— Բայց, օրիո՛րդ...

— Գիտեմ ինչ էք ասելու։ Որ կան չարամիտներ, որոնք կօգտւեն դրանից ո՛չ միայն ձեզ, այլ ձեր մտքերին վնասելու համար. գիտեմ այդ. ինձ այդ շատ են կրկնել, անդադար կըրկնել... Բայց վերջերս ես սկսել եմ մտածել թէ ինչու մարդիկ չարամիտ են լինում և գտել եմ որ դրա պատճառը նոյնպէս կեղծութիւնն է։ Երբ կեղծ են, միմեանց մտածածը չըգիտեն և դրա համար էլ դիմում են ամեն տեսակ խորամանկ միջոցների, որպէս զի իմանան։ Եւ ինչու մարդիկ միմեանցից ծածկում են իրանց մտադրութիւնը—որպէս զի միմեանց վնասեն, միմեանցով ապրեն, միմեանց կլանեն։ Սա նման է հնդկական մի անտառի, ուր մարդիկ մտել են թփերի ետևը, և թունաւոր նետերը լարած՝ դարանում են միմեանց, նետահարում... Վա՜յ նրան, ով խորամանկ չի լինիլ, ով կեղծ չի լինիլ—նա ամենից շուտ կ'ոչնչանայ... Ի՞նչու էք դուք ինձ վրայ նայում այդպէս այլանդակ հայեացքով։

Սուրէնեանը շփոթւեց և ակնարկը դարձրեց ուրիշ կողմ։

—Շատ տարօրինակ էք նայում. կարծես ուզում էք մըտածել թէ ես ջղային դրութեան մէջ եմ այս րոպէիս, չէ՞...

—Բայց երբէ՛ք, օրիորդ, արդարացաւ Սուրէնեանը—ընդհակառակն ես մտածում եմ թէ որքան լաւ, թէև կցկտուր— արտայայտում էք այն բոլորը, ինչ որ իմ մտքովն անցնում է յաճախ և որոնց ես մի քանի անգամ կոչել եմ հիւանդ մտածութիւններ.. Դուք ուզում էք որ մարդիկ անկեղծ լինեն, իդէալներ, կռւելու եռանդ ունենան և այսքան չար ու տափա՛կ չըլինէին... Ե՛ս էլ խորհել եմ այդ մասին, բայց կան հանգամանքներ, օրիորդ, որ ստիպում են կեղծել, որ կտրտում են թռչունի սլացող թևերը, բթացնում բարձրացրած զէնքը, մեռցնում եռանդը...

—Հանգամանքնե՜ր... ասաց Նիմման—գիտեմ այդ և... գիտէ՞ք, ինձ համար հերոսը հէնց նա է, ով դէմ կըրթայ այդ

բոլոր, բոլոր հանդամանքներին, գլուխը փշրելիս լինի անգամ դէմ կերթայ... Ես մոռանում եմ ամեն ինչ, երբ կռիւ կայ, երբ եռանդ կայ...

Յետոյ մէկէն, այդ ասելով՝ Իմման լռեց, գլուխը ջրերին դարձրեց և մնաց մտախոհ: Սուրէնեանն էլ լուռ էր: Այդ միջոցին շոգենաւը, որ յաճախ կանգ առնելով նաւամատոյցների մօտ, դուրս էր հանում և ներս առնում ճանապարհորդներ, անցաւ մի կղզեակի առջևից: Քիչ յետոյ Նիօն կըհասնէին:

—Նիօ՛ն. ասաց Սուրէնեանը:

Իմման ցնցւեց և սթափւեց:

— Դեռ տաս րոպէի ճանապարհ կայ. ասաց նա մեղմ ձայնով և աւելացրեց—ափսոս. խօսելու փափագ ունիմ դեռ... Ես գրեթէ ոչինչ չիմացայ ձեր մասին...

Սուրէնեանը պահ մի չըպատասխանեց, յետոյ նայեց շէկուհուն և ասաց.

—Իմ մասին մի ուրիշ անգամ, օրիորդ. բայց այժմ կուզէք լսել անկեղծօրէն ասւած մի քանի խօսք ձեր մասին:

— Իմ մասին. հարցրեց օրիորդը վախեցած—բայց խընդրեմ, խնդրեմ... Խիստ չըլինէք սակայն, առանց այն էլ ես ինձնից շատ դժգոհ եմ .. մանաւանդ այս րոպէիս...

—Տեսնում եմ այդ. բայց բաւական չէ միայն դժգոհ լինել. հարկաւոր է քիչ էլ իմանալ թէ ինչից է այդ...

—Դուք գիտէք... գունատւեց Իմման ոտքի ելնելով:

— Ե՞ս... դեռ ոչ... բայց ներեցէք, ես ուզում էի հարցնել ձեզ մի այլ բան: Դուք ո՞րտեղ էք ուսել:

—Ո՞ւսել... կարմրեց Իմման— ես գրեթէ ուսած չեմ, միայն կանանց միջնակարգ դպրոցն եմ աւարտել. իսկ դա, յայտնի բան է—ոչինչ:

—Ուրեմն եկել էք Լօզան ուսանելու:

—Ո՛, ո՛չ. ծիծաղեց Իմման—պարզապէս ֆրանսերէնս կատարելագործելու. այլ և ծնօղներս կամեցան որ ես քիչ ճանապարհորդեմ, օտար երկիրներ տեսնեմ: Եւ գիտէք, ինձ թըւում է թէ ես շա՛տ տգէտ եմ. տգէտ՝ մանաւանդ գիտական հարցերի մէջ մանուկի պէս տգէտ: Ո՛չ թէ նրա համար, որ

անընդունակ եմ եղել սովորելու, այլ որովհետև լրջութեամբ ոչինչ չեմ սովորել... բայց շա՛տ կարդացել եմ. և ինչեր չեմ կարդացել: Սակայն, որ ասէք յիշո՞ւմ եմ մի բան կարդացածներիցս.—երբէք. միայն ռոմաններն եմ յիշում. այն էլ մի քանիսների պատմածները միմեանց խառնւած, մէկը՝ միւսի փոխարէն... Յիշում եմ գեղեցիկ սիրային տեսարաններ, համբոյրներ ծառերի տակ, լուսնկային սիրային կրկնւած, երեքկնած բառեր, ապա սովորական ինտրիգներ, հոգեկան պարզ երևոյթներ...

—Իսկ լուրջ գրքերից ո՞չինչ չէք կարդացել:

—Դժւա՛ր թէ յիշեմ... ծիծաղեց Իմման—բայց եթէ դուք անունները տաք՝ կարող եմ ասել կարդացե՞լ եմ թէ ոչ. միայն, բովանդակութեան մասին ո՛չինչ չըհարցնէք... օրինակ, մինչև իսկ Դարւինի մի գիրքն էլ եմ կարդացել... ինչպէս է վերնագիրը...

—«Տեսակների ծագումը»:

—Այո՛... այդ. խոստովանւում եմ, գրեթէ չըհասկացայ. յետոյ ուրիշ գրքեր կարդացի, իմանալու համար այդ գրքի միտքը և այժմ քիչ գաղափար ունիմ դարւինիզմի մասին... բայց ահա Նիօնը... ուրեմն դուք մի քանի օր Ժընէւ կըմնաք... երեկոյթը հինգշաբթի է...

—Այո, օրիորդ.

—Ափսոս, որ ես չեմ կարող գալ... յաջողութիւն. լաւ զւարճացէք. դուք պէտք ունիք դրան. և... մոռացէք իմ այլանդակ խօսքերը. կարծեմ շատ էլ խելօք բաներ չասացի. չըգիտեմ. մի տեսակ պահանջ եմ զգում երբեմն այլանդակ բաներ ասելու. բաներ, որոնք սովորական չեն և որոնք սակայն անմիտ էլ չեն. արտայայտելու մէջ միայն դժւարանում եմ:

—Ընդհակառակն, օրիորդ. դուք շատ լաւ էք արտայայտում բոլորը. չէ որ ես էլ երբեմն մտածում եմ այդպիսի «այլանդակ» բաներ. որքան շատ բաներ խորհէք, շատ պարզաբանէք ու ձևակերպէք այդ «այլանդակութիւնները», այնքան նրանք աւելի վսեմ կըլինեն և բարձր:

—Շնորհակալ եմ. քաջալերում էք ինձ... դէհ, ահա մօտեցանք. տեսնւենք նորից... բարեկամներ ենք, չէ՞:

Սուրէնեանի սիրտը սկսեց ուժգնապէս բաբախել, երբ Էմ-մայի ձեռքը իր ձեռքի մէջ զգաց:

Էմման գունատուեց, շտապմամբ ետ քաշեց ձեռքը և արագութեամբ մօտ գնաց նաւի եզրին:

Շոգենաւը մօտեցել էր նաւամատոյցին և դրսից կամուրջ էին պարզում: Անցորդները խռնուել էին:

Էմման, որ երեսը դէպի ափը դարձրած, հեռացել էր Սու-րէնեանից, յանկարծ մօտեցաւ նրան և գունատ՝ ասաց.

— Ես, գիտէք ինչու դժգոհ եմ ինձնից... որովհետև...

Ու չկարողացաւ շարունակել: Դէմքը կնճռեց, նորից ձեռ-քը պարզեց Սուրէնեանին և այս անգամ, գրեթէ գահավիժ-մամբ՝ դուրս թռաւ նաւակից դէպի նաւամատոյցը:

Սուրէնեանը զարմացած մնաց. ինչ էր եղել, ինչ էր ու-զում ասել Էմման:

Զ

Ժընևի Րութ-դը Կարուժ (Route de Carouge) կոչուած մեծ փողոցի վրայ էր բնակւում բժշկական ուսանող Պօղոսեա-նը: Նրա սենեակը հայ ուսանողների ժողովատեղին էր դարձել գրեթէ: Այնտեղ էր, որ հաւաքւում էին նոքա՝ եթէ ոչ ամեն օր, գոնէ շաբաթը մի քանի անգամ՝ մանաւանդ կիրակի և տօն օրերը: Այնտեղ էր որ հայ ուսանողները միմեանց հետ էին շփւում գաղափարներով. ապագայի մասին պլաններ կազմում, դատափետում կամ քաջալերում և իրանց ապառնի գործու-նէութիւններով ոգևորւում:

Պօղոսեանի սենեակը բաց էր ամենքի համար: Նրա մօտ գալիս էին մինչև իսկ հրէայ և ռուս ուսանողներ: Նրա սպիրտի լամպը միշտ վառ էր, ջուրը վրան եռում, գաւաթները բո-կողքին սպասում և թէյն ու շաքարը, այլ և մի քիչ ուտե-լու բան—պանիր կամ ապուխտ, թղթի կտորների մէջ՝ դարա-նի վրայ դրուած լինում:

Երբեմն, երբ հաւաքուած, խմած ու կերած բոլորը, ծխով լցնում էին սենեակը և մինչև գիշեր՝ վիճելուց յոգնում էին. երբ թէյամանի մէջ այլ ևս թէյ չէր մնում կամ դարանի վը-

րայ կըղոտ դատարկ թղթեր էին միայն երևում – ուսանողնե-րը խմբովին իջնում էին դէպի Պլէնպալէի արօտաձեւ դաշտը, նրա ծառերի տակ նստոտելու և կամ Բուա-դը լա Բաթիի պուրակը մտնում, նրա ծառուղիների տակ լուսնկայի զբօսնե-լով երգում և վիճաբանութիւնը շարունակում: Յետոյ, շատ անգամ մինչև կէս գիշեր լճափի փարոսի հրուանդանի վրայ մնալով, խաղաղ ջրերն էին դիտում և կամ խմբովին թատրոն լինելուց յետոյ, անցնում էին փողոցներով և երգելով տուն գնում:

Հարուստներ գրեթէ չկային նրանց մէջ. բոլորն էլ սուղ միջոցներով էին: Այդ ժամանակ թէև Ժընևի հայ ուսանողութիւնը երկու կուսակցութեան պէս բանի էր բաժանուած, թէև մի ոմն Ամբատեանի սենեակն էլ մի տեսակ կենդրոն էր դարձել որոշ գաղափարով համակուած ուսանողների, սակայն Պօղոսեանի սե-նեակում աւելի շատ էին հաւաքւում և աւելի յաճախ:

Ձմեռուայ այդ երեկոյ, Պօղոսեանը դեռ մենակ էր և նըս-տած բազկաթոռի մէջ, մտախոհ, մոռացել էր անգամ ճրագ վառել. իսկ սպիրտի լամպը, որի վրայ դրուած ջուրը եռում էր, տժգոյն ու աննշան լոյս էր սփռում սենեակի մէջ:

Սենեակը բաւական մեծ էր և անշուք կերպով կահաւո-րած: Մի լայն անկողին, մի պահարան, որի վրայ կէս դարս-ուած և կէս թափթփուած գրքեր ու թղթեր, յետոյ վառարան-նը որ վառւում էր և մօտին ունէր քարածուխի արկղը, ապա մի լուացարան, մի քանի աթոռներ, մի օթոց և մի բազկա-թոռ, եթէ չյիշատակենք պատերի վրայ զամուած զանազան իւղաներկ պատկերներ, որոնք տանտիկնոջ էին:

Առջևը դրուած սեղանի վրայ Պօղոսեանն ունէր գրիչ, թա-նաքաման, ֆրանսերէն կիսաբաց գրքեր, մի թէյի բաժակ ան-լուայ, ափսէի մէջն էլ պապիրոսի մնացորդներ, մոխիր, լուց-կի... Եւ այդ բոլոր խառնուրդի կողքին ինքը Պօղոսեանը, որ շատ ծխել էր, ծխով լցրել սենեակը, մանաւանդ իր նստած բազկաթոռի և նրա թևի վրայ խոնարհած գլխի շուրջը:

Ահա այդպիսի դրութեան մէջ էր նա, երբ դուռը բաղ-խեցին:

— Մտէք, ասաց նա և շարժուեց ելնելու:

—Տօ, այս ինչ ես եղել, չես երեւում. լսեց մի խոշոր ձայն և ներս ընկաւ մի երկարահասակ երիտասարդ—ո՞ւր էիր. բնախօսութեան դասին չէիր եկել:

—Բնախօսութի՞ւն... մռմռաց Պօղոսեանը և լուցկի փընտռեց լամպը վառելու—մոռացել էի:

—Հ՛ըմ, մոռացել էիր... Ի՞նչ ես ունքերդ կիտել և փիս պառաւի պէս մրթմրթալով խօսում:

Ասաց եկողը, յետոյ վերարկուն դէն ձգեց և ընկաւ օթոցի վրայ: Համակրելի դէմքով, քսանհինգամեայ անձն էր եկողը. փոքրիկ կլոր մօրուքով, սեւ աչքեր, սրածայր երկար ընչացք, կարմիր թշեր, նեղ, բայց լաւ ճակատ, հայկական կոր քիթ: Հագնուած էր պարզ և խեղճ: Նա էլ բժշկական ուսանող էր Կովկասից: Երկար ժամանակ էր որ Ժընէւ էր և Պօղոսեանի հին դասընկերներից լինելով՝ վաղուց ծանօթ էին միմեանց: Իր շարժուածքների մէջ Դանիէլեանը արտայայտում էր պարզութիւն և համարձակութիւն:

—Հը՞, չայ չե՞ս պատրաստում. ասաց նա պահ մի Պօղոսեանի տխուր դէմքը դիտելով—դէհ, վեր կաց. ուտելու բան չունի՞ս:

—Քիչ կայ.

—Ադա, դէ կոլէր է է... էդ ինչ անհամ դէմք ունիս այսօր. փո՞ղ չունիս էլի. թէ՞ սենեակիդ վարձն են ուզում:

—Ո՛չ մէկը և ո՛չ միւսը. ժպտեց Պօղոսեանը—պարզապէս լաւ տրամադրութեան մէջ չեմ:

—Հը՞մ... որ չե՞ն ասում տրամադրութիւն—բարկութիւնըս է գալիս: Տօ, տրամադրութի՞ւնս որն է, բժշկական ուսանող ես, այս տարի բնախօսութեան քննութիւն ես տալու և դեռ էլի բնազանցութիւն ես կարդում գլխիս առանց ոեւէ պատճառի. վատ ու լաւ տրամադրութի՞ւնս որն է: Զըլինի էլի հին ու մին ցաւերդ ես միտդ բերել... Հ՛ըմ, ախմա՛խ, վե՛ր, վեր կաց չայ շինիր... որ ապուխտ ունենայիր է, դէմքդ թըթու վարունգի տեղ կըբռնէր...

Եւ Դանիէլեանը, իր այդ մխիթարական այլանդակ ճառն արտասանելուց յետոյ, մի պապիրոս շինեց, գլխարկը շպրտեց կողքին, բաց ու խուփ արաւ մի քանի գրքեր և յարեց.

—Սերգօն չէ՞ եկել դեռ.

—Դեռ ոչ. երեւի կըգայ: ժողովը 8-ին է նշանակուած... Բնախօսութիւնը ինչի մասին խօսեց:

—Է՛հ, հոգիներս հանեց իր «կենդանական տաքութիւնով», թւերովը և այլն և այլն...

Լռեց քիչ, վառեց պապիրոսը, մէջքի վրայ պառկեց բարձին և առանց ժպտելու ասաց.

—Հա՛. Թէրէզը քեզ էր հարցնում, ասում էր խօ հիւանդ չե՞ս:

—Ի՞նչ ասացիր:

—Ի՞նչ պիտի ասեմ. ես էլ նրա՛ն հարցրի թէ ո՞ւր է էն ախմախը, խօ հիւանդ չէ՞:

—Հէնց այդպէ՞ս ասացիր, «էն ախմա՛խը»...

—Հա՛ տօ. ինչի չեմ ասել:

—Շնորհակալ եմ. ծիծաղեց Պօղոսեանը—Թէրէզն ինչ ասաց.

—Է՛հ, զահլէս մի տանիլ—«Թէրէզան ինչ ասաց, դու ինչ ասացիր»—... խօսեցինք էլի: Ես քեզ «ախմախ» կոչեցի, նա էլ՝ «Թոյլ»:

—Թո՞յլ... ինչ թէ թոյլ:

—Թոյլ էլի, վա՛... Ես չեմ իմանում, բնաւորութեանդ համար էր ասում թէ՞ կազմուածքիդ:

—Կազմուածքիս համար ասած կըլինի:

—Մխիթարուիր դրանով... Տօ, չայիդ նայիր է. ջուրը եռում է:

Պօղոսեանը ռւելեայն մօտ գնաց սպիրտի լամպին, թէյ պատրաստեց, յետոյ լամպը վառեց. իսկ Դանիէլեանը ելաւ օթոցից, մի պտոյտ գործեց սենեակի մէջ և գնաց դէպի լուսամուտը, որի առաջին էր դրուած գրասեղանը:

—Հը՞. ասաց նա նկատելով մի նամակ—էլի նամակ ես ստացել. խօ Սերովբ աղայիցդ չէ՞:

—Նրանից է:

—Ի՞նչ է գրում:

Պօղոսեանը չըպատասխանեց. գաւաթները ողողեց, դարա-

նի վրայից մօտ բերեց ինչ որ կար ուտելու և այդ բոլորը դարսեց սեղանի վրայ, միմեանց մօտ կիտելով եղած թղթերն ու գրքերը։ Դանիէլեանը հետեւում էր նրա շարժումներին և պատասխանի սպասում։

—Ուրիշ ոչինչ չունիմ ուտելու. ասաց Պօղոսեանը։

—Տօ, ո՞վ է ուտելին ուզում... դու էն ասա, թէ այս նամակի մէջ ինչ կայ։

—Ոչինչ նոր բան չըկայ... բայց նստիր, քեզ մի բան պիտի հարցնեմ։

—Հարցրո՛ւ, կանգնելս ինչ է խանգարում քեզ։

—Լաւ։ Ապա՛, թէ կարող ես՝ մեկնիր այս խօսքերի իմաստը. «Առաջ ձէթն էր էժան այդտեղ, իսկ այժմ իւղը»... Ի՞նչ կըհասկանաս սրանից։

—Ո՞նց, ո՞նց... աջ աչքը քիչ փակեց Դանիէլեանը և ականջը պարզեց դէպի նա—մէկ էլ ասա՛։

—Ա՛յ, պարզեմ։ Դու խօ գիտես, որ բարդուցի այդ հարուստ աղան ինչպէս է փող ուղարկում ինձ. գիտես որ քանիցս խնդրել էի որ կանոնաւոր ուղարկի. այս անգամ նա խիստ վիրաւորուել է և պատուիրել է իր այն օձի նմանող պառաւ քրոջը որ գրի թէ...

—Հ՛րմ, այո, միջահատեց Դանիէլեանը—որ գրի թէ «առաջ ձէթն էր էժան, իսկ այժմ իւղը»... փո՛ւհ, լաւ հօտ չէ գալիս ո՛չ ձէթից, ո՛չ էլ իւղից։

Ու նստեց օթոցի վրայ և սկսեց աջ ձեռքով ընչացքի ծայրը ոլորել։

Ես էլ զգում եմ, շարունակեց Պօղոսեանը—արդեօք չէ՞ կամենում ասել թէ՝ «երես տուինք, աստառն էլ է ուզում»...

—Հ՛րմ... մի քիչ նմանում է. ասենք՝ որ լաւ մտածես, սկի ձէթի և իւղի էժանութիւնը երեսի և աստառի հետ կապ չունի։

—Ե՛ս էլ երկուացայ։ Չես իմանում թէ ամբողջ օրը ինչ դրութեան մէջ էի այդ երկութիւնը փարատելու համար։ Ամեն հանդիպողի հարցնում էի, թէ ինչ է նշանակում այդ ձէթի և իւղի այլաբանութիւնը։ Մարդիկ չէին ըմբռնում... Երեւա-

կայիր թէ մինչև իսկ ինչ արի։ Սաստիկ յուզուած, գնացի որ օրիորդ Բարութեանին հարցնեմ։ Ներսում կարծեմ գլուխն էր լւանում։ «Ի՞նչ կայ». հարցնում է ներսից և դուռը քիչ բաց անում. ես դրսից հարցնում եմ «օրիորդ, գիտէ՞ք արդեօք թէ ինչ են նշանակում այս խօսքերը». և ասում եմ խօսքերը... Մի վայրկեան քարանում է, յետոյ դուռը քթիս փակում և գոչում... «Գնացէ՛ք բաներիդ ձեր ձէթի և իւղի հետ, ես գլուխս եմ լւանում»...

—Յետո՞յ, յետո՞յ. ասաց Դանիէլեանը, որ այդ պատմութեան ժամանակ միայն ծիծաղում էր—նամակը տուր ինձ մէկ կարդամ։

Եւ առանց սպասելու որ Պօղոսեանը տար, ինքը վերցրեց սեղանի վրայից, կարդալով մօտեցաւ նորից օթոցին, նստեց ու խորասուզուեց կարդալու մէջ։

Պօղոսեանը կանգնած կողքին՝ դիտում էր ընկերոջ դէմքի արտայայտութիւնը, երբ դուռը նորից ծեծեցին։

—Մտէ՛ք. ձայնեց նա։

—Սերգօն է. ասաց Դանիէլեանը՝ դադարելով կարդալուց։

Դուռը բացուեց։ Մտնողը մի չաղ, կարճահասակ շէկ երիտասարդ էր՝ կապոյտ աչքերով և սուր մօրուքով։ Համակրելի և մինչև իսկ գեղեցիկ դէմք էր. հագել էր նոյնպէս խեղճ, բայց աւելի խնամքով և մաքուր։

—Բարև, ասաց նա կարճ և սկսեց վերարկուն հանել—այս ինչ է, դեռ չե՞ն եկել... Չա՛յ ունի՞ք. ես էլ կուզեմ...

Յետոյ դարձաւ.

—Այդ ինչ նամակ է. ասաց նա – ինչ կայ։

Երկու երիտասարդները լուռ էին։

—Վա՛... շարունակեց նա—ինչ կայ է՞... Ի՞նչու այդպէս դէմքեր. խօ մի դժբախտութիւն չէ՞ պատահել։

—Ընդհակառակն. ասաց Պօղոսեանը ժպիտով—փող եմ ստացել։

-Վա՛. լաւ, լաւ. աչքդ լոյս. դէհ, էլ ինչ կայ տխրելու։ Խօ կեղծ թղթադրամներ չեն...

—Կե՞ղծ... գոչեց Դանիէլեանը ծիծաղելով – էդ ինչ տեսակ

ֆանտազիա է, տօ, կեղծ թղթադրամներ ինչու պիտի ուղարկեն։

—Հ՛րմ... բանի բարեբարութիւնից կեղծ թղթադրամներ իսկ սպասելու է։

—Չէ, կեղծ չեն, ահա տես. ասաց Պօղոսեանը դրպանից մի տասնոց հանելով—և միտս ընկաւ, քեզ փող եմ պարտ, ահա առ փոխիր և վերցուր։

—Հա՛... եթէ պէտք չունիս՝ կառնեմ. մի սու իսկ չունիմ. *մերսի* [1]) ծխելով հոգիս դուրս եկաւ։

—Վերցուր, վերցուր. ժպտեց նորից Պօղոսեանը—բայց Սերովբ աղայի թքի հետքը կայ անշուշտ այդ փողի վրայ։

—Ի՞նչպէս, վո՞նց. ինչ թուք, տօ, գոչեց Սերգօն և մեքենաբար ձեռքից բաց թողեց թղթադրամը։

—Այո, քրքջաց դառնութեամբ Դանիէլեանը. առաջ թքել են դրա վրայ, յետոյ ուղարկել։

—Ցո՞րս, եա քաշեց Սերգօն—ես առ փողդ, ախպէր. չեմ ուզում. առանց էն էլ՝ իմ ստացած փողերս իմինի թըքով ու մուրով են ծեփւած լինում։

Սերգօն էլ թիֆլիսեցի մի աղքատ տղայ էր և մի «բանի պնդերեսութեամբ գտնւած բարերարի» թօշակաւոր։

—Ետ առ, ախպէր, յարեց նա հառաչելով—բարեբախտ ես սակայն, որ առաջին անգամն ես թուք ու մուր ուտում... իսկ ես. ա՛յ, մինչև էստեղս է հասել։

Եւ նա ցոյց տւաւ կոկորդը, յետոյ դունատ և յուզւած, սկսեց թէյ ածել գաւաթների մէջ։

—Այո՛, շարունակեց նա դողդոջուն ձայնով—վա՛յ աղքատին, աղքա՛տ ես—թուք էլ պիտի ուտես ու մուր էլ։ Հարուստները մի քանի րուբլի են տալիս քեզ և իրաւունք են համարում զգացմունքներիդ դիպչել, անձնասիրութիւնդ վիրաւորել. առանց ստորացնելու ոչ մի բարերարութիւն չեն ուզում արած լինել. գուցէ շատ անսովոր, անհեթեթ են գտնում տեսնել մի աղքատի մէջ անձնասիրութիւն։ Աղքա՛տն ինչ, հպարտութիւնն ինչ. մի կտոր ուտելու հաց չունի—քթները Մասիսի գա-

[1]) Վատ տեսակի ծխախոտ։

գաթիցն է ջուր խմում. աղքատ էք՝ ուրեմն տարէք ամեն ինչ և չըհամարձակւէք նեղանալ... ճաքո՛րդ ուր է։

—Այնտեղ է, վերցուր։

—Հացդ քիչ է, գնա քիչ ուտելու բան բեր, հիմա որ թափւեն, ինչպէս ես կշտացնելու։

—Երբոր կըգան՝ այն ժամանակ.

—Հա՛... շարունակեց Սերգօն քիչ լռութիւնից յետոյ—հասկանո՞ւմ էք. աղքատ ես. ուրեմն իրաւունք չունիս անձնասիրութիւն ունենալու։ Երեք տարի է այս գիտէք. երեք տարի է որ կերածս միայն թուք ու մուր է. ամեն փող ուղարկելիս՝ մրթմրթում են. Նամակ չի լինում, որ մի կծու ակնարկութիւն, հպարտ խօսքեր, վիրաւորիչ խորհուրդներ չունենայ իր մէջ. «հ՞ը, չըպրծա՞ր» հարցնում են. «միթէ իրաւ ապրուստը այդքան թանգ է այդտեղ. ամսական 50 րուբլով խօ հինգ մարդ կարող է ապրել»։ Էհ, ո՞ր մէկն ասեմ... տուր, փող տուր ես գնամ հաց բերեմ. ինչ կուզէք, պանի՞ր, թէ ժամբօն։

Պօղոսեանը փող տւեց նրան։

—Երկուսն էլ, ասաց Դանիէլեանը։

Սերգօն գլխարկը դրեց և դէպի դուռը քայլեց, բայց այնտեղ կանգ առաւ.

—Հա՛, տօ, ասաց նա—չասացիք ինձ թէ այդ ինչ նամակ է և կամ ինչի էք թթւել։

—Գնա, գնա՛, պատասխանեց Դանիէլեանը—ուտելիքը բեր և յետոյ կասենք։

Ու շարունակեց նամակը կարդալ։ Բայց հազիւ թէ դարձրել էր միւս երեսը, որ դուռը ուժգնութեամբ, առանց բաղխելու բացւեց և դռան վրայ երևեցաւ մի կարճահասակ, դրեթէ պատանի։

—Բարև, ասաց նա—ես դուռը չըծեծեցի. չիմար բան է. դեռ չե՛ն եկել։

Ու մօտեցաւ, վերարկուն հանեց, սաստիկ կարմրել էր. բացի դրանից, հէնց ամեն խօսք ասելիս, մի տեսակ մանկական կերպով ամաչում էր ու ժպտում։ Պատանի էր, կարծես 20 տարեկան. փոքրիկ, բարի և անմեղ դիմագծերով։ Բայց Կօլեան

շատ էլ փոքր չէր. 25-ից աւելի էր և 4-րդ տարին էր, որ ժընէւ էր եկել բժշկութիւն սովորելու և դեռ չէր էլ մտածում սկսելու: Շատ էլ բարի էր. ով ասես —հրէայ և բուլղար, ժընէւցի ու իտալացի՝ որ փքուն ճառերի ոգևորուած ճռճռան խօսքերի շնորհիւ՝ նրանից փող կորզած չլինէին:

Բայց Կոլեան համոզուած էր իր գաղափարների մէջ և դա էր որ նրան յարգելի էր դարձնում: Վերին աստիճանի մաքուր ու բարի, ուղղակի մանուկի տպաւորութիւն էր թողնում: Ուսանողութեան մանուկն էր. նրան ոչ ոք չէր ատում. բոլորը սիրում էին:

— Ինչի՞ ուշացար, տօ, կանչեց Դանիէլեանը Կոլեային—էլի ժողով ունէի՞ք:

—Չէ՛, այսօր չկար. եկող շաբաթ մի երեկոյթ ենք տալու, նրա մասին էի աշխատում:

—Մաղալու երեկոյթ պիտի լինի այդ, ծիծաղեց Դանիէլեանը—գալու եմ, որ տեսնեմ թէ ինչ բաներ են այդ գաղափարակիցներդ. անշուշտ սոսկալի դէմքեր, թափթփած, անսանդրիլ, անլուայ և մանաւանդ սաստիկ անկարգ են լինելու:

—Ի զուր ես այդպէս կարծում, մի քիչ վիրաւորուած ժըպիտով ասաց Կոլեան—ես միթէ այդպէս եմ:

—Բաս ինչ ես, ախմախ, սեննակումդ կանոնաւոր տեղ է մնացել. ամեն ինչ իրարու վրայ այնպէս թափուած որ... ինչ երեկոյթ է տուածնիդ:

— Երաժշտա-գրականական:

—Վա՛հ, ծիծաղեց Պօղոսեանն էլ—ասա մեր երեկոյթը խանգարելու էք էլի:

—Ո՛չ, ասաց Կոլեան—այնտեղ ուրիշ, աւելի ռամիկ հասարակութիւն կլինի:

—Երեւակայում եմ, նորից ծաղրեց Դանիէլեանը—խուլ տեղեր բնակւող, կասկածելի ալլանդակ դէմքերով մի հասարակութիւն. երեկոյթն էլ երեւի ոչ մի կարգ ու կանոն չի ունենալ. ով կամենայ բեմ է ելնելու և գոռայ. ճիշտ հրէական սինագոգա:

—Խնդրեմ, նեղացաւ Կոլեան —վիրաւորական խօսքերը

թողնենք. ես քսան անգամ ասել եմ որ անիշխանական եմ. ինչ կայ ծաղրելու. այստեղ հարցը սկզբունքի վրայ է. ես իմ որոշ սկզբունքը ունիմ և չեմ ծաղրում ձերը, ոչ էլ նրանից երգիծական եզրակացութիւններ հանում:

—Է՞լի սկսեցիք. լսեց յանկարծ մի բարակ ձայն դռան միջից—հերիք չէ՞, ինչ եղաւ ձեզ:

Եւ ներս մտաւ մի ուրիշ կարճահասակ, փայլուն ու բաց դէմքով շէկ երիտասարդ, որ ժպիտը երեսին և աչքի մէկը ծաղրաբար թարթելով, գնաց նստեց Կոլեայի կողքին:

—Ի՞նչ էք նեղացնում Կոլային—աւելացրեց նա—ինքն է միակ իր պատուական սկզբունքովը:

—Դէ՛, ձայնդ կտրիր, հրեց նրան Կոլեան—էլի եկար քո տափակ սրախօսութիւններով: Թէև ես մենակ եմ, բայց դեռ այդ չի նշանակում որ իրաւունք չունիմ, կամ ասածներս սըխալ են. հաստատիր, համոզիր ինձ որ սխալ եմ.

— Տօ, հաստատած ու համոզած բանը էլ ինչու նեղութիւն կրեմ կրկնելու. ասած է, հաստատուած ու դրոշմուած, որ այդ տեսակ, անիշխանական սկզբունքները անմիտ, վնասակար, ուղղակի յիմար սկզբունքներ են, խելացնորների մտքեր, որոնք երբէք չեն գործադրուիլ և... Աստուած էլ ոչ անի որ գործադրուին:

—Այդ դեռ հարց է, գոչեց Կոլեան տաքացած—մենք ենք խելացնորներ թէ դուք՝ ձեր չափաւոր, ձևած ու կարած ըսկզբունքներով:

—Դու մոլորուած ես, բարեկամս, սաստիկ մոլորուած. ես, Բարսեղս, կրտովրեցնեմ քեզ որ մեր սկզբունքները շատ աւելի խելացի են, կարգ ու կանոն ընդունող և մարդավարի կազմակերպութիւն ցանկացող: Մենք ասում ենք—«Ով չի աշխատիլ՝ նա չի ուտիլ, իսկ դուք թէ՝ ով որ չի աշխատիլ—նա էլ կուտի. թէ՝ թող աշխատողները վաստակեն, բերեն մէջ տեղը դընեն և բոլորն էլ նրանից ուտեն, ծոյլն էլ, ցանցառն էլ, աշխատողն էլ ու չաշխատողն էլ: Ապա՛, խնդրեմ, վեր կաց մէկ չայ շինիր ինձ համար, տեսնենք ո՞նց ես պաշտպանում ըսկզբունքներդ:

Բարսեղը խօսում էր ծաղրական տոնով, աչքերը թարթում դէպի Փանիբէկեանն ու Պօղոսեանը, որոնք ժպիտը երեսին՝ լսում էին երկուսի վէճը:

—Դու ինքդ լեցուր, գոչեց Կօլեան տաքացած—ձեռքերս չունիս.

—Ի՞նչու չէ, բայց ծոյլ եմ, խնդրեմ դու լեցնես:

—Կորի՜ր...

—Ա՜յ, տես. դեռ պաշտպանում ես գաղափարներդ. տօ, չէ՞ որ քո ուզած կազմակերպութեան ժամանակ էլ այդպէս պիտի լինի, դու պիտի թէյը լցնես և ինձ էլ տաս, իսկ ես կարող եմ սկի էլ չըլցնել:

—Գնա՛ կորիր, ընդհատեց Կօլեան—դու արդէն չես վիճում, այլ ծաղրաբանում ես:

Մի ընդհանուր քրքիջ բարձրացաւ:

—Ա՜յ երեխայ. գոչեց Փանիբէկեանը—նո՞ր ես իմանում այդ. իսկ որ երեխայ ես. լաւ, մի բարկանար Բարսեղի վրայ, քէֆը տեղն է և սրան նրան կծելով զւարճանում է:

—Հ՛րմ, այո, արեց Բարսեղը—քէֆս տեղն է ա՛յ, թշնամիս ինձպէս քէֆ չունենայ:

Կօլեան, որ աթոռից ելել կանգնել, ուզում էր լըջութեամբ բարկանալ Բարսեղի վրայ, մի վայրկեան սառեց երբ նկատեց թէ ո՛ր աստիճան վշտալից, դառն ու տանջւող կերպարանք ստացաւ նա:

—Վա՛հ, արեց նա խանդաղատանօք, մօտենալով Բարսեղին—ի՞նչ ունիս, Բարսեղ:

—Ի՞նչ ունիմ. դէ՛ն գնա խնդրեմ քո ցանցառ սկզբունքներով. թէյ լցրու ինձ համար:

Կօլեան գնաց սպիրտի լամպի մօտ թէյ լցնելու:

—Երևի ինձ նման նամակ ես ստացել երկրից, չէ՞, հարցրեց Պօղոսեանը տխրութեամբ:

—Դու ի՞նչ տեսակ նամակ ես ստացել, հարցրեց Բարսեղը—իմինից աւելի՞ վատ. քեզ գրում են օրինակ, որ այլ ևս փող չեն ուղարկելու, որ ճանապարհածախս անգամ չունին քեզ հասցնելու, որ քո հայրն ու մայրը թշւառ վիճակի մէջ են:

Այսքան դժբախտութիւն մի անգամով հաղորդե՞լ են քեզ:

—Եւ դեռ խեղկատակութիւններ ես անում. մռմռաց Կօլեան թէյ լցնելով:

—Հա՛, հա՛, ծիծաղեց Բարսեղը—տեղը գտաւ կծելու. բայց ա՛յ, ձեզ մի լաւ անեկդոտ պատմեմ: Ասում են որ Լէնկթէմուրը երբ Հայաստան է մտնում, վերադառնալիս զօրքը ուղարկում է որ թալանեն մի հայկական գիւղ: Զօրագունդը գնում է, թալանում և գալիս:—Գիւղացիք ի՞նչ են անում այժմ, հարցնում է Լէնկթէմուրը:—«Լալիս են և ողբում», պատասխանում են.—«Այդ ոչինչ, ասում է նա, ուրեմն դեռ թալանելու բան կայ, գնացէք նորից թալանեցէք»: Եւ գնում են նորից թալանում ու վերադառնում: «—Գիւղացիք այժմ ի՞նչ են անում», հարցնում է Լէնկթէմուրը.—«Սաստիկ ողբում են, արտասւում», պատասխանում են: «—Այդ էլ ոչինչ, ասում է բարբարոսը—ուրեմն դեռ թալանելու բան կայ, նորի՛ց գնացէք»: Եւ երրորդ անգամն են գնում, թալանում ու վերադառնում: «—Իսկ այժմ ի՞նչ են անում գիւղացիք», հարցնում է Լէնկթէմուրը»:—«Պարում են, ծիծաղում և երգում», պատասխանում են նրան.—«Հա՛, ասում է հրէշը—ուրեմն այլևս թանելու ոչինչ չըմնաց, գնանք»... Այժմ ես եմ. և ծիծաղում եմ և կատակում:

—Համ էլ ուրիշի պատմած անեկդոտը պատմում, ասաց մի չաղ շէկ, գրեթէ կարմիր մազերով կարճատես ուսանող, որ ներս մտաւ:

—Դուռն ի՞նչու էք բաց թողել, շարունակեց նա—չէ՞ որ ցուրտ է ներս մտնում և Բարսեղի անեկդոտի խօսքերը դուրս գնում: Այդ անեկդոտը ես եմ պատմել նրան:

—Այո, ասաց Բարսեղը—և այժմ այնքան յարմարում է ինձ դա:

—Ուրեմն նաւերդ բոլորովի՞ն վառւած են, ծիծաղեց ներս մտնողը ու աթոռ փնտրեց նստելու:

Փանիբէկեանը պարզեց նրան աթոռ:

—Լաւ, այդքանը տեսնում եմ. ասաց եկողը աթոռն առնելով—բարև ձեզ. այս ի՞նչու չեն եկել. կինս մի՞թէ դեռ այս-

տեղ չէ. Նա օրիորդ Բարութեանի մօտ գնաց, ու միասին գային. քո՞յրդ ուր է, Կօլեա. անշուշտ իր այն յաւիտենական Նադէլի մօտ կըլինի. Հ՚ըմ, ես էլ չայ կուզեմ... այդպէս հա՛, Բարսեղ, նաւերդ վառում ես և Լէնկթէմուրի անեկդոտը պատմում. տապ մէկ պատմիր, ինչ է եղել:

—Էլ փող չեն ուղարկում, ասաց Բարսեղը.

—Այդ դեռ ոչինչ. շատ-շատ՝ նա կերթաս.

—Ճանապարհածախս էլ չին ուղարկում.

—Հըմ. բայց այդ էլ ոչինչ, շատ-շատ՝ մէջներս փող կըժողովենք, կամ հէնց այս կայանալիք երեկոյթից մի 150 ֆ. քեզ կըտանք ու կերթաս:

—Հայրս ու մայրս թշուառ դրութեան մէջ են:

—Առաջ այդպէս չէին:

—Բայց չէ՞ որ չորս տարի այստեղ եմ և դեռ չաւարտեցի, որ մի բանով օգնեմ նրանց:

—Ո՞վ է մեղաւոր, եղբա՛յր, գոչեց շէկը. չորս տարւայ մէջ կարող էիր գոնէ քիմիկոս դառնալ:

Բարսեղը գլուխը խոնարհեց և ճակատը կնճռեց:

Այդ միջոցին ներս մտաւ Սերգօն ապուխտով, պանիրով լցրած թղթերը աջ թևի վրայ, իսկ ձախովը մի մեծ հաց բռնած:

—Ահա բոլորը. ասաց նա—հը՞, եկե՛լ էք. ո՞ւր են օրիորդները և տիկինը. հէնց անկարգութիւնը կանանց կողմից պիտի լինի. ժամը 8-ն է արդէն:

—Կըգան, ասաց շէկը իր հաստ մարմինը ետ քաշելով և կռացրած գլուխը բարձրացնելով. անշարժ աչքերը սևեռեց Սերգօի վրայ—կըգան, կինս գնաց...

—Երևի բաղնիք գնաց հը՞, ասաց Սերգօն կծու ձայնով ու ձեռքի կապոցները դրեց սեղանի վրայ:

—Ի՞նչպէս. շփոթւեց շէկը—բաղնի՞ք. ոչ երբէք.

—Աւելի լաւ. անցեալ ժողովին բաղնիք էր գնացել:

—Ս՜ս՜, արեց Փանիէլեանը որ աւելի մօտ էր լուսամուտին—կարծեմ շւացնում են:

Բոլորը լռեցին ու ականջ դրին: Փողոցից լսւեց «Մեր Հայրենիք» երգի առաջին չորս խազի սուլումը, որ միմեանց կանչելու նշան էր ծառայում հայ ուսանողների մէջ:

Նշանը կրկնեց նաև Պօղոսեանը և լուսամուտը բաց արաւ:

—Հաւաքւե՞լ էք. լսւեց փողոցից մի կանացի ձայն:

—Այո, օրիորդ, վեր եկէք.

—Սերգօն եկե՞լ է.

—Վաղուց.

—Իսկ Վահա՞նը, հարցրեց մի ուրիշ ձայն:

—Վաղուց է որ ձեր ամուսինը նստել՝ բարոյախօսում է, գոչեց Փանիէլեանը Պօղոսեանի ետևից—ներս եկէք. ուզում էք սենեակը սառցնէ՞ք:

Երկու կանայք ներս մտան. Պօղոսեանը լուսամուտը փակեց:

—Տղե՛րք, խօսեց յանկարծ Բարսեղը—ես ձեզ խնդրում եմ, իմ մասին այլ ևս ո՛չ մի խօսք այս երեկոյ. զբաղւենք տրւելիք երեկոյթի խնդրով:

Եւ հինգ րոպէի չափ այլևս ոչ ոք չըխօսեց. մի քանի հոգի ծխում էին, մէկը խմում էր, իսկ շէկը—Վահանը բոլորովին կռացած՝ թերթում էր լամպի լուսամփոփի տակը դըրւած մի ֆրանսերէն գիրք:

Է

Երկու երկարահասակ և նիհար կազմւածքով սևազգեստ հայ կանայք էին ներս մտնողները: Մէկը դառն, բայց համակրելի գծագրութեամբ տիկին էր՝ խոնարհեցրած հայեացքով, հայաստանցի աղջկայ նման քիչ ծռւած, քաշւող և վարանող. իսկ միւսը, օր. Բարութեանը, ընդհակառակն նիհար, գեղեցիկ մեծ սև աչքերով, համարձակ նայող, համարձակ շարժումներով և բաւական արհամարոտ դիրք բռնող աղջիկ էր, մի թեթև հեգնական ժպիտ միշտ դէմքի վրայ. հպարտ ու մեծանձն կեցւածք և տղամարդային նիստ ու կաց:

Ներս մտնելուն պէս, օրիորդը «բարև ձեզ» ասաց և նըստեց օթոցի վրայ:

—Հա՛, հա՛... ծիծաղեց նա մի տեսակ չոր, անժպիտ կի-

սաձայն քրքիջով—Սերգօյին երբ տեսնեմ, պէտի կամ թէյ չինի և կամ ուրիշների համար կերակուր պատրաստի. լաւ տանտիկին կըդառնաք մյ։

—Ի՞նչ արած, օրիորդ, դարձաւ նրան Սերգօն—հարկաւոր է վերջապէս տանտիկնութիւն իմանալ. գուցէ յանկարծ մի կին ունեցայ որ այդ բոլորը չըսիրեց անել. այն ժամանակ...

—Երեխան էլ դուք կօրօրէք, չէ՞։

—Ի՞նչու ոչ, ժպտեց երիտասարդը—ասում են որ Արշակը, գիտէ՞ք, այդ Սմբատեանն էլի—իր որդուն է լողացնում, մինչդեռ կինը հիւր եկած երիտասարդներին է հիւրասիրում և նրանց համոզել աշխատում, որ իրանց կուսակցութեան յարին։ Մէկ ճառեր է ասում որ... իսկ ամուսինը կռացած տաշտի վրայ՝ փոքրիկին է լողացնում։

—Հա՛, հա՛... արաւ նորից օր. Բարութեանը—երևակայում եմ թէ ինչպիսի՜ ճառեր է արտասանելու այդ տիկինը, որի ոտերի մօտ իր ամուսինը փոքրիկին է լողացնում։ Եւ եթէ ազատ դառնենք, ինչո՞ւ անպատճառ կնոջ վրայ պէտի ծանրանայ մանուկին լողացնելու, օրօրելու, հագցնելու և այլն, այդպիսի գործողութիւնները, եթէ նա ընդունակ է աւելի բարձր գործեր կատարել, իսկ տղամարդը՝ ոչ։

—Լաւ կոմպլիմենտներ Արշակի հասցէին. մէջ մտաւ տիկին Վարդուհին—լսո՞ւմ ես, Վահա՛ն։

—Օ՛, շատ լա՛ւ եմ լսում, ասաց կարճատես ամուսինը միշտ գիրքը թերթելով—և մտածում եմ իմ բարեբախտութեան վրայ, որ որդի չունիմ, թէ չէ...

—Թէ չէ ի՞նչ. կարմրեց տիկինը—ով գիտէ ինչե՜ր ես ուզում ասել էլի։

—Բայց ոչինչ, սիրելիս, միայն այն, որ Աստուած ազատէ տղամարդին «bas-bleu» կանանցից։

—Ի՞նչ, ինչ, գոչեց տիկինը—ա՛յդ ինչ տեսակ կանայք են։

—«Բա-բլէօ». չէ՞ք լսել, տիկի՛ն, մէջ մտաւ Դանիէլեանը—այդպէս են կոչում այն կանանց, որոնք...

—Որոնք, միջահատեց Բարսեղը—որոնք կապոյտ գուլպաներ են հագնում...

Բարձրացաւ ընդհանուր քրքիջ։

—Ախ գիտեմ, գիտեմ, յիշեցի. ասաց տիկինը—դա նշանակում է ազատամտութիւն ծախող, իրան գիտուն ցոյց տուող և չափազանցութիւններ անող կին... և ես դրանցի՞ց եմ, հա՛, Վահա՛ն, դարձաւ նա ամուսնուն՝ բարկութիւնից կարմրելով։

—Բայց ո՛չ, սիրելիս, երբէ՛ք... է՛, պարոններ, չըսկսե՞նք ժողովը, ուշ է արդէն։

—Սկսենք. ասաց Կօլեան։

—Դեռ պակաս են Գրիգորը, Կարապետը, Արտաշէսը, օրիորդ Նունէն։

—Ոչինչ, ասաց Սերգօն—մենք սկսենք, նրանք յետոյ կըհասնեն։

Այդ միջոցին նորից փողոցում լսեց «Մեր հայրենիք» երգի սուլումը։

—Ահա մէկն էլ. ասաց Վահանը։

Պօղոսեանը լուսամուտը բաց արաւ, նշանաբանը կըրկնեց ու յետոյ փակեց։

—Ո՞վ էր, հարցրին նրան։

—Զըտեսայ. իսկոյն ներս մտաւ, պատասխանեց Պօղոսեանը—սպասենք դա էլ ներս գայ, յետոյ սկսենք։ Սերգօ, դուռը բաց թողի՞ր։

—Թողել եմ։

Տիկին Վարդուհին կռացել օր. Բարութեանի ականջին՝ մի բան էր փսփսում, միւսները—ոմն թէյ էր խմում, երկրորդը ուտում էր և երրորդը գրքեր թղթատում, երբ նախ փողոցի դուռը բացւեց և ապա լսեց դռան վրայ բաղխում։ Բոլորը զարմացան. ինչո՞ւ պէտի իրանց ընկերներից մէկը այդպէս պաշտօնապէս բաղխէր։

—Մտէ՛ք. ձայնեց միայն Պօղոսեանը և ամենքը դէպի դուռը դարձան։

Ներս մտաւ մի երիտասարդ։

—Սուրէնեա՛ն... ձայնեց Պօղոսեանը վազելով դէպի նա—ա՜յ բարև, բարև, արդէն եկա՞ք. արի ներս, ինչ ես դռան վրայ կանգնել։

Բոլորը հետզհետէ սեղմեցին Սուրէնեանի ձեռքը. տիկին Վարդուհին և իր ամուսինը միայն ծանօթ չէին նրա հետ. նրանց ծանօթացրին:

— Տօ, այս ո՞ր խաչից, գոչեց Բարսեղը — Ցիւրիխից ուղղակի:

— Ո՛չ, Լօզան էի 10—15 օրից ի վեր. Պօղոսեանը գրեց ինձ որ մօտ օրերս երեկոյթ ունինք, ես էլ եկայ մի շաբաթ փոխել մնալու:

— Ճա՛տ, շատ լաւ ես արել, ասաց Կոլեան — ինձ մօտ կըգիշերես անշուշտ:

— Ո՛չ, ժպտեց Սուրէնեանը — Պօղոսեանի մօտ:

— Ի հարկէ, վրայ տուաւ Պօղոսեանը — և լաւ էլ վրայ հասար, ժողովի ենք հաւաքուել. վերջին ժողովն է. չէ՞ որ երկու օր է մնացել երեկոյթին:

— Եւ Աստուած է վկայ, ասաց Վահանը — ես չեմ հասկանում թէ ինչ նոր բան է եղել. չէ՞ որ արդէն ամեն ինչ կարգադրուած էր:

— Այո՛, շատ լաւ, խօսեց Պօղոսեանը — — սակայն այսօր առաւօտեան Կիրակոսեանը համալսարանում ինձ ասաց որ ինքը մտադիր չէ մասնակցել երեկոյթին և ղեկավարել խումբը. որ իրանք, այսինքն իր կուսակցութիւնն էլ մտադիր է մի երեկոյթ տալ և ինքը զբաղուած է դրանով:

— Ի՞նչ անազնուութիւն, գոչեց Վահանը — վերջին րոպէին այդպէս ետ կենա՜լ. ասենք Կիրակոսեանից սպասելի էր այդ: Ի՞նչ անենք ուրեմն:

— Իմ ասածս էլ հէնց այդ է. ես մտածեցի մի բան. եթէ կուզէք՝ հրաւիրենք Փուկովսկիին, որ կառավարէ խումբը:

— Ո՛չ, մէջ մտաւ Սերգօն — նա լաւ ածող է, լաւ շարագրող, բայց հայերէն երգեցողութիւն կառավարե՜լ:

— Ի՞նչ կըլինի, ասաց Բարսեղը — չէ՞ որ երգեցողների մեծամասն էլ ռուս, հրեայ ուսանող և ուսանողուհիներ են:

— Ո՛չ. պնդեց Սերգօն — աւելի լաւ է հայ երաժշտապետ ունենալ. դո՛ւ եղիր, Պօղոսեան, դարձաւ նա տանտիրոջ — չէ՞ որ դու էլ նոտա գիտես աւել լաւ՝ քան այդ յիմար Կիրակոսը. կառավարիր էլի:

Պօղոսեանը մի քիչ մտածեց, յետոյ ասաց.

— Այստեղ քաշուելու ժամանակ չէ. ես էլ մտածեցի իմ մասին և տեսայ որ կարող եմ կառավարել. բայց չուզեցի առանց ձեր խորհրդին այդ բանը անել... Յետոյ, գլխաւոր բանը այդ չէ, այլ այն, որ Կիրակոսեանի քաշուելով, չի նուազի նաև Ալֆրէդը, որ այդ յիմարի վարժապետն է և նրա միջնորդութեամբ է համաձայնուել մասնակցելու: Խնդիրը ծանրանում է. Ալֆրէդը երեկոյթի զարդը կըկազմէր. միակ յայտնի երաժիշտ, որ շատ հանդիսական կըգրաւէր:

— Այո՛, ասաց Դանիէլեանը — հէնց Ալֆրէդի համար շատերը կըգան:

— Գիտէ՞ք ինչ, մէջ մտաւ Բարսեղը — ես չեմ կարծում որ Ալֆրէդը այնքան անմիտ լինի, որ իր աշակերտի քաշուելով՝ ինքն էլ չըմասնակցի. այդ ուղղակի ծիծաղելի կըլինի. մի անգամ խօսք է տուել — ուրեմն կըմասնակցի:

— Իսկ ես կարծում եմ որ, ասաց Սերգօն կըքոտ կերպով — Կիրակոսեանը կարող է նրան խաբել. օրինակ, ասել թէ երեկոյթը յիմար բան է, որ անպատուութիւն կըլինի Ալֆրէդի համար բեմ ելնել մի այդպիսի երեկոյթի մէջ:

— Օ՛, գոչեց Կօլեան — չեմ կարծում, Կիրակոսեանը վատ տղայ չէ:

— Աւելի ապահովը գիտէ՞ք որն է, պարոններ, մէջ մտաւ օր. Բարութեանը — մեզնից երկուսին ուղարկել մի տոմսակով, տպած պրօգրամով և լսել նրա տրամադրութիւնը, որպէս թէ տոմսակ են տանում և կրկին խնդրում որ պատրաստ լինի և այլն:

— Լաւ միտք է. ասաց Սուրէնեանը — աւելի լաւ կըլինի այնպէս, եթէ այդ գնացողներից մէկը լինի օր. Բարութեանը:

— Իսկ միւսը՝ մեզնից ով իրան աւելի լաւ պահել գիտէ. ասաց Բարսեղը և ապա աւելացրեց — այս վերջին նախադասութիւնով ես ակնարկում եմ Կօլեային, որովհետև նա թէև ամենից լաւ գիտէ ֆրանսերէն, բայց ինքզինքը պահել՝ ո՛չ:

— Կօրի՛ր... գոչեց Կօլեան.

—Ինչո՞ւ ես նեղանում. ծիծաղեց Բարսեղը—դու, ըստ պըրինցիպի չես ընդունում ձևականութիւն, կարգ ու կանոն. օրինակ հէնց, ներս կըմտնես առանց դուռը բաղխելու. խելքիդ էլ եթէ փչեց՝ գլխարկդ չես հանիլ և երբ Ալֆրէդի առաջ կանգնես, կասես. «պարո՛ն».— զուցէ սկի «պարոն» էլ չասես —ըստ պրինցիպի էլի... այլ ուղակի՝ «Ալֆրէդ, եկել ենք քեզ տոմսակ տալու և ասելու որ երեկոյթը հինգշաբթի է, պատրաստուիր որ վիօլոնչելդ շալակես և գաս. չըկարծես թէ դրանով մեզ մի լաւութիւն արած կըլինիս. ո՛չ. այլ լոկ ընկերական պարտքը կատարած»... և երևակայիր այլ ևս թէ ի՛նչ կըլինի վերջը:

Բոլորը ծիծաղում էին. ամենից բարձր և շատ՝ օր. Բարութեանը, որի ձայնը թնդացնում էր սենեակը:

—Հա՛, հա՛, հա՛, գոչում էր նա բնական ծիծաղով—իսկ ես, որ նրան ընկերանալու եմ, անշուշտ պիտի ասեմ. «Այո, Աֆլրէդ, պարոն Կօլեան պրինցիպով անքաղաքավարի է և անտաշ»...

—Նա ձեզ մինչև իսկ չի թողնիլ խօսելու, գոռաց Բարսեղը—և եթէ թողնի էլ, ինքը կընստի, իսկ ձեզ կանգնած կըթողնի. բացի դրանից, հէնց որ մի քաղաքավարի խօսք ասէք, իսկոյն վրայ կըտայ. «Դրանք կեղծութիւններ են, Ալֆրէդ, որ կոչւում են քաղաքավարութիւն. բուրժուաններին հընարած կեղծութիւններ են դրանք. ճշմարիտն այն է, որ դու մարդ ես, գիտես նուագել և դրանով մի օգուտ տալ ընկերներիդ, ուրեմն պարտաւոր ես անել. այստեղ այլևս մինիէթի ոչ մի բան չըկայ»:

—Դէհ, բաւական է, վեր թռաւ Կօլեան—ես ոչ կերթամ և ոչ էլ կըկեղծեմ: Այո, ես պրինցիպով դէմ եմ ձևականութիւնների, կեղծութեան, քաղաքավարութեան. ով ինչ կուզէ՝ թող ասի. բայց ես չեմ գնալ ձեր բուրժուա արտիստի մօտ: Բոլոր այդպիսի երգող ու նուագող արտիստները ամենավատ բուրժուաներն են և ստեղծւած միայն հաստափոր բուրժուաներին զւարճացնելու համար, երբ նրանք մի լաւ ճաշ արած կամ զզւելի օրգիաներից յետոյ՝ ուզում են ջղերը հանգստացնել. եթէ ես լինէի, ո՛չ մի երաժշտի չէի հրաւիրիլ. մենք

ինքներս կ՚երգէինք, կ՚ածէինք և այդ հաստափոր դարձող արտիստների դռները չէինք բաղխիլ, կեղծութիւններով նրանց շոյիլ, միննաթ վերցնիլ, արածները իբր բարերարութիւն հըռչակիլ և բառնալ մեր մէջքի վրայ:

Ասաց, և որովհետև ոտքի էր ելել խօսելու ժամանակ—նստեց: Մի վայրկեան լռութիւն տիրեց. ոչ ոք չէր ժըպտում. կարծես ամենքը որոշ չափով ճշմարտութիւն էին գըտնում նրա խօսքերի մէջ:

—Կօլայի ասածները գրեթէ ճիշտ են. մէջ մտաւ Սուրէնեանը—Դուք նկատե՞լ էք արդեօք, որ վերջերս հայ ազգն էլ մի շարք այդպիսի անօգուտ, օպպորտիւնիստ մարդիկ է պատրաստում մեզ համար. երգիչներ է, որ արտասահման է ուղարկում, և մեր մէջ փոխանակ ուղեղներ աւելի մշակելու, ձայներ են մշակում. ահա ձեզ մի երգիչ—որ հազիւ միջնակարգ դպրոցի Բ. դասարանը թողած՝ վազցնում են Իտալիա՝ կոկորդը մշակելու, որպէսզի վերջացնի և ամսական հարիւրներ ստանալով՝ երգէ արքունական բեմերի վրայ, փող շահէ, և դրանից ո՛չ մի կոպէկի օգուտ չըհասնի ազգին, կամ հէնց այն հասարակութեան, որի փողով է նա գնացել ուսել: Ի՞նչ օգուտ այդ շքեղ, ենթադրենք հէնց՝ չնաշխարհիկ ձայնից հայ ազգին: Չէ՞ որ օգուտը միմիայն կոկորդ ունեցողինն է... և դեռ որպիսի՜ մեծ քթեր են ունենում, ինչ պըրէտէնզիաներ, ինչ պահանջնե՜ր... ես, օրինակ, ճանաչում եմ այդպիսի մէկին: Նրան Իտալիա ուղարկեցին ազգի փողով. այնքան փող ծախսեցին, որքանով որ կարելի է երկու ուսանող պահել—ուսանողներ, որոնք կարող էին օգտակար լինել ազգին... գնաց, ձայնը մշակեց, գեղեցկացրեց, եկաւ Թիֆլիս, կոնցերտ տւաւ և 1000 րուբլի վերցրեց. իսկ հասարակութիւնը էլի փող տւաւ, ծափահարեց, փառաբանեց և մխիթարւեց միայն նրանով, որ մի հայ՝ Պետերբուրգ բեմերի վրայ երգել է ու գովեստ ստացել. ինչ օգուտ բերաւ ազգին, հասարակութեան, այդ սոխակը. ոչինչ. այժմ երկրից իսկ հեռացել, մի չաղ տեղ է գտել ու մոռացել որ հայ է, որ հայ հասարակութեան փողով է սոխակ դարձել:

—Դուք իրաւունք ունիք, ասաց Բարսեղը—այժմ ես կասեմ և աւելի հեռուն կերթամ: Դուք գտնում էք որ ազգին ոչ մի օգուտ չըկայ մի երգչից. ձայնը մշակելը միմիայն օգուտ է բերում իր տիրոջ՝ փող շահելու, լաւ ապագայ ունենալու. իսկ դրանից ոչ մի արդիւնք չէ հասնում հասարակութեան. համաձայն եմ բոլորովին: Այժմ ասացէք խնդրեմ, ի՞նչ օգուտ նոյն իսկ այն ուսանողներից, որոնք գնում են բժշկութիւն, իրաւագիտութիւն, քիմիա կամ երկրաչափութիւն ուսանելու և հասարակութեան փողով է լինում այդ. նրանց օգնում են հասարակական գումարից, փող են տալիս: Ինչու, չէ՞ որ բժիշկը աւարտելուց յետոյ՝ իր գրպանին է օգուտ տալիս և հասարակութեան համար թէև օգտակար, բայց լաւապէս վարձատրւելով է օգտակար լինում. փաստաբանը նոյնպէս. քիմիկոսն էլ մի չաղ պաշտօն է որոնում և հասարակութիւնն էլ մոռանում, ազգն էլ: Ի՞նչ իրաւամբ ուրեմն պէտք է օգնել սրանց և ոչ թէ երգիչների կամ նուագողների:

—Ես գտնում եմ որ դրանց էլ չըպէտք է օգնել հասարակական դրամներով, եթէ ուզում են կարիէր փնտռել—մէջ մտաւ նորից Կօլեան տաքացած: Ի՞նչ մեծ բան է անում այն բժիշկը, որ առանց վարձի հիւանդ չէ բժշկում և ահագին փողեր է դիզում. այն քիմիկոսը, որ մի չաղ պաշտօնի մէջ՝ մօտ ընկերին անգամ վնասում է: Ես գտնում եմ որ չըպէտք է օգնել այդ մասնագիտութեանց ուսանողների՝ հասարակական փողերով. թող իրանք գտնեն այդ փողը՝ ապագայ բուրժուազական կարիէրան սարքելու համար. թող իրանք ջանան միջոց գտնել նրբացնելու այն ձևերը, որոնցով անմեղին մեղաւոր են դարձնելու... և թող իրա՛նք տանջւին հարթելու ապագայ մեծ պաշտօնի հասնելու ճանապարհը. մենք այդպիսիների պէտք չունինք. այդպիսիները առանց նրան էլ շատ են մեր մէջ. մեզ հարկաւոր են իդէալիստներ, ուսուցիչներ, հրապարակախօսներ, գիտնականներ, գրականագէտներ—ահա թէ որոնց միայն պէտք է ծառայեցնել հասարակական դրամները... ո՞ւր է, երբ ուղարկեցին արտասահման ուսանելու և ուսուցիչ պատրաստելու, հրապարակախօս դառնալու կամ գիտնական:

Միայն մի քանի ուսուցիչներ են մատերով համրւում. իսկ հրապարակախօս, գիտնական կամ գրագէտ—չըկայ. անցեալ տարի էր միայն որ մէկին ուղարկեցին, այն էլ այնքան են տանջելով փող հասցնում նրան, այնպիսի դրութեան մէջ է խեղճը, որ ամեն ամառ պարտաւորւած է իջնել Կովկաս, մուրալ ապագայ տարւայ համար փող և վերադառնալ. չէ՞ք գտնում սա ծիծաղելի:

—Այսինքն ցաւալի. ասաց Սուրէնեանը—Ասածդ գրագէտին բոլորս էլ ճանաչում ենք. անցեալ օր գրել էր փող էր ուզում խեղճը. երևի հազիւ յաջողւի նրան 2 կամ 3 տարի մնալ արտասահման, մինչդեռ նրան հարկաւոր էր 10 տարի ապահովեցնել որ ուսումնասիրի, պարապի և զարգանայ: Այս մօտ օրերս Էջմիածինը և Բար. ընկերութիւնը էլի աստւածաբաններ են ուղարկել Գերմանիա, իսկ ո՛չ մի գրականագէտ կամ հրապարակախօս. միթէ՞ քիչ ունինք, որոնց հարկաւոր է զարգացնել, միջոցներ տալ ուսանելու, որոնք դեռ երիտասարդ են, տաղանդ ունին, փափագ՝ զարգանալու, բայց օրւայ հացի կարօտ մուրացկանների պէս՝ տանջւում են թշւառութեան մէջ. միւս կողմից երգիչ է որ Իտալիա է գնում կոկորդը մշակելու, յետոյ էլ Մոսկւա անցնելու և հայ ազգին միայն այն օգուտը տալու, որ կասեն՝ «հայերի մէջ լաւ ձայներ կայ»: Լաւ ձայներ կան!..: Ի՞նչ ծաղր, ճշմարիտ. գնա Հայաստան, Մշոյ դաշտում, քանի՛ տասնեակ տենօր տամ քեզ, Երզրումի կողմերը քանի՛ հատ բարիտօններ. շքեղ, զօրեղ հնչեղ ձայներ, որոնց միայն մշակել է հարկաւոր. բայց ինչու, ի՞նչ պէտք մեզ այժմ այդ ձայները, այդ հնչեղ տենօրներն ու բարիտօններն. այժմ մեզ զօրեղ ուղեղներ են հարկաւոր, սուր գրիչներ, լաւ ուսուցիչներ, գիտնականներ...

—Ինչ որ է. մէջ ընկաւ օր. Բարութեանը—այդ բոլորը դեռ չի խանգարում որ այսօր ստիպւենք մի երաժշտի աջակցել, որպէսզի մասնակցի մեր երեկոյթին. և մեր բոլոր սիրալիրութիւնն ու քաղաքավարութիւնն է հարկաւոր՝ Ալֆրէդին հրաւիրելու համար. ես կերթամ և թող Սուրէնեանը գայ ինձ հետ. նա շատ լաւ ֆրանսերէն գիտէ:

—Բայց ես չէ՛ որ երեկոյթը կազմող յանձնաժողովի անդամ չեմ:

— Յանձնաժողով չըկայ. ձայնեց Կօլեան—բոլորս ենք կազմողները. դուք էլ, փողոցից անցնող հայն էլ. Նպատակը սուրբ է և ամենքն էլ պարտաւոր են ներս մտնել ամենայն իրաւամբ:

—Իմ ասածն այդ չէր, Կօլեա—ժպտեց Սուրէնեանը—սակայն ինչ որ է, կերթամ. ե՞րբ գնանք:

—Վաղը. ասաց Պօղոսեանը, միւս օրը երեկոյթն է. տոմսակները լաւ են ծախւում. Ստապելմորի մօտ բաւական ծախւել է, ռուս ուսանողուհիները բաւական շատ բաց են թողել. պրօֆեսորներին ես տւի, Կ. Ֆօխտը ասաց որ կաշխատի գալ. իսկ դո՞ւք, օրիորդ, տւի՞ք Մ. Ձիֆին.

—Այո, ասաց օր. Եարութեանը—ուրախութեամբ ընդունեց. պրօգրամի մէջ հետաքրքիր բաներ շատ գտաւ:

—Ես էլ Լ. Վուարէնին տւի, ասաց Բարսեղը—շնորհակալ եղաւ և կըգայ:

—Ուրեմն փող չըտւին, հա՞, հարցրեց Սերգօն—դուք փո՞ղ ասացէք.

—Վուարէնը տւաւ 5 ֆրանկ.

—Ձիֆն էլ տւաւ.

—Ֆօխտը չըտւաւ. երևի մոռացաւ.

—Զուգէք. ասաց Դանիէլեանը—կուղարկի աւելի լաւ, չի ուղարկիլ՝ ոչինչ. Նրա գալն էլ հէնց բաւական պատիւ կըլինի երեկոյթի համար:

—Բայց գիտէ՞ք, խօսեց Կօլեան—վաղը երեկոյ երգեցողութեան կրկնողութիւն անել անհնար է. ռուսաց փոխադարձ օգնութեան ընկերութիւնը ժողով ունի:

—Պիտի ասել որ յետաձգեն. վեր թռաւ Բարսեղը:

—Արդէն յայտարարել են համալսարանում:

—Պիտի յայտնել նրանց. ինչ յիմարներ են. միթէ չըգիտէին որ երեկոյթ ունինք և իրանց ժողովի անդամուհիներից մեծ մասը երգում են:

— Այդ ոչինչ. ասաց Պօղոսեանը—վաղն առաւօտ ես կըկարգադրեմ բոլորը, կըխնդրեմ որ յետաձգեն. և կ՚անեն: Տըղերք, լուսամուտը քիչ չըբանա՞նք, ծխի մէջ խեղդւեցինք:

Եւ մօտ գնաց լուսամուտին:

—Միւսները չեկան. ասաց Սերգօն.

Լուսամուտը շըխկոցով հազիւ թէ բացւեց, որ փողոցից լսւեց վելոսիպեդի շեփորի ընդհատ ձայներ, յետոյ հայ ուսանողների նշան՝ սուլումը:

—Օ՛հօ, Սահակեանն է իր վելոսիպեդով, գոչեց Բարսեղը—անշնորհքը, փոխանակ ժողովի գալու՝ վելոսիպեդով զբօսնում է:

—Ո՞ւր ես գնում, ա՛ղա, հարցրեց Դանիէլեանը լուսամուտից դուրս:

—Պլէնպալէ... լաւ գիշեր է... հը՞, ժողովը ի՞նչ արիք:

Խօսողը մի նիհար և երկահասակ երիտասարդ էր, հեծած վելոսիպեդի վրայ, որին նա պտտեցնում էր լուսամուտի տակ, շրջան գործում և առանց կանգ առնելու, գլուխը բարձր՝ խօսում էր:

—Յած իջիր և վեր արի, տօ, ասաց Սերգօն—մանիա ունիս ինչ է. գիշերով էլ ես վելոսիպեդով ման գալիս.

—Ինչպէս, ֆանտազիա էր. բայց գիտէ՞ք ինչ կայ, մի նոր լուր ասեմ ձեզ:

—Հը՞, ի՞նչ է.

Եւ բոլորը ժողովւեցին լուսամուտի առաջ: Սահակեանը տեսաւ օրիորդին և տիկնոջ, փափուկ գլխարկը հանեց և գոչեց.

— Բարև օրիորդ, բարև տիկի՜ն... գիտէ՞ք, ցուրտ չէ, քամի չըկայ. ի՞նչ էք կիտւել այդտեղ այսպիսի գեղեցիկ գիշերով. Պլէնպալէ դուրս եկէք:

—Նորութիւնդ ասա, ա՛ղա. գոչեց Բարսեղը:

—Հ՞ր, հա՛. քիչ մնաց մոռանայի. Ամբատեանները գընում են ժընէւից. բոլորովին գնում:

—Միթէ. ասացին բոլորը:

—Բայց գնալուց առաջ ուզում են երեկոյթ տալ:

—Լսել ենք. ասաց Պօղոսեանը.

—Դէ լաւ որ լսել էք. ցտեսութիւն. վելօս չի ուզում հանդարտ կենալ. տեղը նեղ է. կարող է ինձ ցած ձգել կամ ուրիշի. դուրս ելէք, ինչ էք վեր ընկել ծխով լի սենեակում. մէկ էստեղից եթէ նայէք, կարծես թէ այդտեղ հրդեհ կայ. ծուխը ամպի պէս է դուրս գալիս. բարի գիշեր...

Յետոյ երբ քիչ հեռացել էր, դարձաւ և գոչեց.

—Հա՛. 50 ֆրանկի տոմսակ եմ ծախել:

Ու գնաց, շեփորը հնչեցնելով:

—Ա՛խ, գոչեց այն ժամանակ Սուրէնեանը—ինչ լաւ որ յիշեցի: Պարոններ, երբ Լօզանից գալիս էի, նաւի վրայ մի ծանօթ շուէդուհու հանդիպեցի: Մի հրաշալի աղջկայ, որ հետաքրքրւեց թէ ինչու էի Ժընեւ իջնում. պատմեցի որ երեկոյթ ունիք. ասացի նաև նպատակը: Եւ գիտէք, օտար աղջիկը ցաւելով որ ինքը չէ կարող ներկայ լինել, տուաւ ինձ 50 ֆրանկ որ յանձնեմ իր կողմից յանձնաժողովին:

—Վա՛հ, արեց Սերգօն—մի օտար աղջիկ...

—Հետաքրքիր աղջիկ է. ասաց Դանէլեանը.

—Երեւի փող շատ ունի, չըգիտի ինչ անի և այդպէս տալով, գմայլումներ է հաւաքում. ասաց Բարսեղը արհամարհաբար:

—Ճիշտ. վրայ տուաւ Կօլեան—ես էլ այդպէս եմ մտածում:

—Եւ շատ իզուր. ասաց Սուրէնեանը բարկացած ձայնով —օրիորդին ես ճանաչում եմ. գմայլումներ հաւաքելու պէտք չունի, որովհետեւ հէնց ինքը գմայլելի է... բայց այս թողնենք (և նա խիստ կարմրեց)—ահա 50 ֆրանկ, Պօղոսեան: Սրանից յետոյ ասեմ, որ Լօզանի հայերին ասացի երեկոյթի մասին. կըգան մի քանիսները:

—Այս 50 ֆրանկի համար պիտի յայտարարել «Genevois» կամ «La tribune»-ի մէջ, ասաց Սերգօն — աղջկայ անունը ինչ է.

—Չեմ կարող անւանել, ասաց Սուրէնեանը—խնդրեց որ չըյայտնեմ. գրեցէք՝ «Լօզանից, օրիորդ X-ից».

—Որ երեկոյթին գար է, ասաց Վահանը—գուցէ մի 50 ֆրանկ էլ բուֆետում թողնէր. մի տասն այդպէս եկողներ լինեն, հերիք է.

—Կըլինին. ասաց Պօղոսեանը—դէհ այժմ, պարոններ, եթէ կուզէք, քիչ դուրս գնանք և Լանդոլդի մօտ մի-մի «կանէտ» գարեջուր խմենք. ժամը քանիսն է.

—Ինն և կէս.

—Ուշ չէ դեռ. քիչ կըզբօսնենք Պլէնպալէ և յետոյ կըմտնենք Լանդօլդ:

Ամեն ոք շտապեց իր գլխարկն առնել, վերարկուն հագնել. յետոյ զոյգ-զոյգ ցած իջան. Դանէլեանը տիկնոջ և նրա ամուսնոյ հետ, Սերգօն օր. Բարութեանի հետ և Կօլան ու Բարսեղը միասին, կատակելով ու զւարճախօսելով: Պօղոսեանը ամենից յետոյ ճրագը փչեց, դուռը վրայ քաշեց և միացաւ նրանց:

Ը

Բէլ-Վիւ հիւրանոցը մի մեծ և գեղեցիկ սրահ ունի իր պարտիզի մէջ, յատկացրած ժողովների, կոնցերտների և երեկոյթների: Այդտեղ էր տեղի ունենալու հայ ուսանողների երեկոյթը:

Հինգշաբթի օր, կէսօրից սկսած, ուսանողների մեծ մասը Բէլ-Վիւ էր: Ոմանք զբաղւած էին աթոռներ շարելով, համարներ կպցնելով, իսկ երաժշտական խումբը, որոնց մէջ երեւում էին շատ հրէուհիներ էլ, առաջնորդութեամբ Պօղոսեանի, փոքրիկ բեմի վրայ ելած, վերջնական կրկնութիւնն էր անում և «Մեր հայրենիք» քառաձայն երգի եղանակով թընդացնում էր դատարկ սրահը:

Մինչ այդ, Բարսեղն էլ վազն ի վազ երեւում էր, անհետանում դռան միջից և նեղացած ձայնով գոռում, որ կենդանի պատկերների համար շորեր են պակասում, որ լեհուհի մասնակցողի համար ծաղկեփունջ չէ բերւած և այլն:

—Կամաց գոռա, ա՛յ տղայ, ձայնեց նրան վերջապէս բեմի առաջ նստած Վահանը—շորերը կըբերեն հիմա, ծաղկեփնջի մասին էլ Դանիէլեանը հոգացել է:

Եւ Բարսեղը վազում էր դէպի Դանիէլեանը, որ այդ միջոցին մի աթոռի վրայ բարձրացած, բեմի վարագոյրն էր յարմարեցնում ու մուրճի հարուածներով խանգարում երգեցողութիւնը:

—Մի՛ խանգարիր. գոչում էր նրան Պօղոսեանը — այդ թող յետոյ:

—Յետոյ էլ ե՞րբ, տնա՛քանդ, ժամը 6-ն է:

Ու թրախ՛կ, թրախ՛կ... դղրդեցնում էր բեմը:

Շատ ուսանողներ, որոնց մէջ կային նաև ռուսներ, անգործ, նստոտել էին սրահի այս — այն աթոռի վրայ և դատում էին երաժշտութեան մասին, կամ երեկոյթի մասին խօսում: Բայց ամենից հետաքրքիր գործողութիւնը կատարւում էր սրահի ձախ պատի մօտ դրւած սեղանի առաջ:

Այստեղ, սեղանի մօտ էին երեք հայուհիները—օր. Բարութեանը, Նունէն և տիկին Վարդուհին. այլ և Կօլեան, որին բանեցնում էին գամեր զարնելու պատերի վրայ և կամ տեղ էին ուղարկում: Վիճակախաղութեան սեղանն էին կազմում. Նրա վրայ զանազան իրեղէնների մէջ երևում էին երկրի համար մի քանի նորանշան բաներ,—մի քանի հայերէն գրքեր, Կովկասեան եղանակների մի քանի նոտաներ, մի ախալցխացի կնոջ շատ սիրուն լուսանկար... իսկ պատերի վրայ զանազան լուսանկարների կարգում երևում էին նաև Լասալի, Կ. Մարքսի, Բլանքիի և այլ նշանաւոր անձերի պատկերները, որոնք բոլորն էլ վիճակախաղութեան էին դրւելու: Օր. Նունէն՝ Բարութեանի հետ զբաղւած էին իրեղէնների գեղարւեստապէս դարսելով. իսկ տ. Վարդուհին թղթի կտորներ էր ոլորում և մի զամբիւղի մէջ լցնում: Նրանց օգնում էին երկու ռուսուհիներ էլ—երկու երկարհասակ կազաչկաներ, որոնցից մէկը մազերը թողած մէջքի վրայ ծածանւելու, արագութեամբ պըտոյտ էր գալիս սեղանի շուրջը, մի առարկան վերցնում միւսը դնում, և կամ աւելի շատ՝ հիանում էր պատին կախած ասիական երաժշտական գործիքների վրայ, որոնց Պօղոսեանն էր ձեռք բերել մի շուէդիացուց, հազար մի խնդրանօք, միմիայն ի ցոյց դնելու համար: Կազաչկաներից միւսը, մի համա-

կրելի գծագրութեամբ, մելամաղձոտ և սաստիկ զգայուն դէմքով աղջիկ՝ զբաղւած էր ծաղիկներով: Քանդել էր մեծ փունջը, տեղաւորում էր ծաղիկները զամբիւղի մէջ, աւելի մանր փնջիկներ կազմում և միւս կողմից խորհուրդներ էր տալիս կողքին կանգնած 12—13 տարեկան աղջկան, որին սպիտակ հագցրել—պատրաստել էին՝ երեկոյթի ժամանակ ծաղիկ վաճառելու համար:

Այդ ժամանակ էր, որ նորից ներս վազեց Բարսեղը և երգեցողութեան մի վայրկեան դադարի մէջ, լսեց նրա ճչող ձայնը.

—Դանիէլեան, բէնգալեան կրա՛կն ուր է... Դանիէլեան:

— Հ՛ը, տօ, էլի ի՞նչ կաչաղակ ես դարձել—դադարեց Դանիէլեանը և ցած նայեց—ի՞նչ ես ուզում.

—Բէնգալեան կրակը.

—Վա՛յ քո տղխ-տղայ, գոչեց նեղացած ձայնով Դանիէլեանը—մոռացել եմ տանը. կապոցով սեղանիս վրայ է.

—Հը, տեսա՛ր, ես գիտէի ախր. հիմա ո՞վ գնայ բերի, ես զբաղւած, Սերգօն զբաղւած:

—Կօլեային ուղարկիր:

—Կօլեային չե՞ս տեսնում կանայք ինչպէս թրև են տալիս այս-այն կողմը:

Յետոյ նայեց սրահի աթոռներին և փնտռեց մի հայ ուսանողի:

—Գրիգո՛ր, գոչեց նա նկատելով մէկին. Աստուածդ սիրես՝ մէկ տուն վազիր...

—Հ՛ըմ, ի՞նչ. մօտ եկաւ Գրիգորը ձեռքերը շփելով—ի՞նչ կայ:

—Տուն գնա և սեղանի վրայ են բենգալեան կրակի կապոցները, բեր:

Դրսից հետզհետէ սրահն էին լցւում ուսանողները, մանաւանդ ռուսներ և հրէաներ, որոնք բոլորն էլ թէև տոմսակներ ունէին, բայց աւելի շուտ էին եկել: Եկողները ասում էին որ տոմսակները լաւ են ծախւել, որ իտալացի երաժշտների խումբը շատ լաւ պատրաստել էր լեզգինկան ու կազաչկան, որոնք

առաջին անգամ լինելով պիտի պարէին Ջւիցերական հասարակութեան առաջ՝ հայ օրիորդներն և երկու կայաչկաները։ Անշուշտ պարը փուրօր էր հանելու. շատերը ափսոսում էին որ չէկար Կովկասեան հագուստ, որպէս զի էֆէկտը աւելի մեծ լինէր. մի քանիսներն էլ դիտելով օր. Բարութեանի հագուստըն ու մազերի յարդարանքը, ասում էին որ շատ յարմար էր պարի. որովհետև օրիորդը հագել էր ոսկեթելով ասեղնագործ մի ֆիգարօ, սպիտակ պարզ շրջազգեստ, սև մազերը փռել էր ուսերի վրայ, մի կարմիր շոր էլ աջ ուսից պարզած՝ անցնում էր կրծքի վրայով և իջնում դէպի ձախ՝ երկու լայն ծոպերով։ Այդ բոլորը շատ գեղեցկացնում էր նրա, առանց էն էլ կրակոտ դէմքը. փայլում էին զւարթութիւնից նրա մեծ սև աչքերը այնպէս, որ շատ ուսանողներ նորից հիացումն էին յայտնում օրիորդի գեղեցկութեան վրայ։

—Դռան մօտ որ լինի հիւրեր ընդունելու՝ մտնողները մի րոպէ հիացումով կանգնելու են նրան դիտելու համար. ասում էր մէկը։

—Հետը ո՞վ է կանգնելու դռան մօտ. հետաքրքրւեց մի ռուս։

—Գրիգոր Թադւորեանը.

—Հ՛ըմ, վատ չէ. բայց նա այդքան սիրուն և աշխոյժ աչքեր չունի. նա կարծես մեռած է. յաւիտենական մրսողի դէմք ու արտայայտութիւն ունի. ահա նայէք։

Եւ խօսողները քաշւեցին թողնել անցնելու համար Գրիգորին, որ Փանիէլեանի խնդրանօք տուն էր ուզում գնալ բենգալեան կրակը բերելու համար։ Բայց հազիւ թէ ուզում էր անցնել, որ սրահից ներս մտաւ մի չեչոտ ուսանող՝ ձեռքին կապոց, որի մի բաց կողմից երևում էր բենգալեան կրակի ձողերի գոյնզգոյն ծայրեր։

—Ըհը, կրակը բերին խօ, ասաց Գրիգորը կանգ առնելով։

—Այո, խօսեց ներս մտնողը—մտայ Փանիէլեանի մօտ—տանը չէր. սեղանի վրայ տեսայ կրակները. գուշակեցի որ բերել էր հարկաւոր և բերի։

Յետոյ կապոցը ձեռւին, ետ քաշւեց՝ թողնել առաջ գալու համար մի նոր, թուխ դէմքով մարդու և հարցրեց.

—Ո՞ւր է Փանիէլեանը.

—Այ, վարագոյրն է յարմարցնում։

—Ծանօթ չէ՞ք, ի՞նչ է, հարցրեց չեչոտ ուսանողը—երկուսդ էլ ծանօթացէք ուրեմն. Վուլկանն է.

—Գրօ՞ղը, գոչեց Գրիգորը.

—Այո. սա էլ մեր Թադւորեանն է, քիմիայի ուսանող։

Ուսանողները միմեանց ձեռքը թօթւեցին։ Ներս մտնողներըը նկատել էին հեռւից, մանաւանդ բեմի վրայից Պօղոսեանը որ մի րոպէ հանգիստ էր անել տալիս խմբին, տեսնելով Վուլկանին, զարմացած մի բացագանչութիւն հանեց և վազեց դէպի նա։

—Վա՜հ, Վուլկա՜ն, գոչեց—դո՞ւ այստեղ։

—Վուլկա՜նն է. ձայնեցին ամեն կողմից ու մօտեցան։

Եկողը այն գրականագէտ ուսանողն էր, որ մի տարուց ի վեր Ջւիցերիա էր եկել, համալսարանում գրականութեան դասեր լսելու. բայց նախ կամենալով ֆրանսական լեզւի հետ լաւ ծանօթանալ, խոհեմութիւն էր համարել հայ ուսանողներից հեռու մի տեղ գնալ, որ ոչ թէ ռուսերէն կամ հայերէն լսէր, այլ միմիայն ֆրանսերէն։ Եւ այդ մտքով էր, որ նա ապրում էր Նէօշատէլ և տարին միայն մի քանի անգամ Ժընէւ գալիս։

Նրա երևալը հաղւագիւտ բան էր. դրա համար էլ բոլոր հայ ուսանողները իսկոյն շրջապատեցին նրան։ Փանիէլեանն էր միայն, որ խորապէս զբաղւած՝ ոչինչ չէր տեսել, իսկ իր մուրճի ձայնն էլ արգելել էր լսելու։ Բայց երբ յանկարծ սրահի շշուկը դադարեց, նա քիչ գլուխը դարձրեց դէպի սրահը, նկատեց հաւաքւածներին և գոչեց.

—Ի՞նչ կայ, տօ, ինչ եղաւ։

—Վուլկանն է եկել. ձայնեցին նրան մօտ եղողները։

—Ի՞նչ, Վուլկա՞նը. մարդ էք խաբում. Վուլկանը որ փող ունենայ՝ կուտի և ոչ կըճանապարհորդի։ Բայց յանկարծ նկատելով իրան—Վուլկանին, ցած թռաւ և գոչեց—վա՜հ, ճիշտ է եղել, տօ, բարև։

Ու համբուրւեցին գրագէտի հետ։

—Փող որտեղից գտար, տօ, ձայնեց Փանիէլեանը—չէ՞ որ անցեալ օր էիր գրել՝ փող էիր ուզում Պօղոսեանից։

—Գտայ էլի. ծիծաղեց Վուլկանը—նրան նամակ գրելուց մի օր յետոյ 100 ֆրանկ ստացայ ու եկայ. բայց չըգիտէի որ երեկոյթ ունիք. եկայ քեզ մօտ և Արտաշէսին տեսայ:

—Ես էլ սրան և բենգալեան կրակները բերի. ծիծաղեց Արտաշէսը ցոյց տալով կապոցը:

—Ա՛յ լաւ ես արել, ասաց Դանիէլեանը—դէհ լաւ, մենք յետոյ կըխօսենք. ես գնամ վարագոյրը շինեմ. կուզես, եկ ինձ օգնիր.

—Լա՛ւ, կըգամ.

—Չէ, չէ, գոչեց յանկարծ Կօլեան—շորերը կըկեղտոտուի. թող մաքուր մնայ և օր. Բարութեանի հետ դրան մօտ կանգնի՝ հիւր ընդունելու:

—Ի՞նչու, իսկ ես. ասաց Գրիգորը մօտ գալով:

—Դու աթոռները ցոյց կըտաս. այնպէս չէ, տղերք, յաւեց Կօլեան ռուսերէն—Վուլկանը ամենից յարմարն է. դէմքը իսկ հայկական է, արևելեան և օր. Բարութեանի դէմքի հետ յարմար. երկուսն էլ օրիժինալ:

Բոլորն էլ ծիծաղեցին:

Վուլկանը նիհար, երկարահասակ, թխադէմ մի երիտասարդ էր մօտ 26—27 տարեկան, սաստիկ մելամաղձիկ գծերով. նրա սև, մեծ և խորունկ աչքերը միշտ մի տեսակ տըխուր հայեացքով էին, որ կանգ էին առնում մի բանի վրայ և կամ ժպտում էին: Թուխ էին և խիտ յօնքերն ու մազերը. մի կիսասուր մօրուք պատում էր ծնօտը և ընչացքի հետ մէջ էին առել կիսաբաց բերանը, որ դառնութիւն և միևնոյն ժամանակ քիչ էլ արհամարհոտ հեգնութիւն էր արտայայտում:

Նրա և օր. Բարութեանի մէջ այդ նմանութիւնը միայն կար. բայց երկուսն էլ ֆրնէւի համար օրիգինալ դէմքեր ունէին. խոշոր սև աչքեր և սև մազեր, երկուսն էլ նիհար ու երկարահասակ և այդ էր պատճառը որ Կօլեան յարմար էր համարում, որ երկուսը դրան մօտ կանգնեն և հիւրեր ընդունեն:

Ըստ երևոյթին օր. Բարութեանը կամ չէր իմացել Վուլկանի գալը և կամ չէր ուզում իմացած լինել. նա աշխոյժով

առարկաներն էր շարում և կազաչկաներից մէկի հետ բարձրաձայն կատակում էր ու քրքջում:

—Վուլկանն է եկել, Դա՛րօ, ասաց նրան օր. Նունէն:

—Ո՞վ, աղչի, Վուլկա՞նն ով է:

—Գրողը...

—...Քեզ տանի թող. կատակեց նա:

—Ես լինիմ նրա տեղը՝ ոչ մէկիդ էլ չեմ տանի. ասաց տ. Վարդուհին:

—Ի՞նչի մասին էք խօսում. հետաքրքրւեց կազաչկան:

Վուլկանը այդ միջոցին Կօլեայի և Արտաշէսի հետ՝ մօտեցան օրիորդներին:

—Օ՛, բարև, Վուլկան, դարձաւ դէպի նա Նունէն զւարթութեամբ ու իր չաղ ձեռքը պարզեց ընկերաբար—ինչպէս էք. բարի էք եկել:

—Շնորհակալ եմ, օրիորդ Նունէ, դո՞ւք ինչպէս էք:

Օր. Բարութեանը դէմքը դեռ չէր դարձրել և ձևացնում էր որ իբր թէ դեռ չէ տեսել. բայց լսում էր լաւ և սպասում:

—Բարև, օրիորդ, խօսեց դէպի նա Վուլկանը—այդ որքա՞ն զբաղւած էք:

Բարութեանը դարձաւ, բայց չըկեղծեց որ իբր թէ նոր է իմանում նրա գալը:

—Բարև, ասաց նա ու պարզեց ոսկրոտ ձեռքը—եթէ նախանձում էք՝ միացէք մեզ:

—Ուրախութեամբ, ի՞նչ պիտի անել:

—Պիտի սպասել մինչև ասենք. ծիծաղեց Նունէն. և օրիորդները նորից գործի սկսեցին:

—Ծանօթացիր սրանց հետ էլ. մէջ մտաւ Կօլեան և ներկայացրեց տ. Վարդուհուն ու երկու կազաչկաներին:

—Տիկին Վարդուհին ուսանողուհի՞ է. հարցրեց Վուլկանը:

—Այո՛, բժշկութեան:

—Ամուսնու հե՞տ:

—Այո, ամուսինս այստեղ է:

—Ուրախ եմ. առաջին անգամն է որ այր և կին գալիս են միասին՝ երկուսն էլ ուսանելու:

—Նստեցէք խնդրեմ. առաջարկեց նրան աթոռը մի կազաչկան—մեզ մի նայէք:

Յետոյ, երբ տուել էր, կռացաւ դէպի օր. Բարութեանը, մի բան փսփսաց նրա ականջին և երկուսն էլ քրքջացին:

—Ինձ վրա՞յ էք ծիծաղում, օրիորդնե՛ր, հարցրեց Վուլկանը:

—Ո՛չ, ո՛չ, կարմրեց կազաչկան—ուրիշ բան էր:

—Է՛հ, ստում է օրիորդ Սմիրնովան—ետ դարձաւ և ուղղակի Վուլկանին նայելով՝ ասաց Բարութեանը—ստում է. ձեզ վրայ էինք խօսում և եթէ ծիծաղեցինք, այդ չէ նշանակում որ ձեզ ծաղրում էինք. պարզապէս օր. Սմիրնովան գտնում է որ դուք շատ աչքի խփող դէմք ունիք:

Կազաչկան կարմրեց ու երեսը դարձրեց դէպի սեղանը:

—Շնորհակալ եմ համօյախօսութիւնից. ժպտեց Վուլկանը—ինձ Նէօշատէլ մի քանի անգամ ասել են, որ Քրիստոսի դէմքը ունիմ:

—Շատ ճիշտ են ասել, ասաց Սմիրնովան—իմ մտքիցն էլ անցաւ, բայց ես վախեցայ ասելու... ես Քրիստոսին միշտ այդպէս եմ երևակայել... բայց արդեօք դուք նրա նման բարի էք և համեստ:

—Օ՛, ոչ, ծիծաղեց Վուլկանը—ես տաքարիւն եմ, բայց ո՛չ չարասիրտ. և կարծեմ համեստ էլ եմ:

—Համեստ, մէջ մտաւ Կօլեան—այնքան համեստ՝ որ ողորմելի մինչև իսկ. երևակայեցէք, ամեն անգամ երբ մի բանն է տպւում, սա փոխանակ ուրախանալու—տխրում է, վախենում. ով մի խորհուրդ տւեց՝ իսկոյն ընդունում է իր գրուածքների վերաբերութեամբ. անցեալ տարի—ինքն է պատմել—չգիտեմ ո՞ր յիմարը լսելով սրա մի մեծ գրուածքից մի կտոր (ասենք սա էլ տխմարն է, ամենքի առաջ կարդում է իր գրուածքներից և խորհուրդ է հարցնում. ամենքի կրիտիկային ենթարկում և հետևում էլ է նրանց ասածներին) հա՜... կարդացել էր մի կտոր. այդ տխմար կրիտիկոսն էլ երևի վատ տրամադրութեան մէջ լինելով՝ ասել է թէ գրուածքը շատ պակասաւոր բան է... սա էլ ինչ անի որ լաւ լինի... վերցնում է ամբողջ գրուածքը, պատառում՝ դէն ձգում...

—Ա՛յ... բացագանչեց ցաւով Սմիրնովան—ափսոս...

—Այդ դեռ ոչինչ, շարունակեց Կօլեան—ես սրան վաղուց ճանաչում եմ. միշտ նոյն թուլամորթն է. երևակայեցէք. մի անգամ չըգիտեմ ո՞վ նրա գլխումը հալեցրել էր թէ գրուածքները նախ քան տպագրելը, լաւ կըլինէր որ ենթարկէր մի քանի երիտասարդներից կազմուած կրիտիկական խմբի հայեցողութեանը: Սա դնում դռնէ դուռ է ընկնում, սրան-նրան կանչում թէ, եկէք որ գրուածքներս գրաքննութեան ենթարկէք, որպէս զի չըվախենամ հրապարակ հանելուց: Վերջապէս հաւաքւում են մի օր... ապա Վուլկա՛ն, մնացածը ինքդ պատմիր, շատ զւարճալի է...

—Բայց Կօլեա՛, մէջ մտաւ Բարութեանը—այդ խօ դուք էք միշտ խօսում. մէկ թողէք պարոնը պատմի իր մասին. օրինակ, թէ ինչպէս է անցկացնում Նէօշատէլում, թէ ինչպէս է առաջդիմել լեզւի մէջ, թէ ովքեր կան այնտեղ հայերից և այլն, և այլն:

—Լաւ, թող պատմի... բայց պատմելուց առաջ ասեմ, որ վճռեց դուք և Վուլկանը կանգնէք դռան մօտ՝ հիւրերին ընդունելու:

—Բայց չէ՞ որ Գրիգորին էր որոշած, ասաց օրիորդը:

—Դուք չէ՞ք գտնում որ Վուլկանը աւելի յարմար է, դարձաւ Կօլեան Սմիրնովային—նայեցէք մէկ օրիորդին էլ և սրան էլ. չէ՞ որ երկուսի դէմքերը, մազերի գոյնը, աչքերը և առ հասարակ տիպը նման են. երկուսն էլ մելամաղձոտ, մի քիչ արհամարհոտ...

—Այո՛, այո, պնդեց Սմիրնովան—շատ յարմար են:

Օր. Բարութեանը սկսեց կողքից ուշադրութեամբ զննել Վուլկանին:

—Ես էլ եմ այդպէս կարծում, ասաց միւս կազաչկան—պարոնը՝ Թադէոսեանից աւելի յարմար է.

—Նո՛ւ, լաւ, վճռեց Բարութեանը—մենք միասին կըկանգնենք... Կօլեա՛, եկիր սա գամը ամրացուր, թէ չէ թառը ցած կըընկնի:

Յետոյ դարձաւ Վուլկանին և ասաց.

—Այժմ պատմեցէք մեզ թէ ինչ նոր բան կայ Նէօշատելում... Հայեր կա՞ն։

—Ո՛չ, օրիորդ, բայց հրէաներ կան և մի հատ էլ ռուսուհի։

—Ա՞յդ ով է, հարցրեց Սմիրնովան.

—Մոսկւայից է. անունը Մարթա Կրէյսլէր.

—Կրէյսլէ՞ր, գոչեց Կօլեան— դա խօ գերմանական ազգանուն է. այս երեկոյ իմ ծանօթ մի կաղ օրիորդ է գալու այստեղ, ազգանունը նոյնպէս Կրէյսլէր, և գերմանուհի է։

—Լաւ է ուրեմն, ժպտեց Վուլկանը—երկու Կրէյսլէրները միմեանց հետ կըծանօթացնենք. որովհետև օր. Մարթան ինձ հետ փընէւ եկաւ և երևի երեկոյթին կըգայ։

—Ծանօթներ ունի՞ փընէւում, հետաքրքրւեց Սմերնովան։

—Ունի ասում էր. չըգիտեմ ով։ Իրան էլ ես լաւ չեմ ճանաչում, 10—15 օր է որ Ցիւրիխից Նէօշատէլ է եկել... մի այլանդակ աղջիկ է, կարծեմ քիչ հիւանդ. երևի մի ցնցող դէպք է անցկացել գլխովը։ Չի ծիծաղում, միշտ տխուր է, մտացրիւ. մի չնչին աղաղակ՝ ամբողջապէս ռստնել է տալիս նրան. ջղերը սաստիկ լարւած դրութեան մէջ են. երկաթուղու մէջ միայն 5—6 բառ արտասանեց ինձ հետ... այն էլ հարցրեց թէ ճանաչում էի Սուրէնեանին՝ Ցուրիխում.

—Սուրէնեա՞նը, ասաց օր. Բարութեանը—բայց նա այստեղ է այժմ։

—Այստե՞ղ, գոչեց ուրախութեամբ Վուլկանը—ո՞րտեղ է, կուզէի տեսնել իրան։

—Վերն է, անշուշտ կըգայ այժմ։ Իսկ դուք ասացէք թէ այդ օրիորդը ինչու էր հետաքրքրւում նրանով։

—Չըգիտեմ։ Նա ինձ հարցնում էր թէ արդեօք չըգիտե՞մ թէ այժմ նա ուր էր. ասում էր որ Ցիւրիխից գնացել էր։

—Իսկ ձեր գործե՞րը ինչպէս են գնում. ձեր ժամանակը չէ՞ փընէւ փոխադրւելու և դասեր լսելու. կարծեմ բաւական սովորած պիտի լինիք լեզուն։

—Այո՛, օրիորդ. ես հէնց դրա համար եմ եկել որ նայեմ թէ ինչ պիտի անել. Նէօշատէլը զզւեցրեց ինձ։

—Ա՛, ուրեմն այստե՞ղ էք փոխադրւում, գոչեց Սմիրնովան։

Օր. Բարութեանը խէթ-խէթ նրան նայեց։

—Այո՛, օրիորդ, երևի շատ շուտով. ասաց Վուլկանը։

—Իսկ ձեր ջութա՞կը, հարցրեց օր. Նունէն—առաջ գնո՞ւմ էք, թէ թողել էք։

—Օ, դուք ջութա՞կ էլ էք նւագում. բացագանչեց Սմիրնովան։

—Բայց օրիորդ, հրեց նրան Բարութեանը բարկութեամբ —քիչ զգոյշ գռւացէք. քիչ մնաց սեղանը կործանէիք։

Սմիրնովան կարմրեց, ետ քաշւեց ու նստեց մի աթոռի վրայ։

Այդ միջոցին սրահ մտաւ Սերգօն, դռնից մի հայեացք նետեց դէպի սեղանը և նկատելով Վուլկանին, նախ մի վայրկեան քարացած նայեց նրան, իսկ յետոյ ձեռքերը պարզած վազեց դէպի նա և գոռաց.

—Վա՛հ, Վուլկա՛ն... այ քեզ հրաշք, դո՞ւ այստեղ ինչ գործ ունիս։

Երկու ուսանողները ջերմագին համբուրւեցին։

—Ասա՛ է, տօ, ծիծաղեց զւարթութեամբ Սերգօն, —այս երբ եկար, ինչո՞ւ եկար... փող գտա՞ր որ եկար, չէ՞ որ գրել էիր թէ փող չունիս... գիտէի՞ր որ երեկոյթ ունէինք... ինչ չաղացել ես, տօ, խօսիր էլի, վա՛...

—Ո՞ր մէկ հարցիդ պատասխանեմ։

—Բոլորին, բոլորին... օրիո՛րդ, դարձաւ նա Բարութեանին—բուֆէտը պատրաստ է. բայց թէ ով պիտի չայ ւււող լինի—այդ ձեր գործն է.

—Լա՛ւ, լաւ, ասաց նեղացած Բարութեանը—մէկին կըգտնենք ի հարկէ։

Սերգօն զարմացած սրան-նրան նայեց.

—Ինչո՞ւ է նեղացել օրիորդը. ասաց նա—մէկը նեղացրե՞ց նրան։

—Ո՞վ պիտի նեղացնի է՞, դարձաւ օրիորդը—դուք հէնց միշտ երազներ էք տեսնում... Բուֆէտում ո՞վ մնաց՝ բաս որ դուք եկաք...

—Սուրէնեանը և Վահանը... հա՛, դէ լաւ, ապա Վուլ-

կան, քիչ էլ ինձ հետ խօսիր... ուֆ, յոգնեցի, գլուխս... ուր է Դանիէլեանը, դեռ չըպրծա՞ւ, ժամը 7-ն է արդէն:

Դանիէլեանի մուրճի ձայնն էլ չէր լսւում. բեմի վրայ կըրկնողութիւնը վերջացել էր, իսկ մի քանի ծառաներ սկսել էին ճրագները վառել:

Քիչ յետոյ Պօղոսեանն էլ մօտ եկաւ, Արտաշէսն էլ, Գըրիգորն էլ. ապա Դանիէլեանը մի սեղան դրեց նախադաւթում և նստեց կողքին՝ տոմսակների համար, իսկ Սերգօն Վուլկանի թևը մտնելով՝ բարձրացրեց բուֆէտը:

Կենդանութիւնը հետզհետէ սաստկանում էր. ամբողջ հայ և ռուս ուսանողութիւնը հաւաքւել էր. սկսել էին հիւրեր էլ երևալ կամաց-կամաց. քիչ յետոյ մի կառք կանգ առնելով դռան վրայ, ցած իջեցրեց Ալֆրէդի վիօլօնչելը, ապա Մ. Դաւիլիօն սրնգահարը եկաւ, յետոյ Մ. Բէյն-փոքրիկ՝ ջութակահարը և երբ ժամը 8-ին մօտ էր, մի ծածկւած կառք դռան վրայ իջեցրեց շքեղապէս սպիտակ հագնւած լեհուհի երաժշտին:

Այդ այն միջոցին էր, երբ Բարսեղն էլ մի մեծ ափսէի մէջ չոր ուտելիք էր տանում բեմի ետև, արտիստների համար, իսկ Արտաշէսը իր թառը տոպրակի մէջ՝ անց էր կացնում բագով, նոյնպէս բեմի ետևը տանելու:

Հետզհետէ կառքեր էր, որ մտնում էին բագը և ձիւնի վրայ խշրտալով՝ կանգ առնում դռան առաջ:

Սրահը սկսում էր լցւել. տեսնւում էին նաև գերմանուհիներ և մինչև իսկ անգլուհիներ, որոնք պսըլի հագուստ հագած՝ հանում էին իրանց վերարկուն վերի սենեակներում և մի նուրբ խշրտոց պատճառելով՝ ցած իջնում սանդուղքներից դէպի սրահը:

Դռան առաջ, մի կողմը օր. Բարութեանն էր, միւս կողմը Վուլկանը, որոնք տոմսակներ էին ընդունում և հիւրերին ներս հրամցնում:

Հիւրերը երբ մի քայլ անում էին, մի տեսակ հիացումով կանգ էին առնում ու մի քանի րոպէ դիտում երկու հիւրընկալներին. տղամարդիկ հիանում էին օր. Բարութեանի վրայ և գոչում.

—Օ՜, ինչպիսի կրակոտ արևելեան գեղեցկութիւն, ինչ նորանշանութիւն:

Իսկ կանայք գնում էին Վուլկանին և փսփսում.

—Ինչպիսի նշանաւոր դէմք և գեղեցիկ...

Իսկ երբ շուրջը նայելով հանդիպում էին հայկական դէմ-
քերի, հրճւանօք ներս էին դնում և գիտում ամեն բան. մա-
նաւանդ որքան սև դէմքով ուսանողներ կամ ուսանողուհիներ
որ տեսնում էին, հայ էին համարում:

—Այս որքա՜ն շատ էք այստեղ, հէ՜, հարցրեց յանկարծ
պրոֆ. Վուարէնը բռնելով Բարսեղին, որ վազելով ներս էր
մտնում:

—Օ, պ. պրօֆէսոր... համեցէք.

—Այո՛, այո... բայց ասացէք խնդրեմ, այս բոլորը հայե՞ր
են:

—Ոչ, հրէաներ էլ կան:

—Իսկ դռան մօտի կանգնածնե՞րը:

—Հայեր են:

—Ուսանողուհի՞ է դա.

—Այո, բժշկական.

—Իսկ միւսը:

—Նոր է... մեր հայ գրողներից է.

—Շնորհակալ եմ...

Ու Բարսեղը անհետանում էր:

Դռան առաջ խռնւել էին թէ դրսից և թէ ներսից. օր.
Բարութեանը և Վուլկանը արագ գործելուց կարմրել էին, օրիոր-
դի մազերը եկել էին ճակատի վրայ, և այդպիսով նրա դէմքը
այնքան գեղեցկութիւն էր ստացել լոյսի տակ, որ պրոֆ. Ֆօխ-
տը ներս մտնելիս՝ կանգ առաւ ու պահ մի նայեց նրան:

—Belle armènienne! (գեղեցիկ հայուհի), ասաց նա բար-
ձրաձայն:

Բոլորը պատկառանօք ճանապարհ տւին մեծ գիտնականին, որ սովորականի պէս համարձակ ու բարձրաձայն հանաքներ անելով՝ տոմսակը պարզեց Գրիգորին:

—Իմ համա՞րս. հարցրեց նա:

—Համեցէք, պ. պրոֆէսոր, առաջ ընկաւ Գլիգորը նրա աթոռը ցոյց տալու համար։

—Ո՛չ, ոչ, ես կըգտնեմ, առաջին կարգումն է։

—Այո, պ. պրոֆէսոր։

—Շնորհակալ եմ...

Ապա երբ վիճակախաղութեան սեղանը տեսաւ, ճանապարհը ծռեց դէպի նա. նրան միացաւ պրոֆ. Վուաբէնը պատկառանօք։

Մեծ գիտնականը մօտ գնաց սեղանին, դննեց և երբ ախալցխացի կնոջ պատկերը տեսաւ, ասաց.

—Բայց մի՞թէ այդ հայուհիները բոլորը գեղեցիկ են. թէ՞, հաւաքւածներն էք միայն ընտրել, մէկը այստեղ դամելու, միւսը դռան մօտ կանգնացնելու համար... Կուզէի այս պատկերը ունենալ։

—Մեզ մեծ պատիւ կանէք, պ. պրոֆէսոր, խօսեց լսկոյն օր. Նունէն—եթէ ընդունէք այս ընծան։

—Լաւ. ասաց գիտնականը—միայն թէ վերցրէք այս քըսան ֆրանկը։

Ու մի ոսկի դրեց սեղանի վրայ, յետոյ անցաւ առանց պատկերը վերցնելու։

—Կուղարկէք, չէ՞. դարձաւ նա օրիորդին։

Օր. Նունէն խոնարհւեց և թողեց գիտնականին անցնելու։

Լսւում էին աթոռների շարժւելու, խօսակցութեան, վաբագոյրի ետևից էլ երաժշտական գործիքների լարելու՝ ձայներ։

Յանկարծ մի զանգակի ձայն հնչեց բեմի վրայից, ազդարարելով որ երեկոյթը պիտի սկսէր։

Աթոռների ձայները սաստկացան, շորերի շփման աղմուկը մեծացաւ, որովհետև ամեն ոք սկսեց իր տեղը փնտռել նըստելու։

Սրահը գրեթէ լիքն էր։

Ժամը 8-ն էր, երբ վարագոյրը բարձրացաւ ու մի բոպէի խորին լռութեան մէջ, բեմի վրայ կանգնած ուսանողուհիների և ուսանողաց խումբը հանդիսաւորապէս հնչեցրեց «Մեր հայրենիք» ազգային երգը...

Թ

Երբէք այդքան շատ հայեր չէին եղել ժընէւի հայկական երեկոյթներում, որքան այդ օրերը։ Լօզանից եկել էին որքան կային, նոյն իսկ ոչ ուսանող հայեր. մի բժիշկ իր կնոջ հետ, մի պոլսեցի հարուստ իշխանուհի՝ իր երկու որդոց հետ—ժընէւում ապրող մի քանի հարուստ հայեր... և ժընէւացիք ո՛ր կողմը դառնում էին, թուխ ու նորօրինակ աչխկան դէմքեր էին տեսնում, մէկը միւսից սև մազերով, սև մեծ աչքերով, մէկը միւսից կրակոտ, կրքոտ արտայայտութիւններով։

Արդէն լուր էլ տարածւել էր, որ հայ իշխանուհի կայ սրահի մէջ և նստել է առաջին կարգում. ամենքը բարձրանում—նայում էին, փնտռում. ներս մտնողը մի քանի անգամ դառնում—դիտում էր օր. Բարութեանին և Վուլկանին. նստած տեղիցն էլ միշտ հայ ուսանողներին էր դննում. թխադէմ և սևահեր հրէաներին իսկ հայերի տեղ էին ընդունում. հիանում էին երգերի վրայ, ապշել էին և ապա զմայլել՝ թառի վրայ նւագած եղանակներից, գործիքի մելամաղձոտ ձայնից, երեք անգամ ծափահարել էին օր. Բարութեանին, որ բեմի վրայից հայերէն լեզւով կարդացել էր սկզբից պրօգրամների վրայ տպւած՝ ֆրանսերէն «Մայր Արաքսի» երգը. և երբ առաջին մասը լրացած, բոլորը ոտքի էին ելնում բուֆէտը մտնելու համար, գոհ էին, մի րոպէ տեղն ու տեղ կանգնած իրանք իրանց արևելք, ֆանտաստիքական մի աշխարհ փոխադրւած էին կարծում և ապա անցնելով բուֆէտը, մեծ ախորժակով խմում էին սամավարով պատրաստած թէյ...

Լուրը իսկոյն ցած եկաւ, որ վերևում ռուսական թէյ կար և գեղեցիկ հայուհիներ (հրէուհիներին հայուհի էին համարել) թէյ էին տալիս, համով թէյ։ Երիտասարդները խռնեցին վեր։ Ամեն անգամ երբ օր. Բարութեանը անցնում էր, բոլորը ճանապարհ էին բաց անում և զմայլմամբ նայում նրա վրայ։ Ծերունի պրօֆ. Ձիֆը իր մօտ կանչեց նրան և ժպտելով ու

հիացումով խօսեց նրա հետ. իսկ երբ Վոլկանին ծանօթացրին պր. Վուարէնին, սա մի առանձին հետաքրքրութեամբ երկար խօսեց նրա հետ և ապա խնդրեց այցելել իրան։

Առանձին ուշադրութիւն հրաւիրեց իր վրայ Սուրէնեանն էլ, երբ որահ մտաւ։ Նրա դէմքը աւելի գրաւեց կանանց մանաւանդ. առաջ գիւալին էին գտնում, վախենում էին այն խոր տխրութիւնից, որ հոսում էր նրա դէմքից, իսկ յետոյ մի տեսակ քաշող արտայայտութիւն էին տեսնում նրա աչքերի մէջ։ Սուրէնեանը չընկատեց թէ ինչ տպաւորութիւն էր թողնում. մտախոհ անցաւ նա բազմութեան միջից և մօտեցաւ վիճակախաղի սեղանին, երբ յանկարծ աչքը ընկաւ քիչ հեռու կանգնած մի խումբ օրիորդների վրայ և գունատուած կանգ առաւ։

Օրիորդներից մէկը, որ նոյնպէս տեսաւ նրան, մի քայլ առաջ վազեց և գոչեց.

—Սուրէն...

Երկուսն էլ այլայլուած էին, բայց միմեանց ձեռք սեղմեցին։

—Դուք այստե՞ղ, ասաց օրիորդը—ես ձեզ կարծում էի Կովկաս։

—Եւ ինչո՞ւ այդպէս էիք կարծում, օրիորդ Մարթա, ասաց դողդոջուն ձայնով Սուրէնեանը—ես միթէ ասացի այդպէս։

— Ո՛չ, բայց այդ դէպքից յետոյ...

Այստեղ Սուրէնեանի դէմքը յանկարծ սառեց, ակնարկի արտայայտութիւնը հանդարտեց և նա չոր կերպով ասաց.

—Դեռ չէ՞ք մոռացել դրանք...

—Դուք ինձ ներել էք, չէ՞, պ. Սուրէն, մօտեցաւ նրան Մարթան—բոլորովին ներել. և եթէ մոռացել էք ինձ, շատ ուրախ եմ և շատ շնորհակալ... ասացէք...

Սուրէնը չորս կողմը նայեց, յետոյ նշան արաւ Մարթային հետևել իրան և անցնելով բազմութեան միջից՝ դէպի բուֆէտը սկսեց բարձրանալ։

—Ո՞ւր ենք գնում, հարցրեց Մարթան ետևից բարձրանալով։

—Բուֆէտի սրահը. չէ՞ք կամենում մի բան խմել։

—Աւելորդ չէ՞ արդեօք. կանգ առաւ Մարթան և կասկածանօք Սուրէնին նայեց։

Սուրէնը ժպտեց դառնութեամբ։

—Օ՛, ոչ, ասաց նա—դուք կասկածում էք որ էլի կըրկնելու եմ նոյն տեսարանները և ցաւելով ինձ վրայ, ուզում էք չըգծէլ ինձ հետ...

—Այո՛.. վախենում եմ որ դեռ չէք մոռացել ինձ...

—Այդ դուք կըտեսնէք այս րոպէիս... գնանք.

Եւ երկուսն էլ մտան բուֆէտ ու քաշուեցին մի հեռու անկիւն, մի լուսամուտի մօտ։

—Նստեցէք այստեղ. հրամցրեց նրան Սուրէնեանը—իսկ ես կըկանգնեմ... այժմ լսեցէք ինձ։

Բայց խկոյն լռեց և պահ մի նայեց աղջկան։ Մարթա Կրէյսլէրը կապտաչեայ, սիրուն դէմքով մի գունատ աղջիկ էր. շքեղ էր մանաւանդ նրա հասակը։ Դէմքն էլ պարզ, գրաւիչ և ո՛չ մի ցած արտայայտութիւն չունէր. այդ րոպէին նա արտայայտում էր կասկած, վախ, մի տեսակ լարուած գըթութիւն, որ նմանում էր այն սիրող մօր գթութեանը, որն իր հիւանդոտ որդուն էր նայում անձկանօք և վախենում թէ չըլինի հիւանդը նորից տագնապի մէջ է ընկնելու։ Նա այդպէս անձկանօք նայում էր Սուրէնեանին և չէր համարձակւում մի խօսք ասել. ընդհակառակն, լարուած՝ սպասում էր։

—Խնդրեմ, մրմնջեց նա քիչ յետոյ—խնայեցէք ձեզ, ոչինչ դդայուն (սանտիմանտալ) բան չասէք... գիտէ՞ք, ես հիւանդացայ. այո... ձեզ պատճառածս վշտից ես հիւանդացայ. այն միտքը, որ ձեզ ի զուր տեղ տանջեցի, իրապէս վշտացրի, ձեր հոգին վրդովեցի—այդ միտքը քիչ էր մնում սպանէր ինձ... ես շա՛տ, շատ յանցաւոր եմ ձեր առաջ, բայց ես ինքս չեմ մեղաւորը, ո՛չ... ջղերս, այս անիծեալ ջղերս... որքա՜ն կուզէի մկրատի մի հարուածով կտրտել նրանց, այդ զգացող թելերը կործանել, ոչնչացնել...

Եւ կծկւեց այնպէս վշտալից, որ Սուրէնեանի աչքերը լցւեցին։

—Խնդրում եմ, օրիորդ, ասաց նա, ինչո՞ւ կրկնել այդ բոլորը... թողէք, ես այլ ևս չեմ տանջւում...

—Չէ՞ք տանջւում, այլ ևս չէք տանջւում. գոչեց ուրախութեամբ Մարթան ձեռքերը միմեանց միացնելով—ա՛հ, շնորհակալ եմ, շնորհակալ եմ որքան ուրախացրիք ինձ... ուրեմն այլևս չէ՞ք տանջւում, այլևս չէ՞ք մտածում ինձ վրայ:

—Ո՛չ, մտածում եմ, բայց չեմ տանջւում և դա արդէն նշան է, որ կըմոռանամ ձեզ... երբ սիրում են այնպէս, որպէս ես գիտեմ սիրել, իրանց սիրոյ առարկայի վրայ մտածելիս տանջւում են. և եթէ չեն տանջւում, այդ նշան է որ սկսում է անտարբերութիւն, իսկ անտարբերութիւնը մոռացութեան յառաջաբանն է...

—Այո՛, այո՛... օ, դուք միշտ նոյն լաւ մտածող մարդն էք. միայն մտածող. բայց սիրել ձեզ ես չըկարողացայ, ոչ. խօսեց Մարթան—ձեզ վրայ հիանում էի. այժմ համակրել անգամ չեմ կարող, որովհետև այն միտքը, որ յանցանք եմ գործել դէպի ձեզ, սառեցնում է համակրութիւնս. ուզում եմ խուսափել ձեզնից... Տանջւում էի չըգիտենալով թէ ինչ էիք եղել... վախենում էի թէ անձնասպան... բայց ո՛չ—ծիծաղեց նա հիւանդ ժպիտով—ո՛չ, դուք ձեզ չէք սպանիլ. այդ ես լաւ գիտեմ... դուք այդքան կամքի ոյժ չունիք: Ուրեմն մոռացե՞լ էք ինձ, հա՞, այլ ևս չէք տանջւում. օ, որքա՜ն ուրախ եմ...

Բայց Մարթան, չընայելով որ ժպտում էր, դողում էր յուզմունքից, կարծէք մրսում էր—չընայելով որ սրահը տաք էր: Ժպտում էր մեռելային մի ժպտով ու ցաւալից արտայայտութեամբ. գրեթէ մի տեսակ տխուր աղաչանքով՝ նայում էր Սուրէնեանին:

Երիտասարդը կռթնել էր լուսամուտի տախտակեայ փեղկին և գունաթափ՝ լսում էր նրան:

—Ոչ, էլ չեմ տանջւում, ասաց նա մեղմաձայն ձայնով—կարծեմ էլ չեմ տանջւում... և յետոյ...

Այստեղ նա մի վայրկեան կանգ առաւ և մի անսովոր դժւար խօսք ասելու պէս վարանեց, բայց ոյժ տւաւ և ասաց.

—... Եւ յետոյ՝ այլևս չեմ սիրում ձեզ...

—Այլ ևս չէ՞ք սիրում... զարմացած մնաց Մարթան—այդքան շո՛ւտ, արդէ՞ն...

Յետոյ ծիծաղեց և աւելացրեց.

—Այդպէս շո՛ւտ... արդեօք ինչ պատահեց... չըտանջւել

—ես այդ հասկանում եմ. բայց երբ տեսաք ինձ այժմ, այս րոպէիս, չընորոգւե՞ց սէրը ձեր մէջ. դուք ինձ նորից չէ՞ք ցանկանում, ասացէ՞ք, չէի՞ք կամենալ որ ես, օրինակ սիրէի ձեզ, գրկէի նորից, համբուրել թողնէի...

—Օ՛, ո՛չ... ետ քաշւեց Սուրէնեանը—արձանի գրկել չէի կամենալ. դուք միշտ արձան էք եղել ինձ համար...

—Այո՛, ճիշտ է. ես թոյլ եմ տւել որ դուք ինձ համբուրէք, բայց ինքս միշտ անզգայ եմ եղել և զարմանալին այն է, որ երբ հեռու էիք լինում, մտածում էի թէ, եթէ համբուրէիք՝ ես անզգայ չէի լինիլ, բայց երբ մօտեցել էք, տեսել էք ինձ—իսկոյն զգացմունքներս սառել են և ես երբեմն իսկ զզւանք եմ զգացել. այո՛... խոստովանւում եմ... մի՞թէ դուք չէիք նկատում թէ վերջերում ինչպէս խուսափեցնում էի ձեր շըթունքներից իմոնքը, իմ այտերը... ես ձեզ չէի սիրում և կամ աւելի ճիշտն ասել, ձեզ՝ մօտից չէի սիրում... ընդհակառակն, երբ չէի տեսնում ձեզ, երբ հեռու էիք՝ ցանկանում էի ձեզ, կարծես սիրում էի...

—Այժմ էլ նոյնն է.

—Գրեթէ նոյնը... Երբ չըկայիք, շատ եմ մտածել ձեր մասին. իսկ այժմ գրեթէ վախենում եմ որ չըգիրկէք ինձ, յանկարծ չըմտածէք համբուրել...

—Օ՛, ո՛չ, ժպտեց դառնութեամբ Սուրէնը—միամիտ եղէք, այլևս չեմ սիրում և շուտ կըմոռանամ...

—Զարմանալի է... մռմռաց Մարթան—ես այդքան շուտ չէի սպասում որ բուժւէիք... այնուամենայնիւ շատ ուրախ եմ...

Յետոյ ոտքի ելաւ, բարևեց և ուզեց հեռանալ:

—Ուրախ եմ, կրկնեց նա—գոնէ լիբր բարեկամ տեսնւենք.

—Ո՛չ, թափահարեց գլուխը Սուրէնեանը—չըտեսնւենք. ես ձեզ բարեկամ լինել չեմ կարող:

—Շնորհակալ եմ, ես էլ նոյնը. ձեզ երբ տեսնում եմ, ինձ վատ եմ զգում... իսկ գոնէ կասէիք թէ ինչ նոր դէպք կարողացաւ այդպէս շուտով դադարեցնել ձեր մէջ այն զգացմունքը, որ այնքան կատաղի, վայրենի կերպով ունէիք դէպի ինձ:

Սուրէնեանը լռեց և չըպատասխանեց, այլ սառնութեամբ նայեց Մարթային:

—Չէ՞ք ուզում ասել. ժպտեց Մարթան մի տեսակ վըշտացած կերպով—կուզէք ես ասեմ... շատ անգամ մի մեռնող զգացմունք՝ ծնունդ է տալիս մի նոր աւելի ուժեղ զգացման. մի նոր ծնող սէր՝ բեղմնաւորւում է մի մեռնող սիրուց... կարծեմ հասկացել եմ, չէ՞... հետաքրքիր է այդ նոր սիրոյ առարկան տեսնել:

Սուրէնեանը ստացաւ աւելի սառը և չոր կերպարանք ու ոչինչ չասաց: Մարթան մի վայրկեան դիտեց նրան, յետոյ ձեռքը պարզեց և ասաց.

—Ցտեսութիւն. էլ չենք տեսնուիլ.

—Ո՛չ, պատասխանեց Սուրէնեանը և ձեռք չըտւաւ:

—Անքաղաքավարի մի լինիք գոնէ, ժպտեց Մարթան—ցոյց տուէք որ ներում էք ինձ:

—Ոչինչ խմել չէի՞ք կամենալ, օրիո՛րդ, ասաց Սուրէնեանը գնալով դէպի բուֆէտը:

—Ո՛չ, շնորհակալ եմ:

—Ձեր խոնարհ ծառան... ասաց երիտասարդը, խորը գըլուխ տւաւ և մի կողմ քաշւելով, թողեց որ Մարթան անցնէր և դուրս գնար սրահից:

Վերջին բարակ թելը, որ կապում էր դեռ երիտասարդի սիրտը այդ աղջկայ հետ՝ կտրւել էր: Սուրէնեանը թոթւեց իրան, շփեց ճակատը և կարծես մի մեծ բեռից ազատւած՝ ազատ շունչ առաւ:

—Ձեզ թէյ, հարցրեց հրէուհին, որի մօտ կանգնել էր նա:

—Այո, մի գաւաթ:

Յետոյ առաւ թէյի գաւաթը, վճարեց, և քաշւելով երկար սեղանի հեռաւոր անկիւնը, նստեց ու սկսեց ծանրութեամբ խմել:

Սրահը լիքն էր. խմում էին, խօսում, ծիծաղում, զբօսնում սենեակի երկարութեամբ օրիորդներ՝ հանաքներ անելով, երիտասարդներ՝ հաճոյախօսելով, շաքարեղէն առաջարկելով այսայն սիրուն օրիորդին:

Քիչ յետոյ հնչեց երկրորդ բաժանմունքը սկսելու նշանը. շատերը դուրս գնալ սկսեցին, մի քանիսները տեղներիցն իսկ չըշարժւեցին. իսկ Սուրէնեանը զանգի ձայնից սթափած, շտապով խմեց թէյը, գաւաթը ետ տւաւ և մտաւ հագնւելու սենեակների մասը:

Բազմութիւնը իջաւ ու նստեց. երկրորդ բաժանմունքը սկսելու էր լեհուհու նւագովը և վերջանալու մի խմբերգով: Պրոֆ. Ֆոխտը գնացել էր, Հիֆն էլ մտադիր էր խսկոյն գնալ. իսկ Վուարէնին հետաքրքրում էր պարը և նա մտադրել էր մնալ մինչև տեսնելը:

Բայց հանդիսականների երիտասարդ մասը, մանաւանդ գերմանացի ուսանողները, մնացել էին բուֆէտում գարեջրերի շշերի առաջ և խնդրել որ իրանց իմաց տան երբ պարը սկսւէր, այնպէս որ սրահի աթոռներից բաւական դատարկ էին մնացել. շատերն էլ դերադասելով ոտքի վրայ դռան մօտ կանգնել, մուտքի առաջ խռնւել էին ահագին բազմութեամբ, երբ լեհուհին դուրս եկաւ և նստեց դաշնամուրի առաջ: Սուրէնեանին կանչել էին՝ նւագողին բեմ տանելու համար: Նա փունջը տեղաւորեց և ետ դարձաւ կուլիսի ետևը:

Երբ ցած էր իջնում, ուսանողներից մէկը մօտեցաւ նրան և յայտնեց որ մի օտարական օրիորդ եկել՝ դռան վրայ նրան էր հարցնում:

—Ի՞նչպէս, զարմացաւ Սուրէնեանը—իմ անունն էր տալիս:

—Այո. ասում էր կանչեցէք մսիւ Սուրէնին... որովհետև տոմսակ էր ուզում առաջին կարգի և չըկայ այլևս:

—Զարմանալի մարդ էք, նեղացաւ նա—չէ՞ որ պրոֆէսորների աթոռները դատարկ են. փողը առէք և առաջնորդեցէք դէպի նրանցից մէկը... բայց ո՞վ է արդեօք որ ինձ ճանաչում է. ռուս է:

—Ո՛չ, գերմանացի է երևում. բայց շատ լաւ ֆրանսերէն է խօսում:

—Ինչ որ է. դարձաւ Սուրէնեանը դէպի բեմը—տեսնում էք որ ես հեռանալ չեմ կարող այստեղից. շուտով կըվերջացնի և ես պարտաւոր եմ մօտը գտնուել, նորից ներս տանել, երբ ծափահարեն... խնդրում եմ բարի եղէք դուք և այդ օրիորդին ինքներդ ներս առաջնորդեցէք:

Լեհուհին դեռ չէր վերջացնում: Բեմի ետև կանգնած պ. Գաւլլիօն սրնգահարը, որ լեհուհուց յետոյ էր դուրս գալու և մի կատակաբան երիտասարդ էր, կռացաւ դէպի Սուրէնեանը և ժպտելով ասաց.

—Լաւ է անում, բայց գոնէ իր նուագածի կէսի չափ գեղեցիկ լինէր... շատ տգեղ է օրիորդը:

—Այո, ժպտեց Սուրէնեանը—բայց համակրելի է:

—Օ՛, ինձ համար ոչ մի համակրելի դէմք չըկայ, եթէ նա գեղեցիկ չէ. ասաց ֆրանսիացին և ձեռքի արծաթազօծ սրնգի ծակերի վրայ դրեց մատները:

Վերջապէս լեհուհին ելաւ, ծափահարութիւնների տակ դուրս գնաց, յետոյ երկու անգամ էլ դուրս եկաւ գլուխ տալու և հուսկ ուրեմն Սուրէնեանի հետ հեռացաւ բեմից՝ հագնուելու սենեակը: Այդտեղ միայն Սուրէնեանը ազատուեց իր պարտքից, ձեռքի մեծ ծաղկեփունջը դրեց օրիորդի կողքի սեղանի վրայ, շնորհակալութիւն յայտնեց ու դուրս գնաց:

Նրա միտքը իրան հարցնող օրիորդի հետ էր. ո՞վ էր արդեօք. ո՞վ էր նրան ճանաչում Ժընէւում և եթէ Ցիւրիխից էր, ո՞ր օրիորդն էր դա:

Արագ քայլերով գնաց նորից կուլիսների ետևը և այնտեղից գաղտագողի նայեց առաջին շարքի վրայ բոլոր նստողներին: Ոչ մի ծանօթ դէմք այնտեղ. և ոչ իսկ երկրորդ և յետագայ շարքերի վրայ. իսկ ետևի շարքերը չէին տեսնւում: Մ. Գաւլլիօնի «Վենետիկի բարեկենդանը» իր վարիացիաներով՝ սքանչացում էր ազդել հանդիսականներին, որոնք դղրդիւնով ծափահարում էին և սակայն ծափահարողներից ոչ մէկը չըկար, որ նրան ծանօթ լինէր:

Դուրս եկաւ կուլիսների ետևից և սրահի դռնովը ներս մտաւ: Դռան կողքին՝ ոչ ոք, իսկ միջին շարքերում նստած կանանց մէջքերն ու գլուխներն էին երևում: Այն ուսանողն էլ չէր երևում, որ հարցնէր թէ ո՞ւր էր նստել օրիորդը: Եւ երբ այդպէս փնտռելով մօտեցել էր վիճակախաղի սեղանին, զգաց որ մէկը դպչում էր իր թևին: Դարձաւ և քիչ մնաց աղաղակէր զարմանքից: Խմման էր, ժպտուն և կարմրած, որ ձեռքն էր պարզում դէպի նա և ասում.

—Ես էլ եկայ ձեր երեկոյթին, պ. Սուրէն. Նիօնից եկայ... մի ֆանտազիա էր սա. ուրախ չէ՞ք որ եկայ:

—Օ՛, թոթւեց Սուրէնեանը ուրախութիւնից դեռ չըսթափուած—անշուշտ, օրիո՛րդ, անշուշտ... շատ ուրախ եմ:

—Լաւ բայց, ժպտեց Խմման—սա հայկական երեկոյթի ինչով է նման. այս գործիքնե՞րը, որոնք կախուած են պատի վրայ... Ամեն ինչ եւրոպական է. ահա մի սովորական սրնգահար, անշուշտ ֆրանսիացի, որ իր նման թեթև եղանակներ է նուագում... Էհ, զզուել եմ այդ բոլորից. առաջ էլ մի ինչ որ աֆրիկական դէմքով օրիորդ քերթում էր Շօպէնի մի պօլօնէզը... ինչն է այստեղ հայկական, պ. Սուրէն...

—Շատ խիստ էք, օրիորդ... բայց ինչպէ՞ս եղաւ որ մըտածեցիք գալ Ժընէւ և ինչպէս գտաք տեղը:

—Մի րոպէ, երբ արդէն ձանձրացել էի Նիօնից, մտածեցի Ժընէւ գալ և իսկոյն շոգենաւ նստեցի. իսկ այստեղ յիշեցի որ այսօր երեկոյթ ունիք. հարցրի. ամենքը գիտեն տեղը: Տոմսակ չըկար. ինձ ներս չէին թողնիլ, եթէ ձեր անունը չըտայի:

—Ախ, այդ դո՞ւք էիք ուրեմն ինձ հարցնողը... ներեցէք, չէի կարող գալ. յոյս ունիմ որ տեղ տուին ձեզ:

—Այո՛, բայց ես չուզեցի այնտեղ գնալ և այստեղ կանգնել եմ. այսպէս լաւ է. բայց ցոյց տուէք ինձ հայկական բաներ... ախ այո՛. տոմսակ ծախողի մօտ մէկը կանգնել էր և նման էր ձեզ. նա անշուշտ հայ էր. նոյն թուխ դէմքը, մեծ սև, արտայայտիչ գրեթէ խօսուն աչքերը, բայց ո՛չ նոյն վըշտալից, վշտերով բոված գծագրութիւնը... Ցոյց տուեցէք ինձ հայ օրիորդ...

Սուրէնեանը շուրջը նայեց և միայն օր. Նունէին և տիկ. Վարդուհուն տեսաւ.

—Ահա սրանք. բայց ճիշտ հայկական տիպեր չեն շատ էլ։

Իմման հետաքրքրութեամբ զննեց հայ կանանց։

—Օ՛, այդ մէկը հայի նման չէ, ասաց ժպտելով—միւսը քիչ նման է, բայց տգեղ է։

—Այժմ նայեցէք այն օրիորդին, որ ոսկեժել ֆիգարօ է հագել. տեսնո՞ւմ էք, գալիս է այս կողմը.

—Ա... դա՞, գեղեցիկ է այո և շատ օրիգինալ դէմք ունի... այժմ թողէք ես ինքս որոշեմ հայերին. այս միւս ուսանողը, չէ՞... սա միւսն էլ. իսկ նա՞.

—Նա ոչ. նա հրէայ է։

—Հրէա՞յ... որքա՛ն նման էք երկու ազգութիւններդ՝ տիպերով։

—Զարմանալի չէ. ինձ յաճախ հրէայի տեղ են ընդունել, երբ անցնում էի Աւստրիայից։

—Բայց գիտէ՞ք, ասաց Իմման որ յաճախ նայում էր իրանից հեռու կանգնած օր. Բարութեանին—այդ հայուհին շատ գեղեցիկ է. վառվռուն, սպանիչ գեղեցկութիւն... Արդեօք ձեր հայուհիները գիտե՞ն ջերմագին, մինչև գերեզման, սարսափելի, անվերջ ու կիզիչ կերպով սիրել...

Սուրէնեանը զարմացած, նայեց Իմմային։

—Ինչո՞ւ էք նայում, ասաց աղջիկը—այդ ածականների վրա՞յ էք զարմանում. ասացի կիզիչ, սարսափելի. լաւ ուրեմն, աւելացնեմ—անյագ, սոսկալի պահանջող, և կլանող սէր... գիտե՞ն այդպէս սիրել... դուք յիշո՞ւմ էք «Աֆրիկուհի» օպերան։

—Յիշում եմ.

—Յիշո՞ւմ էք իրան—աֆրիկուհու սէրը. այն անյագ, գրեթէ իրան՝ անձնովին նւիրող սէրը. յիշո՞ւմ էք թէ ինչպէս այդ աղջիկը սիրում է և պաշտում իր սիրած առարկային և մեռնում նոյն րոպէին, երբ նա հեռանում է... այդ օրիորդը շատ է նմանում աֆրիկուհուն։

—Ընդհակառակն, ժպտեց Սուրէնեանը—օրիորդը շատ զարգացած, քաղաքավարի, եւրոպականացած աղջիկ է. կուզէք

ծանօթացնեմ. ազատ շարժւածքներ, տղամարդկային նիստ ու կաց, մինչև իսկ երբեմն ծխում է։

—Ի՞նչ... գոչեց Իմման սոսկումով—խնդրեմ մի ծանօթացնէք և... հեռանանք. ես էլ չեմ ուզում դրա վրայ նայել. որքա՜ն հիասթափւեցի. այդ գեղեցիկ դէմքով հայուհին վարակւել է մեր ընկերութեան կեղծութիւններով... որքան ցաւալի է. որքա՜ն կուզէի որ դա լինէր նոյն իսկ վայրենի, բայց մաքուր, անկեղծ, բնական, իր մտածածը արտայայտող...

Եւ այս խօսելիս՝ Իմման իսկապէս զզւանօք էր նայում օր. Բարութեանին։

—Մի ուրիշ տեղ չկա՞յ այստեղ. բուֆէտը չկա՞յ. յարեց նա—մի բան կուզէի խմել։

—Ռուսական թէյ կուզէ՞ք, օրիորդ, գնանք վեր. այնտեղ հրէուհիներ ռուսական թէյ են մատուցանում։

—Գնանք. ես սիրում եմ ռուսական թէյ. շատ լաւ է պատրաստւում, մեզ նման թէյը չեն եռացնում և սև գոյնով գնում մեր առջևը. իսկ այդ հրէուհիները ուսանո՞ղ են։

—Բոլորն էլ բժշկութիւն են ուսանում.

—Բժշկութի՞ւն, ինչո՞ւ միայն բժշկութիւն...

Երկուսն էլ խօսելով անցան բազմութեան միջից և սկսեցին դէպի բուֆէտ բարձրանալ։

—Դժբախտաբար, խօսեց Սուրէնեանը երբ սանդուղքների գլխին էին հասել—բոլորն էլ այդ մասնագիտութեան են դիմում, որովհետև միակ ապրելու միջոցն են գտնում. այն էլ դեռ ունի իր դժւարութիւնները, որովհետև կին-բժիշկ Ռուսիայում շատ դժւարութեամբ է յաջողւում արտօնութիւն ըստանալ գործելու։

—Մի՞թէ։

Եւ Իմման շուրջն էր նայում, սպասելով նոր բաներ տեսնելու։ Բուֆէտում Սուրէնեանը երկու գաւաթ թէյ վերցրեց ու երկուսն էլ նստեցին մի սեղանի առաջ։

—Դուք մի՞թէ ծանօթներ ունի՞ք Ժընէւ, օրիորդ, հարցրեց Սուրէնեանը քիչ լռութիւնից յետոյ։

—Ունիմ. մի ամբողջ պանսիօն իր հիւրերովը միասին,

գերմանուհիք, ամերիկուհիք... Նրանք խօսք տուին որ կըգան երեկոյթին և եթէ ուշացան, երևի հանդիսաւորապէս հագնւում են՝ պարելու համար...

Եւ ծիծաղեց Իմման։

—Իսկ ես չըհագնւեցի, ասաց նա իր վրայ նայելով—տեսնո՞ւմ էք. այսպէս պարզ. մինչև իսկ երևի պիտի ամաչեմ, եթէ կամենամ պարել։

—Իսկ դուք պարում էք անշուշտ։

—Գիտեմ, բայց չեմ սիրում. դուք պարո՞ւմ էք... ախ, այո՛ յիշում եմ, ասացիք որ «վաղուց այլ ևս չէք պարում»... ու չասացիք թէ ինչու. ո՛չ միայն չասացիք, այլ և խորհրդաւոր կերպով լռեցիք։ Այժմ կուզէ՞իք ասել... Բայց սպասեցէք. նախ մի քանի ուրիշ խօսք։ Տեսէք, ես ձեզնից ուզում եմ իմանալ ձեր գաղտնիքները. այդ շատ էլ լաւ չէ իմ կողմից. բայց արդարանում եմ նրանով, որ ես ուզում եմ ձեզ ճանաչել. այնուամենայնիւ եթէ ուզում էք անճանաչ մնալ, դուք գիտէք, ես ձեզ չեմ ստիպում...

—Ոչ մի գաղտնիք չըկայ այստեղ, ժպտեց Սուրէնեանը—ես ձեզ կասեմ այդ իսկոյն և եթէ շոգենաւի վրայ չասացի, վախեցայ որ չըծիծաղէիք իմ սանտիմէնտալութեան վրայ... Ես այլևս չեմ պարում, որովհետև պարելու համար քիչ զւարթութիւն, ուրախութիւն պիտի զգալ, իսկ ես երբէք չեմ ըզգում. իմ կեանքը այնքան լի է եղել դառնութիւններով, ըսկսած մանկութիւնից մինչև այժմ. այնքան վշտեր եմ տեսել, որ ծիծաղում եմ, երբ մի վայրկեան մտքովս անցնում է թէ ես կարող լինիմ պարել... Պարե՜լ!... Սուրէնեա՛նը. դա ինչի՛ կընմանէր. չէ՞ր նմանիլ արդեօք այն թշւառ կլօունին, որ բեմի ետև թողնելով իր սիրած մեռնող զաւակին, ստիպւած է բեմ ելնել՝ ժողովրդին ծիծաղացնելու համար և երբ լաց է լինում, ժողովուրդը կարծում է թէ դա ծիծաղեցնելու համար է... ու աւելի է ծիծաղում... Չըգիտեմ, օրիո՛րդ, որտեղ եմ կարդացել մի այդպիսի բան, բայց գիտեմ որ եթէ ես պարելու ելնեմ, ծիծաղելի կըդառնամ ոչ միայն ինքս ինձ մօտ, այլ հանդիսականների մօտ իսկ... Այո՛, կան մարդիկ, որոնց գը-

ւարթութիւնը ծիծաղելի է, պարելը այլանդակ և այդ մարդերից մէկը ես եմ... ահա բոլոր գաղտնիքը։

Ու ժպտեց, նայելով Իմմային։ Սա, որ ուշադրութեամբ զննում էր Սուրէնեանի դէմքը խօսելու ժամանակ, այնքան արգահատական արտայայտութիւն էր ստացել, որ երիտասարդը զգաց թէ Իմման խղճում էր իրան։ Մի հակասական զգացմամբ, զայրոյթ զգաց այդ գթութիւնից և դէմքը կընճռեց։

—Այդ ոչինչ... ասաց նա կծուութեամբ—մի խօսքով ես չեմ պարում, որովհետև հաճոյք չեմ ստանում, այդ վեր-վեր թռնելուց... Եւ իսկապէս, երբեմն երբ տեսնում եմ մարդկանց, որոնք պարում են — ինձ հրէշաւոր է թւում այն, թէ ինչպէս լուրջ արարածները կարող են այդքան լըջութեամբ յիմարութիւններ անել.—ոստնուլ խեւերի ու կապիկների պէս...

—Պարո՛ն, ծիծաղեց բարձրաձայն Իմման—դուք ինձ էլ էք վիրաւորում. չէ՞ որ ես էլ եմ պարում և դուք խև ու կապիկ էք շինում բոլորիս։

Սուրէնեանը զգաց որ այլանդակապէս անզգոյշ էր եղել. ճակատը շփեց, թօթւեց իրան և ասաց.

—Ներեցէք, օրիորդ. մոռացայ ինձ... ես հաճոյքով պիտի դիտեմ ձեր պարելը։

—Ոչ արդէն, լըջացաւ Իմման—դուք այնպէս բաներ ասացիք, որ իմ պարելու ախորժս անցաւ. ես կըհամաձայնեմ պարել միայն ձեզ հետ. եթէ խև և կապիկ լինիմ, կուզէի այդպէս դատողն էլ լինէր ինձ հետ... Ինձ հրճւեցնում է ձեր պարզախօսութիւնը. խնդրեմ շարունակեցէք այդպէս, եթէ կամենում էք որ բարեկամ մնանք։ Դէհ, այժմ որ ձեր մի գաղտնիքն իմացայ, անշուշտ կասէք և միւսները... Արդեօք շա՞տ եմ պահանջում։

Եւ այնպէս նայեց Սուրէնեանին, որ սա չըկարողացաւ մի բառ արտասանել յուզմունքից։ Մի րոպէ լուռ, երկուսն էլ իրանց թէյը խմեցին։

Ժ

Ցածում երաժշտությունը վերջացել էր և հանդիսականները խռնւում էին վեր: Իմման սկսել էր ներս մտնողներին զննել նորից, երբ յանկարծ աչքը ընկաւ մի քանի քայլ հեռու, մի մութ կողմ կանգնած աղջկայ վրայ, որ առանձին խոր հայեացքով, կարծես յատկապէս այդտեղ դրա համար կանգնած, դիտում էր իրան և Սուրէնեանին: Վերջինս քիչ կռացել գաւաթի վրայ, չէր տեսնում դիտողին:

—Ձեզ լրտեսում են, պ. Սուրէն, ասաց Իմման կռանալով դէպի նա—մի օրիորդ է լրտեսողը. նայեցէք դէպի աջ...

Սուրէնեանը զարմացած գլուխը բարձրացրեց և աջ նայեց. բայց հազիւ թէ աչքը ընկել էր իրան զննողի ժպտուն ու մի տեսակ ցաւախառն դէմքին, որ ոտքի ելաւ ու կնճռեց դէմքը: Մարթան էր. ուզել էր տեսնել, թէ ով էր նա, որ կարողացել էր փոխել Սուրէնեանին: Ամբողջ երեկոյթի ընթացքում հետևել էր երիտասարդին ակնարկով. հեռուից գիտել էր, թէ նա որոնց հետ էր խօսում և այժմ, երբ հեռու, մթան մէջ կանգնած, տեսել էր Սուրէնեանի տաք, գրեթէ ամեն բան պարզող շարժւածքները,—հասկացել էր:

Ուրեմն այդ տարօրինակ դէմքով աղջիկն էր: Նախանձի մի տեսակ կծու զգացում և միաժամանակ անցեալը ունենալու փափագ— Սուրէնեանին նորից իր ոտքերի մօտ քաշելու ցանկութիւն—համակեց նրան:

Իմման խիստ ուշադրութեամբ և լռութեամբ զննում էր երկուսին, մանաւանդ Մարթային. բայց Սուրէնեանը թոթւեց մազերը, բարկութեան մի շարժումով դէն հրեց թէյի գաւաթը և նստեց նորից: Դրանից յետոյ Մարթան մի վայրկեան ևս հեզնական ժպիտով նայեց նրանց, ապա անհետացաւ ներս լցւող ուսանողուհիների մէջ:

Մի րոպէ թէ Իմման և թէ Սուրէնեանը լուռ, շարունակեցին թէյ խմել:

—Այդ օրիորդը ձեր ծանօթն էր, չէ՞, հարցրեց յանկարծ Իմման և ուղղակի նայեց երիտասարդի աչքերի մէջ:

Սուրէնեանը մի ումպով դատարկեց գաւաթը:

—Ծանօթ, թոթւեց նա—ոչ... ոչ, ծանօթ չէ այլ ևս:

Ցետոյ յանկարծ ելաւ, որ դատարկ գաւաթները տանէ:

—Ո՞ւր, հարցրեց Իմման—ես այլևս չեմ ուզում. նստեցէք, երբ պարի ժամանակը գայ, ես ուզում եմ իջնել և տեսնել... Նստեցէք:

Երիտասարդը նստեց:

—Գիտէ՞ք, ասաց Իմման, գուցէ դուք չընկատեցիք, բայց ես չեմ մոռացել, որ այս երեկոյ դուք մի քանի անգամ անպատւեցիք ինձ:

—Ե՞ս, օրիորդ, զարմացաւ Սուրէնեանը,—ինչպէս:

—Դուք, այո, մի քանի անգամ ձեզ հարցեր տւի և չըպատասխանեցիք ինձ: Ես գիտեմ, որ այսպէս ծանօթացողների մէջ առաջին անքաղաքավարութիւնը իմ կողմից է, երբ հարցեր եմ տալիս. բայց երկրորդն էլ ձեր կողմից է, որ չէք պատասխանում: Սակայն ես ձեզ ասացի, ձեզնով հետաքրքրւում եմ. ես կեղծել չեմ ուզում. ձեզ հետ ուզում եմ բարեկամ լինել. ես ձեզ հաւանում եմ. այսքան. եթէ կամենում էք, բացէք ինձ ձեր կեանքը, եթէ ոչ՝ մնայ և վարւենք միմեանց հետ այնպէս, ինչպէս շատ շատերը. այսինքն զգուշութեամբ, ծածկամտաբար և քաղաքավարութեամբ... Գնանք պարին նայելու ուրեմն...

—Բայց ոչ, օրիորդ, գոչեց Սուրէնեանը—նստեցէք, որ պատասխանեմ ձեզ, դուք ինձ չըհասկացաք. նրբամիտ չէք. այսինքն թափանցող...

—Եւ ուղեղս էլ չեմ ուզում յոգնեցնել յետին մտքեր ըմբռնելու համար. ասաց Իմման նեղացած և սառն—ես առհասարակ զզւել եմ յետին մտքերից. ինչու պարզ չէք խօսում, եթէ ուզում էք, որ իմանամ. իսկ եթէ չէք ուզում, ինչու ուղղակի չէք ասում այսպէս՝ «օրիորդ, խնդրեմ չըհետաքրքրւէք, ես ոչինչ չեմ ասիլ ձեզ». և կամ երբ հարցնում եմ,

ասէք կարճ, թէ «չեմ ուզում ասել». ո՜ւֆ, այդ յետին մըտքերը, այդ նրբութիւնները, այդ զգուշաւորութիւնները խօսակցութեան մէջ...

Յետոյ ելաւ ոտքի և շրջազգեստը ուղղեց։

—Գնանք, ասաց նա—եթէ ընդունակ չէք պարզ լինելու, զոռով խօ չէ կարելի. ես ինքս, որ պարզութեան քարոզներ եմ կարդում, խօ պարզ չեմ. ես ինքս յետին մտքերով, նրբութիւններով, ծածկամտաբար և զգուշաւոր եմ աշխատում խօսել—սովորութիւն է դարձել. ասացի ձեզ արդէն։ Բայց երբ ձեզ հետ եմ խօսում, զոռում եմ ինձ անկեղծ լինելու, պարզ լինելու և եղել եմ մինչև այժմ. Նրա համար էլ դուցէ քիչ այլանդակ, արտակեդրոն եմ թւել ձեզ...

—Ներեցէք, օրիորդ, խնդրում եմ, խնդրեց Սուրէնեանը մեղմութեամբ—ես ձեզ կասեմ ամեն ինչ։

—Ամեն ինչ... ո՛չ, խնդրում եմ ասէք այն, ինչ որ կուզէք և երբ չէք ուզում ասել, յայտնեցէք որ չեմ ուզում... սակայն դեռ ցած իջնենք ազգային պարերը տեսնելու և յետոյ, երբ եւրոպականները սկսեն, կամ կըբարձրանանք և կամ կընստենք մի կողմ... Դուք այս երեկոյ իմ ասպետն էք, կուզէ՞ք...

—Ուրախութեամբ, հաճոյքով...

—Կանգ առէք. հաճոյախօսութիւն չանէք. գիտեմ, որ ուրախութեամբ կըլինիք իմ ասպետը. տեսնում եմ։ Իջնենք այժմ. իմ ծանօթ մեծազարդ տիկինները եկած լինին դուցէ. օ, եթէ տեսնէք նրանց և իրանց արտակեդրոն պարդերն ու հագուստները!... Ես ձեզ կըծանօթացնեմ բոլորի հետ. կան սիրուն օրիորդներ էլ. մանաւանդ մի անգլուհի, որն անշուշտ կըգրաւի ձեզ. հիանալի էլ ձայն ունի...

Խօսելով դուրս գնացին բուֆէտից ու սկսեցին իջնել։ Էմման յանկարծ զւարթանալ սկսեց տարօրինակ կերպով։

—Այո՛, շարունակում էր նա իջնելով—այդ ամերիկուհին միսս Լէմկէ է կոչւում. լաւ երգում է, մանաւանդ երբ Գրիգի յայտնի սերենադն է գեղգեղում... դուք լսե՞լ էք այդ երգը՝

Ich liebe dich, ich liebe dich
In der Zeit und Ewigkeit *)

Գերմաներէն չըգիտէ՞ք... ախ, ինչպէս չէ. մոռացայ, որ Ցիւրիխի ուսանող էք... Գրիգը մեր երաժշտապետն է և մի կատաղի, կրքոտ, սոսկալի երաժիշտ... Մեր մէջ առ հասարակ երևակայութիւնն ու երազները այլանդակ, նորօրինակ, ինչ որ արտակեդրոն են լինում... յիշեցէք Իբսէնը, մանաւանդ Ստրինբերգը... դուք կարդացել էք անշուշտ այդ սոսկալի հեղինակին... որքա՜ն զուտ, զուտ ճշմարտութիւն է հոսում նրա բերանից... իսկ Բէօրնսօնը, հապա Իօնաս Լի՜ն, Կիլա՜նդը...

Նրանք սրահն էին մտնում։ Սուրէնեանը ետևից էր քայլում, իսկ Էմման առջևից և յաճախ կիսովին դառնալով՝ կըցկտուր նախադասութիւններ էր ասում ու առաջ գնում։

Սրահի մէջ աթոռները քաշել—շարել էին պատերի տակ. մէջ տեղը պարի համար ազատ էր մնացել, իսկ օրկեստրը կազմ ու պատրաստ՝ բարձրացել էր բեմի վրայ և նշանի էր սպասում որ լեզգինկան սկսէր։

Սուրէնեանը Էմմային տարաւ վիճակախաղի սեղանից քիչ հեռու և մի աթոռ առաջարկեց, իսկ ինքը կանգնեց կողքին։

—Դուք էլ նստեցէք, ասաց նրան Էմման—այդ պարը շուտո՛վ կըսկսւի...

Յետոյ նկատելով վիճակախաղը, յարեց.

—Ախ այո, տոմսակ չըվերցրի սկի. մի քանի հատ բերէք ինձ, պ. Սուրէն, կուզէի մի յիշատակ ունենալ այս երեկոյթից։

Եւ մինչև ձեռքը տանում էր փող հանելու և Սուրէնեանը տոմսակների մի ափսէն էր մօտ բերում—թնդաց մուզիկան։

Լեզգինկան սկսեց։ Դռան մօտից, պահ մի սպասողութեան մէջ թողնելուց յետոյ, յատակի վրայ վայելչապէս մէջտեղ սահելով սրացաւ օր. Բարութեանը, պարզեց ձեռքերը և այնքան

---

1) Սիրում եմ քեզ, սիրում եմ քեզ, ժամանակի և յաւիտենականութեան մէջ։

շնորհալի շարժուածքով սկսեց պարել, որ թէ պարողուհին և թէ պարը մի սքանչացման աղաղակ կորզեցին բոլորի բերանից:

—Ա՜յ, որքա՜ն հրաշալի բան, գոչեց Իմման ոտքի ելնելով—ի՜նչ գեղեցիկ պար… կուզէի ես էլ այդպէս պարել գիտենալ….

Ու անյագութեամբ դիտում էր պարողուհուն և նրա ոտների նուրբ շարժուածքները:

Բուֆէտում էլ ոչ ոք չըմնաց. արագութեամբ լուրը տարածուեց ամեն կողմ և ծառաներն իսկ իրանց գործը թողին ու վազեցին ներս. Շրջանը փոքրացաւ, քիչ յետոյ տիկ. Վարդուհին էլ եկաւ պարելու և երկու հայուհիներն անհուն հրճուանք պատճառեցին բոլորին: Երբ դադարեցին, սրահը դղրդաց երկար, բուռն, գրեթէ կատաղի ծափահարութիւնով:

—Կրկնել, կրկնել, գոռացին բոլորը:

—Կրկնել, աղաղակեց Իմման ոգևութեամբ—օ՜ որքա՜ն գեղեցիկ է այդ, որքա՜ն նորանշան, դարձաւ նա Սուրէնեանին—գիտէ՞ք, եթէ այն ամերիկուհիները տեսնեն՝ կըդժուեն… չե՜ն եկել դեռ:

—Երևի դեռ հագնւում են. հեգնեց Սուրէնեանը:

—Այո, ժպտեց Իմման, մանաւանդ միսիս Հարրիսընը. ասում են որ ամբողջ օրը միմիայն այս երեկոյթի վրայ է մըտածում և հագնւում է:

—Կրկնել, կրկնե՜լ, գոռում էր հասարակութիւնը:

—Պարոննե՛ր. ձայնեց մէկը––յոգնած են, թողէք քիչ հանգստանան:

—Կազաչկա՜, կազաչկա՜, ասացին այն ժամանակ ռուս ուսանողները և մէջ տեղ հանեցին կազաչկա ուսանողուհիներից առաջինը:

Օրկէստրը մի քիչ լաւ չէր կարողացել պատրաստել եղանակը, այնուամենայնիւ տեղացիք և Իմման մի նոր հիացում ունեցան, նոր բացագանչութիւններ:

Պարի տաք միջոցին եկան Սուրէնեանին ասելու որ մի քանի ամերիկուհիներ հարցնում էին նրան դռան մօտ:

—Ի՞նձ, հարցրեց Սուրէնեանը՝ զարմացած.

—Այդ ես եմ ձեր անունը տուել, ժպտեց Իմման—գնացէք ներս բերէք խեղճերին, այժմ ով գիտէ ինչպիսի դրութեան մէջ են:

Սուրէնեանը վազեց. ամերիկուհիները շատ էլ շւարած չէին: Իրանց մետաքսեայ շքեղ ու բազմակնճիռ շրջազգեստները կուտակել ոտների շուրջը, նախագաւթում սպասում էին: Հինգ էին. միայն մէկն էր գեղեցիկ, երիտասարդ. միւսները պառաւներ էին և հասակաւոր կանայք, որոնք սակայն երբէք չէին կամենում այդպէս ցոյց տալ և հագնւել էին երիտասարդներից աւելի շքեղ. կուրծքերի, մատների և մազերի վրայ փայլում էին ականեղէններ. մազերը մեծ խնամքով յարդարած, օծած և իրանց սպիտակ շրջազգեստների բազմաթիւ ժանեակներով ու հիւսկէններով լցրել էին նախագաւիթը:

Զարմացաւ Սուրէնեանը. երբէք չէր կարծում որ ամերիկուհիք այդքան պճնասէր կարող էին լինել: Բայց ինչ որ աչքի էր խփում, դա ոչ այնքան նրանց պճնասիրութիւնն էր, որքան ամեն ինչի մէջ արտակեդրոն երևալու ակներև ճիգը, ծայրայեղութիւններն ու անճաշակ կուտակումները զարդերի և ոսկեղէնների: Օրինակ հէնց, ամերիկուհիներից մէկը՝ երկու ձեռքի 6 մատների, ամեն մէկի վրայ 4 մատանիներ էր լցրել. մատանիներ՝ այլանդակ երկարութեամբ, ձևերով և զարդերով:

Ամերիկուհիների հետ կային երկու գերմանուհիներ էլ, որոնք շատ պարզ էին հագնւած, սակայն ունէին շատ թանկագին օղեր ականջներին և ականակուռ խաչեր վզերին:

Սուրէնեանը մօտ գնաց և յայտնեց որ ինքն էր Սուրէնը և օր. Իմմայի կողմից ուղարկւած:

—O' yes… ահա և դուք, գոչեց առաջից կանգնածը—ուրեմն մեզ ներս թողէք խնդրեմ:

—Տոմսակ ունի՞ք անշուշտ, հարցրեց քաղաքավարութեամբ երիտասարդը:

—Տոմսա՛կ, ո՛չ… Աստուած վկայ, այդ մէկը մոռացել ենք անելու. ժպտեց հպարտութեամբ ամերիկուհին, երևի կարծելով որ մի սրամիտ արտակեդրոնութիւն էր արել:

—Բայց կարող ենք առնել. ասաց միւսը, որ անշուշտ միսսիս Հարրիսըն էր, որովհետև միշտ նայում էր հագուստի ամեն կողմը, սրահում դրւած հայելու մէջ զննում մազերը և ժպիտների փորձեր անում:

Սուրէնեանը Դանիէլեանի կողմը նայեց:

—Տոմսակ չըմնաց, ասաց Դանիէլեանը նստած տեղից—սակայն առ փողը և ներս թող:

—Տոմսակ չէ մնացել, տիկիններ, ասաց Սուրէնեանը կանանց—բայց եթէ կամենաք գինը վճարել՝ ներս կարող էք մտնել առանց տոմսակի:

Եւ ամերիկուհիք վճարելուց յետոյ, ներս մտան սրահը: Կազաչկան ամենատաք կերպով շարունակւում էր, որովհետև գտնւել էր մի ռուս, որ ուսանողուհու հետ միասին պարում էին ու մի սքանչելի զոյգ կազմում:

Փողովրդական այդ պարն անշուշտ երկար էր տևելու, որովհետև նրանց փոխարինեց մի ուրիշ զոյգ՝ նոր աշխուժով:

Ամերիկուհիները գտան Խմմային, առին աթոռները ու բերանները բաց, զարմացած բացագանչութիւններով հետևում էին պարին:

Կազաչկայից յետոյ լեզգինկան սկսեց նորից. ամերիկուհիները գժւում էին ոգևորութիւնից. նրանք ծափահարում էին աշխոյժով միւս կովկասցիների հետ, իսկ միսս Կէրրիները—երկու պառաւ քոյրեր—մանաւանդ փոքրը, պնդում էին որ իրանք սովորելու են այդպէս պարել, հէնց որ տուն վերադառնան:

Ասիական պարին յաջորդեց եւրոպականը՝ մի վալսով. շըրջանը լայնացաւ. զոյգեր կազմւեցին. ամերիկուհիք իրանց շըրջազգեստների քղանցքները իջեցրին և սպասեցին կաւալերներին: Սուրէնեանը վատ դրութեան մէջ էր ընկել. ոչ ոք ծանօթ չէր ամերիկուհիներին, ուստի ոչ ոք չէր մօտենում նրանց՝ պարի առաջարկելու: Սուրէնեանը գնաց մի քանի ռուս ուսանողների խնդրեց և վերջապէս միսս Լէմկէից սկսած, հակոտնեայ աշխարհի կանայք ասպետներ գտնելու հաճոյքն ունեցան:

Մինչ այդ, ռուս և հայ ուսանողները կամաց-կամաց քաշւում էին դէպի բուֆէտը, հաւաքւում երկար սեղանի շուրջը

և ռուսերէն լեզւով խօսակցութիւնը ընդհանուր դարձնում: Քիչ յետոյ սկսեցին երգել մալարօսիական երգեր խմբովին և տեղացիները մի նոր հետաքրքրութեամբ, մանաւանդ նրանք որոնք չէին պարում, հաւաքւեցին նրանց շուրջը:

Սուրէնեանը չըկամեցաւ պարել: Խմման էլ չըպարեց. հագուստ չունէր պարելու համար:

—Բայց կըձանձրանաք այսպէս, օրիորդ, ասաց նրան Սուրէնեանը— գոնէ վերը-բուֆէտ գնանք:

—Ի՞նչ կայ այնտեղ:

—Անշուշտ ռուս և հայ ուսանողները ժողովւել՝ հայրենի երկրի երգեր երգելիս կըլինին. այժմ նրանք են քէֆ անում:

—Գնանք, հետաքրքրւեց Խմման:

Ուսանողները յաջորդաբար, մէկ հայերէն, մէկ ռուսերէն երգերով՝ թնդացնում էին բուֆէտի մեծ սրահը, նստած գարեջրի շշերի առաջ: Կանայք,—հրէայ և ռուս ուսանողուհիներ, որոնք չէին պարում, նշանն էին տալիս երգերի. ու մելամաղձոտ էին թէ ռուսաց թէ հայոց երգերը. երկուսն էլ վըշտալից, արտասւալից:

—Հայերէ՞ն են երգում. հարցրեց Խմման:

—Սա մալարօսական երգ է:

—Շատ մելամաղձոտ, ճնշող եղանակ է. իսկ խօսքե՞ր.

—Խօսքերն աւելի ճնշիչ:

Մի երգից անցան միւսը, յետոյ հայերէնի, նորից ռուսերէնի ու Խմման ոչ միայն հետաքրքրութեամբ լսում էր, այլ և մի տեսակ զգացւած՝ դիտում էր այդ բոլոր տխուր, վշտացած դէմքերը, որոնք կռթնած ձեռքերի վրայ՝ ողբում էին իրանց հայրենի երկրների թշւառութիւնները:

Մինչև լուսաբաց,—պարերը վաղուց վերջացել էին, սրահը վաղուց դատարկւել էր,—բայց հայ և ռուս ուսանողութիւնը նստել էր երկար սեղանի շուրջն ու ճնշիչ, տխուր երգեր երգելով՝ տանջւում էր ու զւարճանում:

Այսպէս են վերջանում Զւիցերիայում թէ հայ և թէ ռուս ուսանողութեան գրեթէ բոլոր երեկոյթները:

ԺԱ

Գեղեցիկ է Ժընէւի լճակի աջ ափը։ Մի երկար ու լայն փողոց շքեղ շէնքերով՝ հասնում է մինչև Ժան-Ժաք Ռուսսոյի կղզեակը, որի բարձրաբերձ ծառերի մէջ երևում է պատկառելի ընկերաբանի արձանը խոհուն՝ նստած իր հրաշակերտների կողքին։ Այստեղ իր առաջ, Ռօն գետակի ջրերը ծփում են կամուրջների կամարների տակ. Հորիզոնի վրայ Մօն-Բլանի ձիւնափայլ գագաթն է, ապա Սավոյական լեռների շարքը և աւելի մօտերը՝ անտառախիտ, գեղածիծաղ գիւղեր, վիլլաներ, որոնք բոլորն էլ ձմեռ ժամանակ ծածկուած ձիւնային բիւրեղներով՝ շողշողում են արևի ճառագայթների տակ։

Լճակի այդ ափի վրայ, Բրիւնսվիկի և Ռուսսոյի յիշատակարանների միջավայրումն է տարածւում վերից վար՝ այն լայն գեղեցիկ փողոցը, որ սկսում է երկաթուղու կայարանից և հանգում մեծ կամուրջին։ Մօն-Բլանի փողոցն է. Ժընէւի ամենասիրուն փողոցը—ազնուականների թաղը։

Մի քանի պանսիօններ միայն կան այնտեղ, բայց քաղաքի ամենահարուստ պանսիօնները, որոնք իջևան են եղել պերճասէր ամերիկացիների և անգլիացիների։

Դրանից մէկումն էր, որ իջել էր Իմման և լճի վրայ նայող սենեակներից մէկը վարձել։

Պանսիօնը շատ ուրախ էր. ամեն երեկոյ ընթրիքից յետոյ, հաւաքուած մեծ սրահում, այնպիսի զւարթ կեանք էին անցկացնում բնակիչները, որ յաճախ դրացի պանսիօններից լցւում էին ամեն տեսակ զւարճասէրներ. օրիորդ Բիշարդէ քոյրերը նրանց բոլորին ընդունում էին իրանց սրահների մէջ, թողնելով որ երգեն, նւագեն և խնջոյքներ սարքեն։

Պաշտօնական, կանոնաւոր խնճոյքներ լինում էին շաբաթ օրերը։ Այդ օրերում իւրաքանչիւր վարձկալ հրաւիրում էր իր ծանօթներին ընթրիքի, որից յետոյ բոլորը լցւում էին մեծ սրահը և ելեքտրական լոյսի ողողման մէջ, տաքացած մատուցւած այլազան խմիչքներով, մինչև կէս գիշեր զւարճանում էին այնքան վայելուչ քէֆով, որին միայն ընդունակ են եւրոպացիները և որից անշուշտ ասիացին կրձանձրանար։

Աւելի շատ խօսում էին, վիճում, յետոյ նւագում էին, երգում, խաղեր հնարում, կենդանի պատկերներ սարքում և նոյն իսկ ամենից շատ խմողը յաջողւում էր իրան պահել մինչև վերջը՝ ծայրայեղ քաղաքավարի։

Հայկական երեկոյթից մի քանի օր յետոյ թէ Իմման և թէ ամերիկուհիները փափագ էին յայտնել Սուրէնին հրաւիրելու առաջին պաշտօնական խնճոյքին. և այդ էր պատճառը, որ մի օր հայ ուսանողը համալսարանի մէջ գտաւ Բիշարդէ քոյրերի հրաւէրը։

Խնճոյքի նախընթաց օրը նա գնաց Իմմային այցելելու. նրան ընդունեցին մեծ սրահում. շւէդուհին ծանօթացրեց տանտիրուհիների հետ, որոնք կրկնեցին հրաւէրը, յետոյ, դուրս գնալիս, Իմման առանձնապէս, երբ սեղմում էր ձեռքը՝ ասաց.

—Կըսպասեմ ձեզ անպատճառ։

Եւ Սուրէնեանը, թէև նեղւում էր այդ բոլորից, թէև անսովոր էր իրան համար մտնել յանկարծ մի այդպիսի հարուստ խնջոյքի մէջ—բայց գնաց։ Իմման սպասում էր նրան և այդքանը բաւական էր։

Ընթրիքը յաջող անցաւ. երիտասարդը կարողացաւ պահել իրան, բայց շատ քիչ կերաւ. նրան Իմմայի կողքին էին նստեցրել և սա անընդհատ մատուցանում էր նրան ամեն ինչից. հոգում էր ու քիչ չէր կարմրում, երբ տեսնում էր, որ երիտասարդը զգալի կերպով քաշւում էր, անճարակ շարժումներ ունէր և շփոթւած էր պատասխանում հարցերին, մանաւանդ որ բոլորը տեսնում էին այդ։

Սակայն ընթրիքը շուտով վերջացաւ։ Սուրէնեանը նկատել էր, որ դիտում էին իրան, զննում իւրաքանչիւր քայլափոխը. ուստի, հէնց որ քիչ երգեցին ու նւագեցին, շարժւեց մեկնելու։

—Ի՞նչու էք շտապում, ասաց այն ժամանակ Իմման. նստեցէք դեռ, երեկոյթը նոր է սկսելու և միսս Կէրրինսը

ամերիկական հնդիկների պար են պատրաստում մեզ համար. գնացին որ հագնեն:

Պանսիոնի բոլոր բնակիչները սրահ էին մտել:

Ահա միսիս Հարրիսընը նախ, որ տանտիրուհու հետ դռան մօտ կանգ առած՝ մի ինչ որ բանի մասին տաք տաք վիճաբանում էր: Կլոր սեղանի առաջ նստել էին երկու գերմանուհիներ և միսս Լէմկէն, որ թերթում էր «The Graphic» պատկերազարդ ամսագիրը, նրա վրայ չարաճճի սրամտութիւններ անում ու բարձրաձայն ծիծաղեցնում կողքիններին: Կար մի ֆրանսիացի դերկոմս, նաև մի ռումանուհի՝ սաստիկ շպարուած. սրանք էլ միմեանց հետ այնպիսի ժպիտներ էին փոխանակում, որ տեսնողը մի րոպէ չէր կասկածիլ թէ երկուսի մէջ, բարեկամութիւնից բացի, կար մի ուրիշ կապ: Իսկ դաշնամուրի առաջ նստել էր մի իտալացի, որ մարմնի ու դէմքի ծամածռութիւններ անելով՝ լցնում էր սրահը սոսկալի երաժշտութիւնով:

Էմման և Սուրէնեանը տեղաւորուած էին օթոցի վրայ. քիչ հեռու՝ բազկաթոռի մէջ, լուռ, նստել էր միստէր Լէմկէն, որին կոնեակն ու շամպայնը բոլորովին կակղացրել էին. խեղճը քիչ էր մնում՝ քնէր, բայց ամերիկացի էր և յաջողւում էր իր արժանապատւութիւնը պահպանել՝ յաճախ խօսքեր ուղղելով սրան-նրան և վերահաս քունը փախցնելով:

Սուրէնեանը ոչ մի կերպով չէր յաջողւում մոռանալ իր անսովոր դրութիւնը: Էմման, դրա համար էլ, ճգնում էր նրան զբաղեցնել: Խօսում էր հիւրերի մասին, բաներ էր պատմում, միստեր Լէմկիին պատմել տալիս, միսս Լէմկիին երգել տալու և այժմ երիտասարդին իր կողքին առած, զբաղեցնում էր նրան:

—Դուք դեռ ևս անհանգիստ էք զգում ձեզ. ժպտեց նա:

—Ե՞ս, կարմրեց Սուրէնեանը—ոչ... այժմ ոչ. դուք ինչ էիք հարցնում, ներեցէք:

—Անուշադիր էք. արդեօք չէ՞ք շողում. կուզէ՞ք մի զուարճալի բան:

—Օ, ոչ, շնորհակալ եմ... Կարծեմ ասում էք որ միսս Կէյթիները հնդկական պար են պարելու:

—Այո, և գնացին որ պարահանդէսի հագուստ հագնեն...

—Երևի մեր երեկոյթի ժամանակւայ հագածները:

—Բայց ոչ, ծիծաղեց Էմման—ինձ ասացին որ կուրծքը շատ բաց՝ կապոյտ հագուստ ունին... դուք խօ Տալստոյիստ չէ՞ք.

—Ի՞նչպէս, զարմացաւ Սուրէնեանը—Տոլստոյիստ.

—Այո, այսինքն չէք սիրում նայել բաց կրծքերի...

Սուրէնեանը բարձրաձայն ծիծաղեց:

—Ա՛հ, ասաց նա—այդպէ՞ս. ուրեմն չըսիրել նայելու բաց կրծքերի...

—Օ, yes, միջահատեց միստեր Լէմկէն աթոռը մօտ քաշելով—Ամերիկայում ունինք Տալստոյիստներ. նրանք չեն սիրում պարահանդէս և այլ այդպիսի գրգռող բաներ... իսկ մեր կանայք ընդհակառակ, իւրաքանչիւր րոպէ մտածում են ջղերի վրայ ազդել, ջղերով սաստիկ ազդւել և դրա համար էլ ինչեր ասէք՝ չեն վերածնեցնում մեր մէջ... օ, մեր օրիորդները, մեր աղջիկները!...

—Մի քիչ ցած խօսեցէք, միստեր Լէմկէ, ասաց նրան Էմման չարամտութեամբ—ձեր աղջիկը կըլսի ձեզ:

—Ա՛յ... արեց Լէմկէն դառնալով և վախեցած: Բայց միսս Լէկմէն այդ միջոցին ուրիշ բանով էր զբաղուած. գտել էր ամսագրում մի ծիծաղելի մարդու պատկեր, բարձրացրել և գերմանուհիներին ցոյց տալով նւազող իտալացուն՝ ասում էր.

—Համեմատեցէք...

Ու իր քրքիջը խառնում էր գերմանուհիների զսպուած ծիծաղներին:

—Իսկ ձեր մէ՞ջ, պ. Սուրէնեան, հարցնում էր այդ միջոցին Էմման—ինչպէս են հայ աղջիկները. մի քիչ պատմեցէք մեզ նրանց մասին:

Սուրէնեանին յանկարծակի բերեց այդ հարցը: Ի՞նչ ասէր հայ աղջիկների մասին. անշուշտ հարցը ինտելլիգենտ աղջիկների վերաբերութեամբ էր:

—Դուք անշուշտ պարահանդէսի հագուստի համար էք հարցնում. խուսափեց նա հարցից—նրանք չեն հագնում բաց կուրծքով...

—Դա ոչինչ, միջահատեց Էմման—ես հարցնում եմ ձեզ աւելի նրանց զարգացման, նրանց կրթութեան, մտաւորական գործունէութեան մասին:

Այստեղ Սուրէնեանը յիշեց մի հայ օրիորդի, որի հետ ծանօթացել էր Թիֆլիսում:

—Միթէ ձեր մէջ չըկան զարգացած, կրթւած աղջիկներ, կրկնեց Էմման զարմացած՝ Սուրէնեանի վարանումից:

—Ի՞նչպէս չէ. շտապեց ասել Սուրէնեանը—ճանաչում եմ այդպիսիների. օրինակ, սրանից մի քանի տարի առաջ ծանօթացայ մի հայ աղջկայ հետ. ո՛չ գեղեցիկ, բայց զարգացած, ինքնուրոյն ոգու տէր և զգացմունքներով լի...

—Ոգևորութեամբ էք խօսում նրա մասին, ժպտեց Էմման:

—Լաւ աղջիկ էր, սակայն մի բան որ կաշկանդում է նրան, դա հասարակական կարծիքների համար ունեցած վախն է. մի կոյր վախ, որ շղթայել է նրա զգացմունքները և անգործ թողել նրա ինքնուրոյնութիւնը: Ձեզ պէտք է ասել որ մեր մէջ ոչ ոք զուրկ չէ այդ Աստուած—կուռքի ներշնչած ազդեցութիւնից: Հասարակական, եթէ կուզէք, աւանդական նախապաշարումները ջլատում են նոյն իսկ ամենազօրեղ կամքը, ամենամեծ տաղանդները: Այդ նախապաշարումները արհամարողը, այդ կուռքի վրայ թքողը՝ նկատւում է անբարոյական...

—Դուք անշուշտ ամբոխի կեանքից էք խօսում մէջ մըտաւ միստեր Լէմկէն—ամբոխի, տգէտ հասարակութեան մէջ այդպէս է լինում, իսկ ինտելլիգենտ ընկերութեան մէջ!...

—Ցաւն այն է, միստեր Լէմկէ, պատասխանեց Սուրէնեանը—որ մեր ինտելլիգենցիան իր ինստինկներով շատ էլ բարձր չէ կանգնած ամբոխից. կրթութիւնը տւել է կուռքի դէմ մարտնչելու, նրա դէմ գնալու հասկացողութիւնը, բայց կռիւը, ընդդիմադրութիւնը լինում է միայն խօսքով, լոկ ճառերով. իրականի մէջ, գործադրութեան մէջ հակառակն է. մի ինտելլիգենտ օրինակ, նոյնքան խստութեամբ է դատապարտում հասարակական նախապաշարումներին գործնականապէս դէմ գնող անձի, որքան որ ամբոխն է անում. և դեռ, եթէ

կուզէք, ամբոխը շատ աւելի ներողամիտ է դէպի այդպիսի ըմբոստը, քան նոյն իսկ ինտելլիգենցիան. ամբոխը գոնէ մոռանում է ըմբոստի՝ իբր թէ «վատ վարքը», եթէ նա ուրիշ արժանիքներ էլ ունի. իսկ ինտելլիգենցիան մոռանում է ըմբոստի արժանիքը և խուլ անկիւններից, զզւելի ինտրիգներով՝ դատապարտում է նրան, վարկը վայր ձգում, հալածում...

Սուրէնեանը մտնելով այդպիսի խօսակցութեան մէջ, պահ մի մոռացաւ իր անհանգիստ դրութիւնը. միսս Լէմկէն գերմանուհիների հետ թողեցին իրանց պատկերները և մօտ եկան. գերկոմսն ու ռումանուհին էլ ականջ դնել սկսեցին:

—Բայց դուք շատ հետաքրքիր բաներ էք պատմում, ասաց Էմման և մի տեսակ պարծանքով նայեց միւս լորդներին,—շարունակեցէք խնդրեմ, դուք ասում էիք որ այդ օրիորդը...

—Ես ասում էի, շարունակեց Սուրէնեանը—որ այդ օրիորդը սրտով, համոզմունքներով ու կրթութեամբ ատում էր հասարակական նախապաշարումները. այո, բայց քաջութիւն չունէր գործնականապէս ընդդիմադրելու նրանց: Երևակայեցէք ձեզ մի օրիորդ, որ պատկանում է նահապետական ընտանիքի, ունի իր վրայ հսկող նախապաշարւած, որոշ աւանդական սահմանափակ հայեացքներ ունեցող ազգականներ, որոնք դիտում են նրա ամեն մի քայլը, որպէս «սրբազան պարտականութիւն», որպէս ընտանիքի և ցեղի «նամուսի» նախանձախնդիրներ... և օրիորդը, իր ազատ կարծիքները, իր զզւանքը դէպի այդ նախապաշարումները արտայայտում է միայն գաղափարակից անձերի մօտ ու վախենում նոյնը կրկնել բոլորի առաջ: Յաճախ խօսում էինք այն օրերի մասին՝ երբ կարելի կըլինէր խղճի և մտքի ազատութիւն ունենալ, երբ մարդ ազատ կըլինէր իր մտքին և սրտին անսալու և չէր վախենալ «զգոյշ չըլինելուց»... և ահա յանկարծ մտնում է մի ազգական, մի ծնող, և օրիորդը ստիպւած էր լիովին հակառակը լսել, հակառակն էլ ասել ու հաստատել... չէր կարող այլապէս վարւել. մի «անզգոյշ» խօսք—և նրան անբարոյական կարող էին համարել, փչացած, ճանապարհից դուրս

եկած… Այո, մեզնում ամեն, գրեթէ ամեն ոք բաղկացած է երկու երեսից, երկու անձից. մէկը՝ որ ցոյց է տալիս հասարակութեան մէջ—շպարւած է հասարակական կարծիքների համար երկիւղածութեամբ և պատկառանքով, իսկ միւսը, ծայրայեղ զգուշաւորութեամբ՝ ցոյց է տալիս միայն իր պէս մտածողների մօտ, որ յայտնագործում է միայն որոշ ժամանակ, երբ իրան չարամիտ լսող չըկայ, երբ իր դէմը մի ազատամիտ և անկեղծ մարդ է նստած. այդ դէմքը անշպար է և փայլում է զգացումների ազատ արտայայտութեանց ներշնչումով… Ամենքը, ամենքը դիմակներ ունին, երբ փողոց են ելնում, երբ հասարակական նախապաշարումների կուռքի առաջն են գտընւում. և ամենքը տխուր են, ճնշւած, վշտացած, կասկածոտ ու զգուշաւոր…

Բոլոր հիւրերը իրարու նայեցին: Իմման մտածութեան մէջ էր ընկել, իսկ դերկոմսը խաղում էր սեղանի փնջերի հետ: Իտալացին դադարել էր նւագելուց, դարձել իր աթոռի վրայ և հետևում խօսակցութեան:

Դուան մօտ կանգնած միսսիս Հարրիսընը և օր. Բիշարդէն անգամ լռել՝ ականջ էին դնում:

Պահ մի ընդհանուր լռութիւն տիրեց, որից յետոյ Իմման ասաց խուլ և տխուր ձայնով.

—Ինձ թւում է որ Եւրոպան, մեր քաղաքակիրթ աշխարհն իսկ՝ ազատ չէ այդ դիմակաւորութիւնից. միթէ մենք էլ ստիպւած չենք նոյնպիսի դիմակներ կրել և գուցէ շատ աւելի կեղծութեամբ շպարւել, երբ հասարակական նախապաշարումների առաջ ենք գտնւում… Բայց թողնենք այս խօսակցութիւնը, ճնշիչ է…

—Գիտէք, ես ինչ կասեմ, յանկարծ մէջ մտաւ դերկոմսը —պ. Սուրէնեանը մոռանում է մի բան, որ այլ է հասարակական կարծիքը և այլ՝ նախապաշարում. Հասարակական կարծիքը կարող է յաճախ արդարացի լինել, հասարակական նախապաշարումները արդիւնք են դէպի ընկերական որոշ պարտիքներն ունեցած յարգանքի: Ընդունեցէք ինձ հետ, որ եթէ ամեն մարդ վարւի այնպէս, որպէս իր զգացումները

ու պահանջներն են թելադրում, այն ժամանակ ընկերութիւնը մի սոսկալի քաոսի կըփոխւի. յիշեցնում եմ ձեզ մի նշանաւոր ընկերաբանի խօսքերը.—«Իմ ազատութիւնը վերջանում է այնտեղ, որտեղ ձերն է սկսում». Ես ընդունում եմ որ որոշ ժամանակի ընկերական պայմանները կարող են անպէտք լինել մի այլ յետագայ ժամանակի ընկերութեան, սակայն լիովին անհամարհել կամ ընդդէմ գնալ ընկերական *բոլոր* պայմաններին —դա նշանակում է յանցանք գործել դէպի հասարակութիւնը. և դա է, որին դատապարտում է հասարակական կարծիքը: Ինչի՞ն էք դուք անւանում «նախապաշարում: Ա՞յն պայմաններին, որոնցով կառավարւել են մեր նախնիքները և որոնք նրանց համար ընկերական պարտիք են եղել և հէնց որ մեր պահանջներին գոհացում չեն տալիս՝ նրանց անւանում ենք նախապաշարումներ: Զատեցէք ուրեմն նախապաշարումը «հասարակական կարծիք» բառերից և զանազանութիւնը այսպէս ձևակերպեցէք:—Հասարակական նախապաշարումներ են կոչւում այն բոլոր ընկերական պայմանները, որոնք հնացել են և հասարակական կարծիք՝ այն բոլոր պայմանները, որոնք տիրապետում են այժմ: Հնացած պայմանները նորոգելու ջանալ, նրանց դէմ գնալ - դա ունի իր միտքը, բայց ինչո՞ւ էք կամենում ընդդէմ գնալ նաև հասարակական կարծիքի, որ կազմւում է ժամանակի ոգու համեմատ… Չըգիտեմ, ես կարողացա՞յ արտայայտել իմ միտքը՝ թէ ոչ: Եզրափակեմ որ այստեղ կատարւում է հնի և նորի մի կռիւ. հինը կոչւում է նախապաշարում, իսկ նորի անունն է՝ կարծիք:

Ո՞րի դէմ կռւենք. երկուսին էլ. ինչու, չէ՞ որ նորը մերն է, մենք ենք ստեղծում, իսկ այդ նորը եթէ միշտ ազդւած է լինում հնից, պատճառն այն է, որ մեզ կրթել են նրանով, վարժեցրել նրան և որովհետև հները միշտ կան, համոզւած իրանց կարծիքների մէջ և պատրաստ «անբարոյական» անւանելու նրանց, որոնք դէմ կերթան այդ կարծիքների…

—Բայց, դերկոմս, գոչեց Իմման անհամբերութեամբ— դուք խնդրից շեղւեցիք. մեր խօսքը հասարակական պայմանների յանկարծակի, մէկէն փոխելու համար չէր, այլ այն, թէ

ամենքը դիմակներ ունին, երբ հասարակութեան մէջ են ելնում, թէ անկեղծութիւն չըկայ, թէ մարդ այնպէս ճնշուած է լինում հասարակական նախապաշարումների տակ և նրանցով ղեկավարւող հասարակութեան մէջ, որ անկարող է անկեղծ լինել, իր զգացումներին, իր սրտին հետևել, իր համոզմունքները պաշտպանել, ղեկավարուել նրանով... և որ այդպիսիները կոչւում են անբարոյական, փչացած...

—Եւ այդ իրաւացի է. պնդեց ուժգնութեամբ գերկոմսը —եթէ ապրում էք որոշ հասարակութեան մէջ, պարտաւոր էք նրա օրէնքներին ու պայմաններին հնազանդուել, թէկուզ նրանք լոկ ձևականութիւններ լինին և ձեր համոզմունքների դէմ, թէկուզ նրանք ճնշեն ձեր զգացմունքները, ձեր ազատութիւնը...

—Ներեցէք, մէջ մտաւ միսս Լէմկէն—մենք ամերիկուհիքս էլ ապրում ենք հասարակութեան մէջ, գերկոմս, այո, և մի ամենալաւ հասարակութեան մէջ. դուք մոռանում էք որ ձեր դիմաց կան նստած մի ազատ ու փառաւոր ժողովրդեան զաւակներ և ուր օրինակ կինը այնքան ազատութիւն է վայելում, որքան տղամարդը և ուր ամենքը կարող են հետևել անկեղծաբար՝ իրանց սրտի և մտքի թելադրութեանը և երբէք չընկատուել որպէս անբարոյականներ, որպէս փչացածներ...

—Այս վէճը շատ երկար կարող է տևել, պարոններ, ասաց միսսիս Հարրիսընը—գուցէ իսկ անախորժ հետևանքների հասցնի. ես չըգիտեմ թէ պ. Սուրէնեանը ինչպէս է դրել հարցը, բայց գիտեմ որ խօսքը ընկերական ձևականութիւնների, քաղաքավարութիւնների և այլն մասին է, որոնց պ. արևելքցին անւանում է «նախապաշարումներ»... Ես հասկանում եմ պատւելի երիտասարդին, բայց ինձ թւում է, որ ամեն ինչ չափ ու սահման պիտի ունենայ և հէնց այդ չափ ու սահմաններն են, որոնք ստացել են «նախապաշարումներ» անունը. ես օրինակ, իմ որդուն չեմ թոյլատրիլ, որ գիշերով չափչփէ փողոցները միայնակ և երբ արգելում եմ, ինձ ասող եղել է, որ դա նախապաշարում է. չեմ թողնիլ նոյնպէս որ

իմ աղջիկը ամեն տեղ մտնէ ելնէ – դա նախապաշարմունք է. բայց ոչ, հազար անգամ ոչ. դա զգուշութիւն է և ոչ այլ ինչ. զգուշութիւն՝ վտանգների դէմ: Ինչո՞ւ ուրեմն այդ տեսակ կըրթութեան անունը դնել նախապաշարում... Օրինակ, ձեզնից ո՞ր մէկն է հաւանում այն ռուս ուսանողուհիներին, որոնք արձակ-համարձակ գիշերներով փողոց են ելնում, մտնում են կաֆէները կամ գնում են երիտասարդների մօտ մենակ, նստում խօսակցում նրանց հետ. որոնք այնքան ազատ կերպով խօսում են, ծիծաղում, ծխում... Օ՛, ոչ. կրկնում եմ, ամեն ինչ չափ ու սահման ունի և դրանք, այո՛, անբարոյականութիւն են...

—Յարգելի տիկինը շատ է առաջ գնում. ասաց Սուրէնեանը. ես կարող եմ հաստատել, որ ձեր այդ յիշատակած ռուս ուսանողուհիները շատ աւելի բարոյականի տէր են և դիտակցաբար բարոյական են, քան այն օրիորդները, որոնք իրանց մօր փէշերից չեն պոկւում, ամաչում են գիշերով փողոցից անցնելիս իրանց ծանօթ տղամարդի բարևն ընդունել և կամ գործադրում են այն բոլոր ձևականութիւնները, որոնք մեռցնում են նրանց մէջ թէ զգացմունք, թէ մտաւորական ընդունակութիւն և թէ ամեն ինչ ու փոխում մարիոնետների... Համարձակում եմ պնդել և փաստեր իսկ կըտամ, որ այդ ռուս ուսանողուհիները շատ աւելի զարգացած, մտացի, օգտակար և բարոյական են, քան սալոնների ձևականութեան մէջ կերտւած ու իրանց իւրաքանչիւր շարժումը հասարակական նախապաշարումով շղթայած օրիորդները... Ես յոյս ունիմ որ դուք և այստեղ եղող տիկինները այդ վերջիններից չէք...

—Օ՛, ի հարկէ ոչ, կարմրեց միսսիս Հարրիսընը. ոչ անշուշտ, ես ամերիկացի եմ...

Իմման հեգնօրէն ժպտեց, ինչպէս և գերկոմսն ու բումանուհին:

Այդ միջոցին սրահի դուռը բացւեց և ներս մտան քոյր Կլէրրները, հանդիսաւորապէս բռնած իրանց երկար շրջազգեստների քղանցքը: Տանտիրուհին շատ գոհ էր և դէմքը զւարթացաւ, որովհետև զգում էր որ վիճաբանութիւնը անախորժ հետևանքների էր հասցնելու: Դռան կողքին կանգնած,

նա շանթահար ակնարկներ էր նետում դէպի «անքաղաքավարի» և իր խօսքերը չըկշռող արևելքցին:

Միսս Կէրրինների մուտքը վերջ տուաւ վիճաբանութեան, այլ և բոլորը երեսների վրայ ժպիտներ երևացին: Սուրէնեանը մի վայրկեան ապշած մնաց երկու պառաւ քոյրերի, ծիծաղելի տեսքից: Էմման դէմքը ծածկեց, որպէս զի քըքիջը չըլսուի: Երևակայեցէք ձեզ երկու երկար կմախքներ ալեխառն մազերով ու սպիտակ մարմնով, կուրծքը բաց, ոտները հողաթափների մէջ և կուրծքից մինչև ցած պարուրուած լայն, կապոյտ մետաքսեայ շրջազգեստի մէջ: Այդ բոլորի վրայ աւելացրէք այն լրջութիւնը, որ համակել էր երկուսի դէմքն էլ: Անշուշտ մի սիւրպրիզ էին անելու բոլորին և այդ «սիւրպրիզը» սկսեց հանդիսաւոր մուտքով:

Երկուսն էլ բռնած շրջազգեստի երկար ծայրերը, մէջ տեղ եկան ու կանգնեցին: Ռումանուհին նստեց դաշնամուրի վրայ և նախօրօք պատրաստած մի եղանակ սկսեց նուագել:

Միսս Կէրրինները ձեռք ձեռքի տուին ու մի այլանդակ պար սկսեցին, ամենայն լրջութեամբ. մի պար, որի բոլոր ձևերը բովանդակւում էր նրա մէջ, որ կանգնած տեղում նրանք ոտները աջ ու ձախ էին ցնցում և ապա յանկարծ երկուսն էլ ոստնելով՝ տեղերը փոխում:

Էմման այլևս քըքիջը զսպել չըկարողացաւ, երբ տեսաւ երկու պառաւ, պատկառելի օրիորդների երեխայական ոստումները: Միսս Լէմկէն և միւս ամերիկուհիները բերանները բացած՝ զմայլմամբ դիտում էին պարը, իսկ դերկոմսը մի հեգնող ժպիտ դէմքին՝ կռթնել էր դաշնամուրին:

Երբ հինգ րոպէ պարեցին, անդրանիկ քոյրը կանգ առաւ:

—Յոգնեցի այլ ևս, ասաց նա, ողջունեց և դուրս թռաւ սենեակից: Իսկ փոքր քոյրը ուղղակի գնաց և նստեց Սուրէնեանի կողքին: Երիտասարդը բնազդմամբ ետ քաշուեց և դա աւելի ծիծաղեցրեց Էմմային:

—Ի՞նչպէս էք գտնում այս պարը, հարցրեց Սուրէնեանին՝ միսս Կէրրին:

—Լաւ է... մեզնում էլ պարում են այդպիսի պարեր...

—Օ՞, այո՛, զարմացաւ պառաւ օրիորդը—ձեզնո՛ւմ էլ հընդիկներ կան:

—Ո՛չ, բայց այդ պարը շատ նման է մեր գիւղական պարերին:

—Ուրեմն պարէք դուք էլ. գոչեց միսս Լէմկէն—խընդրում ենք, ցոյց տուէք մեզ ձեր պարերը:

Սուրէնեանը սաստիկ շփոթուեց և ոտքի ելաւ:

— Ես չըգիտեմ պարել, ասաց թոթովելով:

Էմման էլ ելաւ տեղից:

—Միսս Լէմկէ, դարձաւ նա ամերիկուհուն—գնանք մի քանի րոպէ իմ սենեակը:

Յետոյ դարձաւ Սուրէնեանին և ասաց.

—Դուք էլ կըգա՛ք... գնանք մի բան խմենք:

Երիտասարդը լռութեամբ հետևեց երկու օրիորդներին, որոնք բարձրացան նեղ սանդուղքներից և երկար նրբանցքից անցնելով՝ մտան մի մեծ սենեակ:

—Ահա իմ սենեակը. ասաց Էմման և հրաւիրեց երիտասարդին նստելու: Եւ մինչ նա պահարանից հանում էր լիկեօրի մի շիշ և բաժակներ, Սուրէնեանը սկսեց սենեակը դիտել:

Շքեղապէս զարդարուած էր. լուսամուտի գլխին, կանաչ բաղեղների մէջ կախուած մաւրիտանական կարմիր լապտեր՝ ցոլանալով կանաչների վրայ, մոգական աղօտ լոյսով լուսաւորում էր սենեակը: Լուսամուտից երևում էին խաղաղ լճակը, և հեռուն, Մօն-Բլանի ձիւնապատ գագաթը: Լուսընկայ գիշեր էր դրսում, լուսնի շողքը փայփլում էր դողդոջուն ջրերի վրայ:

—Ինչպէ՞ս էք գտնում սենեակս, դարձաւ նրան Էմման և սեղանի վրայ դրեց խմելիքը:

—Շատ բանաստեղծական է—ասաց Սուրէնեանը—այս լապտերը բաղեղների մէջ. այս տեսքը լճի և Մօն-Բլանի վրայ... տրամադրում են մարդու՝ միստիքականութեան:

—Միստիքականո՛ւթեան... նրան նայեց Էմման փորձիչ հայեացքով—գուցէ և բանաստեղծութեան, չէ՞... դուք գուցէ և բանաստեղծ էլ էք...

—Այո՛, շատ կարելի է. ժպտեց Սուրէնեանը—եթէ միշտ

այսպէս տեղ և այսպէս պայմանների մէջ ապրէի... Նայեցէք օրինակ այստեղ... Այդ մթին, անվերջ տարածութիւնը, որ փռւած է մեր ոտքերի տակ. մի կողքին ջուրը խաղաղութեամբ ծփում է լուսնի շողշողման առաջ և նրա մէջ նայելով, երկինքն իր խորութեամբ աւելի զգալի է դառնում... Ահա և խորհրդաւոր անտառը անծայրածիր... Մարդ չէ կարող չերազել այստեղ և չը ոգևորւել ամեն ինչ... Եւ երբ մարդ երազում է, կարծես ինքն էլ նիւթ չէ և ոգևորում է...

Իմման ու Լէմկէն, լեկեօրի բաժակները ձեռքերին, ժպիտը դէմքին՝ լսում էին երիտասարդի կցկտուր խօսքերը:

—Դուք ճշմարիտ որ բանաստեղծ էք․ գոչեց Լէմկէն և խմեց լեկեօրը: Իմման բաժակը ցած դրեց. կարծես յուզւած էր. յետոյ լռութեամբ ելաւ և սկսեց ճեմել սենեակում: Միսս Լէմկէն նկատեց որ խանգարում էր նրանց. ոտքի ելաւ և ասաց.

—Ես ցած եմ գնում. հայրս անհանգիստ կըլինի:

—Մենք քիչ յետոյ կըգանք. ասաց Իմման առանց նրան նայելու:

Եւ երբ Լէմկէն դուրս գնաց, նա մի րոպէ լուռ՝ նայեց լապտերին, յետոյ, շրթունքները դողդոջուն, գունատ ու յուզւած դարձաւ, վճռական քայլերով մօտ գնաց Սուրէնեանին և ասաց.

—Ասացէք ինձ, ո՞վ էր այն օրիորդը որ երեկոյթի ժամանակ լրտեսում էր ձեզ և մի տեսակ խորհրդաւոր ժպիտով դիտում:

Սուրէնեանը դարձաւ և այլայլեց:

—Ես նայում էի. շարունակեց Իմման—և տեսայ. նա ձեզ սիրում է, այնպէս չէ՞:

Եւ մի քայլ անելով մօտ գնաց, կանգ առաւ ու փայլուն, մի տեսակ բարկացայտ հայեացքով նայեց Սուրէնեանին:

—Նա՞... թոթւեց Սուրէնեանը—Մարթան էր...

—Նստեցէք այդ աթոռի վրայ և պատմեցէք ինձ բոլորը. դուք նրան սիրում էք, չէ՞. շարունակեց Իմման դողդոջուն:

—Բայց ոչ.., ոչ այլ ևս.

—Ոչ այլ ևս՞... պատմեցէք ինձ. չէ՞ք կամենում:

Սուրէնեանը դէմքը կնճռեց:

—Ձեզ վշտացնում եմ, գոչեց Իմման—վշտացրի ձեզ. ներեցէք ինձ... մի՛ ասէք այն ժամանակ և ցած գնանք...

—Ո՛չ, ո՛չ, կանգնեցրեց նրան երիտասարդը—կըպատմեմ:

Իմման նստեց. նրա ջղերը սաստիկ լարւած էին, իսկ Սուրէնեանը սկսում էր զսպել իրան:

—Պատմեմ. խօսեց նա առանց Իմմային նայելու—և այս պատմութիւնը միայն դուք էք գիտենալու... Այո, այդ աղջկան ես սիրում էի և որպէս էի սիրում... Ամբողջ մի տարի, գիշեր և ցերեկ, րոպէ առ րոպէ միտքս դէպի նա էր, ուղեղս նրանով էր զբաղւած. ոչ մի զբաղմունք ինձ չէր մոռացնել տալիս նրա դէմքը. արևելցու բուռն, անյատակ սիրով սիրում էի ես նրան. մի սէր՝ որ գիտէ ուրախութեամբ զոհ տալ ամեն ինչ, մինչև իսկ դժգոհ լինել, թէ զոհաբերութիւն չէ պահանջւում. մի սէր՝ որ միմիայն տանջում է, և եթէ չէ տանջում, դժգոհ է... բայց նա չէր սիրում ինձ. այսինքն նա մըտաւորապէս սիրում էր, պաշտում ինձ, իսկ ֆիզիքապէս ոչ. նա հիանում էր ինձ վրայ, իմ մտաւոր ընդունակութիւնների, իմ մտաւոր աշխարհի վրայ, բայց իմ խւրաքանչիւր համբոյրը կծկում էր նրա ջղերը. իմ իւրաքանչիւր հպումը սարսռեցնում էր նրան: Երբ հեռանում էի, աւելի էր սիրում ինձ. երբ իմ մարմնական պատկերս նրա կողքին էր, խորշում էր ինձնից... Եւ այդպէս տանջւում էի ես, որովհետև ֆիզիքական սէր ներշնչել չէի յաջողւում: Գիտէի այդ. յաճախ զայրանում էի, ինքզինքս նախատում, բայց հեռանալ Մարթայից չէի կարողանում: Ինքս իմ առջև ստորացած էի գտնում, թքում էի ինձ վրայ, երբեմն օրերով չէի երևում նրա աչքին... բայց ահա գալիս էր նրա մի նամակը, լիքը ջերմ խօսքերով. նա գրում էր «Ո՞ւր գնացիր, սիրելի բարեկամ, չէ՞ որ առանց քեզ չեմ կարող ապրել, տանջւում եմ, եկ, եկ»... և վազում էի, ամեն անգամ յուսով լի ներս մտնում ու ընկնում նրա գիրկը... Միայն առաջին զգւանքը. և նրա մէջ դարձեալ ծնում էր խորշումը, նա դէն էր հրում ինձ... օ, որպիսի տանջանքներ. ես,

որ ամէն անգամ քաղցր յոյսով նրա մօտ էի գնում և յուսահատ դուրս փախչում, նա որ այնքան սիրով իր մօտ էր կանչում և մահու չափ տանջում էր՝ երբ խորշումը համակում էր անձը... Մի ամբողջ տարի հարստահարեցինք մեր ջղերը. երկուսս էլ... վերջապէս մի օր այնքա՜ն ստորացում զգացի, որ վայրկենապէս հեռացայ Ցիւրիխից ու գրեցի նրան, որ հեռանում եմ, գնում եմ հեռու, վերջնականապէս... ու եկայ Լօզան...

—Ուրեմն դրա համա՞ր էիք եկել Լօզան, հարցրեց Իմման միշտ յուզուած ձայնով:

—Այո՛, եկել էի որ մոռանամ. սկզբներում տանջւում էի շատ աւելի. յաճախ քիչ մնաց ետ դառնայի. բայց կարողացայ զսպել ինձ և մնացի...

—Իսկ ա՞յժմ:

—Այժմ, ժպտեց Սուրէնեանը—փրկուած եմ այլևս. այլևս չեմ սիրում նրան. մի ուրիշ նոր զգացմունք վերջ տուաւ այդ տանջանքին և Մարթան այլևս գոյութիւն չունի ինձ համար...

Եւ երիտասարդը ակնարկը դարձրեց Իմմայից ու փողոց նայեց:

—Այո, փրկուած եմ, շարունակեց նա—բայց... տխուր եմ, խիստ տխուր. նախազգում եմ կարծես, որ մի նոր, գուցէ աւելի խիստ տանջանք՝ յաջորդելու է նախկինին. գուցէ հէնց նրա նմանը. որովհետև ինձ ո՛չ ոք սիրել չէ կարող, ո՛չ... իմ մէջ կայ մի ինչ որ ետ մղող ոյժ, որ ամէն մէկի ետ է հրում և ես երևի միշտ կըմնամ տանջուած, միայնակ ու չոր...

—Տխուր նախապաշարումներ էք կազմել ձեր անձի մասին, ոտքի ելաւ Իմման—խմեցէք լիկեօրը, շատ յուզուած էք:

Եւ բերեց սեղանի վրայ դրուած բաժակը ու ներկայացրեց Սուրէնեանին: Ձեռքերը ակներև կերպով դողում էին: Երիտասարդն առաւ. նրանց ակնարկները միմեանց հանդիպեցին ու երկուսն էլ իսկոյն կարմրեցին:

—Խմեցէք. թոթուեց Իմման և ետ քաշուեց:

Սուրէնեանը մի ումպով դատարկեց գաւաթը, արագութեամբ սեղանի վրայ դրաւ և կանգնած՝ ասաց.

—Ես գիտէի այդ... գնանք:

Իմման ոչինչ չըպատասխանեց իսկոյն և նախ շիշն ու գաւաթները ծանրութեամբ տեղաւորեց պահարանի մէջ:

—Դուք ի՞նչ գիտէիք. ասաց նա այն ժամանակ առանց նրան դառնալու—ասացէք:

—Գիտէի որ ամէնքը խորշում են ինձնից... և դա ջախջախում է ինձ:

Իմման դարձաւ, նայեց երիտասարդի լցուած աչքերին, յետոյ դէմքը կնճռեց և սառնութեամբ ասաց.

—Ջանացէք, որ չըխղճան ձեզ և չըմտածեն ձեր թուլութիւնների վրայ... ահա իմ խորհուրդը:

Յետոյ քայլեց դէպի դուռը և ասաց.

—Գնանք ցած... կարող են վատ բաներ մտածել:

Սուրէնեանը լռութեամբ հետևեց նրան:

Երբ աղօտ նրբանցքից անցնում էին, յանկարծ կէս տեղում Իմման կանգ առաւ, կիսովին դարձաւ երիտասարդին և ասաց մեղմ ձայնով.

—Երկուշաբթի, ժամը 3-ին, համալսարանում տեսնուենք...

Յետոյ արագացրեց քայլերը և առանց ետ նայելու, ցած սահեց սանդուղքներից:

Երեկոյթը վերջանում էր. հիւրերը սկսում էին ցրուել: Կէս գիշերը զարկել էր արդէն, երբ Սուրէնեանը անցնում էր Մօն-Բլանի կամուրջից և մի վերջին ակնարկ ձգում Իմմայի կախարդական լոյսով ողողուած սենեակի լուսամուտին:

ԺԲ

Հազիւ Կորրատըրի փողոցից Թատրոնի նոր հրապարակն էր հասել Սուրէնեանը, որ ականջին դիպաւ մի շատ տարօրինակ երգի ձայն, Պլէնպալէ դաշտի կողմից: Երգի լեզուն ու եղանակը Ժընեւի փողոցների համար այնքան այլանդակ էին, որ նա յանկարծակիի եկաւ:

...Լողւոր մէկն էլ ես եմ՝
Չեմ խանայ ծամթելն ի ծովէն...

Երգում էին հայերէն մի խումբ ձայներ հնչեղ, բայց մելամաղձոտ։

Հայ ուսանողներ էին անշուշտ, որ դուցէ թատրոնից և կամ գարեջրատնից ելած, չընայելով ցրտին, ժողովրդական այդ երգը հնչեցնելով տուն էին դնում։ Բոլոր սակաւաթիւ անցորդները պահ մի կանգնում ու դաշտի կողմն էին նայում, գրաւուած նորօրինակ երգով։

Սուրէնեանը քայլերն ուղղեց դէպի դաշտը։ Երգը պարբերական լինելով, մի պարբերութիւնից յետոյ տիրեց լռութիւն, որի ընթացքում մի ուժեղ բարիտոն ձայնեց։

—Էհէ՜, Պօղոսեան... քիչ հանգարտ գնացէք։

Ու դրան հետեւեց «Մեր հայրենիք» երգի առաջին չորս խազերի սուր սուլումն, որ իբր նշանաբան է ծառայում հայ ուսանողների մէջ՝ միմեանց կանչելու համար։

Սուրէնեանը երկու անյաջող փորձերից յետոյ, երրորդ անգամին լսելի ձայնով սուլեց, ապա մի բոպէ քայլեց արագութեամբ և նորից սուլեց։

—Էհէ՜, ո՞վ է այն, լսեց դաշտի կողմից հայերէն։

Ուսանողները կանգ էին առել և սպասում սուլողին։ Հինգ բոպէից յետոյ նա տեսաւ վեց հոգի, որոնցից երկուսը կին էին։

Վեցն էլ կանգնել մի ծառի տակ՝ սպասում էին։

—Սուրէնեանն է, տօ, գոչեց Սերգօն ամենից առաջ ճանաչելով—թատրոնից էիր գալիս։

—Ո՛չ, ասաց Սուրէնեանը մօտենալով—մի երեկոյթի էի։

—Անշուշտ այն սոսկալի օրիորդի մօտ, ծիծաղեց տիկին Վարդուհին, քիթը շալի տակից դուրս հանելով։

—Սոսկալի՜... նեղացաւ Սուրէնեանը—դուք Էմմային տգե՞ղ էք գտնում, տիկի՛ն։

—Աստուած ոչ անէ, ասաց տիկինը—ընդհակառակն, մի սպանիչ գեղեցկութիւն ունի, մի վայրենի բան, որ սասանեցնում է. մանաւանդ աչքերը։

—Դո՞ւք որտեղից էք գալիս, դարձաւ Սուրէնեանը ուսանողներին։

—Ժողովից ենք գալիս, ասաց Վահանը—ինչո՞ւ չէիք եկել։

—Այդ ինչ ժողով էր... քայլենք։

—Օ՛, ոչնչից լուր չունի, ծիծաղեց Բարսեղը—մեծապատիւ պ. Սուրէնեանը միայն կայ Երուսաղէմ... որ եկած լինէիք, անշուշտ ձեր ականջումն էլ կըմնար Կարապետեանի ստացած ապտակի ձայնը...

—Ապտա՛կ... այդ ինչ է, կուե՞լ էք այս երեկոյ։

—Փառաւոր մի կռիւ, ծիծաղեց Սերգօն. սպասեցէք ես պատմեմ Սուրէնեանին։

Այդ միջոցին Պօղոսեանն էլ ետ մնաց և օր. Բարութեանի հետ միացան խմբին։

—Նախ և առաջ, խնդրեմ, ասաց Սուրէնեանը Սերգօին—ո՞վ է այդ Կարապետեանը։

—Օ՛, օ, արեց նորից Բարսեղը—պարոնը Կարապետեանին էլ չէ ճանաչում. այդ կարեւոր, ակնոցաւոր ջէնտլմէնին, որն անշուշտ մի օր յանուն լաւ իդէաների և քիմիայի՝ մի հարուստ աղջկայ և հարուստ գործարանի տէր է դառնալու... ատամներս յիշեցէք. ես կըմեռնեմ, դուք կենդանի կըլինիք։

—Էլի Բարսեղը մեռաւ, ծաղրեց Դանիէլեանը ջղայնութեամբ—դահլաներս տարար քո մահովը։

--Լա՛ւ, լա՛ւ, մի վրդովուիր. ցուրտը չըյաջողեց ջղերդ հանգստացնելու. մի ապտակ ես տուել, խօ աւելի բան չե՞ս արել։

—Ուրեմն Կարապետեանը քիմիայի ուսանող է. լաւ, բայց ինչո՞ւ Դանիէլեանը ապտակեց նրան, հարցրեց Սուրէնեանը Սերգօին։

—Ա՛յ, պատմեմ, սկսեց Սերգօն... մի քիչ երկար է լինելու, բայց մեղաւորը դու ես. մեր հանգամանքների մասին չես հետաքրքրուել և մեր ներքին, ուսանողական գործերը քեզ յայտնի չեն։ Ամենից առաջ պիտի իմանաս, որ մենք, հայ ուսանողներս այստեղ մի գրադարան ունինք։

—Չըգիտէի... առանձի՞ն։

—Բոլորովին առանձին. տեղն էլ կուզես՝ ասեմ, Բութդը լա Կլիւզը կըբռնես, բաւական կըբարձրանաս և № 21-ը կըհարցնես, երրորդ յարկ, դէպի աջ։

—Լաւ, յետո՞յ։

—Այդ գըրադարանը պահպանում է մեր նպաստներով. թերթերը ձրի ենք ստանում. Վուլկանն էլ այս անգամ Կով-կասից գալիս՝ բաւական գրքեր է բերել և ամեն օր մտնում կարդում ենք... վերջերս մեր մի մասը, որոնք իրանց ընկե-րաբանական մտքերով հակւած են դէպի Սմբատեանները և անպատճառ ուզում են ուէէ կէտում մեզ հետ համաձայն լինել, արծարծեցին այն միտքը, թէ շատ ծախսեր չունենալու հա-մար, աւելի լաւ կըլինէր մեր գըրադարանը միացնել ռուս ու-սանողութեան գրադարանի հետ: Ահա այսօր այդ խնդրի հա-մար մի ժողով կայացաւ: Հակառակորդ պարոնները արդէն լարւած մեր դէմ, առիթ էին որոնում մի կռիւ պայթեցնելու: Մենք դէմ էինք գըրադարանների միացման: Վիճաբանութիւնը երկար տևեց և այդ ժամանակ Դանիէլեանը ոտքի ելաւ ու մի ճառ սկսեց խօսել ի պաշտպանութիւն մեր մտքերի: Ճառը դեռ չըվերջացըրած, Կարապետեանը ոտքի ելաւ և սկսեց կծու ծաղրաբանութեամբ պատասխանել Դանիէլեանին:

—Դու մոռանում ես, Սերգօ, գոչեց Դանիէլեանը նեղա-ցած—որ իմ խօսելու ընթացքում այդ պարոնները որպիսի լըբութեամբ ծամածռութիւններ էին անում, միմեանց ական-ջին փսփսում. իմ բառերը ծաղրելով կրկնում և միմեանց աչ-քով էին անում...

—Այո՛, այո՛, ասաց տիկինը—ես էլ նկատում էի և սաս-տիկ բարկացած՝ քիչ մնաց գոչէի որ այդ լըբերին դուրս նե-տեն ժողովից:

—Մի խօսքով, շարունակեց Սերգօն—նախօրօք պատ-րաստւած մեզ ծաղրելու, մեզ նախատելու, չիմար Կարապե-տեանն էր, որ Դոն-Կիխոտի պէս մէջ տեղը նետւեց... բայց տուժեց լաւ: Դանիէլեանը նախ կծու խօսքերով պատասխանեց նրա ծաղրին, յետոյ ասաց. «Շատ լաւ, պարո՛ն, երբ ժողովը վերջանայ, ես ձեզ հետ հաշիւ կըտեսնեմ»... Կարապետեանն ու իւր ընկերները քըքջացին և դա աւելի բորբոքեց Դանիէլ-եանին: Հազիւ թէ ժողովը փակւել էր, որ պարոնս մօտ գը-նաց ականոցաւորին, տարաւ բերաւ ու մի չըմփ... այնպիսի ապտակ կպցրեց նրա երեսին, որ ակնոցները ոտնեցին ու Կա-

րապետեանս քիչ մնաց տափակէր... Ամա ապտակ էր հա՜...
Կարապետեանս ինչպէս պատասխանի, որ լաւ լինէր... Եռ է
դառնում, մի նստարանի վրայ (կարծեմ բարձրացաւ, չէ՞, պա-
րոններ) և գոչում. «պարոններ, ես թողնում եմ որ ժողովը
պատասխանէ իմ փոխարէն, այս ապտակի համար»... Հըմ,
յակոտ... քաջութիւն էլ չունեցաւ գոնէ յարձակուելու ապտա-
կողի վրայ, աթոռները նրա գլխին փշրելու... թէ ես կըլինէի!.

—Յետո՞յ. ինչով վերջացաւ սկանդալը:

—Նրանով, որ մի ընդհանուր աղմուկ բարձրացաւ: Սըմ-
բատեանները սկսեցին ոռնալ, հայհոյել, մենք էլ նրանց...
բայց մենք բազմամարդ էինք և լաւ դըմբոց կարող էինք տալ
նրանց... Երբ քիչ հայհոյել էինք, թողեցինք ու դուրս ելանք:
Հիմա էլ Կաֆէ Լիրիքից ենք գալիս. գնացինք մի-մի գաւաթ
գարեջուր խմելու:

—Շա՜տ ապրիք, ծիծաղեց Սուրէնեանը—լաւ սկանդալ
էք սարքել... վատ հետևանք է ունենալու այդ բոլորը:

—Ինչ որ ուզում է թող լինի, գոչեց Դանիէլեանը—ես
ինքս զգում եմ որ աւելորդ էր ապտակը. արժէ՞ր մի այդպիսի
մարդու հետ չափուել... կուզի՝ մարդ կուղարկեմ ներողութիւն
կըխնդրեմ, որ մոռացայ ինձ պահ մի և լայեղ աչի իւր հետ
չափուելու...

—Շատ լաւ էք արել, մէջ մտաւ օր. Բարութեանը—
հարկաւոր էր վերջապէս մի օր պատժել այդ մարդերի այն
հեղնական ու նախատական շարժումները, որոնցով միշտ վերա-
բերւում են դէպի մեզ. կարծում են թէ մեծ մեծ մտքեր ան-
գիր անելով Լասալից կամ Մարքսից, գլխով երկնքին են դիպ-
չում... մանաւանդ այդ Դոն-Կիխոտն ու իւր Սանխո—Պանչան:

—Դա՞ ով է, ծիծաղեց Սուրէնեանը:

—Կարապետեանի հայրենակիցն է, դօքտոր դատարկա-
պորտութեան պ. Լևոնեանը, վրայ տուաւ Բարսեղը:

—Իմ ցաւս այդ չէ, ասաց Պօղոսեանը—այլ այն, որ մի-
ամիտ Կոլեան էլ նրանց կողմն անցաւ. տեսնում էի՞ք թէ
ինչպէս գոռում էր. «դո՛ւրս Դանիէլեանին, դուրս վայրե-
նուն»!...

—Կոլեայի վրայ բարկանալ չէ կարելի, ասաց Սերգօն—նախ որ միւսների պէս չարամիտ, մեծամիտ չէ. երևի րոպէի տպաւորութեան տակ էր խօսում։ Ասենք, եթէ լաւ դատենք, Դանիէլեանի արածը վայրենութիւն էր. բայց ախր այդ յիմարներն էլ ծաղրաբանութեան չափը այնքան անցկացրին, որ ամենասառը մարդուն էլ կարող էին գրգռել... Խոստովանում եմ, եթէ Դանիէլեանը իւր ապտակը չըգործածէր, ես մտածում էի ժողովից յետոյ բռնել Կարապետեանի բողազիցը և ա-լա Թիֆլիս՝ մի քանի մուշտի նստացնել նրա մէջքին։

—Ի՞նչ էք կարծում, հարցրեց տիկին Վարդուհին—հիմա նրանք ինչ միջոցի են դիմելու, հատուցումն ստանալու համար։

—Ես կարծում եմ, խօսեց Վահանը—որ նրանք դիմելու են ընկերական դատաստանի... ականջովս մի այդպիսի բան դիպաւ, երբ դուրս էինք գալիս ժողովից։

—Թող դիմեն, գոռաց Դանիէլեանը գրգռուած—եթէ պէտք լինի, ես մի ապտակ էլ կըտամ այդ լրբի միւս երեսին...

—Որ գնան ու «*Երկու ապտակ*» վօդևիլը խաղան, սրախօսեց Բարսեղը։

—Հիմա նրանք հաւաքուած կըլինին իրանց դրագօնի—Սմբատեանի մօտ, ասաց Գրիգորը, որ մինչև այդ ժամանակ մի բառ չէր խօսել և միայն ձեռքերն էր շփում մըսելուց—անշուշտ յարգելի դրագօնուհին այժմ կանգնած սենեակի մէջ տեղ, Մարքսի պատկերի տակ, շանթեր է արձակում դէպի մեզ, դէպի դաւաճանները։

—Լաւ, բաւական է, խօսեց Պօղոսեանը—ցուրտ է, տղերք, շուտ շուտ գնանք. ես սաստիկ յոգնել եմ և քնել եմ ուզում։

Յետոյ ձայնը բարձրացրեց ու շարունակեց երգը.

Չիմ վզի վզնոց կի տամ,
Դէ, խանմ ծամ-թելն ի ծովէն...

Խումբը միացաւ նրան. միայն օր. Բարութեանը, Դանիէլեանը, Սուրէնեանն ու Գրիգորը քիչ ետ մնացած՝ շարունակում էին խօսել եղած դէպքի մասին։

—Դու ե՞րբ ես վերադառնում, հարցրեց Դանիէլեանը Սուրէնեանին։

—Դեռ չըգիտեմ, վաղը գոնէ այստեղ եմ։

—Աւելի լաւ է մնաս. եթէ ընկերական դատաստան կազմեն, կըտեսնես. մի՞թէ չես հետաքրքրւում։

—Անշուշտ հետաքրքիր է. բայց խօսք չեմ կարող տալ մնալու. հանդամանքներից է կախուած։

—Հըմ, ծիծաղեց օր. Բարութեանը—մի քիչ ես գուշակում եմ այդ հանդամանքը. անշուշտ Սուրէնեանը չի գնալ ժընէւից, քանի այն օրիորդը այստեղ է։

Սուրէնեանը կարմրեց։

—Ի՞նչպէս օրիորդ, ասաց նա—այդ ո՞րի մասին էք խօսում։

—Դուք նեղանո՞ւմ էք, նայեց նրան Բարութեանը—եթէ նեղանում էք, այլ ևս ոչ մի բան չեմ ասի։

—Խնդրեմ, խնդրեմ. չեմ նեղանում։

—Լաւ ուրեմն, ես սիրում եմ պարզ խօսել... ոչ ոքի աչքից չըվրիպեց որ երեկոյթի ընթացքում անբաժան էիք այն տարօրինակ հայեացքով օտարուհուց. իսկ օրիորդ Մարթան...

—Մա՞րթա, ասաց յուզուած Սուրէնեանը—նա դեռ այստե՞ղ է։

—Այո՛, ժպտեց օր. Բարութեանը—և երևի նա էլ չի գնալ, մինչև «հանդամանքները» չըներեն...

Ու լռելով Սուրէնեանին նայեց։

—Գիտէ՞ք, այդ Մարթան բաւական բարկացած է ձեզ վրայ. աւելացրեց նա քիչ յետոյ—երևի սիրում է ձեզ...

—Օրիորդ!...

—Ասացի ես սիրում եմ պարզ խօսել. ծիծաղեց օր. Բարութեանը և դուք խօսք տուիք չըներանալու... լաւ, աւելացնեմ որ սիրում է և սաստիկ նախանձում։ Այն օտարուհին նրան սաստիկ գրգռել է. երէկ նրա մասին խօսելիս ասում էր թէ «բուրժուա» է, սալօնական աղջիկ, ով գիտէ որպիսի կոկետ, որի վրայ միայն յիմարները կարող են սիրահարուել»... Նախանձն էր խօսում ի հարկէ Մարթայի մէջ, որովհետև պիտի խոստովանել, որ ձեր օտարուհին շատ լաւ դէմք ունի և երբէք չի նմանում բուրժուայի կամ կոկետի։

Սուրէնեանը բարկացաւ, բայց ոչինչ չըպատասխանեց:

—Դուք միշտ տեսնւում էք այդ Մարթայի հետ, հարցրեց նա քիչ լռութիւնից յետոյ:

—Գրեթէ ամեն օր. մեզ դրացի մի աղջկայ մօտ է իջել:

—Եթէ մի քանի խօսք խնդրեմ ասելու նրան, կասէ՞ք:

—Օ՛, ոչ... երբէք չէի կամենալ խառնւել այդպիսի գործերի մէջ: Ինքներդ ասացէք կամ գրեցէք... և խնդրեմ բարի եղէք իմ ասածներս չըլսած համարել:

Սուրէնեանը զսպեց իրեն և սառնութեամբ ասաց.

—Շատ լաւ:

Յետոյ, երբ դաշտի ծայրում ուսանողները բաժանւեցին միմեանցից և նա Պօղոսեանի հետ սենեակ մտաւ, առանց մի բառ արտասանելու այլևս, հանւեց ու պառկեց:

Քնել չըյաջողւեց նրան. խառն մտածութիւններ, Մարթայի վարմունքը, Նիմայի մասին յիշողութիւնները միմեանց ետևից անկարգ կերպով գրգռեցին նրա ջղերը և չըթողին գլուխը հանգիստ:

Ապա սկսեց մի առ մի յիշել բոլոր անցեալը և պատկերացաւ նրա առաջ Մարթան: Արդեօք այդ աղջիկը վերջապէս սկսել էր սիրե՞լ նրան. հակառակորդ ունենալու միտքը, Սուրէնեանին կորցնելու մտածութիւնը մի գուցէ զարթեցրել էր աղջկայ մէջ այն զգացմունքը, որին գրգռելու հնարաւորութիւն չէր ունեցել Սուրէնեանը իր նեարդային ցոյցերով, իր բուռն սիրով, իր տանջանքներով ու մինչև իսկ արտասւելով... Այո՛, շատ լաւ յիշում էր այն օրը, երբ Ցիւրիխում, իր սենեակի մէջ, Մարթան հարիւրերորդ անգամ զուցէ լինելով, խորշում էր իր զգւանքներից. իսկ նա—ինքը՝ բարկութիւնից և տանջանքից լաց էր եղել գլուխը դրած սեղանի վրայ. լաց էր եղել սոսկալի կերպով, ջղերի ամբողջ ցնցումով, մկանունքների ամբողջ դալարումով, և Մարթան էլ, միւս կողմում, նկատելով այդ զարհուրելի տանջանքը, ինքն էլ արտասւել էր և գոչել. «Աստւած իմ, կուզէի մեռնել, այս բոլոր տանջանքը չըտեսնել և այսքան չըտանջւել»: Այդ բառերը նրան—Սու-

րէնեանին հանդարտեցրել էր: Դադարել էր արտասւելուց, յետոյ ոտքի ելել և ասել Մարթային. «Մարթա, դու ինձ չես կարողանում սիրել, դա պարզ է... գնա, հեռացիր և թող ինձ»... և Մարթան գլխիկոր, ամօթահար, յանցաւորի պէս կծկւած՝ ելել էր զգուշութեամբ դուռը բաց արել ու հեռացել... Յետո՛յ, յետո՛յ ինչ պատահեց: Շարունակե՞ց լալ: Ո՛չ. ոտքի ելաւ, սառը ջրով լւացւեց, համալսարան գնաց, դասախօսութեան ականջ դրեց, առանց մի բառ ըմբռնելու, առանց լսելու, ապա ճաշեց և վճռեց հեռանալ Ցիւրիխից, գնալ—կորսւել հեռու, շատ հեռու: Բայց ահա երեկոյեան, երբ նա ուզում էր գրքերը ժողովել, դուռը բացւեց և Մարթան էր նորից. «Այսօր չերևացիր, ասաց նա սիրալիր. կարօտցել եմ քեզ»... ու նստեց ամօթահար, իր այդ տարօրինակ զգացմունքներից վշտահար. թոյլ տւաւ որ Սուրէնեանը իր ձեռքը բռնէր, բայց վախեցած նայում էր թէ չըլինի նորից համբուրէր և նորից խորշումը ծնէր ու տանջէր թշւառ երիտասարդին: Նա փորձեց աւելի մօտենալ աղջկան: Յանկարծ, նորից, Մարթան ոտքի ելաւ շփոթւած. այո՛, խորշումը վերսկսում էր... առաւ գլխարկը ու դուրս նետւեց. ո՛չ «ցտեսութիւն», ոչ մի ակնարկ, ո՛չ ետ նայել: Փախչում էր իր ներքին ձայնից մըղւած, խղճահար... շտապում էր հեռանալ, որպէսզի վերահաս խորշման արտայայտութիւնները նորից չըտանջէին Սուրէնեանին... իսկ սա տխուր, տանջւած, մնում էր կանգնած լուսամուտի առաջ, շւարած. գնա՞ր թէ մնար. էլի՛, փորձել, թէ՞ եղած փորձերը բաւական էին. էլի՞ տանջւել, յոյս ունենալ, թէ՞ արդէն յոյս կտրել բոլորովին: Բայց ինչո՞ւ ուրեմն այժմ նորից գալիս էր այդ աղջիկը, ինչու նորից պեղում էր իր սիրտը, տանջանքը նորոգում: Մեղադրե՞լ, դատապարտե՞լ Մարթային... Օ՛, ո՛չ, անկարելի էր այդպէս անել:

Ու Սուրէնեանը վերջապէս փախել էր Ցիւրիխից. ծածուկ ու յանկարծ փախել... և ահա այժմ, Մարթան նորից վազում էր իր ետևից, նորից գալիս կրկնելու նոյն տեսարանները, գուցէ հէնց այժմ, երբ հակառակորդի գոյութիւնն էր տեսնում, յաջողւել էր յաղթել խորշմանը: Իսկ ինքը, Սուրէնեա՞նը...

մնացել էր նրա մէջ նոյն սէրը դէպի Մարթան. կարո՞ղ էր նոյն սաստկութիւնը, նոյն տենչալից ձգտումն ունենալ...

Այստեղ, որպէս մի սքանչելի, հոգեպարար պատկեր, երեւեց նրան Էմման, այդ անկեղծ, իր սիրտը բոլորովին բաց անող գրաւիչ ու սիրող աղջիկը... Այն ժամանակ որպիսի՜ հաճոյքով ետ մղեց նա Մարթայի և անցեալ սոսկալի տեսարանների յիշատակը ու ընկղմեց Էմմայի հետ ունեցած տեսակցութեան և իւրաքանչիւր խօսակցութեան մտովին վերանորոգելու մէջ... Ահա շոգենաւը, ապա սենեակի տեսարանը, յետոյ շշնջելով ասած այն սիրալիր, դողդոջուն խօսքերը. «երկուշաբթի ժամը 3-ին... համալսարանում»... Այո՛, այդ աղջիկը սկսում էր սիրել իրան. իսկ ինքն արդէն Լօզանից սկսած գրաւել էր նրանով և միմիայն նրա վրայ էր մտածում: Բայց ո՞վ էր այդ աղջիկը, այդ գիւթիչ անձը, որ մտնում էր նրա կեանքի մէջ. ինչո՞ւ այդքան շուտով գրաւեց, գրեթէ սիրահարեց մի սալօնական աղջկայ վրայ. մի օտարուհի, այնպիսի երկրից, որի մասին մինչև իսկ որոշ գաղափարներ չունէր, որին միայն ճանաչում էր Իբսէնից, Բէօրնսօնից, Ստրինդբերգից և Գրիգից—այդ նորօրինակ գրողներից և երաժշտից... Մի երկիր, որ ներկայանում էր նրան որպէս ընդարձակ ջրանցքներ, խոր ընկած հսկայական սառցէ ֆիօրդների մէջ. կապոյտ խորխոր ձորերի մէջ պառկած լճեր, որոնց վրայ սահում են տարօրինակ հայեացքներով, կրակ ու բոց ցայտող բիբերով անձեր... Իբսէնի, Բէօրնսօնի թանձր ցանուցիւ մազերով, վայրենի վախ ազդող աչքերով գլուխները, ապա Գրիգի շարժումները, երբ նա եկել էր Ցիւրիխ կոնցերտը տալու— ներկայացան նրա աչքի առաջ... Նոյն աչքերն էին Էմմայի վրայ, նոյն սրաթափանց, բոլոր սիլնարկները խոնարհեցնելու ուժ ունեցող միստիքական հայեացքը, որ մասամբ էլ յիշեցնում էր նրան՝ սպիրիտիստների լուսանկարած ոգիները...

Եւ ահա հիւսիսափայլի սքանչելի լոյսի մէջ՝ շարժւում էր մի նաւակ խոր ֆիօրդների ստորոտից. ֆիօրդներ, որոնք գծաւոր բիւրեղների պէս երկար ու բարձր՝ փայլում էին գոյնզգոյն ու ջրանցքի վրայ մի այլանդակ լոյս տարածում.

նաւակը սրանում էր՝ քթի կողմից ջուրը ծալծլելով ու ծփացնելով. Թիավարը ցնցում էր իր խոշոր մազերը. բոցափայլ աչքերով նայում ֆիօրդներից դուրս ցցւած խոժոռ ձիւնապատ ժայռերին, և երկու անձ, միստիքական պատկառանքով, մի տեսակ վախախառն հիացմունքով, միմեանց կողքի նստած, լուռ էին ու լարւած...

Մէկը ինքն էր այո, ընկած Սկանդինաւեան սառցային կողմերում և իր կողքին ունէր Էմման, որ սիրում էր իրան, որ քաշել տարել էր նրան իր երկիրը, իր մօտ...

Ցուզւած, ոստնեց անկողնի մէջ ու նստեց. ձեռքի տակն էր ջրի շիշը. մինչև մի քառորդը դատարկեց:

—Անհանգիստ ես, Սուրէն, լսւեց Պօղոսեանի ձայնը:

—Ո՛չ, մռմռաց նա. ծարաւ էի...

—Իմ քունն էլ չէ տանում, շարունակեց Պօղոսեանը— այսօրւայ դէպքը շատ ցնցեց ինձ...

Այն ժամանակ Սուրէնեանի միտքը դարձաւ դէպի Դանիէլեանը, ապտակին, ուսանողութեան, նրանց այդ տգեղ պառակտման, յետոյ ընթերցարանի, լրագիրների և այդպէս անցաւ դէպի հայրենիք, ուր հայ կեանքը դառն էր, վշտալից, անմխիթարական... ապա Թիւրքահայաստան, ուր կոտորում էին, արիւն հոսեցնում, վառում, տանջում եղբայրներին, քոյրերին...

Յետոյ յանկարծ—չըգիտէր ինչպէս—մտաբերեց իր հայրենիքի այն անկիւնը, ուր ծնւել էր, մանկութիւնն անցկացրել... Մտաբերեց խառն ի խուռն՝ մանկական տեսարաններ... գիւղական անցքեր... ապա նորից Էմման...

Եւ այլ ևս ամեն ինչ աղօտացաւ մի առ մի:

Փողոցում կատարեալ լռութիւն էր տիրում. մի սուլող քամի միայն պտոյտներ էր անում ու երբեմն ձիւնի փոշիով ծածկում լուսամուտների ապակիները:

ԺԳ

Ով երկար զբօսնել է Ժընէւի համալսարանական մեծ պարտէզում, նա միայն տեսած կըլինի այն հետաքրքիր յու-

շարձանը, որ որադարանի շէնքի ետեւը դրած, կարծես թաղցրած է մեծ թփերի տակ։ Մի մերկ կին է դա. հերարձակ, վշտալից ու յուսահատ հայեացքով, քարկոծուածի պէս, որ ետ է քաշել փախչելու ձեւով և նրա գլխի վերև թեւաւոր Կռոնոսը իր գերանդին ձեռքին՝ պաշտպանութեան տակ է դրել թշուառին։

Եւ եթէ այդ խորհրդանշանական արձանի միտքը մի րոպէ անհասկանալի մնայ, պատուանդանի վրայ եղած բառերը մեկնում են նրան. «Le Temps protège la Vérite» (ժամանակը պաշտպանում է ճշմարտութեան)։ Մերկ ճշմարտութիւնը ժամանակի պաշտպանութեան տակ է դրւած։ Բայց թէ թըշւառ ճշմարտութեան թևը կոտրած ու կարկտնած է և թէ ժամանակի։ Դրա համար էլ երևի արձանը դրել են հեռաւոր, գրեթէ մեկուսացած անկիւնում, մի թփի տակ ու մի նստարան էլ առաջը։

Երեքօրեայ հիւսիսային սառն քամուց յետոյ, այդ երկուշաբթի սկսել էր մի գեղեցիկ օր։ Ժամը 3-ի դասախօսութիւնից ելնելով, Խմման և Սուրէնեանը համրաքայլ մտել էին պարտէզ և եկել նստել յուշարձանի տակ։ Երկուսն էլ չէին յիշում, թէ ինչպէս էր սկսել խօսակցութիւնը. բայց երկուսն էլ լարուած դրութեան մէջ, միմեանց կողքի նստած դողդոջուն շրթունքներով ու շփոթուած, միմեանց անգամ չէին նայում։ Սուրէնեանը իր ձեռափայտով խոնաւ աւազի վրայ զանազան գծեր էր ձևացնում կռացած, իսկ Խմման ձեռքի տետրակը ոլորելով և բանալով՝ հետևում էր այդ գծերի ձևերին։ Խօսողը Սուրէնեանն էր. կցկտուր, վարանոտ, առանց Խմմային նայելու, կիսակլոր շրջաններ էր նկարում.

—Իմ կարծիքով սակայն, օրիորդ—ասում էր նա—ով չէ սիրում, չէ ապրում. սիրել՝ նշանակում է շնչել. սէրն է գոյութիւն տուել բնութեան և սէրն է այն միակ կապը, այն միակ աներևոյթ ուժը, որ ծնեցնում է աշխարհը. պահպանում նիւթի յարակցութիւնը... Դուք քիմիա ուսել էք. և եթէ հէնց քիմիայից մի օրինակ բերեմ, ինձ մատերիալիստ չանւանէք...

—Դուք դուցէ կամենում էք քիմիական յարակցութեան (affinité, сродство) մասին խօսել... միջամտեց Խմման—ես հակառակ չեմ ձեր ոչ մի ասածին. ընդունում եմ, որ ով չէ սիրել, նա կեանքը չըգիտէ, չէ ապրել. բայց ինձ թւում է, որ պրոֆեսորի ասածը պիտի հակառակի դարձնել, նա ասում էր «On agit comme on aime» (մարդ լինում է այնպէս, ինչպէս սիրում է). լաւ կըլինէր ասել «On aime comme on agit» (մարդ սիրում է այնպէս, ինչպէս լինում է)։ Խոստովանեցէք, որ ուրիշ բան է մի կրթուածի, մի հասկացողի, վերջապէս մի զգայուն անձի սէրը և ուրիշ՝ մի գռեհիկի, տգէտի և անզգայ անձինը. առաջինը՝ սէրը իդէալացնում է, իսկ երկրորդը՝ գռեհկացնում, անասնացնում... Այն բարձր, բանաստեղծական, անհուն և անյագ սէրը, որ բնութեան գոյութեան գաղտնիքն է և որ ազնւացնում է, չէ կարող հասկանալի լինել մի անասունի։

—Շատ ճիշտ է, եթէ երկու սիրողներից մէկը հակառակ հասկացողութիւն ունենայ, իսկ երբ երկուսն էլ նոյն հասկացողութիւնն ունենան սիրոյ մասին, եթէ երկուսն էլ դեռ չեն յըղփացած, անասնացած և կամ եղած են այդպէս, այն ժամանակ չէ՞ որ «on agit comme on aime»...

—Փիլիսոփայութեան մէջ չըմտնենք, պ. Սուրէնեան, ես գտնում եմ, որ երբ երկու անձ հասկանում են այն բարձր, խորունկ և տենչալից սէրը, որ բարձրացնում է մարդուն, այն ժամանակ միայն նրանք երջանիկ են լինում... Չըգիտեմ. ինձ թւում է, որ ես չէի կարող սիրել մի չոր նիւթական անձի, որ սիրոյ նպատակ է դնում միմիայն բնախօսական պահանջը, որ Շօպէնհաուէրի վարդապետութեան հետևող է և որ վերջապէս իբր էգ և արուի հասկացողութեամբ է ղեկավարւում սրտի զգացմունքների մէջ...

Սուրէնեանը մի րոպէ լռեց, փայտով մի խաչ գծեց աւազի վրայ և շշնջեց.

—Յոյս ունիմ, որ ինձ այդպիսիների կարգում չէք դասում։

Խմման կարմրեց։

— Դուք այդպէս չէք, ասաց նա դողդոջուն — եթէ այդպէս լինէիք, ես ձեզ այդքան չէի համակրիլ…

—Ուրեմն մի քիչ համակրո՞ւմ էք ինձ, հարցրեց երիտասարդը, այժմ ջղայնութեամբ ցանուցրիւ տալով աւազը:

—Ես ձեզ ասել եմ մի քանի անգամ… դուք ինձ հետաքրքրում էք…

—Որպէս մի տարօրինակ անձ, այնպէս չէ՞:

—Ո՛չ երբէք, բողոքեց Իմման—ես այդ մտքով չասացի. ես ձեզ համակրում եմ. այդ ինքներդ էլ տեսնում էք. մենք գրեթէ միմեանց հասկանում ենք մեր թռիչքների, մեր ցանկութիւնների մէջ… Բայց գնանք այժմ, սկսում է ցրտել:

Եւ ոտքի ելան երկուսն էլ ու դուրս գնացին պարտէզից: Բաւական տեղ նրանք լռութեամբ անցան փողոցներով: Երբ լճափին էին հասել, Իմման պահ մի կանգ առաւ խաղաղ ջրերը դիտելու, որ ծփում էր մեղմութեամբ ափերի մօտ, իսկ հեռւում հայելու պէս միապաղաղ երերում էր կապոյտը:

Արեւը սկսում էր խոնարհուել, մի քանի նաւակներ վերադառնում էին. կային և զբօսնողներ, որոնք նոր էին նստում, և մակոյկի մէջ նստած մի զոյգ՝ թիավարելով հեռանում դէպի փարոսը:

—Ի՜նչ լաւ է այժմ զբօսնել ջրերի վրայ, շշնջեց Իմման յափշտակութեամբ:

—Կուզէ՞ք, նստենք մակոյկ:

—Ո՛չ, ուշ է. մի ուրիշ անգամ. և հեռու կերթանք. այնտեղ ցածում՝ ուր քաղաքի աղմուկը չի լսիլ և ուր բնութեան միայնութեան մէջ մարդ կարող է երազել, խաղաղ կերպով ծփալ և մի րոպէ երջանիկ լինել…

—Ձեր տրամադրութիւնը այսօր լաւ չէ երեւում, օրիո՛րդ. վարանոտ կերպով նկատեց Սուրէնեանը:

—Այդ ոչինչ, պատասխանեց Իմման. ինձ հետ յաճախ է պատահում այդպէս… գնանք:

Քայլում էին այժմ լճափով, Անգլիական այգու մէջ և այնտեղից դուրս եկան Մօն-Բլանի կամուրջը:

Երբ հասել էին կամուրջի մէջ տեղ, ուր շատ քաղաքա-

ցիք հացի փշրանքներ էին ցրւում կամարների տակ ոստոստող ջրային թռչուններին և կարապներին, Իմման դարձաւ Սուրէնեանին և հարցրեց յանկարծ.

—Ասացէք որ շուտով կըգնաք Ժընէւից, այնպէս չէ՞:

—Հարկաւոր է ուսումը վերսկսել. ասաց Սուրէնեանը:

—Ես էլ եմ գնալու. կուզէ՞ք մինչեւ Լօզան միասին լինենք:

—Մեծ հաճոյքով. ձեզ հետ լինել…

—Կանգ առէք, հաճոյախօսութիւն պէտք չէ:

—Սա հաճոյախօսութիւն չէ, այլ սրտի ձայն:

Իմման ոչինչ չըպատասխանեց և արագացրեց քայլերը:

Քիչ յետոյ նրանք հասել էին պանսիօնին: Դռան մօտ Սուրէնեանը կանգ առաւ:

—Եւ ե՞րբ էք կամենում գնալ. հարցրեց Իմման նոյնպէս կանգ առնելով:

—Բացի այսօրուանից, ո՛ր օրը կուզէք:

—Այսօր գո՞րծ ունիք:

—Ժամը ութին մի ժողով կայ:

—Ի՞նչ ժողով է այդ:

—Ուսանողական. ուզում են դատել մի հայի, որ կրքի սանձարձակութեան մի րոպէում ապտակել է միւսին:

—Ես էլ կարո՞ղ եմ ներկայ լինել:

—Դո՛ւք. զարմացաւ Սուրէնեանը—բայց դա ձեզ հետաքրքրել չէ կարող և ռուսերէն են խօսելու:

—Ոչինչ. դուք կըթարգմանէք ինձ:

—Ուրախութեամբ. կուզէք ժամը 8-ին մտնեմ, ձեզ հետ գնալու համար:

—Դա կրկնակի նեղութիւն կըլինի… ժպտեց Իմման և գունատ՝ աւելացրեց—եթէ կուզէք՝ գնանք ինձ մօտ, յետոյ միասին կընթրենք և կերթանք:

Սուրէնեանի սիրտը ուրախութիւնից սաստիկ բաբախեց:

—Բայց նեղութիւն տալ ձեզ… թոթովեց նա:

—Ո՛չ մի նեղութիւն. մտէք:

Եւ թեթեւակի բարձրացաւ սանդուղքներից. երկուսն էլ

գնացին Իմմայի սենեակը: Այնտեղ շուէդուհին հանեց լռութեամբ վերարկուն, գլխարկը և հրամցրեց երիտասարդին նստելու:

—Դեռ մութ չէ, ասաց նա—ճրագ վառել աւելորդ է:

—Անշուշտ:

—Ահա ձեզ ալբոմ, մղեց նրա առաջ Իմման—պատկերներ նայեցէք մինչև ես գամ... կըգամ ձեզ կըբացատրեմ թէ ովքեր կան այդտեղ... ներեցէք:

Յետոյ թեթևակի դուրս գնաց և դուռը փակեց:

Սուրէնեանը մենակ, մի վայրկեան մեքենայօրէն թերթեց ալբոմը, յետոյ թողեց այդ և մտախոհ՝ մօտ գնաց լուսամուտին:

Երկար չըտևեց Իմմայի բացակայութիւնը. տանտիկնոջ միայն իմաց էր տուել որ հիւր է բերում ընթրիքին և վերադառնում էր գրեթէ վազելով, կարմրած ու հևալով:

—Ուրեմն ձեզ չըհետաքրքրեցին այդ պատկերները. ասաց նա երբ տեսաւ Սուրէնեանին լուսամուտի մօտ:

Սուրէնեանը դարձաւ շփոթուած.

—Ոչ ոքի չեմ ճանաչում, արդարացաւ նա:

—Լաւ ուրեմն, ես ծանօթացնեմ ձեզ. ասաց Իմման և ալբոմը վերցնելով՝ բերեց լուսամուտի առաջ. յետոյ նստեց: Սուրէնեանը կռնակի կողմից կռացաւ ալբոմի վրայ:

—Ահա, տեսէ՛ք, սկսեց Իմման—սա մայրս է. տեսէ՛ք որքա՜ն բարի դէմք ունի. իսկ սա հայրս. նման չէ՞ ինձ:

—Բաւական նման է:

—Իսկ սա, թերթեց Իմման և ցոյց տուաւ մի երիտասարդ զինւորականի—եղբայրս է... ես չեմ սիրում զինւորականների, ո՛չ էլ զէնքը, պատերազմ. կուզէի որ Ալֆրէտը մի երկրագործ լինէր. քան եղբայրասպան... համամիտ չէ՞ք ինձ:

—Կատարելապէս, ասաց հիացած Սուրէնեանը:

—Իսկ այժմ, շարունակեց Իմման—ես ձեզ մի ուրիշ պատկեր ցոյց կըտամ... Նայեցէք այս լաւ դէմքով պարոնին. գիտէ՞ք ով է այս:

—Չեմ ճանաչում:

—Իմ նշանածն է... ասաց Իմման և ժպիտով Սուրէնեանին նայեց:

—Ձեր նշանածը... այլայլեց երիտասարդը. ուրեմն դուք նշանած էք:

Եւ այնքան վշտալից էր նրա ձայնը, որ Իմման յուզմամբ փակեց ալբոմը և ասաց.

—Ծնողներս են սահմանել... բայց ես նրան չեմ սիրում և երևի երբէք էլ չեմ սիրել...

—Դուք ոչ ոքի չէք սիրում ուրեմն, ասաց Սուրէնեանը:

—Ե՜ս... թոթովեց Իմման մեղմաձայն—ինչպէս ասել ձեզ... գուցէ սիրում եմ. բայց ինչ օգուտ:

—Երևի վատ մարդու էք սիրում:

—Ո՛չ, խնդիրը նրանումն է, որ գուցէ նա ինձ չէ սիրում. ասաց Իմման ու նորից ալբոմը բաց արաւ:

—Բաւական տխմար պիտի լինել, խօսեց Սուրէնեանը դողդոջուն ձայնով, ձեզ չըսիրելու համար... պէտք է սիրտ չունենալ...

—Սիրտ, ասաց Իմման—ամեն ոք ունի այդ մսի կտորից. սակայն այն ինչ որ կոչւում է սէր՝ կարող է մէկը մի կերպ ըմբռնել, իսկ միւսը ուրիշ կերպ:

—Իսկ դո՞ւք ինչպէս էք ըմբռնում:

—Ես ձեզ այդ ասել եմ... երեկոյթի օրը ասացի. ես կըցանկանայի որ ինձ սիրէին խորունկ, անհուն, անյագ և կիզիչ սիրով... որովհետև ես էլ այդպէս միայն կարող եմ սիրել. մի սէր, որ քաջութիւն ունենայ մինչև վերջին շունչը մարտնչել բոլոր նիւթական կամ աննիւթական խոչընդոտների, ամբողջ բնութեան, բոլոր հանգամանքների դէմ և քանի մարտնչի՝ այնքան խորունկանայ, այնքա՜ն անյագ և կիզիչ դառնայ...

—Իսկ մարդի տանջանքը...

—Տանջանքը սիրոյ մէջ նոյնքան նրբացնում, բովում է մարդու՝ որքան սէրը. նրանք կարծես կատարելագործում են, բարձրացնում զգացմունքները: Եւ ինչու է տանջւում սիրողը, եթէ նա հեռու չէ իր ընկերից և եթէ երկուսն էլ հաւատում են միմեանց... Ես կուզէի մի ժամ իսկ հեռու չըլինել նրանից և հաւատալ նրան անհունապէս...

Սուրէնեանը մի վայրկեան լռութեամբ կռացաւ դէպի սեղանը և դողդոջ շրթերով ասաց.

—Ձեզ սիրել՝ նշանակում է անմահանալ...

Իմման, որ թիկունքը երիտասարդին էր տուել, դարձաւ յանկարծ ու ոտքի ելաւ գունատ։ Նրանց հայեացքները կայծ արձակեցին և երկուսն էլ ներքին անդուսպ մի մղումից դրդւած մօտեցան։ Սուրէնեանը բռնեց Իմմայի ձեռքը, յետոյ վայրկենական շլացման մէջ քաշեց դէպի իրան։ Իմման ջղաձգութեամբ կծկւեց նրա սրտի վրայ և սենեակի մէջ աղօտացող լոյսի տակ երկուսի ջերմ շրթունքները փնտռեցին միմեանց։

—Դո՛ւ, դու ինձ սիրում ես, մրմնջաց Իմման— այդ ճիշտ է ուրեմն, ես չէի խաբւել... ես քեզ եմ միայն սիրում, հասկանում ե՞ս. սիրում եմ այն տեղից, ա՛յն օրւանից, երբ էլէգիան միասին հասկացանք, երբ շոգենաւի վրայ իմ սիրտս բաց արի քեզ... իսկ դո՛ւ.

—Ե՞ս, ժպտում էր Սուրէնը—օ, ես որքան երազել եմ քեզ, որքա՛ն լցրել սիրտս քեզնով։

Եւ այդ էքստազային րոպէները անշուշտ երկար տեւեցին. ժամանակը գոյութիւն չունէր այլ ևս, երբ նրան սպանում էին համբոյրներով, գգւանքներով, երբ սէրն էր սաւառնում նրանց գլխի վերև։

—Դու իմն ես, չէ՞, ասում էր Իմման երիտասարդի գլուխը իր կրծքի վրայ պահած—այժմ բոլորովին իմը։ Տե՛ս, ես չեմ խորշում քեզնից. ոչ, քո ֆիզիկականը նոյնքա՛ն սիրելի է ինձ, որքան մտաւորը։ Ես այժմ կառնեմ կըտանեմ քեզ հեռու, այս բոլոր զզւելի, սպանիչ շրջաններից հեռու... Օ՛, ես այնքա՛ն դժբախտ էի, ձանձրացած. կեանքը այնքա՛ն անտանելի էր, որ եթէ դու չըհանդիպէիր ինձ, անձնասպան կըլինէի ազատւելու համար այս յիմար աշխարհից... մի աշխարհ, որ կարծես ցեխի կոյտ է և որի վրայ Աստծոյ սարդոնական ծաղրն է սաւառնում, որ անմտութեան, կեղծութեան և գարշանքի բոյն է... Ինձ համար ամեն ինչ դատարկ էր, անբովանդակ... մի էլէգիա բուն էր դրել սրտումս. մի բողոքող, անհունապէս ցանկացող էլէգիա, որ կրծում էր սիրտս Կովկասեան արծիւների պէս... Ա՜խ, բայց ինչե՞ր եմ ասում, ի՜նչ ալլանդակութիւններ. դու ծիծաղում ես, չէ՞, Սուրէն.

Երիտասարդը իբր պատասխան, մի ջերմագին, երկար համբոյրով փակեց նրա բերանը։

Այդ միջոցին էր, որ տան մէջ հնչեց մի զանգակի զօրեղ ձայն։

—Ընթրիքի զանգն է, ասաց Իմման քիչ շարժւելով— բայց հոգ չէ. դեռ մի քանի րոպէ ևս մի հեռանալ, այստեղ մօտս, սրտիս վրայ... օ, ես այժմ սկսում եմ սիրել այս ցեխային կոյտի մէջ ամեն բան. այժմ այնտեղ վարդեր եմ տեսնում, սիրտս ուռում է անհուն հրճւանքով և չեմ զղջացել որ ծնւել եմ... ահա և կեանքը... իսկ դո՛ւ, դո՛ւ, Սուրէն, խօսի՛ր, ինչո՞ւ ես լռել։

—Ես միայն հրճւում եմ, լուռ և երջանիկ և թւում է թէ այս երջանկութիւնը երազի մէջ է տրւում ինձ։

—Երազի մէ՞ջ... այո՛, գուցէ. ես միմիայն երազի մէջ եմ երջանիկ եղել, թեթևութիւն զգացել. որովհետև այնտեղ տեսնում էի իմ սէրը, կեանքը։ Քնոյ մէջ ես մի տեսակ ոգիացած, ազատ սաւառնում էի զգացմունքների աշխարհում և քեզ հետ... դեռ չըճանաչած՝ քեզ հետ էի. մի անորոշ, աննիւթ էակի, որ յետոյ մարմնացաւ... օ, այո, ինձ էլ թւում է երազ. բայց գուցէ այս է հէնց արթնութիւնը և այն բոլոր անցեալը մի վատ երազ էր, մի կոշմար, որ մաշում էր մեր գոյութիւնը... օ, մենք կըգնանք վաղը և եթ, կըգնանք հեռու, միասին, անբաժանելի և դու կըլրացնես ինձ... որքա՛ն, որքա՛ն սիրում եմ քեզ... խօ չե՞մ գժւել, Սուրէն, տես, գժւում եմ երևի։

—Հանդարտիր, Իմմա, ես քեզ հետ եմ և անբաժանելի. այդ գժութիւնը կեանքն է որ մտնում է մեր մէջ, մեզ ոգիացնում, մեզ երջանկացնում։

—Այո՛... եթէ միայն մի օր ևս և դու անշարժ մնայիր, եթէ այսօր չըկատարւէր, ես զգում եմ որ կըմեռնէի. զգացմունքները խեղդում էին ինձ. քանիցս ես ինքս կամեցայ գոռալ, աղաղակել որ սիրում եմ քեզ, որ ցանկանում եմ քեզ...

Ընթրիքի երկրորդ զանգը սթափեցրից երկուսին էլ, ջղային այդ դրութիւնից ազատելով: Էմման ոտքի ելաւ, հայելու մէջ շտկեց մազերը, յետոյ մտաւ Սուրէնեանի թեւը և երկնային մի ժպիտով ասաց.

—Գնանք այժմ ընթրելու, ես ոչինչ ուտել չեմ կարողանալու... և կամ գուցէ աւելի շատ ուտեմ. անշուշտ տարօրինակ եմ լինելու. Թող այդպէս լինի և թող ամէնքն իմանան որ աշխարհը ինձ համար այլեւս վարդեր է բուսցնում... գնանք:

Նրանք ելել սենեակից, անցնում էին նրբանցքով, սեղանատուն իջնելու համար: Այնտեղ էլ Էմման բաց չըթողեց երիտասարդի ձեռքը և խօսում էր, անընդհատ խօսում. իսկ Սուրէնը մոռացել էր անգամ թէ ո՛ւր էր:

Երբ ցած իջան և սեղանատուն մտան, բոլորն էլ իսկոյն նկատեցին Էմմայի փոփոխութիւնը, կարմրած, կայծեր արձակող աչքերից:

ԺԳ

Երբ վերջացրին ընթրիքը, բաւական երկար մնացին սրահում: Էմման նստաւ դաշնամուրի առաջ և Բէթհովէնից նւագեց. նստելուն պէս նա աչքովը հրաւիրեց Սուրէնեանին աթոռ առնել և իր կողքին տեղ բռնել: Չէր կամենում անգամ ցոյց տալ իր սէրը, բայց չէր անցել 15 րոպէ, որ բոլորն էլ իմացան ու խորհրդաւոր ժպիտով նրանց էին դիտում:

Շատ ուշադրութիւն չըդարձրին դրա վրայ ո՛չ Էմման և ո՛չ Սուրէնեանը: Մինչև ժամը ութը միմեանց կողքին՝ երջանիկ, սիրալիր խօսքեր փոխացին իրարու, ժպտեցին և երբ ժամը ութը զարկաւ, այն ժամանակ միայն Սուրէնեանը մտաբերելով ժողովը՝ ոտքի ելաւ:

—Ո՞ւր էք գնում, հարցրեց Էմման զարմացած.

—Ժողովի պիտի գնալ:

—Ա՛խ, այո .. գնանք ուրեմն:

—Օ՛, Էմմա՛, մէջ մտաւ միսիս Հարրիսընը որ լսել էր նրանց—մի՛ գնալ գիշերով և անծանօթ տեղ:

— Պ. Սուրէնը ինձ հետ է, նկատեց Էմման չորութեամբ —միասին էլ կըվերադառնանք... գնամ վերարկուս հագնեմ:

Յետոյ արագութեամբ բարձրացաւ և 5 րոպէից յետոյ երկուսն էլ նախ միմեանց կողքի, յետոյ, Մօն-Բլանի կամուրջից անցած՝ թեւ-թեւի, հանդարտ խօսակցելով գնացին դէպի Թէուսի սրճարանը, Բուլթ-դը-Կարուժ, որտեղ էր ուսանողների ժողովատեղին:

Համալսարանից ոչ-հեռու գտնւող այդ սրճատունը ունէր մի մեծ սրահ, ուր միշտ ժողովներ էին կազմում զանազան ընկերութիւններ, ի միջի այլոց նաև հայ և ռուս ուսանողները: Մի փոքրիկ բեմ կար միայն նրա մէջ, շատ աթոռներ, մերկ սեղաններ, պատերի վրայ հայելիներ և պատկերներ:

Եթէ հայ-ռուս ուսանողների ժողովը մի ապտակ դատելու, իրենցից մէկին գզգզելու խնդրով զբաղւելիս չըլինէր, գուցէ բազմամարդ չէր լինիլ: Բայց ապտակ ուտողի կուսակիցները ամեն հանդիպողի հրաւիրել էին և երբ Սուրէնեանն ու Էմման բակը մտան, հանդիպեցին Սերգօին, որ նախ զարմացած՝ շւէդուհուն նայեց և ապա ասաց.

—Ահագին բազմութիւն կայ, Սուրէն, սրահը լիքն է:

Սուրէնեանը Էմմային ծանօթացրեց նրա հետ:

—Դա էլ է ուզում ներկայ լինել, հարցրեց Սերգօն.

—Այո. ժողովը սկսե՞լ է.

—Նոր միայն նախագահ ընտրեցին Լեսկովին:

— Ուրեմն խնդրեմ մտիր և հարցրու թէ կարելի՞ է որ մի օտարազգի ուսանողուհի էլ ներկայ լինի, առանց ձայնի իրաւունքի:

Սերգօն ներս վազեց: Քիչ յետոյ, բաց դռնից լսեց թէ ինչպէս նախագահը զանգահարեց, լռութիւն խնդրեց և ռուսերէն լեզւով յայտնեց Սերգօի առաջարկը:

— Ո՛չ, ո՛չ, ձայնեցին շատ աղջիկներ — ի՞նչ գործ ունի օտարը մեր մէջ:

—Թող գայ, ի՞նչ կըլինի, գոչում էին ուրիշները:

—Պարոններ, խօսեց նախագահը—մեր այս ժողովը ընկերութեան նիստ չէ, այլ ընկերական դատաստան. ես կար-

ծում եմ որ արգելք չըպէտք է լինել ո և է անձի մտնելուն. չէ՞ որ նիստը դռնփակ չէ և ոչ-ուսանողներ այստեղ շատ կան։ Պէտք է ներս թողնել օտարուհուն։

— Շատ լաւ, թող գայ... համոզուեցին ամենքը։

Իմման ու Սուրէնեանը ներս մտան ծխով լի սրահը ու գնացին մի անկիւնում նստելու։ Բոլորը հետաքրքրութեամբ զննեցին շւէդուհուն, միմեանց ականջի փսփսացին և խորհրդաւոր կերպով ժպտացին։

Իմման դիտում էր այդ բազմութեանը վերին աստիճանի հետաքրքրութեամբ և անդադար բացատրութիւններ խնդրում Սուրէնեանից այս կամ այն աչքի խփող դէմքի մասին։ Շատերին նա տեսել էր հայկական երեկոյթի ժամանակ. բայց այսպէս միասին հաւաքուած, խումբ առ խումբ կիտուած յուզուած դէմքերի, լարուած հայեացքների նա երբէք չէր հանդիպել։

Ապտակ ուտողը նստել էր մի պատի տակ իր կողմնակիցների հետ գարեջրի գաւաթները առջևնին. այնտեղ էին կանանց մեծ մասը։ Նա այնքան յուզուած էր, որ ականջները դողում էին և գլխի երկար մազերը ցնցւում։ Դիմացի կողմը, նախագահից ոչ-շատ հեռու՝ Դանիէլեանն էր, նոյնպէս դունատ և շրջապատուած հայերով, որոնք բոլորն էլ գարեջուր էին խմում և մի տեսակ գրգռիչ բարկացայտ հայեացքով դիտում հակառակ բանակի անդամներին։

— Այդ որքա՜ն լարուած են միմեանց դէմ, ասաց Իմման Սուրէնեանին—այնպէս են նայում միմեանց, որ քիչ է մնում յարձակուեն և իրարու գզգզեն... ծիծաղելի է։

— Ծիծաղելի չէ, այլ ցաւալի, ասա՜ց Սուրէնեանը—տարիներով է որ կազմւել է այդ ատելութիւնը երկու կուսակցութիւնների մէջ, երկուսն էլ լաւ նպատակներ ունին, բայց երկուսն էլ ունին իրանց գրագոնները, որոնք իրենց կուսակիցներին գրգռում են միմեանց դէմ և օգնում գրգռի մեծանալուն...

Նախագահն այդ միջոցին ոտքի ելել, լռութիւն էր խնդրում և մեղմ ու հանդարտ ձայնով այսպէս խօսում.

— Պարոններ. ինձ հարկաւոր է բացատրել թէ ինչու ենք հաւաքուել այս երեկոյ և ինչով ենք զբաղուելու։ Ինչպէս տեսնում էք, այստեղ հաւաքուել են ո՛չ միայն ուսանողներ, այլ և կողմնակի հետաքրքրուողներ։ Ես ըմբռնում եմ այն զայրոյթը, որ շատերի դէմքերի վրայ նկարուած եմ տեսնում։ Ուսանողներից մէկը մի ժողովում ապտակել է միւսին։ Շարժառիթը հետևեալն է...

Սուրէնեանը արագութեամբ, որքան կարողանում էր, թարգմանում էր Իմմային՝ նախագահի խօսածը։

— ...Միտք էր ծագել— շարունակեց նախագահը—միացնել հայոց գրադարանը ռուսաց գրադարանին, թէ ծախսերը թեթևացնելու և թէ մի կենդրոն ունենալու համար. դա աւելի նպաստաւոր կլինէր անշուշտ հայերի համար, որոնք կարդում են նաև ռուսերէն թերթեր ու գրքեր։ Ինքնըստինքեան այդ միտքը վատ չէր, եթէ միայն այստեղ նախօրօք՝ հայերը միմեանց հետ համաձայնութիւն կայացրած լինէին։ Բայց, բոլորդ գիտէք, հայ ուսանողութիւնը Ժընէւում բաժանուած է երկու որոշ, և դժբախտաբար միմեանց գրեթէ թշնամի կուսակցութիւնների...

— Խնդրեմ, պ. նախագա՛հ, միջահատեց նրան յանկարծ մի կարճահասակ ուսանող—Մենք ո՛չ մի թշնամութիւն չունենք միմեանց հետ. գաղափարների խնդիր է...

— Լռեցէք, պարո՛ն, ասաց նախագահը—դուք ի դուր էք աշխատում մեզ կերպարանքի վերածել կատարւող փաստերի պատճառը։ Ես յիմար չեմ և ոչ էլ այստեղ ներկայ լինողները. վեց տարի է այստեղ եմ և ներկայ եմ եղել այդ կուսակցութիւնների կա՛զմւելուն... Ես շարունակում եմ, պարոններ... Ասացի որ հայ ուսանողութիւնը երկու որոշ կուսակցութեան է բաժանուած և այդ կուսակցութեան անդամները գրեթէ միմեանց հետ խռով են. միմեանց տուն չեն գնում, միմեանց դէմ նոյն իսկ անձնական կռիւ են մղում, միմեանց կեղտոտում ամեն կերպով...

— Խնդրից շեղւում էք, պ. նախագա՛հ, գոչեց մի օրիորդ։

— Ներեցէք օրիորդ, ասաց նախագահը—դուք պիտի տես-

նէք որ ես դէպի ճիշտ նպատակն եմ գնում և բարի եղէք լսելու... Այսպէս, այդ երկու կուսակցութիւններից մէկը իր վրայ է վերցնում դրագարանների միացման հարցը պաշտպանելու և, եթէ չեմ սխալւում, հէնց ինքն է ստեղծում նրան ու մէջ տեղ ձգում...

—Ի հարկէ, ասաց նորից կարճլիկ ուսանողը—մենք ենք մտածել այդ:

—Շատ լաւ: Ստեղծելով հարցը, նրանք փոխանակ նախօրօք խորհուրդ անելու հակառակորդ կուսակցութեան անդամների հետ, քանի որ գրադարանը գրեթէ նրանց հիմնածն է և նրանց հարստացրածը... փոխանակ նախօրօք իրանց միտքը յայտնելու միւսներին, պահանջում են ժողով կազմել և հարցը մէջ տեղ դնել... Միւսները, ի հարկէ, որոշ միտումներով, որոնց ես չեմ շօշափում, ընդդէմ լինելով միացման, սկսում են հակառակել: Գալիս է ժողովի օրը. միացման միտքը արծարծողներից մէկը ընդլայնում է իրանց պահանջը և վիճաբանութեան ենթարկում: Ընդունեցէք, պարոններ, որ երբ մի հարց ենթարկւում է վիճաբանութեան, այնտեղ այլ ևս համբերութիւն պէտք է լսելու առարկութիւնները... բայց տեսէք թէ ինչ է տեղի ունենում: Սմբատեանները—միացման խնդիրը պաշտպանողները—փոխանակ փաստերով, համոզիչ միջոցներով հարցը պաշտպանելու, սկսում են դիմել ծաղրածութեան... Պահանջում եմ չ'ընդհատել խօսքս, ապա թէ ոչ՝ նիստը կփակեմ... Նրանց ակներև քաջալերական խօսքեր բացագանչելով հանդերձ՝ երբ իրենցից մէկն է խօսում, շատ ակներև կերպով ծամածռում են և ծաղրել սկսում, երբ հակառակորդներից մէկն է ճառում: Ի նկատի ունեցէք և այն, որ Սմբատեաններից ոչ մէկը բարեկամ չէ միւսներին. շատերը մինչև իսկ չեն խօսում նրանց հետ: Այդ չըխօսողներից մէկն է և պ. Կարապետեանը. նա բոլորովին խռով է Դանիէլեանի հետ. տարիներ է որ նրան մի բառ չէ ուղղել, մի բարև չէ տւել և յանկարծ, ժողովի մէջ, երբ Դանիէլեանը խօսում է, բաւական չէ որ Սմբատեանները ամեն տեսակ ծաղրաբանութիւններով, ակնարկներով ու ցոյցերով գրգռում են ճառողին, այլ և պ. Կարապետեանը ուղղակի կանգնում է և մի նախատական խօսք նետում դէպի Դանիէլեանը. մի կծու ծաղրաբանութիւն, որ արձագանք է գտնում իւրայինների մէջ և ընդհանուր քրքիջ՝ ծայրայեղութեան հասցնում Դանիէլեանի գրգռականութիւնը: Սա համբերում է մինչև ժողովի վերջը միշտ յուզւած և բարկացած, յետոյ, նախօրօք ասած լինելով որ նրա հետ իր հաշիւը կըտեսնէր, մօտենում է Կարապետեանին և ապտակում... Պ. Կարապետեանը չէ պատասխանում ապտակին, այլ հարցը ձգում է ընկերական դատաստանի: Մենք, նրա ընկերները, որ նոյնպէս և ընկեր ենք ու սիրում ենք Դանիէլեանին, այսօր հաւաքւել ենք այստեղ, եղած վիրաւորանքը դատելու... Նախ քան խօսքս վերջացնելը, ժողովի ուշադրութիւնը հրաւիրում եմ այն կէտի վրայ, որ հարկաւոր է խիստ զգոյշ լինել. այստեղ կան խիստ գրգւած մտքեր, անհամբեր բնաւորութիւններ, անձնական հաշիւներ, որոնցով ոչ մի ազնիւ մարդ չըպէտք է ղեկավարւի, երբ դատում է ուրիշի պատիւը: Լինենք օբեկտիւ, պարոններ. ահա իմ խորհուրդը:

Իմման, որ լսում էր Սուրէնեանի թարգմանածը, խիստ հետաքրքրւեց հարցովը, բայց վախեցած էր դիտում այն գայրացած, գրգռւած դէմքերը, որոնք երևում էին ամեն կողմից: Ոչ ոք հանդարտ չէր. ամենքը կարծես խօսել, գոռալ, կռւել էին ուզում:

—Անշուշտ կռիւ է լինելու. շշնջաց նա:

—Գուցէ... չըվախենաս ոչնչից:

Իմման գունատ էր. անշուշտ վախենում էր:

—Շատ ցաւում եմ, ասաց նա—որ այսքան լաւ դէմքերով և համակրելի անձեր այս րոպէիս, իրանց ինստինկտների մղումով՝ պիտի յիմարութիւններ գործեն...

Նախագահը խօսքը տւել էր մի հասակաւոր ռուս կնոջ, որ ընդհանուր լռութեան մէջ ոտքի ելաւ իր սեղանի առաջ, ձգեց ձեռքի պապիրոսը և հանդարտութեամբ ասաց.

—Ես գտնում եմ, պարոններ, որ այստեղ կատարւած է մի վայրենութիւն: Մի ուժեղ անձ ապտակել է մի թոյլի.

նայեցէք պահ մի. չէ՞ որ Դանիէլեանը կարող էր անպատիժ կերպով ծեծել պ. Կարապետեանին... և սա իր թոյլ կազմուածքով նրան ոչինչ չէր կարող անել: Մնում է այժմ թէ այդ de facto վայրենութիւնը ինչո՞ւ է կատարուել: Ինձ յաճախ թուել է որ կան մի տեսակ անձեր, որոնց զէնքը միմիայն ծաղրաբանութիւնն է. չըկարողանալով տրամաբանել, պատասխանել ձեզ, սկսում են ծաղրել: Դա մի սուր զէնք է, որ ընդունակ է գրգռել ամենասառն անձին. և ես երբէք չեմ զարմանում, որ ծաղրողը ապտակ է կերել: Կուզէք ես ձեզ մի դէպք պատմեմ: Անցեալ տարի ես ծեծեցի մի կնոջ. զարմանո՞ւմ էք: Լաւ. դատեցէք: Վիճում էինք հասարակական մի խնդրի մասին. եթէ միտքս ինձ չէ մատնում, կարծեմ խնդիրը Մարկսի «Յաւելուածական-արժէք» (plus-value) թէօրիայի մասին էր. և որպէս բնական է, ես յիշատակեցի զանազան տնտեսագէտների—Րիկարդօի, Էնգէլսի և այլն ասածները: Բայց հէնց որ մի անուն էի տալիս, այդ կինը իսկոյն գոչում էր մի տեսակ վիրաւորիչ շեշտով «—Օ՛, Րիկա՛րդօ! ó, Էնգէ՛լս!» և այդ՝ ամեն անգամ, մի տեսակ վիրաւորիչ, գրգռող տոնով, որ վերջապէս համբերութեանս չափը լրացաւ, բայց ծայրայեղութեան հասաւ այն ժամանակ, երբ ես, չըգիտեմ ինչու, ինչ առիթով, «անտրօպօլոգիա» բառն արտասանեցի... «—Օ՛, անտրօպօլո՛գիա!» և շրա՛փ, շրա՛փ... նրա երեսը կարմրեցրի: Ինձ կորցրել էի բոլորովին. բռնեցին ձեռքերս. անմիտ կինը ապշել էր իմ վարմունքից. չէր էլ զգում որ այդքան կարող էր գրգռել. սովորութիւն էր դարձել ծաղրել և անպատիժ մնալ... յետոյ արդէն, երբ հանդարտել էի, զղջացի արածիս վրայ... Այո. տէօրիապէս ասում ենք որ պէտք է բարձր կանգնել, արհամարհել այդպիսի զէնքերով կռւողներին. բայց իրականապէս մենք էլ ջղեր ունինք և համբերութեան էլ՝ չափ կայ... Արդ, ես դատապարտելով հանդերձ Կարապետեանի վարմունքը, պարսաւելով նրան այդ տեսակէտից, մանաւանդ որ նա ծաղրել է մէկին, որի հետ խռով է—չեմ արդարացնում Դանիէլեանին: Նա, որպէս աւելի զարգացած ու խելահաս՝ քան Կարապետեանը...

Կարապետեանը ոստնեց տեղից այդ բառերը լսելով և գոռաց.

— Նա՛...

—Լռի՛ր, երեխա՛յ, ձայնեց կինը—Մենք ճանաչում ենք և՛ նրան և ձեզ. թողէք նորից այդ կծու յանդգնութիւնը, թէ չէ ինձ հետ գործ կ՚ունենաք... ինչ, դուք ուզում էք Դանիէլեանից գիտո՞ւն, խելահա՞ս համարուել... յիմարութիւն!... Այստեղ նա մէկէն իջեցրեց ձայնը և մեղմութեամբ շարունակեց.

—Ասենք գիտէ՞ք, Կարապետեան, ես ձեզ բոլորովին էլ չեմ իջեցնում. վիրաւորելու համար չէր որ ասացի. ես ծեր կին եմ, գրեթէ ձեր մօր չափ և յոյս ունիմ որ ասածներս իբր խրատ կ՚ընդունէք... իսկ դու, Դանիէլեան, սիրելիս, մեղմացիր, հանդարտուիր. սա քեզանից փոքր է, երիտասարդ է. ներեցէք միմեանց և թող գործը այդպիսով վերջանայ... Դէհ, որդի՛ք, եկէք համբուրուեցէք...

Բայց ոչ մէկը չըշարժուեց տեղից: Բարձրացաւ մի ընդհանուր ծիծաղ: Ռուս կինը պահ մի սպասեց, նայեց ամենքին, յետոյ ձեռքը թափահարեց և

—Ну, и чертъ съ вами (սատանան ձեզ հետ) ասաց—այժմ գզգզեցէք միմեանց այնքան՝ որ խելքներդ գլուխներդ գայ:

Յետոյ նստեց ու ծիծաղելով աւելացրեց բարձրաձայն, խօսքը ուղղելով իր կողքի ուսանողուհիներին.

—Ես ուզում էի գործը հաշտութեամբ վերջացնել. սատանան նրանց հետ այսուհետև...

Ռուս կնոջ խօսքերը մի տեսակ հանդարտութիւն բերաւ գրգռուած մտքերին. շատ դէմքեր ժպտում էին. սրախօսութիւններ սկսեցին ամեն կողմից:

—Լռութիւն, պարոննե՛ր, ասաց քիչ յետոյ նախագահը—ես խօսքը այժմ տալիս եմ պ. Դանիէլեանին:

—Դանիէլեանի՛ն, ձայնեցին Սմբատեաններից—նա իրաւունք չունի խօսելու:

—Լռութիւն... կրկնեց նախագահը—պէտք է թողնել որ նա բացատրի իր վարմունքը:

Դանիէլեանը ոտքի ելաւ, ուղղեց ակնոցները որ այդ երեկոյ դրել էր և գունատ ու գրգռուած՝ սկսեց.

—Պարոննե՛ր...

—Չըթողնել նրան խօսելու, չըթողնել... գոչեց Կոլեան որ նստել էր Սմբատեանների մէջ:

Դանիէլեանը նախ պահ մի զարմացած նայեց նրան, յետոյ դէմքը դարձրեց և շարունակեց.

—Ես հարկ եմ համարում...

—Շ՜շ՜շ՜շ՜... մի՛ թողնէք խօսելու, գոռացին այլ և այլ կողմից:

—Իսկ ես պիտի խօսեմ, բացագանչեց Դանիէլեանը՝ բըռունցքը սեղանին խփելով—լռեցէք, ամբո՜խ...

—Եւ դեռ թողնո՞ւմ էք այդպիսի անձի խօսելու, ձայնեց Կոլեան ոտքի ելնելով:

Դանիէլեանը կատաղեց. խլեց սեղանի վրայից, իր առջեւ դրուած գարեջրի ծանր գաւաթը և շպրտեց դէպի նա. բարեբախտաբար, երկար լինելով, իր աչքի ուղղութեամբ նետեց և գաւաթը փշուր փշուր եղաւ Կոլեայի գլխի վերև, ջարդելով մեծ հայելին, որի կտորները ցայտեցին դէպի ուսանողները, իսկ գարեջուրը ողողեց օրիորդների շորերը: Կոլեան էլ իր կողմից նոյն արագութեամբ շպրտեց դէպի Դանիէլեանը իր գաւաթը, որը ջարդւեց բեմի տախտակների վրայ:

Բարձրացան ճիչեր. աղջիկները խառնւեցին իրար: Իմման վախից գունատուած՝ վեր թռաւ և կպաւ Սուրէնեանին.

—Գնանք.. թոթովեց նա—այժմ իրարու վրայ կըյարձակւին:

Բայց իսկոյն մի քանի երիտասարդներ շրջապատեցին Դանիէլեանին, մի քանի օրիորդներ էլ Կոլեային: Սմբատեանները ոտքի ելան մի մի գաւաթով զինուած. Կարապետեանը մի աթոռ վերցրեց: Միւս կողմից, Դանիէլեանին շրջապատող հայերը առաջ եկան: Սերգօն կատաղութիւնից գլորեց սեղանը և ստոնեց մէջ տեղ. բայց նրան բռնեցին. իսկ Վահանը բռնել էր Բարսեղի թեւից և գոչում.

—Ո՞ւմ պէտք է խփել, ասա...

—Հանդարտեցէ՛ք, պարոննե՛ր, որոտաց մի հնչեղ ձայն—ամօթ է, ինչո՞ւ էք ստիպում որ ժանդարմ ներս գայ...

Մի քանի հոգի վազեցին դէպի սրահի տէրը, որ աղմուկը լսելով՝ ներս էր վազել և համոզեցին նրան որ ոչինչ չէր եղել, որ կըվճարէին վնասները և այլն:

Կանայք մանաւանդ աւելի աղմուկ էին հանում, վախեցած հաւերի պէս ճչալով և խառնւելով միմեանց ու վիրաւորական խօսքեր ուղղելով Դանիէլեանին:

—Վայրենի է, կատաղել է... Դո՛ւրս կատաղածին!...

Կոլեան, գաւաթը շպրտելուց յետոյ կարմրած, մի տեսակ, իր վարմունքից ամաչողի զզջացող ժպիտ դէմքին, աշխատում էր ազատել թեւերը օրիորդների ձեռքից և աղաղակում էր.

—Թողէք... ես մտադիր չեմ կռւել. մեղաւորը ես եմ, իրաւունք չունէի ես. ուզում եմ գնալ Դանիէլեանից ներողութիւն խնդրել:

—Ի՞նչ. գոռում էին նրա երեսին ի վեր Սմբատեանները

—Չե՛ս ամաչում. այդքա՛ն փոքրոգութիւն: Ամօ՛թ. մենք կարծում էինք թէ դու մարդ ես... Ուզում ես ներողութիւն խընդրել. արածիդ վրայ զզջացի՛ր իսկոյն... Թո՛յլ, բնաւորութիւն չունեցող!...

Եւ նրան չըթողին, շրջապատեցին ու դուրս տարան սըրահից: Գնալու ժամանակ մի ծիծաղելի դէպք պատահեց: Նըրանցից մէկը, ով գիտէ, ինչ յիշելով կամ ինչ մտածելով, յանկարծ դռան շէմքի վրայ կանգնեց, ոտքերի ծայրերի վրայ բարձրացաւ ու գոչեց.

—Թքե՛լ եմ ձեր ժողովի վրայ...

Ու իսկոյն անյետացաւ:

Այդ խօսքերը փոխանակ նեղացնելու, մեծ քրքիջի առիթ տւին. ասողը այնքան նմանում էր աքաղաղի և նրա ճիչը այնքան յիշեցնում էր «կու-կու-րիկու»ի, որ, չըգիտեմ ով, իբր պատասխան, սրահի մի անկիւնից ճչաց.

—Կուկուրի կու՜ւ!

Ու բարձրացաւ ընդհանուր մեծ ծիծաղ:

Վերջապէս նախագահը, ծիծաղը դէմքին ելաւ և ասաց.

—Պարոններ, նիստը փակուած եմ յայտարարում. այս անձնական թշնամութիւնները դատելը մեր գործը չէ…

Ու բոլորը շարժւեցան մեկնելու:

Իմման տեսաւ բոլորը, տեսարանը ճնշող ազդեցութիւն էր թողել նրա վրայ:

ԺԵ

Ժամը շուտով տասն կլինէր, երբ Իմման և Սուրէնեանը դուրս եկան սրճարանի սրահից: Երկուսն էլ լուռ էին և այդպէս լուռ քայլեցին մինչև Կորրատըրի փողոցը:

Այստեղ Իմման շտապեցրեց քայլերը և մեղմութեամբ մերժեց Սուրէնեանի առաջարկած թևը. յետոյ, երբ հասել էին Թոնի մանր կարմուրջներին, ասաց.

—Այնքան խառն ի խուռն մտածութիւններ սկսել են պաշարել միտքս, որ խօսել չեմ ուզում. ներիր. շուտ-շուտ գընանք. թէև չեմ մրսում շատ, բայց դողում եմ…

—Յուզուած ես. ասաց Սուրէնեանը:

—Յուզուա՞ծ… այո, ինձ թւում է որ յուզուած եմ. ծանր տպաւորութիւն թողեց ինձ վրայ այդ բոլորը… Յաճախ էք արդեօք դուք բոլորդ այդպէս կռւում և այն էլ չնչին պատճառների համար:

—Կարծեմ, ասաց կծու ձայնով Սուրէնեանը—կարծեմ ըրբանից աւելի վայրենութեամբ կռւում են ձեր Եւրոպայի ժողովներում, պարլամէնտներում, ուր գաւաթների փոխարէն՝ աթոռներ և դանակներ են շպրտում իրարու գլխի:

—Ի՞նչ համեմատութիւն. գոչեց Իմման,—մոռանո՞ւմ ես, որ կռիւ առաջացնող հարցերը մեր ժողովներում այդքան չնչին չեն. այնտեղ մի ամբողջ ժողովրդեան ճակատագրի հարցեր են տեղի ունենում և այնտեղ մարդիկ անձնական հաշիւներով շա՜տ քիչ են զբաղուած… բայց, այդ չէ ինձ յուզողը և… խնդրեմ ճիշտն ասա, ի՞նչ պիտի անեն հայրենակիցներդ, երբ աւարտեն և կեանքի մէջ մտնեն:

—Բացատրիր. ի՞նչ տեսակէտով ես հարցնում:

Իմման քիչ լռեց, յետոյ Սուրէնեանի թևը վերցրեց և տխուր՝ ասաց.

—Մի բան ճնշում է սիրտս… դեռ պարզ չըգիտեմ թէ ինչ. բայց ես շա՜տ կուզէի որ դու ինձ երկա՜ր խօսէիր հայրենիքիդ, նրա հասարակական գործերի, գործողների… ամեն բանի մասին և… մի բան, այդ բոլոր հայ ուսանողները, երբ աւարտում են, որև է օգուտ բերո՞ւմ են հասարակութեան, այդքա՞ն կըքոտ և այդքա՞ն ջերմութեամբ կռւում են ու է լուրջ հասարակական հարցի համար… պատասխանիր. ես զուցէ չեմ կարողանում աւելի պարզ արտայայտել միտքս:

—Ես հասկանում եմ. ասաց մեղմ ձայնով Սուրէնեանը—հասկանում եմ հարցդ և… և չըգիտեմ ինչ պատասխանել: Չըգիտեմ, ճշմարիտ, թէ արդեօք այդ պարոնները, որոնք այդքա՜ն կատաղի էին անձնական հարցերում, կըլինին՝ կատաղի նաև հասարակական կռիւներում…

Իմման սեղմեց Սուրէնեանի թևը, նայեց նրան ցածից վեր զննող, թափանցող հայեացքով և դողդոջուն՝ հարցրեց.

—Իսկ դո՞ւ… դո՞ւ ինչպէս… Ի՞նչ ես անում դու, ի՞նչ ես ուսանում, ի՞նչու, նպատակդ ի՞նչ է, ի՞նչ ես մտադիր անել, ի՞նչպէս գործել, ո՞ւր, ի՞նչ միջոցներով… մի խօսքով ի՞նչ է ծրագիրդ ապագայի մասին, ոչինչ չես ասել ինձ. իրաւունք ունիմ այժմ իմանալու:

Եւ սրտատրոփ ու յուզուած՝ սպասեց: Բայց, յանկարծ, երբ Սուրէնեանը պահ մի մտածելուց յետոյ ուզում էր պատասխանել, Իմման ձեռքը բարձրացրեց, արգելեց նրան և աւելացրեց.

—Ո՛չ. ո՛չ այստեղ և ո՛չ այժմ: Ես յուզուած եմ, լաւ լսել չեմ կարող. թող մնայ վաղը… Եւ գիտե՞ս, վաղը ես ուզում եմ Լողան վերադառնալ. իսկ դո՞ւ:

—Ես էլ կըգամ:

—Լողա՞ն… իսկ ուսո՞ւմդ:

Սուրէնեանը շւարեց ու լռեց:

—Ուսո՞ւմ. ասաց նա—ոչինչ այդ:

Իմման կանգ առաւ և դէմքը կընճռեց:

— Ի՞նչպէս թէ ոչինչ. դու ուզում ես կիսատ մարդ մնալ, չաւարտել. ուրեմն դու նպատակ չունիս:

— Իմ նպատակը դու ես միայն այժմ. ասաց Սուրէնեանը սիրալիր և սեղմեց նրա ձեռքը իր կրծքի վրայ:

— Այդ իր կարգին. խօսեց Էմման սառնութեամբ — բայց միայն այդ՝ բաւական չէ մի տղամարդի համար... Սակայն, գնանք... դու ինձ շատ տխրեցրիր .. նպատակ չունիս ուրեմն... չունէիր ուրեմն .. գնանք, տուն գնանք...

Եւ արագացրեց քայլերը տխուր ու լուռ:

Սուրէնեանը կէս վիրաւորուած, կէս ամօթից ճնշուած հետևեց նրան:

— Դու ինձ այլ ևս չե՞ս սիրում. հարցրեց նա Էմմային, երբ մօտեցել էին պանսիօնին:

Էմման ցնցւեց, կանգ առաւ դռան մօտ, երկար նայեց երիտասարդին, քաշեց ներս մթան մէջ, յետոյ լուռ՝ յանկարծ գրկեց նրան, դէմքը ծածկեց սրտի վրայ և սկսեց հեկեկալ:

— Ա՞յդ ինչ է. զարմացաւ Սուրէնեանը — լա՞ց ես լինում:

Էմման իսկոյն թողեց նրան և ասաց.

— Ո՛չ. ո՛չ, լաց չեմ լինում. ինչու լամ... բարի գիշեր. վաղը ժամը 11-ին ինձ մօտ եկ և կըխօսենք... եկ. իսկ առայժմ՝ բարի գիշեր...

Ասաց, սեղմեց Սուրէնեանի ձեռքը և արագութեամբ բարձրացաւ ու ներս մտաւ:

Սուրէնեանը մի րոպէ քարացած մնաց մթան մէջ: Չէր ըմբռնում Էմմայի յուզումը, այդպիսի վարմունքը: Չէր ըմբռնում ո՛չ նրա խօսքերի միտքը, ո՛չ հեկեկալը և ոչ էլ այդպէս սառը բաժանւելը:

Ի՞նչ էր ուզում աղջիկը. արդեօք պակա՞ս էր սէր ցոյց տալիս նրան: Չէ՞ որ այժմ իր միակ նպատակը այդ աղջիկն էր. միտքը և սիրտը միմիայն նրանով է զբաղւած, մոռացել էր և անտարբեր էր դէպի ուսանողները, նրանց ժողովը, նրանց հարցերը: Էմման նսեմացրել էր իր մտածութեան մէջ ամեն ինչ. այժմ միայն նա Էմմայի վրայ էր մտածում, միայն նրան...

Եւ այդ մինթէ չէր կարողացել հասկացնել տալ աղջկան. մինթէ նա դեռ իր սիրոյն չէր ուզում հաւատալ: Գուցէ կասկածում էր աղջիկը թէ նա սիրում է դեռ Մարթային, գուցէ մտածում էր թէ նրա սէրը անկեղծ չէ:

Բայց ո՛չ: Սուրէնեանը սրտի խոր, ուղեղի խոր անկիւնով զգում էր որ այդ չէր բոլորը: Ի՞նչ էր ուզում ասել Էմման «նպատակ չունիս ուրեմն... չունէիր ուրեմն» բառերով:

Չունէր, ի հարկէ նպատակ չունէր: Մարթայից յետոյ նրան թւում էր թէ այլ ևս չէր ապրում, այլ ևս ոչինչ չէր ցանկանում: Ամայութիւն էր զգում սրտի, գլխի մէջ, ձգտումներ չըկային այլ ևս. աշխոյժը կորցրել էր. քանիցս կամեցել էր մեռնել, քանիցս կամեցել էր ոչնչանալ, զգացել էր որ ոչինչ այլ ևս գոյութիւն չունէր իր համար... Եւ այդ ամայութիւնը այժմ շէնանում էր. Էմման եկել էր և վերադարձրել նրա մէջ՝ ապրելու ցանկութիւն, վերարտադրել աշխոյժը. այժմ Էմման էր իր միակ նպատակը. այո, նպատակ չէր ունեցել, բայց այժմ ունէր: Նա չէր ստել ասելով թէ Էմման է իր միակ նպատակը: Էմման իրեն կեանք էր ներշնչում, զգում էր որ ուզում է այժմ ապրել և նրա համար ապրել...

Երբ այդպէս մտածելով և տխուր տան հասաւ, Պօղոսեանը նոր էր եկել:

— Տեսա՞ր ինչ եղաւ. ասաց նրան Պօղոսեանը — խայտառակութիւն էր ճշմարիտ...

— Է՛հ, թո՛ղ... ընդհատեց տխրութեամբ Սուրէնեանը — ինձ բոլորովին չէ հետաքրքրում այդ բոլորը...

— Էգօիստ... ասաց Պօղոսեանը և լռեց:

Էգօիստ... այդ բառը կպաւ Սուրէնեանին: Էգօի՞ստ. ինչու այդ բառը. մինթէ նա միայն իր մասին էր մտածում:

— Այո. ասաց քիչ յետոյ Պօղոսեանը հանւելով — դու միշտ էգօիստ ես եղել, ինքդ քո մէջ ամփոփւել... Է՛հ, բայց, ամենից լաւ բանը դա է. ով էգօիստ չըլինի, նրա գլխին ու մէջքին ամեն հասնող կընստի...

Ու պառկեց և իսկոյն սկսեց խռմփացնել:

Սուրէնեանը սկսեց ճեմել սենեակում. ճակատը կընճռած

կանգ առաւ լուսամուտի առաջ և դուրսը նայեց: Դրսում ըսկսել էր թեթևակի ձիւնել. լուռ էր փողոցում, անցուդարձը լիովին դադարել էր. ժամը անշուշտ 11-ին էր արդէն: Ժընէւացիք շուտ են քնում և Ժընէւի փողոցները, գիշերուայ ժամը 11-ից յետոյ դրեթէ ամայանում են:

...Այո, ինքը-Սուրէնեանն էլ այդպէս էր մտածել և այդպէս էլ ղեկավարուել իր կեանքում: Նկատել էր որ աշխարհը էգօիստների բաժինն էր, որ էգօիստներին միայն յաջողւում է կեանք վարել և երջանիկ լինել և որ մեղմ, համեստ ու խեղճ մարդկանց «գլխին ու մէջքին ամեն հասնող նստում է»... Բայց չէ՞ որ, դրանով հանդերձ, ինքը ընկերվարական էր, Ցիւրիխի ընկերվարականներին մասնակցող, խօսող, այդպիսի մըտքերի պաշտպան, ջերմ պաշտպան. չէ՞ որ տարիների ընթացքում նրան պարզուել էին ընկերական ներկայ կազմակերպութեան շա՛տ անարդար կողմերը և նա ամեն անգամ յուզուած, զայրացած, այդ բոլորի դէմ, ոգևորուել էր Մարկսի, Էնգէլսի գրքերով, Բէբէլի, Լիբկնեխտի ճառերով. չէ՞ որ նա ջերմ կերպով գրել էր թերթերում և յարձակուել ա՛յն բոլորի դէմ, ինչ որ ճնշում է, ինչ որ զրկում է կամ հարստահարում:

Ինչո՞ւ ուրեմն այդպիսի հակասութիւն: Արդեօք էգօիստ էր ինքը, երբ կեանքի մէջ ղեկավարուել էր միայն այն մտքով՝ թէ հարկաւոր է միմիայն իր վրայ մտածել, խեղճ չըմնալ, գլուխ չըծռել ուրիշի... արդեօք դա էգօիստութիւն էր թէ ուտիլիտարիզմ լայն մտքով... Ուտիլիտարիզմ ըստ Բէնտհամի... Այո, նա յիշում էր թէ ինչպէս մի անգամ վէճ էր ունեցել մէկի հետ և պնդել որ մարդ աշխարհում որքան որ ալտրուիստ լինի, միշտ իր սեպհական օգտի համար է գործում: Որ իրան անձը ուրիշի համար զոհող մարդու մէջ իսկ սեպհական օգտի տեսակէտը կայ և որ մարդ ուրիշի լաւութիւն անելով՝ ստանում է անձնական բաւականութիւն — շահ, օգուտ...

Մտքերը սկսեցին խառնուել գլխում այդպէս անկապ, այդպէս անտրամաբանական կերպով... Չէր տրամաբանում այլևս. ինքն էլ զգում էր որ իր մտածածը ողորմելի էր, որ ո՛չ մի լօգիկայի չէր դիմանալ... բայց մտածում էր... և կարծես ուզում

էր արդարացնել իրան մի աներևոյթ հակառակորդի առաջ, ապացուցանել որ ինքը էգօիստ չէ, որ ամեն մարդ էգօիստ է, նոյն իսկ իր անձը ուրիշի լաւութեան համար զոհողն էլ մի տեսակ էգօիստ է — ուտիլիտարիստ է, որ լաւութիւն անողը՝ անում է իր օգտի, իր բաւականութեան համար և որ այդ բոլորը յիմար բան է... բայց ինքը երբէք էգօիստ չէ...

Եւ վերջապէս ինչու չըլինել էգօիստ... ինչու չապրել իրեն համար. չէ՞ որ ով իր անձը մոռանայ, ուրիշի էլ կըմոռանայ. . Ահա մի առած՝ որ ինքն է ստեղծում, սակայն, թըւում է, որ յիմար առած չէ. այո, ով որ ուրիշի մասին է մըտածում, իր օգուտը, շահը, նոյն իսկ հոգեկան բաւականութիւնն աչքի առաջ ունի և ոչ թէ *զուտ ուրիշի* օգուտը: Ուրիշին տուած օգուտը, եթէ տուողի մէջ անձնական բաւականութիւն, շահ չըկայ...

Բայց այդ ու՞ր գնաց, այդ ինչ խառնաշփոթութիւն, խաոս սկսեց գոյանալ մտածութիւնների մէջ... Չէ, աւելի լաւ է պառկել քնել: Եւ սակայն ինչու այդ աղջիկը սառը վերաբերուեց իր հետ ու հեկեկաց, երբ նա յայտնեց որ իր միակ նըպատակը այժմ Էմման էր... ինչ էր ուզում ասել թէ «ուրեմն դու նպատակ չունէիր»... չըլինի դեռ չէր հաւատում, որ նա միայն իրան էր սիրում: Գուցէ կարծում էր թէ դեռ Մարթային է սիրում: Ուրեմն, պիտի ուրախանար՝ իմանալով, որ նա նպատակ չէ ունեցել և *այժմ միայն* ունի — Էմմային ունի... պիտի ուրախանար աղջիկը... բայց տխրել էր, սառը մնացել, մինչև իսկ լաց էր եղել... Զարմանալի է. մի աղջկայ ասում են որ իրեն են միայն սիրում և նա՝ փոխանակ ուրախանալու — լաց է լինում, տխրում է...

Չէ, այստեղ մի ուրիշ բան կայ: Այս էլ երկրորդ անգամն էր, որ Էմման տարօրինակ վարմունք էր ունենում: Մէկը՝ շոգենաւի վրայ, երբ յանկարծ դարձել էր և ասել. «Գիտե՞ք ինչու դժգոհ եմ ինձնից... որովհետև...». ուրիշ ոչինչ. ու դուրս էր թռել շոգենաւից: Առեղծուածական էր այդ: Ի՞նչու գոհ չէր իրենից. ինչու այժմ լաց էր եղել: Արդեօք մի գաղտնիք կայ. չըլինի այդ աղջկայ անցեալի կամ հէնց ներ-

կայի մէջ կայ մի գաղտնիք և նա խղճահարւում է, ուզում է ասել և չէ կարողանում։ Չլինի թէ ուրիշի է սիրում եղե… կամ ով գիտէ՝ ուրիշ ինչ…

Ու նախանձի մի խուլ, այրող զգացմունք սկսեց բուն դնել նրա սրտում։ Նախանձի օձը գալարւում էր։ Իմման ուրիշի գրկում, Իմման՝ ուրիշի համբոյրների տակ… Իմման իրեն խաբել էր ասելով որ ոչ ոքի չէր սիրել… Իմման այդպէս, ծածկամիտ, խորհրդաւոր… Մի բան կար այդտեղ. արդեօք ինչ…

Սկսեց շորերը հանել. աչքերը փակւում էին. զգաց որ յոգնել էր մտքի լարումից։ Պօղոսեանը խռմփացնում էր կանոնաւոր կերպով։ Վաղուց տան մէջ տիրում էր խորին լռութիւն։

Եւ այդպիսի խառն ի խուռն, ճնշող մտածութիւններ գլխի մէջ, Սուրէնեանը հանուեց, ճրագը փչեց և պառկեց։

Ձիւնը դրսում սաստկանում էր. լռութիւնը մեռելային էր դարձել. և ոչ մի շշուկ չէր լսւում, բացի Պօղոսեանի ռիթմային խռմփոցից…

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

Այդ տարի գարունը շուտ սկսեց Զուիցերիայում։ Գարնան սկսելու հետ ճանապարհորդները շատացան։ Շոգենաւերն ու երկաթուղու գնացքներ, լի անցորդներով՝ արագութեամբ յաջորդում էին միմեանց. կայարանները գրեթէ ամբողջ օրը լի էին։ Սպասում էին գնացքների, տեղաւորւած սրահների օթոցների վրայ։ Ամեն ազգից երևում էին. անգլիացիք իսկ սկսել էին հատհատ. Ֆրանսիայից, Աւստրիայից և Գերմանիայից խռնւում էին Ցիւրիխի, Բեօռնի, Լօզանի կայարաններում, գնացքներն արագ, սուլելով անցնում էին, և դատարկւում, լցւում անցորդներով… Զատկական տօները մօտ էին. այդ առթով էլ անց ու դարձն աւելի ստւարացել էր մանաւանդ զուիցերական Ցիւրիխ քաղաքի կայարանում, որը գրեթէ կեդրոնն էր դէպի ամեն պետութիւն գնացող երկաթուղու գնացքների։

Կայարանի երկրորդ կարգի սրահի մէջ շատ անցորդներ, իրենց կապոցների կողքին նստած՝ սպասում էին գնացքների. մէկը լրագիր էր կարդում, միւսը խմում էր, մի քանիսը խօսակցում էին, իսկ շատերը լուռ ու մենակ նստած՝ ձանձրանում էին։ Երբեմն միայն լսւում էր դռնապանի ձայնը, որ զանազան քաղաքների անունն էր տալիս և հրաւիրում այդ քաղաքները գնացող անցորդներին՝ տեղ բռնել վագոնում։

Հեռու, սրահի մի անկիւնում, թիկն տւած օթոցի թևին՝

նստել էր մի աղջիկ շատ պարզ հագուստով: Ոտքերի մօտ կար ճանապարհորդական պարկը և մի զամբիւղ: Այդ աղջիկը կէս ժամ էր որ այդտեղ էր, սակայն դեռ ոչ մի բառ չէր արտասանել. տխուր, լուռ, մտածութեան մէջ ընկղմած ու անշարժ, կարծես չէր տեսնում ոչ դուրս ելնողներին և ոչ էլ ներս մտնողներին:

Կապուտաչեայ սիրուն դէմքով գունատ աղջիկ էր, շատ վայելուչ հասակով: Դէմքը դրաւիչ էր և աչքերը երազող: Հագնուել էր սև, աղքատ, բայց մաքուր: Մազերը ետևի կողմից կարծես կտրուած լինէին, թէև դեռ բաւական երկար ու գանգուր՝ փռւում էին ուսերի վրայ: Գլխին ունէր սև, պարզ գլխարկ առանց զարդերի: Եւ այդ բոլորի հետ, կողքին դրուած մի գիրք՝ կարծել էր տալիս ամենքին թէ նա անպատճառ ռուս ուսանողուհի պէտք է լինէր:

Յանկարծ լսեց մի սուլոց, յետոյ թնդաց գետինը և կայարան մտաւ արագութեամբ մի գնացք: Պարիզի գնացքն էր, որ Ժընևից էր գալիս և կէս ժամ այդտեղ սպասելուց յետոյ պիտի անցնէր:

Իսկոյն յետոյ վագոնից դուրս թափուեցին Ցիւրիխ իջնող և կամ նախաճաշել կամեցող անցորդներ ու լցուեցին կայարան: Ռուս ուսանողուհին քիչ շարժուեց, սթափուեց և սկսեց գննել սրահ մտնողներին, երբ յանկարծ, նկատելով մի ներս մտնող օրիորդի, ցնցուեց ու գունատուեց:

Սրահ էր մտնում Էմման՝ ճանապարհորդական հագուստով, քիչ յուզուած ու գունատ: Մենակ էր բոլորովին և ոչ մի կապոց չունէր հետը: Ուրեմն Ցիւրիխ չէր եկել, այլ գուցէ Պարիզ էր գնում և իջել էր նախաճաշելու:

Ռուս ուսանողուհին աչքը նրանից չհեռացրեց, մինչև Էմման գնաց նստելու մի սեղանի մօտ: Յետոյ, մի քանի րոպէ վարանումից ելաւ, մի րոպէ էլ կանգնած դիտեց Էմմային կողքից և հանդարտ քայլերով գնաց դէպի նա:

Էմման սուրճ էր պահանջել և այժմ, գլխարկը հանել, ձեռքը ճակատին դրած՝ թևը սեղանին կռթնեցրած՝ ոչ ոքի

չէր նայում: Մտազբաղ, հոգսով լի դէմք ունէր և գունատ էր սաստիկ. երևի գիշերն էլ չէր քնել վագոնում:

Ռուս ուսանողուհին մօտեցաւ կամաց, ուրիշ կողմից մի աթոռ վերցրեց, դրեց Էմմայի կողքին ու ասաց մեղմ ձայնով.

— Կըներէ՛ք ինձ նստել այստեղ:

Էմման զարմացած անծանօթ ձայն լսելով, գլուխը բարձրացրեց և ուսանողուհուն նայեց: Յետոյ, երբ տեսաւ նրան, նախ այլայլուեց, ապա սառը կերպարանք ստացաւ և ասաց.

—Դուք ինձ հետ խօսե՞լ էք ուզում:

—Այո՛:

—Նստեցէ՛ք խնդրեմ...միայն ասեմ ձեզ որ յոգնած եմ:

—Տեսնում եմ, ասաց ուսանողուհին—դուք Էմմա չէ՞ք կոչւում:

—Այո՛. դուք ինձ ճանաչո՞ւմ էք արդէն:

Ուսանողուհին ժպտեց և գլխովը դրական նշան արաւ:

— Իսկ դուք, խօսեց Էմման—կարծեմ Մարթա էք կոչւում:

— Մարթա Կրէյսլէր...

—Մենք ծանօթ չենք միմեանց սակայն:

—Այո՛.. բայց չէ՞ք զգում որ կայ մի բան, որ մեզ ծանօթ է դարձրել միմեանց:

Էմման սառը, ոչինչ չըպատասխանեց: Մարթնա կարմրեց այդ լռութիւնից, բայց շուտով իրեն գտաւ և շարունակեց.

—Ես պարզ կըխօսեմ. չեմ սիրում ոլորապտոյտ ճանապարհներ և ոչ էլ նրբութիւններ...Դուք սիրում էք մի երիտասարդի, որը ինձ էր սիրում ձեզ ճանաչելուց առաջ..

—Եւ այժմ դուք նրան սիրում էք. միջահատեց Էմման կծու:

—Ի՞նչպէս. զարմացաւ Մարթան—ես այժմ նրան սիրո՞ւմ եմ.. ճշմարիտ, դուք ինձ վրդովում էք. ես նրան չեմ կարողացել և այժմ էլ... չեմ սիրում. այո, գրեթէ համոզուած եմ, որ չեմ սիրում:

—Բայց նախանձո՞ւմ էք. և այդ՝ սիրելու նշան է:

—Նախանձո՞ւմ եմ... ներողութիւն, դուք այն չէք, ինչ որ ես կարծում էի. ուրախ եմ որ սխալուած եմ:

—Դուք ինձ կարծում էիք սալոնական կոկէտ, հասարակ բաներով զբաղուած և սիրային խաղեր սիրող աղջիկ, այնպէս չէ՞։

—Այո. ճիշտ է. ասե՞լ են ձեզ այդ։

—Ասել են, և ես չեմ նեղացել. նախանձն է եղել ձեր մէջ խօսողը. դուք Սուրէնեանին դեռ սիրում էք. այդ երևում է։

Մարթան կարմրեց նորից և պահ մի լռեց, յետոյ յանկարծ երեսը շուռ տուաւ, նայեց լուսամուտից դուրս և ասաց.

—Դուք Պարի՞զ էք գնում։

—Այո. այդ ձեզ հետաքրքրո՞ւմ է։

—Շատ... կուզէի ձեզ հետ խօսել...երկար խօսել...ես էլ Պարիզ եմ գնում...իսկ Սուրէնեա՞նը. ո՞ւր է նա. փընե՞ւ մնաց։

—Ո՛չ. Լօզան է.

—Լօզա՞ն. ձեզ մօ՞տ...և չեկա՞ւ ձեզ հետ։

Էմման առանց պատասխանելու՝ զգալով սկսեց խառնել բերուած սուրճը և բաժակը բերնին տարաւ։ Մարթան ուշադրութեամբ զննում էր նրան։

—Արդէ՞ն...ասաց նա կռացած դէպի նա։

—Ի՞նչ արդէն. գլուխը բարձրացրեց Էմման և ժպտեց— սխալւում էք. նա ինձ հետ գալ չէր կարող. ես գնում եմ հիւանդ մօրս մօտ. իսկ նա ուսում ունի... այստեղ «արդէնի» ոչինչ չկայ...

—Անկե՞ղծ...

—Կեղծելու պէտք չունիմ. Սուրէնեանը ինձ սիրում է միշտ աւելի և աւելի։

—Իսկ դո՞ւք...

Էմման բարկացած շարժում գործեց։

—Բայց տարօրինակ էք դուք, օրիո՛րդ, ասաց նա նեղացած ձայնով—երկու րոպէ է, որ ե՛կաք բռնութեամբ ծանօթանալու ինձ հետ և ահա ուզում էք սրտիս մէջ էլ մտնել։

Մարթայի դէմքը գ՛ւարթացաւ, աչքերը փայլեցին.

—Ա՛հ, դո՛ւք էլ ուրեմն, գոչեց նա—դո՛ւք էլ...գիտէի որ այդ երիտասարդը ո՛չ մէկին սէր ազդել երկար չէ կարող... ինչ որ գիւային մի բան կայ նրա մէջ որ խկոյն գրաւում է, խկոյն և քիչ...յետոյ՝ ոչինչ. կարծէք ապառաժի, արտաքի-

նով ծաղկալից ապառաժի հետ գործ ունիք...Ուրեմն դո՞ւք էլ։

Էմման նախ զայրացաւ, բայց յետոյ, երբ սկսեց սուրճը խմել, զսպեց իրեն և ասաց չոր ձայնով.

—Օրիորդը սխալւում է. ես սիրում եմ նրան. թո՛ղ լինիմ սալոնական, բայց երբ սիրում եմ, սիրում եմ մինչև մահ... այդպէս ենք մենք, մեր սէրը ուժեղ է, որպէս մահ...

Մարթան նայեց նրա աչքերի մէջ։ Էմման ակնարկը համդարտ՝ չըհեռացրեց նրանից։ Մի րոպէ երկուսն էլ նայեցին միմեանց, ապա Մարթան բուռն շարժմամբ ուղղեց մազերը և ասաց.

—Գնացքի մէջ կըխօսենք...կուզէ՞ք...

—Ինչպէս կամենաք. ասաց անտարբերութեամբ Էմման և շարունակեց սուրճ խմել։

Մարթան ելաւ, գնաց իր պարկի մօտ, հաւաքեց, այնտեղ մազերը նորից շտկեց, ջղայնութեամբ մօտ գնաց սրահի դռան, դռնապանին մի բան հարցրեց, սեղանի վրայից մի լրագիր վերցրեց, նորի՛ց նստեց ցած և վերջ ի վերջոյ նորից մօտեցաւ Էմմային, որ սուրճ խմելով հանդիրձ՝ գաղտագողի տեսնում էր բոլորը։

—Շուտով նստել է պէտք վագոնում. ասաց Մարթան— դուք անշուշտ երկրորդ կարգով էք գնում։

—Այո..

Եւ չընայելով զսպածութեան, Էմման էլ անհամբերութեամբ սպասում էր մեկնելուն, որպէս զի խօսակցէր այդ աղջկայ հետ։ Շատ էր ցանկանում լսել Սուրէնեանի այդ անցեալ սիրոյ, առհասարակ նրա անցեալ կեանքի մասին։ Թէև նրան Սուրէնեանը շատ բան էր պատմել և ասել էր որ ոչինչ գաղտնի չէր թողել, այնուամենայնիւ նա ուզում էր Մարթայից էլ լսել. լսել այդ սիրոյ պատմութիւնը, սկզբից վերջը, լսել Մարթայի կարծիքը Սուրէնեանի մասին։

Մարթան սակայն, տեսնելով Էմմայի սառը վարմունքը, կարծում էր որ շնեգուհին գժգոհ Սուրէնեանից, չէր կամենում խօսել իր հետ, չկամենալով յուսախաբութիւնը յայտնել։

Եւ այդ տեսնելով՝ Մարթան աւելի ևս ցանկանում էր խօսել,

ամէն բան իմանալ, ամէն բան ասել, ուրախանալ Էմմայի «դժբախտութիւնով», յուսախաբութիւնով, մխիթարել նրա գրութեամբ:

Քիչ յետոյ սրահի դռնապանը զանգահարեց և ի միջի այլ անունների արտասանեց Պարիզի անունը: Էմման հանգարտութեամբ ելաւ, վճարեց սուրճի համար և քայլերն ուղղեց դէպի դուռը, մի անգամ միայն նայելով Մարթային: Սա յուզմամբ առաւ պարկը, դամբիւղը և քիչ հեռուից գնալով հետևեց Էմմային: Երկուսն էլ մտան մի վագոն և դէմ առ դէմ՝ տեղաւորուեցին մի լուսամուտի առաջ: Մօտը միայն մի ինչ որ քնաթաթախ պարոն էր նստած, որը քիչ շարժուեց, ապա դարձաւ մի կողի վրայ, գլուխը դէմ տւաւ նստարանի թևին և շարունակեց քնել:

Երկուսն էլ լուռ մնացին մինչև որ գնացքը կայարանից դուրս գնաց և արագացրեց ընթացքը: Երկուսն էլ լուսամուտից դուրս էին նայում, բայց երբեմն նրանց ակնարկները միմեանց էին հանդիպում և նրանք, վագոնի աղօտ լոյսով աշխատում էին զննել միմեանց: Մարթան մինչև իսկ մի տեսակ խուլ բարկութիւն զգաց, երբ տեսաւ որ Էմման գեղեցիկ էր և վերին աստիճանի գրաւիչ:

Երբ գնացքը արագացրեց ընթացքը, Էմման անտարբեր նրան նայեց և կարճ՝ ասաց.

— Խօսեցէք...

—Ես կուզէի ձեզ լսել. ասաց Մարթան — բայց, ըստ երևոյթին մեր մէջ մտերմական խօսակցութիւն տեղի ունենալ չէ կարող. ես ձեզ կխօսեմ այն երիտասարդի մասին, որ ձեզ է սիրում այժմ: Չըգիտեմ որքան յարմար բան է այս և որքան դուք կըհաւատաք ինձ, բայց պիտի խոստովանէք որ ես նրան աւելի լաւ եմ ճանաչում, քան դուք և ճանաչելով նրան, կասեմ, որ ձեր սէրը, եթէ մինչև այժմ չէ դադարել դէպի նա, երկար տևել չէ կարող:

—Եւ այդ անշուշտ ձեզ ուրախացնում է. ժպտեց Էմման:

Մարթան գլուխը երերցրեց տխրութեամբ.

—Ոչ, ասաց նա — դա ինձ տխրեցնում է. ես ափսոսում

եմ այդ երիտասարդին. լաւ մտածող գլուխ է և գուցէ լաւ մարդ. միայն նա ոչնչով առաւել չէ շատ սովորական մարդերից... գուցէ կաբինետային մի աշխատաւոր լինի... բայց ոչ աւելի... բայց ես ի զուր եմ այստեղից սկսում... Դուք նկատե՞լ էք արդեօք որ այդ մարդը իր զգացմունքներին կատարեալ գերի դարձող անձն է. նկատել էք անշուշտ. նա չէ կարողանում այդ թաքցնել և վատ է անում: Նրա սիրտը դատարկ մնալ չէ կարող. դատարկ սրտով նա ապրել չէ կարող. նրան հարկաւոր է սէր, սէրը մի պահանջ է նրա համար և նպատակ... առանց դրան նա ընկճւած, թոյլ, անպէտք մարդ է դառնում... Սխալ եմ մտածում արդեօք:

—Չըգիտեմ. շարունակեցէք. ասաց Էմման և զգում էր որ սիրտը սեղմւում է. այդ աղջիկը սկսել էր այնքա՛ն ճշտութեամբ վերլուծել Սուրէնեանին, որ Էմման վախենում էր:

—Շարունակեմ... Այս բոլորը ի հարկէ ես բացատրում եմ միայն պատճառով, որ յետոյ հասկանաք թէ ինչու ես նրան սիրել չըկարողացայ և թէ ինչու ձեր սէրը դէպի նա երկար տևել չէ կարող...

—Այդ ի զուր է, դէմքը կնճռեց Էմման — իմ սէրը դէպի նա՝ կըտևէ մինչև իմ կեանքի վերջը:

—Եթէ նոյն իսկ նա արժանի չըլինի.

— Ես նրան կըդարձնեմ արժանի.

—Եթէ նոյն իսկ տեսնէք որ նա միմիայն սիրել գիտէ և սիրելով՝ նա ամէն ինչ, ամէն ընդունակութիւն կըկորցնի:

—Սէրը չէ կորցնում և չէ իջեցնում, նա միայն բարձրացնում է:

- Դուք բանաստեղծում էք. ժպտեց Մարթան — մինթէ մի տղամարդի մէջ միայն սէրը դէպի ձեզ՝ կարող է գոհացնել ձեզ...

Էմման շրթունքները կծեց և ոչինչ չըպատասխանեց:

—Ես տեսնում եմ, շարունակեց Մարթան — որ դուք սալոնական աղջիկ չէք, որ ձեր մէջ կայ բարձր մի բան, գուցէ երազներ, ցանկութիւններ... Կարծում էք որ Սուրէնեանի մէջ գտել էք այն մարդը որ ձեզ հասկանայ և ձեզ լրացնէ... Դուք

նորից չէք պատասխանում. երևի դեռ չըգիտէք. երկուացել էք դուցէ։ Այդպէս էի ես էլ սկզբում։ Բայց յետոյ, սկսեցի ճանաչել նրան... Ես շարունակում եմ։ Այդ երիտասարդը գիտէ սիրել, խոր, նուիրուած և ջերմ սիրել, միայն նա բնաւորութիւն չունի—ահա բոլորը։ Բազմաթիւ վշտեր, դժբախտութիւններ և տանջանքներ կրող մարդը, օրիորդ, ենթարկուած է միշտ երկու ծայրայեղութիւններից մէկին. նա կամ դառնացած, ատող, կծու, վրէժխնդիր, բայց երկաթի պէս յամառ է լինում և կամ յեղյեղուկ, ողորմելի, վախկոտ և առանց բնաւորութեան։ Ազգեր իսկ կան, որ այդպէս են և այդ երիտասարդի ազգը բաղկացած է այդ երկու տեսակ տիպերից. Սուրէնեանը իր դարևոր ստրուկ և հալածուած ազգի զաւակն է...

—Դուք ուրեմն ճանաչում էք և նրա ազգ՞ը։

—Ճանաչում եմ. մի տարուց աւելի այդ երիտասարդը ինձ հետ էր. հարցնում էի նրա ազգի մասին. առաջ էլ ճանաչում էի շատերին .. բայց ուսանողների եմ ճանաչում ես. նրանցից ոմանք յամառ, կտրուկ ու կծու են, ոմանք յեղյեղուկ, իսկոյն ազդեցութեան տակ ընկնող, յաճախ վախկոտ և ողորմելի... Սուրէնեանը վերջին տեսակի տիպերից է, բայց որովհետև հըպարտ է, ուսած, երազող և լաւ մտածող՝ նրա մէջ սիրտն ու միտքը միշտ միմեանց հակասում են. այդ հակասութիւնից երիտասարդը դառնում է մի շիւղ՝ ալիքների մէջ ընկած... և սիրտը սակայն միշտ յաղթող է հանդիսանում... Երբ խօսում է, երբ մտածում, երբ պլաններով է ոգևորւում—նա սքանչելի է, բայց որ նա մտածութիւնից իրական գործի անցնի, որ իր պլաններից մէկը կարողանայ գործադրելու կամք ունենալ - ես դրա մէջ սաստիկ կասկածաւոր եմ... Սուրէնեանը միայն խօսքի մարդ է, ուրիշ ոչինչ և... չըզայրանաք—նա կորսուած է, եթէ ստիպուի գործնական կեանքի մէջ մտածել... Դուք ձանձրանում էք, դուցէ նեղանում ասածներիցս.

—Ո՛չ. շարունակէք։

—Ես բոլորը ասացի... Այժմ, մի ուրիշ բան։ Ես նրան և՛ սիրում էի և՛ չէի սիրում։ Երբ խօսում էր՝ սիրում էի, երբ պլաններ էր գծում և պարծենում որ պիտի գործադրի՝ չէի հաւատում և խորշում էի, երբ նա հեռու էր—ինձ ներկայանում էր որպէս մի բարձր էակ, երբ մօտ էր լինում և գէրի, մինչև իսկ ողորմելի դառնում սիրոյ մէջ՝ խորշում էի։ Նա խղճալի, մանուկ, թոյլ արարած էր դառնում իմ համբոյրների տակ և դա ինձ խորշեցնում էր. կինը չէ սիրում թոյլ, մանուկ, ողորմելի տղամարդկանց. կինը չէ սիրում որ իր ոտերի առաջ գերիի, ստրուկի պէս համբոյր և սէր հայցեն. կինը սիրում է նըրան, որի մօտ ինքը ստրկութեան չափ սիրելու կարող է իջնել... Չըգիտեմ, այս հասկանալի է ձեզ։ Կինը սիրում է առիւծի և սիրել չէ կարող ոչխարի...

Խմման յուզուած էր, բայց և ո՛չ իսկ Մարթային էր նայում. լուսամուտից դուրս ակնարկը սևեռած, ոչ մի բառով չըպատասխանեց խօսողին։ Վերջին խօսքերից յետոյ Մարթան լըռեց և սպասեց պահ մի. յետոյ, երբ տեսաւ որ իրեն չէին պատասխանում, հարցրեց նորից.

—Ես ձեզ ձանձրացնում եմ։

Այն ժամանակ Խմման դարձաւ ու ասաց.

—Ո՛չ... բայց այդ բոլորը դուք ինչ նպատակով էք ինձ ասում։

—Երևի դուք կարծում էք թէ յետին մտադրութիւններ ունիմ. ժպտեց Մարթան—դուք ինձ ի հարկէ չէք ճանաչում.. և թւում է գուցէ, որ ես կամենում եմ ո և է ձևով սառեցնել ձեզ Սուրէնեանից...իրաւացի չէք լինիլ, եթէ այդպէս մտածէք...Ասածներս ո՛չ մի նպատակ չունին։ Սուրէնեանին ճանաչելուց ի վեր, ո՛չ նրան և ոչ մի ուրիշի չեմ ասել այս բոլորը. ո՛չ ոքի չէր կարող հետաքրքրել. չէին հասկանալ ինձ...դուք պիտի որ հասկանաք...սակայն, եթէ դուք վիրաւորւում էք, կամ կարծում էք թէ որոշ դիտաւորութեամբ եմ ասում այս բոլորը՝ այն ժամանակ ես կըլռեմ...բացի դրանից, ես գրեթէ ամեն բան ասացի...և Աստուած տայ որ սխալուած լինիմ և որ դուք էլ նոյն եզրակացութեան չըգաք...

—Սպասեցէք. խօսեց Խմման—այժմ ես ուրիշ բան կասեմ ձեզ. և կասեմ այն՝ ինչ որ Սուրէնեանն է ասել։ Արեւելքցու բուռն, անկատակ սիրով սիրել է նա ձեզ. իսկ դուք՝

սիրել էք նրան մտաւորապէս. իսկ ֆիզիքապէս՝ ոչ. բացատրեցէք ինձ, ես դեռ չեմ հասկացել. միթէ իսկապէս նա ֆիզիքական սէր ներշնչել ձեզ չէր կարողանում և այդ էր պատճառը որ դուք նրանից միշտ խորշել էք:

Մարթայի աչքերը նախ փայլեցին, յետոյ նա ցնցեց մազերը, ժպտեց և ասաց.

—Այո...ես այդ մասին ասացի ձեզ. նա ինձ ֆիզիքական սէր ներշնչել չէր կարող, որովհետև հակառակ իր խօսքերի, իր ձգտումների, նա ողորմելի էր, նա գալարւում էր ոտքերիս մօտ, համբոյր էր հայցում... այս հասկանո՞ւմ էք— անտանելի է...չէ՞ք հասկանում. շա՜տ աւելի լաւ ձեզ համար...ինձ ասել են որ ես փոքր ինչ անորմալ, հիւանդոտ աղջիկ եմ...շա՜տ կարելի է...բայց, եթէ նա ինձ չըհամբուրէր, եթէ նա չիջնէր ինձնից համբոյր հայցելու, սէր խնդրելու աստիճանի, ես կըսիրէի նրան...

Իմման զարմացած աչքերով նրան նայեց.

—Դուք չէ՞ք ըմբռնում այդ... ժպտեց Մարթան—ո՛չ, չէք ըմբռնում...ես սէրը իբր ողորմութիւն չեմ կարող տալ, այլ իբր աւար. հասկանո՞ւմ էք. ինձնից պիտի խլել, պիտի ստիպել ինձ սիրելու. և ոչ թէ մուրալ...Սուրէնեանը սիրոյ մուրացկան է—ահա բոլորը և եթէ դուք այդպիսի մուրացկանների ընդունակ էք սիրելու—բախտաւոր էք. ես չեմ կարող. ինձ համար տղամարդը ուրիշ բան պիտի լինի. ինձ համար՝ տղամարդը, ինչպէս ուտելը, նոյնպէս և սիրելը ո՛չ թէ առաջին պլանի վրայ պիտի դնի իր նպատակների մէջ, այլ յետին. տղամարդը պիտի նպատակ ընտրի ո՛չ թէ սէրը, այլ ուրիշ բան...ուրիշ, աւելի մեծ, աւելի բարձր բան .. Սուրէնեանը ինձ չէր հասկանում և ես նրան չըսիրեցի. ես կարող եմ սիրել այն տղամարդին, որ կարմիր գոյն կունենայ և ո՛չ թէ սպիտակ, դեղին...

—Ի՞նչ...չըհասկացաւ Իմման—ինչ էք ուզում ասել:

—Ոչինչ...զսպեց իրեն Մարթան և քիչ յետոյ յանկարծ, դահավիժմամբ՝ շարունակեց.

—Ասացէք խնդրեմ, կարո՞ղ էիք սիրել մէկին, որ միայն ուտելու համար է մտածում..:ո՛չ...կարո՞ղ էք ուրեմն սիրել մէկին, որը միմիայն սիրելու և սիրոյ համար է մտածում...Դուք պիտի տեսնէք, Սուրէնեանը որկրամոլ չէ, բայց սիրամոլ է...Այժմ ամէն բան ասած է. եթէ քնել էք ուզում, բարի գիշեր...

Ասաց, արագութեամբ գլխարկը հանեց, պառկեց և գլուխը դրաւ նստարանի թիկունքի վրայ:

Իմման լռութեամբ երկար նայեց այդ տարօրինակ աղջկայ վրայ, յետոյ տխուր, սրտի խորքում վրդովւած՝ մի առ մի սկսեց յիշել նրա խօսքերը. վերլուծել թէ ո՞րքան ճիշտ էին նրանք և թէ ինչ տիպ էր այդ ռուս ուսանողուհին:

Գնացքը մտել էր Ֆրանսիա և արագութեամբ կտրում էր դաշտ ու ձոր, ֆշշացնելով անցնում գիւղերի կողքով, մտնում քաղաքներ...

Կէս գիշերից անց էր, որ Իմման վճռեց պառկել, երկար մտածեց պառկած, ապա քնեց:

Միւս առաւօտեան երբ զարթնեց, Մարթան չըկար. և ո՛չ իսկ նրա պարկը և զամբիւղը. սակայն դեռ Պարիզ չէին հասել:

—Ձեզ հետ խօսող օրիորդի՞ն էք որոնում, ասաց կողքին նստած պարոնը, որ երէկ երեկոյ, նրանց խօսակցութեան ժամանակ քնել էր:

—Այո՛, միթէ իջել է:

—Իջաւ. ժպտեց պարոնը—կայարաններից մէկում իջաւ:

—Բայց նա Պարիզ էր գնում...զարմացաւ Իմման:

—Գիտեմ... ինձ տեսաւ և իջաւ...

—Ձե՞զ... դարձաւ դէպի նա Իմման.

—Այո. միայն ես ուշ հասկացայ. շատ վարպետութեամբ իջաւ. իսկ ես այս կայարանում կիջնեմ...

Իմման ոչինչ չէր հասկանում այդ բոլորից:

—Դուք զարմացա՞ծ էք, նորից ժպտեց պարոնը—օրիորդին միթէ ծանօթ չէք:

—Նոր ծանօթացայ...

—Ահա՛ թէ ինչ...ուրեմն իմացէք որ օր. Մարթա Կրէյս-

կէրը վտանգաւոր յեղափոխական է... և ես հետևում եմ
նրան...

Ու այդ ասելով պարոնը, ելաւ, խիստ շնորհալի բարևեց
ու հեռացաւ դէպի հակառակ լուսամուտը։

Մի մտածողութեան ամբողջ նոր հորիզոն էր բացւում
Էմմայի առաջ. սկսում էր այժմ ըմբռնել թէ ինչու Մար-
թան չէր կարողանում սիրել Սուրէնեանին և թէ ինչու վեր-
ջինիս գիջող, հայցող սէրը չէր կարողանում յաջողութիւն գըտ-
նել ուրիշ աւելի մեծ գաղափարով տոգորւած ֆանատիկ կնոջ
մօտ...

Եւ խիստ տխրեց. զգում էր որ Սուրէնեանը հետզհետէ
փոքրանում, իջնում էր, հետզհետէ խղճալի երևոյթ ստանում...

Բ.

Լօզան. Ապրիլ 17.

Իմ թանգագին Էմմա.

Այսպիսի դատարկութիւն երևակայել չես կարող։ Քանի
գնացել ես, ոչ մի երջանիկ կամ ուրախ րոպէ չէ եղել ինձ
համար։ Վերադարձի՛ր շուտով։ Նամակներդ այնքան ուշ են
գալիս, որ յուսահատութեան մէջ եմ ընկնում՝ հազար ու մի
բաներ մտածելով։ Ահա տասն օր է, որ լուր չունիմ քեզանից։
Մայրդ ինչպէս է այժմ և ինչու յանկարծ Պարիզից վերադար-
ձաք այդ լեռնային երկիրները։ Ֆիօրդային աշխարհն ես գը-
նացել, ուր ցուրտ և սառնամանիք է տիրում և ուր գուցէ
սառում են սրտերն էլ։ Սրդեօք մոռացա՞ր ինձ, չե՞ս դադարել
սիրելուց. արդեօք ծնողներդ չըհամոզեցի՞ն քեզ։ Գուցէ նրանք
այլանդակ են գտնում որ սիրում ես մի հեռաւոր արևելցու...

Այս բոլոր մտքերը տանջում են ինձ, հանգստութիւն չեն
տալիս. վերջին նամակդ էլ այնքա՛ն կարճ էր, այնքա՛ն զուրկ
տաքութիւնից, որ այն օրից է վեր խենթանում եմ. այլ ևս
ոչ գիրք, ոչ գրիչ. ոչ մի բան չէ կարողանում մի րոպէ փա-
րատել յուսահատեցնող մտքերը։ Ես քեզ խնդրել եմ, շա՛տ

խնդրել, որ երբ կըդադարես ինձ սիրելուց, իսկոյն, կտրուկ և
առանց խնայելու յայտնես այդ մասին. խնայի՛ր ինձ, մի՛ տան-
ջիլ, ասա և վերջացրու ամեն բան։

Երբեմն էլ մտածում եմ որ գուցէ հայրդ այլ ևս չէ թող-
նում քեզ վերադառնալու. գուցէ լսելով իմ մասին, կամենում
է քեզ մոռացնել տալ ինձ։ Չէ՞ որ ես մի «կիսավայրենի արե-
ւելքցի» եմ, տարբեր բնաւորութեամբ, տարբեր հանգամանք-
ներով, աղքատ, որբ, առանց տիտղոսի, առանց օ և է ըն-
կերական դիրքի...մի մարդ, որ չըգիտէ ոչինչ իր ապագայի
մասին. մի մարդ, որի շնորհիւ ծնողներդ զրկւելու են իրենց
միակ աղջկանից... բայց գրի՛ր, եթէ այդպէս բան կայ. մի՛
խնայի՛ր, գրի՛ր բացարձակ։

Քեզ խոստացայ, որ ուրախ մնամ, որ ապահով լինեմ,
որ իմ կասկածոտ, գգայուն ջղերին սանձարձակութիւն չը-
տամ։ Բայց այլ ևս չեմ կարող. իմ ուրախութիւնը քո կող-
քին էր. իմ ջղերը հանգարտում են, կասկածանքս փա-
րատւում միայն այն ժամանակ, երբ տեսնում եմ քեզ։ Չես
հաւատալ եթէ ասեմ, որ քո այստեղ եղած ժամանակն իսկ,
երբ մի ժամ չէի տեսնում քեզ, հազար ու մի վատ կասկած-
ներ, յակամայից զբաղւում էին, տանջում, անտանելի դարձը-
նում իմ րոպէները։

Երբ նոր էինք ծանօթանում, ինձ ասացիր որ պէտք է
սաստիկ նախանձոտ լինիմ։ Այո, նախանձոտ եմ, կուզենայի
որ քո խորաքանչիւր ակնարկն ու ժպիտը միմիայն ինձ վրայ
հանգչէր, քո ժամերն ինձ պատկանէին։ Նախանձում եմ այն
ծաղկին, որ քո ձեռքի մէջն է, այն աստղին՝ որ քո ակնարկն
է գրաւում... Սա անշուշտ հիւանդութիւն է. զգում եմ, բայց
դարմանելու ընդունակ չեմ և տանջւում եմ։ Գիտեմ, կարող
եմ վերջապէս զզւելի, անտանելի դառնալ այս հիւանդութիւ-
նով, բայց սիրում եմ քեզ և այդ է իմ միակ արդարացումը։
Դու միայն կարող ես ինձ բժշկել կամ միացնել. երբէք իմ
կեանքն այդքան նւիրւած չէ եղել մէկին։ Ինձ երբեմն թւում
է թէ դու այդքան չես սիրում ինձ, որովհետև նոյնքան չես
տանջւում։ Հանգիստ սէր, «առողջ» զգացմունք ինձ հասկա-

նալի չէ. երբ մի կիրք բուռն է—նա «հիւանդային» (morbide) է. բայց բուռն կիրք չունենալ չեմ կարող. ստեղծւած եմ այդպէս...

Վերադարձիր, Էմմա, վերադարձիր։

Այս վերջին տասն օրւայ ընթացքում ինչե՜ր ասես որ չըծնէր գլխումս. ամեն ինչ խառնւում էր երբեմն, այլանդակութեան հասցնում մտքիս պատկերացումները։ Միայն, երբ մտածում եմ քո մասին, երբ երազում եմ քեզ, պարզւում են, կենդրոնանում խոհերս։ Երազում եմ յաճախ և երազների մէջ որքա՜ն հիանալի ես դու, որպէս ողխացած և որպիսի պաշտումով է, որ տեսնում եմ քեզ իմ մտային եթերի մէջ։ Երբ քեզնից լուր չեմ ստանում, յուսահատւում եմ, վախենում եմ քեզ կորցնել...

Այս օրերս սկսել եմ Նիցշէն կարդալ. չե՞ս զարմանում. յիշո՞ւմ ես թէ որքան վէճեր և խօսակցութիւն ունեցանք այդ փիլիսոփայի մասին։ Դու հիացած էիր նրա վրայ, մինչ ես, չըգիտեմ ինչու, խենթ էի համարում նրան և նրա ասածները, որոնք միմիայն կցկտուր լսել էի—խենթութիւններ։ Այժմ, Էմմա՛, յանկարծ ձեռքս ընկաւ «Այսպէս է խօսում Զրադաշտը» և կարդում եմ. կարդում եմ ու հիանում այդ խորին, բարձր շունչով գրւածքով, սքանչանում լեզւի և ոճի ճոխութեան վրայ։ Ինձ թւում է որ Նիցշէն, երաժիշտ Վագներն ու անգլիական նկարիչ Տուրնէրը դարուս այս կէսի մեծութեան երրորդութիւնն են կազմում։

Լսե՞լ ես Վագներին։ Անշուշտ լսած կըլինիս նրա հսկայական օպերաները։ Երբ առաջին անգամ ականջ դրի նրա աղմկալից, որոտացող, թնդացող կտորներից սկսած՝ մինչև հալւող ու նրբութիւնից ցնդող խաղերով երաժշտութիւնը—այդ ահաւոր ներդաշնակութիւնը քարացրեց, ցնցեց, ապա ապշեցրեց ինձ։ Շեփորները կերկերում են, գռնչում, հօ-բուաները (գործիք) մելամաղձոտ՝ հնչում, որսորդական փողերը թնդում, կլարինէտը՝ դայլայլում, հառաչում... և՛ որոտումն, և՛ քամի, և՛ փոթորիկ... ապա՝ խաղաղ ծփումն ձայնի ալիքների, մեռնող հառաչներ, վիօլօնչէլի ջղեր հալեցնող մրմունջը...

Լսե՞լ ես այդ բոլորը. չէ՞ որ դա մի անհաւասարակշիռ երաժշտութիւն է. մէկից միւսը ոստնող, անհանդարտ, մշտապէս յուզւող, ծայրայեղօրէն կրքոտ և ապա՝ ստւերների մէջ հանգչող օրօրոցի մօտ՝ մրմունջ, անհունութեան խորքերից հազիւ լսելի թրթռում առաքող սօսափիւն, հառաչ...

Դա Վագներն է. խենթ երաժիշտը, բայց բարձր, ամպերը պատռող, անհունութեան ձգտող։ Նոյնն է անգլիացի Տուրնէրը նկարչութեան, նոյնը Նիցշէն՝ փիլիսոփայութեան մէջ. նոյնն է նաև գոթական բոցավառ ճարտարապետութիւնը, այդ հոսանուտ, բիւրեղացած երաժշտութիւնը...

Անորմալութիւններ, զուցէ այլանդակութիւններ են դըրանք, բայց բարձր, խորունկ ու կրքոտ՝ ոլպէս իմ սէրը, իմ զգացմունքը. այլանդակ՝ բայց վսեմ. անհաւասարակշիռ՝ բայց բուռն, լափող, կրակոտ...

Յիշո՞ւմ ես. մեր—հայկական երեկոյթի օրը, երբ սանդուղքներից իջնում էինք՝ ասացիր. «Արդեօք ձեր հայուհիները գիտե՞ն ջերմագին, մինչև գերեզման՝ սարսափելի անվերջ ու ու կիզիչ կերպով սիրել»... Ես չըգիտեմ, Էմմա՛, թէ նրանք գիտե՞ն այդպէս սիրել, բայց գիտեմ, որ ես այդպէս եմ սիրում քեզ. չէ՞ որ արևելքցի եմ և իմ մէջ զգացումները թագաւորում են, կլանում ամբողջ էութիւնս...

Կոպէնհագէն. Մայիս 10.

Սիրելի Սուրէն,

Մի նամակ արդէն գրել էի քեզ, երբ քոնը ստացայ։ Շնորհակալ եմ զգացումներիդ համար։ Ինձ վրայ լիզուր ես կասկածներ տանւում. ես մի երկրի զաւակ եմ, ուր յամառութիւնն ու հաստատամտութիւնը զգացմունքների մէջ՝ առած են դարձել։

Բայց թողնենք առայժմ այդ. ուզում եմ գրել քեզ մի կարևոր խնդրի մասին։

Հօրս և մօրս պատմել եմ քո վերաբերութեամբ։ Նրանք

ոչ մի գաղափար չունեին թէ ինչ բան է հայը: Մայրս բոլորովին չէր էլ լսել այդ անունը: Հայրս հարցնում էր, օրինակ, թէ դու այն ազգից չե՞ս, որոնց մասին խօսում են Հերոդոտը, Քսենոֆոնը...«Մինթէ—ասում էր նա—այդ ազգը դեռ կայ և կրթութեան իսկ ձգտում է. չէ՞ որ նրանք լեռների բարձունքներում թաղած, բոլորովին վայրենի, դետնափոր խրճիթներում ապրող ցեղեր էին»... Լուսանկարդ երկար նրան զբաղեցրեց: Եւրոպայի համար տարօրինակ դէմքդ, ճակատդ ու աչքերդ պահ մի ապշեցրին բոլորին. մի ինչ որ վայրենի, բայց յեղյեղուկ կրակ էին նշմարում ակնարկիդ մէջ: Բայց հայրս պնդում էր որ կեանք ու խելք կայ նրանում և որ դու պէտի ընդունակութիւններ ունենաս: Մայրս միայն չէ հաւանում այդ «լեռնային կերպարանքն, որ վերին աստիճանի կասկածաւոր ու նախանձոտ սրտի տէր պէտի լինիս» և այլն:

—Ո՞րտեղից գտար այս վայրենուն, ասում է մայրս անդադար և հետաքրքրւում է թէ դու ինչպէս ես պահում քեզ մարդկանց մէջ, թէ՝ գիտե՞ս արդեօք քաղաքավարութիւն... մինչև իսկ պատմել տւաւ թէ ինչպէս ես ճաշում... Բաւական ծիծաղեցրեց մեզ խեղճ մայրս, երբ նմանեցրեց քեզ մի աֆրիկացու, աչքերը պսպղուն, շարժուն բբերով, շարժւածքները յախուռն ու կասկածոտ խօսակցութիւնը շտապ, կցկտուր, ըստումներով, անհաւասարակշիռ և բնաւորութեամբ անհաստատ...

Սկզբում հայրս աշխատում էր համոզել ինձ որ ետ կենամ այդպիսի «ծիծաղելի» սիրուց. մայրս մինչև իսկ լաց եղաւ, երբ ես պնդեցի, որ ուրիշ ամուսին չեմ կամենալու: Բայց ով է նա, գոչում էր հայրս—մի աղքատ, անյայտ երկրից և անորոշ ազգի որդի. ո՛չ մի ընկերական դիրք, անսովոր մեր հասարակութեան և անշուշտ անախորժ ուշադրութեան կեդրոն է դառնալու այնտեղ, ուր մտնի, և իր այլանդակութեան շնորհիւ գրաւել է մեր աղջկան»... Ի՛նչպէս դայրացել էր քեզ վրայ մի ամբողջ շաբաթ: Բայց մի օր, երբ նրա առանձնասենեակը մտայ, տեսայ որ բերել էր տւել հայերի մասին խօսող գրքեր, լրագիրներ և ուսումնասիրում նըրանց: Ինձ այնպիսի հարցեր է տալիս երկրիդ մասին, որ

չեմ կարողանում պատասխանել: Այժմ գրեթէ մեղմացել է, հաշտւել և չընայելով որ միշտ մի տեսակ դայրոյթով է խօսում, բայց հետաքրքրւում է քեզնով...

Այս բոլորը թող քեզ չվիրաւորի. շա՜տ բնական է:

Երկու օր առաջ, երբ էլի խօսում էինք հայերի և քո մասին, երբ պատմում էի քո կեանքն ու բնաւորութիւնը, հայրս յանկարծ ոտքի ելաւ, յուզմամբ մի քանի քայլ արեց և ապա ասաց. «Լա՛ւ, Էմմա՛, ենթադրենք թէ համաձայնութիւն տւի. մինթէ այդ կիսավայրենին խլելու է քեզ և տանելու աշխարհիս ծայրը»... Մայրս մի ճիչ արձակեց և գոչեց. «Երբէք, ես կըմեռնեմ եթէ Էմման գնայ նրա հետ այդ վայրենի և հեռաւոր երկրները»: Եւ հայրս մէկէն լըջանալով դարձաւ ինձ և խստութեամբ ասաց. «Գրի՛ր այդ հային, որ դու նրա կինը կըլինես մի պայմանով միայն. և դա՝ որ նա մնայ Եւրոպայում, մեզ մօտ և երբէք քեզ չըտանի արևելքում ապրելու. մենք կըմտածենք նրան մի ընկերական դիրք գտնել...

Ահա բոլորը, Սուրէն. այդ 'ի հարկէ, տխուր բան է, չըգիտեմ ո՛րքան դու համաձայն ես հօրս պահանջին, սակայն կ'ուզէի, որ դու գործելու ասպարէզ ունենայիր և չ'ընկնէիր գըռեհիկ, սովորական կեանքի հոսանքը. այդպէս չեմ կամենում տեսնել քեզ, այլ մարտնչող, շարժուն, գործող, առաջնորդող. այծ եմ ուզում դառնաս ո՛չ թէ ոչխար. ուզում եմ, որ առաջ ընկնես, ետևից քաշ տաս և ո՛չ թէ ետ մնաս և ուրիշի ետևից քարշ ընկնես... Չըգիտեմ, հասկանում ես ինձ: Ասում ես, որ սիրում ես ինձ. եթէ սիրում ես այդքա՛ն, իմացիր որ ես քեզ կարող եմ միայն սիրել այն ժամանակ, երբ մի բանով, մի գործով փայլես, երբ տեսնեմ, որ ուզում ես քայլել, շարժւել...

Միւս կողմից, Սուրէն, մի՛ նեղանալ եթէ ասեմ, որ կուզէի քեզ իմ կողքին ունենալ. զգում եմ որ վատ կըլինի քեզ համար, եթէ ինձնից հեռու լինես, այո՛, վատ կըլինի և... սիրում եմ քեզ, ուզում եմ մեծ տեսնել քեզ: Իսկ ինձ, հեռանալ հիւանդ մօրիցս, ինձ պաշտող հօրիցս, որի միակ նեցուկն եմ — հեռանալ դոցանից դժւար է, գրեթէ անկարելի: Մնում է ուրեմն միջին ճանապարհն ընտրել (ա՛հ, որքա՛ն ատում եմ

այդ «միջին» բառը)։ Չե՛ս կարող արդեօք մնալ մեզ մօտ. Հայրըս ազգեցիկ է և ունևոր. դժւար չէ նրա համար տեղաւորել քեզ մի յարմար ասպարիզում, իմ ուզած գործի մէջ, ուզում եմ որ հայրենիքիդ հետ կապեր ունենաս, մտածես, գործես նրա համար, բայց ինքդ ասել ես որ Եւրոպայում կան բոլորովին հաստատւած հայեր, որոնք գործում են և լաւ գործում ձեր դժբախտ ազգի օգտին։ Ի՞նչը ուրեմն արգելք կըլինի՝ մնալ մեզ մօտ։ Մենք 'ի հարկէ յաճախ թեթև ճանապարհորդութիւններ կանենք, ձեզ մօտ կըգնանք. ես ինքս հետաքրքիր եմ տեսնելու ամեն բան. ինքս կ'օգնեմ քեզ գործունէութեանդ մէջ։ Ոգևորւում եմ յաճախ և շա՜տ յաճախ, երբ մտածում եմ որ պիտի *գործեմ*. գործեմ, մտածեմ մի մեծ նպատակի համար, աշխատեմ... Օ՛հ, որքան աննպատակ է այս իմ կեանքը, անպէտք, դատարկ. իսկ երբ միասին կըսկսենք մտածել, ծրագիրներ գործադրել, շարժւել, երբ միասին կ'աշխատենք և երբ կըզգամ, որ գործում եմ... պիտի աւելի և աւելի սիրեմ քեզ, որ մտցրիր ինձ գործունէութեան, կռւի, մրցութեան և շարժման մէջ.. Մենք շատ բան կանենք Եւրոպայում. ես արդէն սկսել եմ պլաններ ստեղծել. փող չի պակասիլ. աշխոյժ այնպէս մեծ եմ զգում իմ մէջ, որ պիտի գործեմ տասը մարդու ուժով... բայց, առ այժմ, Սուրէն, գոնէ քանի կենդանի է մայրս, խնայենք նրան, ապրենք նրա մօտ, քաղցրացնենք նրա վերջին օրերը...

Գրէ՛ր շուտով, հայրս ուզում է քո համաձայնութիւնն ունենալ և ապա ինձ ազատ թողնել։

Շատ մի՛ տխրիլ, ես յոյս ունիմ, որ շուտով կըտեսնուինք։

Գ.

—Թողնե՛լ հայրենիքը... յիմա՛ր ես դու, եղբա՛յր... Թողնե՛լ ընդ միշտ այն վայրերն ուր ծնել ես, որոնց հետ կապւած ես ամբողջ ջղերովդ ու երակներովդ, որպէս ծառի արմատն իրեն սնուցանող ու ծնող հողի հետ, ուր իւրաքանչիւր հողի կտորը, բնութեան մասը սիրելի է մեզ և պաշտելի և ուր բազ-

մաթիւ խնկելի յիշատակներ կապում են մեզ իրենց հետ անբաժան և անքակտելի!... Դէ՛ն ձգիր նամակը. · կամ ո՛չ, նրա-տիր գրէ՛ր, գրիր որ դասալիքութիւն, ցածութիւն է թողնել Հայրենիքը մանաւանդ այսպիսի ժամանակ, երբ նա պէտք ունի իր իւրաքանչիւր կրթւած որդուն, որ պիտի գնայ գործելու, տանջւելու նրա համար, բովւելու վշտերի մէջ և իր մոխիրովն ուռճացնելու ապագայ վերակենդանման հողը... Գրէ՛ր, որ մենք պարտաւոր ենք մեր ուղեղի իւրաքանչիւր խորշը, ջղային իւրաքանչիւր մզումը տալ հայրենիքի օգտին, հայրենիքի անհուն թշւառութիւնն ամոքելու համար... Գրիր վերջապէս որ մենք տարիներով փայփայել ենք այն միտքը, թէ անցնելուց յետոյ կրակի և ջրի միջով, պիտի անմիջապէս, իսկոյն վերադառնանք Հայրենիք մեր նոր ուժերով և այդ ուժերը զոհ բերենք նրա՝ թշւառութեան և տգիտութեան մէջ տառապող զաւակներին...

Այսպէս էր խօսում զայրացած Վուլկանը Սուրէնեանին։ Նրա մօտ էր, երբ բերին Էմմայի նամակը։ Սուրէնեանը նախ կարդացել էր ցած ձայնով, յետոյ տւել էր Վուլկանին կարդալու և պատմել իր յարաբերութիւնը Էմմայի հետ։ Եւ Վուլկանը կարդալուց յետոյ նամակը, զգացել էր այն ներքին զայրոյթը, որը նա արտայայտում էր այժմ, այդպէս խօսքերով։

—Ո՛չ, գոչեց նա ոտքի ելած և ճեմելով սենեակում — ո՛չ, Սուրէնեան. կասեմ քեզ, որ եթէ դու մի ամիս էլ մնաս Եւրոպա, արանց դասալիքութիւն կըլինի, դաւաճանութիւն, մի այնպիսի ցած ոճիր, որի նմանը չէ արել ոչ մի ազգադաւ...

—Բայց, եղբա՛յր, պատասխանեց Սուրէնեանը — ինչո՞ւ ես այդքան տաքանում. մէկ լաւ մտածիր, արանց սար և անմիջական վճիռը ճշմարտութիւն ունի, արդեօք ես դաւաճա՞ն, դասալի՞ք կըլինեմ, եթէ նստեմ հեռու հայրենիքից և սակայն գործեմ նրա համար, մտածեմ նրա մասին։ Չէ՞ որ այդպէսներ շատ կան Եւրոպայի զանազան քաղաքներում. չէ՞ որ նրանք գործում են յօգուտ հայրենիքի. մէկը լրագրով, միւսը ծրագիրներով, երրորդը գրչով. և նրանք կարծեմ ոչ միայն դասալիք չեն համարւում, այլ և վայելում են ազգասէրների կողմից սէր, յարգանք...

—Լաւ չես մտածում, այո... կանգնեց նրա առաջ Վոլկանը և ձեռքերը դրեց գրպանների մէջ.—Ե՛կ, ուրեմն քիչ խօսենք այդ մասին. ես վաղուց է որ մտածել եմ այդ մասին, վաղուց է որ զգում եմ... ասա խնդրեմ, որքա՜ն օգտաւէտ են այն ծրագիրները, որոնք հայրենի երկրի անմիջական հանգամանքներից դուրս մշակւած, յաճախ սխալներ, սոսկալի հետեւանքներ ունեցող սխալանքների մէջ են ձգում ժողովուրդը: Ո՞րքան օգտակար են այն գրիչները, որոնք սալոնի սրգպջակներ են միայն արտադրում. այն լրագիրները, որոնք այլուր ընթացիկ հարցերից, օրական արագ փոփոխւող հանգամանքներից հեռու՝ ապարդիւն աղաղակների և բացագանչութիւնների ասպարէզ են միայն ներկայացնում, և յաճախ, այո, թըմբրեցնում այնպիսի զգացմունքներ, որոնց զրգռել հարկաւոր է իր տեղում, անմիջապէս, փոփոխւող, միմեանց յաջորդող պայմանների մէջ...

—Նկատողութիւնդ թւում է որ ճիշտ է...

—Ո՛չ թէ թւում է, այլ ուղղակի ճիշտ է... շարունակեց ուժգնութեամբ Վոլկանը—...Կամիլ Դիւմուլէնի մի ճառը ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ, նրա, ծառից պոկած և գլխարկի վրայ ցցած մի տերևը—շա՜տ աւելի գործեց, քան ամեն այլ տեսակ կրկնւած խօսքեր, խլացնող աղաղակներ կամ սոսկալի խօսքերը անդադար ծամծմող լրագրական կանչերը... Կրկնում եմ. կենդանի գործի հետ միացած խօսքի ազդեցութիւնը տասնեակ գրւած աղաղակներից աւելի է ներգործում. և, հեռւից գրւած սքանչելի կոչը, չարժէ մօտից խօսւած, ժողովրդի անմիջական տրամադրութիւնը հասկացող և նրանից օգտւող մի միակ նախադասութեան...

Սուրէնեանը լուռ էր և մտախոհ:

—Այժմ. շարունակեց տաքացած Վոլկանը.—Դու, դու, ինձ ասա տեսնեմ, ինչ պիտի անես եթէ նստես հեռու. հայրենիքիդ համար ինչ կարող ես անել: Աւելացնե՞լ այս կողմերում լոյս տեսնող հայերէն թերթերի թիւը. թերթերի, որոնցից ոչ մէկը կեանքին մօտ, անմիջական շփման մէջ չըլինելով, չէ կարողանում կատարել զգալի ծառայութիւն.. պիտի

նստես և անմիտ բացագանչութիւններ և փքուն ֆրազներ տեղաս մեր գլխին. ժողովրդի անմիջական կեանքի ուսումնասիրութիւնից հեռու՝ պիտի ճառե՞ր գրոտես քո փափուկ ու տաքուկ սենեակից, թէ՞ դու էլ մի նոր կուսակցութիւն կազմես և ընկնես միւսների հետ՝ մի ամօթալի կռւի մէջ... Ո՛չ, Աստուած պահէ մեզ այդ բոլորից. միթէ եկել ենք ուսանելու, պաշար ժողովելու հայրենիքում ծառայութեան, գործելու համար, թէ՞ ֆանֆարօնադ սարքելու այստեղ... Հը՞, կամ գուցէ մնում ես գնալու այս—այն քարտուղար մինիստրի դուռը, այս-այն դարձութեան համար հաւաքուած միտինգի մէջ պոռոտախօսելու...

—Ես կըծանօթացնեմ եւրոպացոց՝ հայի և նրա թշուառութիւնների հետ... ասաց Սուրէնեանը մեղմ ձայնով:

—Եւ դրա համար կարծում ես թէ Եւրոպա՛ պիտի նըս-տել: Որքա՜ն էք սխալւում դու և քո նմանները: Եթէ դու կարող ես այդ անել, չէ՞ որ հարկաւոր է քեզ այժմ ուսումնասիրել քո ազգակիցներիդ վշտերը. այժմ, երբ ուսում ես ստացել, երբ աշխարհայեցողութիւնդ, քննադատական ոգիդ լայնացել է, երբ ժողովրդի հետ անընդհատ շփւելով է միայն, որ կարող ես իմանալ թէ ինչ ես գրելու, ինչի հետ ծանօթացնելու:

—Ինձ թւում է թէ այստեղ նստելով էլ կարելի ձեռք բերել միջոցներ՝ մեր առօրեայ կեանքը ուսումնասիրելու համար:

—Ընթադրենք նոյն իսկ թէ կարելի է: Բայց միթէ այդ բաւական է. և մինչ հայրենիքումդ գործերն ու կեանքը սոսկալի, միթէ դու պիտի կարողանաս հանգստութեամբ հեռւից, նստած տաք սենեակումդ. փափուկ բարձերի վրայ, արձանագրել թէ թշուառութիւնն ու տգիտութիւնը, սովն ու այլ աղէտները քանի՜ հոգի կլանեցին եղբայրներիցդ. պիտի արձանագրես թէ ինչպէս կրթուած երիտասարդների պակասութիւնից, Եւրոպա ուսում ստացած և այնտեղ էլ տաք անկիւնի մէջ կծկուած փոքրոգի երիտասարդների շնորհիւ, հայ ժողովուրդը միշտ մնում է տգիտութեան, թշուառութեան և արիւնի մէջ... Ողորմելի, ողորմելի... և այդ բոլորը դու պիտի անես մի սղջկայ, մի օտար աղջկայ համար...

Մի տեսակ զայրացկոտ ոգևորութեամբ արտասանելով այդ խօսքերը, Վոլկանն ելել, յուզմամբ կռթնել էր թիկնաթոռի թևին և աչքերը բացարձակ՝ շանթահարում էին գլուխն կախ ու մատիտով թղթի վրայ խազխզող Սուրէնեանին։

—Ուրեմն, շարունակեց Վոլկանը—դու թողնելու ես փայփայած մտադրութիւնները, եթէ ունեցել ես, ուխտերդ, որ ծնած օրիցդ բնականաբար ունեցել ես, պիտի ունենաս—թողնելու ես այդ բոլորը, այլև այն պարտականութիւնները, որոնք քանի ուսումդ շատացրիր՝ այնքան բազմացան... և կուչ գաս մի տաք անկիւնում, փորդ հաստացնես, գոհ տաս բոլորը մի աղջկայ, արհամարհես մի ամբողջ հասարակութեան շահը քո կրքերից մէկի համար... Դա փոքրոգութիւն է, ցածութիւն, դաւաճանութիւն..

—Բայց հանդարտիր... ասաց Սուրէնեանը դողդոջուն—չէ՞ որ ես դեռ ոչինչ չեմ վճռել. ասացի քեզ որ հոգուս մէջ առեղծուած է գոյացել և այժմ... գրեթէ լուծում եմ... և երանի բոլորովին Եւրոպա եկած չլինէի...

Վոլկանը քիչ լռութեամբ ճեմեց սենեակում, յետոյ կրթնեց պահարանին և աւելի հանդարտ ձայնով ասաց.

—Այժմ փոքրոգութիւնն է համակում քեզ. կամքի ույժ, բնաւորութիւն չունիս... և մի աղջիկ խաղացնում է քեզ, ծիծաղելի դարձնում, ես չէի կարծում որ այդքան թոյլ կարող էիր լինել..

Եւ մի տեսակ նեղացած արհամարհութեամբ հեռանալով պահարանի մօտից, նստեց աթոռի վրայ։

Տիրեց փոքր ինչ լռութիւն։ Սուրէնեանը շարունակում էր ջղաձգօրէն խազխզել թուղթը։

—Եւ յետոյ, գիտե՞ս ինչ. յանկարծ խօսեց Վոլկանը—քեզ մի ուրիշ բան էլ կասեմ.. լսի՛ր ինձ։ Կարո՞ղ ես դու սրտեօք ստիպել մի գուլցերկիացու որ մտածի հայի պէս, մտածի հայի մասին և քո հայրենիքովդ զբաղուի, նրան սրտանց նուիրուի... Կարո՞ղ ես մի գերմանացուց սպասել որ նա կարող լինի հաճոյք զգալ հայ շրջանի մէջ, հետաքրքրուել հայկական ցաւերով, քե՛զ նման վշտանալ, ոգևորուել, քեզ նման կարօտել

երկրիդ... Անշուշտ ոչ, նոյն իսկ եթէ նա քեզ սիրելիս լինի շատ։ Չէ՞ որ սիրելուց բացի կան ուրիշ զգացմունքներ. չէ՞ որ սէրը միմիայն չէ բաւականացնում և չէ գոհացնում մարդու... Ա՛յն սէրը, որ յաւիտենապէս, մի օրինակ ոգևորուած զոյգի մէջ է ամփոփուած և կլանում է բոլոր միւս բաւականութիւնները, այն սէրը, որի հայրենիքը երազային աշխարհներն են միայն—այդ սէրն այնքա՛ն եսամոլական, այնքա՛ն այլանդակ է, որ գոյութիւն չունի.. այո, մարդս, սիրոյ զգացմունքից առաջ, ստանում է բնաւորութեան կազմութիւնը, իր ջղերով նախահաստատւում է մի հողի մէջ, սնանւում է նրանից, սիրում նրան... մի խօսքով լիովին կապւում է այն շրջանի, այն երկրի հետ, որի սնուցածն է և որի միջավայրի ազդեցութեան տակ է կազմակերպուել իր ջղային համակարգութիւնը.. Եթէ դու այդ չես հասկանում, եթէ դու այդպէս չես կարող զգալ, ողորմելի արարած ես, անպէտք, Փրագիոր միայն և չարժես որ քեզ սիրեն...

Ասաց ու զայրացած ոտքի ելաւ.

—Եւ... շարունակեց նա—այդ աղջիկը որի մէջ աւելի բարձր բան կայ քան քո մէջ, երկար չպիտի սիրի քեզ պիտի ատէ իսկ քեզ...

Սուրէնեանն այս անգամ վիրաւորուած ոտքի ելաւ և ուզում էր խօսել, երբ սենեակի դուռը կամացուկ բախեցին.

—Մտէ՛ք, ձայնեց նա նեղացած։

Դուռը կիսովին բացուեց։ Տանտիկինն էր գլուխը ներս պարզեց և ասաց.

—Մի հեռագիր է ձեզ, պարո՛ն

Հեռագի՞ր. մօտեցաւ Սուրէնեանը և յանկարծ գունատուեց—ո՞ւր է։

Այն ժամանակ սենեակ մտաւ հեռագրական ցրիչը և տուաւ հեռագիրը։ Ջղայնութեամբ ստորագրեց Սուրէնեանը ստացականի տակ, մի 50 սանտիմնոց տուաւ ցրիչին և երբ նա հեռացել էր, արագութեամբ բաց արաւ։

Վոլկանը նրան էր նայում և աշխատում էր դէմքի արտայայտութիւնից իմանալ լուրը։ Սուրէնեանի դէմքը հան-

դարտել էր և նա մի տեսակ մտախոհ կերպարանք ստացաւ կարդալուց յետոյ: Երբ երկու անգամ կարդացել էր, փակեց և դառնալով Վուլկանին՝ ասաց.

—Վաղը Փարիզ կերթամ:

—Փարիզ. ինչու, ինչ է եղել:

—Կանչում են. ահա հեռագիրը:

Յետոյ բաց արաւ և կարդաց հետևեալը.

«Փարիզ ենք հօրս հետ. ցանկանում ենք քեզ տեսնել. կըսպասենք շուտով Գրանդ-Օտէլ հիւրանոցում. անմիջապէս եկ: Իմմա»:

Կարդալուց յետոյ երկուսն էլ մի րոպէ լռեցին: Վուլկանը, որ մինչև այդ ժամանակ չէր ծխել դեռ, վառեց մի պապիրոս, յետոյ ուշադրութեամբ նայեց Սուրէնեանին և հանդարտ՝ ասաց.

—Այդ աղջիկը, իր նամակից է երևում, խելօք աղջիկ է, բայց հանգամանքները ճնշում են նրան. մօր գրութիւնն է միայն պատճառը, որ նա ստիպում է կամ առաջարկում մնալ Եւրոպա... Մի բան միայն, Սուրէնեան, միշտ աչքի առաջ ունեցիր. այս իմ խորհուրդն է. նա շւէդուհի է, իսկ դու հայ. նա հիւսիսային հեռաւոր երկրի զաւակ, իսկ դու հարաւային մի ընկճուած ազգի որդի. երկու ծայրեր, որոնք գուցէ ոչ մի կէտում չեն կարող համերաշխ լինել, միատեսակ մտածել, միատեսակ զգալ, մէկ-մէկի ցաւերը յուզել, միմեանց գաղափարակից լինել շատ բաների մէջ... Այժմ գնա Փարիզ, տեսնուիր, բայց մի մոռանալ որ ամենից առաջ դէպի հայրենիքդ ունեցած պարտականութիւններդ նւիրական են բոլորից .. նոյն իսկ սիրուց: Ե՞րբ ես ուզում գնալ:

—Վաղն առաւօտ:

—Հա՛... մոռացայ քեզ տալ մի բան: Ահա:

Ասաց Վուլկանը և տուեց նրան հայերէն տպուած մի լըրագիր:

—Ի՞նչ լրագիր է այս. հարցրեց Սուրէնը:

—Երևի երկար ժամանակ է որ հայրենիքի լրագիրներ իսկ չես տեսել. ժպտեց Վուլկանը—մի լրագիր է, ճանապարհին կըկարդաս. մէջը մի հետաքրքիր, յուզիչ յօդուած կայ,

ուր վառ գոյներով նկարագրուած են ահաւոր թշւառութիւններ...

Յետոյ ոտքի ելաւ, գլխարկը վերցրեց, հագաւ վերարկուն և աւելացրեց.

—Այժմ երթաս բարև. շուտ կըվերադառնաս:

—Չըգիտեմ:

—Երբ վերադառնաս՝ փընէւ եկ և տեսնուենք... Յտեսու—

—Երբ վերադառնաս՝ փընէւ եկ և տեսնուենք... Յտեսութիւն, ամուր եղիր և մտածիր միշտ հայրենիքիդ մասին. . և եթէ կուզես, իմացիր որ միայն այդ մեծ մտածութիւնը քեզ կարող է շատ սիրելի դարձնել Իմմային. պիտի տեսնես որ ճիշտ եմ ասում, այդ աղջկայ նամակը շատ պերճախօս է, նորից կարդա և լաւ մտածիր...

Ասաց, թոթուեց Սուրէնեանի ձեռքը և դուրս գնաց:

Սուրէնեանը մնաց մենակ և մտախոհ...

Դրսում սկսել էր ցուրտ և սուլող քամի, որ ամայացրել էր փողոցները և ցնցում լուսամուտների փեղկերը:

Դ.

Միւս օրը Սուրէնեանը երկաթուղի նստեց դէպի Փարիզ:

Առաջին 5-6 ժամւայ ընթացքում գիտեց նա բնութիւնը և մտածութիւնների մէջ ընկղմած, չիմացաւ թէ ինչպէս Փըրանսիա էին մտնում:

Մտածութեան միակ նիւթը իր դրութիւնն էր: Հաստատապէս դեռ չէր շեշտւում նրա մէջ այս կամ այն կերպ ընթանալու վճիռը: Մի տեսակ նախազգացումով հասկանում էր, որ անկարող էր լինելու ընդդիմադրել Իմմայի հրապոյրներին և մտածում էր որ գուցէ համաձայնուէր ընդունել նրա հօր պայմանը: Իսկ երբ մտաբերում էր Վուլկանի հետ ունեցած խօսակցութիւնը, սրտի խորքում զգում էր որ հարկաւոր էր ամեն բան զոհել - եթէ հարկ էր զոհել - և գնալ հայրենիք:

Բայց գնալ ինչ անել, ինչից սկսել, ինչպէ՞ս, այդ դեռ չէր կարողանում և չէր էլ ուզում որոշել. այդ կըվճռուէր այնտեղ, գընալուց յետոյ միայն: Սակայն միթէ կարող էր թողնել, հեռանալ և այլ ևս չտեսնել Իմմային գուցէ շատ երկար. ուժ

կունինմբ: Ոչ, զգում էր որ պիտի անէր այն, ինչ որ Իմման կամենար... և դա վրդովում էր նրան. ստրուկ կրքերի, գէրի մի աղջկայ... իսկ հայրենիքը, դէպի նա ունեցած պարտականութիւնը ..

Եւ յանկարծ յիշեց որ գրպանում Վուլկանի տուած լրագիրն ունէր: Հանեց և սկսեց կարդալ: Նախ, մի րոպէ, չըյաջողւեց խորասուզւել, կեդրոնանալ, ապա մի քանի տող երբ կարդաց կարմիր մատիտով նշանակած կտորից, այլայլւեց և ամբողջ ուշադրութիւնը լարեց:

Այնտեղ, մի երկար յօդւածի մէջ նկարագրած կային Թիւրքա-Հայաստանի ահաւոր ցաւերը մի առ մի, խորին ճշտութեամբ, վառ գոյներով: Այնտեղ տեղեկագրած էր թէ ինչպէս հարիւր հազարաւոր ժողովուրդ հալածւած, տանջւած, յարատև վշտերի և հարստահարութիւնների մէջ՝ օգնութիւն է աղաղակում. Նրանց աղիողորմ ճիչը օրհասական, սիրտ պատառող թօյլ կանչերի է փոխւել և հայոց դաշտերն արիւն են դարձել. գիւղերը մոխիր, տները՝ գերեզմաններ...

...«Թողել են ամեն ինչ—կարդաց նա—թողել՝ ոչ միայն հողն ու տունը, տաւարն ու բերքը, այլ յաճախ որդին ու կինը, հայրն ու մայրը. ցրւել են նոքա ճանապարհի վրայ, մէկին՝ թաղած տան փլատակների տակ, միւսին՝ դաշոյնահար՝ արեան մէջ լողալիս, երրորդին՝ անօթի մի քարի տակ... և գաղթում են, փախչում: Ամեն մարդ իր, միմիայն իր կեանքն ազատելը մեծ բան է համարում, մեծ հրաշք... և գլուխը կորցրածի խենթութեամբ՝ խուսափում է... Եղել են մայրեր, որոնք իրենց զաւակներին են լեռներից ձորը շպրտել՝ նրանց լացի ձայնից իրենց յետապնդողներին չըմատնելու համար, և կամ թողել են ցրտից և անօթութիւնից վնգալու մի ժայռի տակ, մի դաշտի խոտերի մէջ»...

—Եւ ես, մտածեց խռովութեամբ ու դայրոյթով Սուրէնեանը - ես այստեղ, այս հանգիստ վայրերում, միմիայն սիրոյ վրայ եմ մտածում, սիրոյ գերի եմ եղել ու ամեն բան մոռանում եմ... Ոչ, պէտք է գնալ հայրենիք, ինչ որ էլ լինի, պիտի գնալ..

Ու զգում էր որ վճռել էր այժմ և լաւ վճռել:

Երկրորդ օրը առաւօտեան Փարիզ հասաւ: Հարցրեց կառապանից—«Գրանդ - Օտէլ»-ից ոչ հեռու մի էժանագին հիւրանոց իջաւ, լւացւեց, իր վճռականութեան մէջ աւելի ամրապնդւած՝ մաքրւեց, ամփոփեց իրեն և ժամը տասն էր, երբ Իմմայի մօտ գնաց:

Երբ ծառայն տուաւ այցետոմսը, սիրտը սկսեց բաբախել, զգաց որ թուլանում է. բայց ճակատը կնճռեց, շրթունքները սեղմեց և մռմռաց ինքն իրեն.

—Ոչ, արդէն շատ ստոր կըլինեմ, եթէ վճռիցս ետ կենամ:

Քիչ յետոյ ծառան մտցրեց նրան պերճօրէն զարդարւած. մի սրահակ և ասաց.

—Այս րոպէիս կըգան:

Սուրէնեանը մենակ մնալով, կանգնեց մի մեծ պատկերի առաջ՝ միտքը դրացի սենեակին դարձրած. աշխատում էր զըսպել յուզումը, աշխատում էր մտածել կարդացածի վրայ, ուժ էր տալիս և սակայն ուշադրութիւնն ուղղել էր սենեակին և այլայլւած էր:

Նրան թւում էր թէ իրեն տանջելու համար էին այդքան երկար սպասեցնում:

Եւ յանկարծ զգաց որ սենեակի դուռը մեղմօրէն բացւում էր. չըդարձաւ, որովհետև սիրտը այնպէս բաբախել սկսեց, որ վախեցաւ իրենից.

— Բարև, Սուրէն. լսեց նա յետևից:

Եւ գունատ՝ դարձաւ: Իմման էր. առաւօտեան պարզ հագուստով, գեղեցիկ և հմայիչ, թարմ և ժպտուն:

— Բարև; կրկնեց նա - քեզ սպասում էի:

Յետոյ շտապմամբ մօտ եկաւ, արագութեամբ գրկեց նրան և համբուրեց.

—Հայրս ներսն է, ասաց նա - այս րոպէիս կըգայ: Ի՞նչպէս ես, այլայլւած ես երևում:

—Ոչ, լաւ եմ... թոթւեց Սուրէնեանը.

—Երևի յոգնած ես. սիրալիր ասաց Իմման և նրա ձեռքըն առաւ իր ձեռքի մէջ ու տարաւ դէպի օթոցը—նստիր

այստեղ և թող որ քեզ վրայ նայեմ .. այնքան կարօտցել եմ և այնքան անհամբերութեամբ սպասում էի քեզ...

—Իրա՛ւ. ասաց Սուրէնը—այդքա՛ն անհամբերութեամբ։

—Անշուշտ. կասկածո՞ւմ ես միթէ։ Դու երևի դարձեալ նոյն կասկածոտ, դժւարահաւատ դրութեան մէջ ես ընկել, ինչ որ յաճախ լինում էիր։ Միթէ քեզ մի բանով դժգոհացրել եմ. ասա՛, գիտես որ ոչինչ չեմ խնայիլ, որպէսզի վերանան կասկածներդ... բայց թողնենք այս. ասա՛, դեռ սիրո՞ւմ ես ինձ...

Եւ այնպէս սքանչելի ժպիտով գլուխը թեքեց դէպի նա, որ Սուրէնեանի մռայլ դէմքը պարզւեց և նա դառնալով, ջերմագին համբուրեց Իմմային.

—Օ՛, ասաց նա — առանց քեզ իմ իւրաքանչիւր րոպէն դառնութիւն ու թոյն էր։

—Արևելքցի՛. ժպտեց Իմման — արևելքցի և դեռ զգացմունքներին... իսկ Նամակս ստացա՞ր։

Սուրէնեանը դէմքը կնճռեց։

—Ստացայ, ասաց նա. յետոյ պահ մի կանգ առաւ և աւելացրեց մեղմ ու սառը ձայնով.

—Կխօսենք այդ մասին։

Իմման զարմանքով խառն հետաքրքրւող հայեացք ձգեց նրա վրայ։ Քիչ փոխւած, սովորականից տարբեր էր գտնում երիտասարդի վարմունքը։

Այդ միջոցին սենեակի դուռը ճռնչաց։

—Հայրս է. վեր թռաւ տեղից Իմման — կտեսնես այժմ թէ որպիսի՛ լաւ մարդ է... Մտի՛ր, հայրիկ։

—Մտնում եմ, մտնում եմ, լսեց մի հաստ ձայն — բայց Իմմա, այդպէս չէ կարելի, ո՛չ կոֆէդ ես խմել և ոչ մի բան կերել։

—Հոգ չէ, հայրիկ, դեռ մտի՛ր։

Ասելուց առաջ արդէն դռան վրայ երևաց մի երկարահասակ, լիովին սպիտակ և խիտ մազերով ծերունի, խոշոր և ժըպտուն աչքերով։ Մտնելուն պէս նա հետաքրքրութեամբ հեռւից սկսեց զննել ոտքի ելած Սուրէնեանին։

—Այո... խօսեց քիչ յետոյ ծերունին — զգում էի. պատկերը բոլորովին նման չէ. այս տեսակ դէմքերը լուսանկարել ճշտութեամբ անհնար է։

—Հայրիկ, ներկայացրեց Իմման ծիծաղը դէմքին — Սուրէնեանն է, կրկինես նրան, չէ՞։

—Անշուշտ, աղջիկս, քանի որ դու սիրում ես նրան. ասաց հայրը և բարի ժպիտով իր լայն ձեռքը պարզեց երիտասարդին։

Յետոյ, երբ սեղմել էր, ասաց.

—Բայց գիտէ՞ք, ես ֆրանսերէն շա՛տ վատ եմ խօսում։

—Սուրէնը գերմաներէն աւելի լաւ գիտէ, հա՛յր։

—Օ՛, այո. մոռացել էի... շատ լաւ ուրեմն։ Նստեցէ՛ք, երիտասարդ. քիչ մօտ նստեցէ՛ք՝ որ տեսնեմ ձեզ. ես քիչ կարճատես եմ։

Ու տեղ բռնեց լուսամուտի առաջ դտնւող բազկաթոռի մէջ, յետոյ մի րոպէ լաւ զննեց Սուրէնեանին և ասաց.

—Հայ էք... Ես առաջին անգամն է, որ տեսնում եմ այդ կլասիքական ազգից մէկին... Կլասիքական ասացի, որովհետև ինձ թւում է, որ ձեր դէմքը հին—կլասիք դէմքերից է և որքան զննում եմ, այնքան համոզւում, որ ձեր ազգի տիպը՝ դեռ չէ խառնւել—փչացել և կրում է հին դէմքերի վսեմութիւնը...

Սուրէնեանը զարմացած՝ Իմմային նայեց։

—Հայրս կամենում է ասել, շտապով բացատրեց Իմման - որ դէմքդ պատմական հին ազգերի տիպն է կրում... բայց հա՛յր, Սուրէնեանը չէ սիրում, երբ իր դէմքի վրայ խօսում են։

—Աւելի լաւ, աւելի լաւ. ասաց ծերունին—և այժմ, ասացէք մեզ, պարո՛ն, ձեր կեանքի մասին։ Աղջիկս սիրում է ձեզ և միշտ խօսում է ձեր մասին։ Այդ լաւ է. դուք ինձ էլ էք դուր գալիս... Հայաստանի ո՞ր կողմերից էք. թիւրքա՞ց, տեսնում էք, ես այժմ բաւական գիտեմ ձեր երկրի մասին։

—Ես ռուսաց Հայաստանից եմ, պարո՛ն. խօսեց առաջին անգամը Սուրէնեանը։

—Օ՛... տեսա՛ք, Էմմա՛. դարձաւ հայրն աղջկան - ես զգում էի. ձայնն էլ մի տեսակ մռայլ, տխուր և հին դրոշմ է կրում... Ես հիացած եմ: Խօսեցէ՛ք, պարո՛ն, դուք ուսանո՞ղ էք:

—Ո՛չ, պարոն, նոր աւարտեցի:

—Այդ լաւ է: Ի՞նչ մասնաճիւղ էք ընտրել:

—Պատմական - գրականական:

—Հը՜մ... այո. դուք գրում էք կարծեմ Էմման ինձ ասել է. միթէ՞ ձեր ազգը լրագրութիւն էլ ունի այժմ:

Սուրէնեանին դրդում էր այդ հետաքրքրութիւնը: Նա տրամադիր չէր այժմ գոհացնել ծերունու մի տեսակ հիացած հետաքրքրութեան պահանջը:

—Վատ չէ. ասաց նա նեղացած ձայնով-մենք մի փոքրիկ ազգ ենք և ունինք մեր փոքրիկ գրականութիւնը:

—Էմմա՛, դարձաւ ծերունին աղջկան—պարոնին սիգար տուր... Եւ կամ գուցէ դուք չէք ծխում. լսել եմ որ բոլոր արևելցիք սաստիկ ծխում են:

—Ես չեմ ծխում. ասաց Սուրէնեանը:

—Այդ լաւ է: Ասացէք ինձ այժմ, պարո՛ն, ձեր երկրում բնակութիւնները դարձեա՞լ գետնափոր են և գուցէ դուք վրանաբնակ էք բոլորդ...

Սուրէնեանը դադարեց այժմ նեղանալուց և ժպտեց: Պարզ էր, որ ծերունին ո՛չ թէ չարամտութեամբ էր հետաքրքրւում, այլ ուզում էր իմանալ. քիչ պատմական փաստերի մասին գիտէր և երևի Էմման չէր կարողացել մանրամասն տեղեկութիւններ տալ հայերի այժմեան կեանքի մասին:

—Բայց ո՛չ ասաց նա մենք էլ ունինք քաղաքներ և լաւ, եւրոպականացած քաղաքներ. Թիֆլիզ, Բագու, Բաթում..

—Բայց, որքան յիշում եմ, դրանք Կովկասի քաղաքներն են զարմացաւ ծերունին - միթէ՞ դուք Կովկաս էք ապրում:

—Այո, ռուսաց Հայաստանը Կովկասի մասն է:

—Օ՛, ես գիտեմ քիչ Կովկասի մասին: Մի կիսավայրենի երկիր է, ուր մարդիկ միմեանց մորթում են, կանայք փախցնում... բայց ուր կայ նէֆտր... Եւ դուք միթէ մտադիր էք վերադառնալ այնտեղ:

—Անպատճառ, ասաց Սուրէնեանը շեշտելով և Էմմային նայեց:

Էմմայի աչքերը փայլեցին, բայց նա, կարծես թերահաւատութեամբ՝ թեթև ժպտեց:

—Եւ ձեզ կըյաջողուի այնտեղ ապրել անվտանգ ու հանգիստ. հարցրեց ծերունին:

—Ձեզ սխալ տեղեկութիւններ են հաղորդել, պարոն. խօսեց Սուրէնեանը—Կովկասը այնքան կիսավայրենի չէ, որքան ձեզ ասել են. նա, ի հարկէ, զանազանւում է Եւրոպայից շատ բաներով, սակայն ապահով երկիր է և կարելի է այնտեղ լաւ ապրել:

—Այժմ. շարունակեց ծերունին—ասացէ՛ք ինձ, դուք շա՞տ լեզուներ գիտէք:

—Ե՞ս, զարմացաւ այդ յանկարծական հարցից Սուրէնեանը—բայց գիտեմ արևելեան լեզուներ, գիտեմ հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն, ռուսերէն:

—Վերջին երեքը շատ լաւ. իսկ հայերէ՞նը ինչ բանի օգտակար կարող է լինել. պետակա՞ն կամ առևտրակա՞ն լեզու է:

—Ոչ մէկը և ոչ միւսը. բայց նա իմ մայրենի, իմ հայրենիքի լեզուն է:

—Անշուշտ, ի հարկէ... Այդ լաւ է սակայն, որ դուք եւրոպական գլխաւոր լեզուները գիտէք, ձեզ դեռ հարկաւոր է նաև քիչ անգլիերէն սովորել:

—Մի քիչ գիտեմ: Բայց ինչու է հետաքրքրում ձեզ այդ բոլորը:

—Ի՜նչպէս... գոչեց ծերունին—դուք միթէ չէք տեսնում որ Եւրոպայում գործելու համար, անհրաժեշտ է լեզուներ գիտենալ. մանաւանդ առևտրական գործերում:

—Ես ձեզ չեմ հասկանում, պարո՛ն:

—Այդ նրանից է. ժպտեց ծերունին—որ ձեզ յայտնի չէ մեր առևտրական կեանքը. երբ մտնէք նրա մէջ, անշուշտ կըտեսնէք թէ որքա՛ն լաւ է լեզուներ գիտենալ.. Էմմա՛, պարոնին միթէ կոֆէ չըպիտի տալ: Այսօ՞ր էք Փարիզ հասել, պարո՛ն:

—Այո՛, այս առաւօտ:

—Անշուշտ չէք նախաճաշել դեռ... Իմմա՛, նախաճաշ պատւիրի՛ր, իսկ ես պիտի գնամ այժմ. ինձ հարկաւոր է մի քանի անձերի տեսնել... Դուք ուրիշ անգամ եղե՞լ էք Փարիզ:

—Չեմ եղել. առաջին անգամն է:

—Նախաճաշից յետոյ Իմմայի հետ կարող էք պտոյտի ել-նել... Իմմա՛, դու ծանօթ ես Փարիզին, պարոնին էլ ծանօ-թացրու. յետոյ կըվերադառնաք մեզ հետ ճաշելու:

Ասաց, ելաւ, պէնսընէն քթի վրայ դնելով՝ մի անգամ ևս զննեց Սուրէնեանին և աւելացրեց.

—Դուք կիսովին արդէն եւրոպացի էք եղել. եղէք բոլո-րովին. դուք ինձ դուր էք գալիս. սակայն տեսէ՛ք, Իմման ձերն է միայն ա՛յն պայմանով, որ մոռանաք արևելքը... Յը-տեսութիւն. ես ի միջի այլոց այսօր մի քանի անձերի կըտես-նեմ և կըխօսեմ ձեր մասին:

Յետոյ պարզեց ձեռքը, սեղմեց Սուրէնեանինը և մտաւ կից սենեակը:

Ապշել էր Սուրէնեանը: Մի բան միայն զգում էր, որ ծե-րունին արդէն վճռել էր իրեն պահել Եւրոպայում, գուցէ և մտցնել առևտրական գործերի մէջ:

Ուրեմն իր անձի մասին տնօրինել էին առանց իր վըճ-ռական պատասխանին: Եւ դա աւելի ամրացրեց նրան իր վըճ-ռի մէջ:

Ե.

Երբ ծերունին դուրս գնաց, Իմման մօտ եկաւ, նստեց Սուրէնեանի կողքին, բռնեց նրա ձեռքը և ասաց.

—Դու գուցէ նեղացար հօրիցս:

—Խոստովանում եմ. ասաց Սուրէնեանը—հայրդ քիչ տարօրինակ մարդ է:

—Չեմ զարմանում. ծիծաղեց Իմման—հայրս ուղիղ և պարզ մարդ է. մտածածն իսկոյն ասում է: Նա արդէն վճռել է որ ու մնալու ես Եւրոպա և այժմեանից հոգում է քո մասին...

Ու եթէ ասաց որ դիւր ես գալիս իրեն՝ դա անկեղծ էր. ես շատ ուրախացայ...

Յետոյ յանկարծ խօսքը կիսատ, ոտքի ելաւ, զանգահարեց և երբ ծառան մտել էր՝ նախաճաշ պատւիրեց:

—Ի՞նչ մոռացկոտն եմ, դարձաւ նա Սուրէնին—մոռա-ցայ նախաճաշը... հեռացրու խնդրեմ դէմքիդ այդ մռայլ լըր-ջութիւնը. չեմ սիրում քեզ այդպէս տեսնել, չի սազում քեզ: Ի՞նչ ունիս որ այդպէս լուրջ ու դէմքդ երկարացրած նստել ես: Ու ծիծաղելով քաշեց Սուրէնեանին դէպի իրեն ու աւե-լացրեց.

—Դու կըմնաս մեզ մօտ. երևի միասին էլ Շուէդիա կեր-թանք, յետոյ կ'սկսենք գործել, դու կըգրես... Գիտես, մայրս այժմ առողջ է...

Սուրէնեանը չէր խօսում. դէմքը միշտ մռայլ՝ նայում էր ժպտող աղջկան. մինչև իսկ գգւանքներին չէր պատասխանում: —Բայց այդ ինչ է եղել քեզ. քիչ նեղացաւ Իմման—ինչու ես թթւած. գուցէ յոգնել ես... կամ գուցէ նեղացար հօրս պարզութիւնից... բայց ասում եմ քեզ, նա լաւ մարդ է և չարամտաբար չէր հետաքրքրութիւնը. ընդհակառակն դիւր եկար նրան...

Սուրէնեանը մեղմութեամբ ետ քաշւեց, ելաւ գնաց կըռթ-նելու վառարանին. յետոյ լուրջ դէմքով Իմմային դարձաւ և ասաց.

—Նստի՛ր այդտեղ, Իմմա՛, քիչ խօսենք:

—Ա՛յ, ծիծաղեց Իմման—այդ որքա՜ն լըջութիւն. մի՞թէ այդքան կարևոր բան ես ասելու:

—Ծաղրում ես ինձ, Իմմա՛, ասաց Սուրէնեանը նեղացած:

Իմման զարմացած՝ լըջացաւ.

—Խօսի՛ր, ասաց նա—ես ուզում եմ նոյնպէս կանգնած մնալ... բայց, սպասի՛ր, նախ ասա ինձ թէ ա՛յս հիւրանոցն ես իջել:

—Ո՛չ, աւելի հեռու:

—Ի՞նչու: Տեղն ասա և թող ծառան գնայ պայուսակդ բերէ. մեզ դըկից մի սենեակ կըտան քեզ:

—Աւելորդ է. Իմմա՜... ասաց Սուրէնեանը նեղացած շար-ժում գործելով—և դու ի զուր չես թողնում ինձ խօսելու:

Իմման ճակատը կնճռած ու զարմանքով քիչ լռեց, յե-տոյ ասաց.

—Ներողութիւն... խօսիր այժմ. լսում եմ:

Սուրէնեանը որ յուզմամբ ընչացքն էր ոլորում անդադար, մատներով թմբկահարեց վառարանի վրայ և խօսեց.

—Դու մի նամակ էիր գրել ինձ... վերջին նամակը. յի-շո՞ւմ ես ինչ էիր գրել:

—Յիշում եմ.

—Լաւ. պիտի պատասխանէի, երբ հեռագիրդ ստացայ... Ի՞նչ ես կարծում, Իմմա՛, երբ մէկին պայմաններ են առաջար-կում, պարտաւոր են սպասել համաձայնութեա՞նը, թէ ոչ:

—Ի՞նչ ես ուզում ասել. ասաց զարմացած Իմման:

—Ուզում եմ ասել, շարունակեց Սուրէնեանը վճռական կերպով- որ հօրդ հոգատարութիւնը վաղաժամ է. հարկաւոր էր սպասել իմ պատասխանին... Բայց երեւի նա ինձ երեխայ է կարծում և կամ մի ողորմելի արեւելցի, որին երբ փայլուն բան են ցոյց տալիս, համոզուած են որ նա անշուշտ գրաւելու է... Մինչև իսկ չեն հարցնում. «հաւանո՞ւմ ես». կարծես գի-տեն որ նա «ուրախութեամբ» կըհաւանի...

—Օ՛, Սուրէն, ասաց Իմման վշտացած ձայնով—հօրս ես մեղադրում և սխալւում ես...

—Խնդրեմ, աւելի զրգուեց Սուրէնեանը— թողնենք այդ: Այժմ լսիր. եթէ ես քեզ սիրում եմ, մի՞թէ այդ նշանակում է որ ինձ կարելի է, իբր մանրքէնի՝ ուզած կողմը դարձնել և կամ ցանկացած գիրքը տալ... Խոստովանիր որ ես ունիմ իմ կամ-քը, իմ մտածութիւնները, վերջապէս փափագը...

Իմման հետզհետէ աւելի հետաքրքիր զարմանքով՝ մօտե-նում էր նրան. աչքերը ստացել էին նորից այն բոցափայլ ու այլանդակ հայեացքը, որ այնքան տարօրինակ էին թւել Փը-նէլում և Լօզանում նրան ճանաչող անձերին:

—Դու ինձ վիրաւորում ես. ասաց նա մեղմ և ժպտուն —դու կարծում ես որ ես ընդունակ եմ մանրքէնի սիրելու...

Քայց, ասա ինձ, ի՞նչ է պատահել քեզ... ի՞նչ ես ուզում ասել:
Յետոյ յուզմամբ բռնեց Սուրէնեանի թեւը և աւելացրեց
ջղային անհամբերութեամբ.
—Խօսի՛ր. պատասխանի՛ր այժմ իմ նամակին... Դու երեւի
չես ուզում ինձ մօտ նստել... երեւի գործել, գործե՛լ ես ուզում...
—Այո՛, խօսեց Սուրէնեանը—քեզ մօտ նստել՝ ոչ. ես հայ-
րենիք ունիմ, որ ինձ սպասում է, որ ինձ նմանների վրայ մեծ
յոյսեր է դրել... ես կարիերիստ չեմ...
—Ի՞նչպէս... գոչեց մի տեսակ ուրախ ձայնով Իմման—
դու ուզում ես գործե՞լ... գործե՞լ... նայիր երեսիս և ուզում ես
թողնե՞լ... գործե՞լ... նայի՛ր երեսիս. և ուզում ես թողնե՞լ ինձ,
գնա՞լ:
—Ես քեզ չեմ թողնիլ. շարունակեց Սուրէնեանը—ո՛չ. միայն
թէ դու ինձ հետ կըգաս. եթէ սիրում ես՝ կըգաս... Լսի՛ր,
Իմմա: Եւրոպայում մեզ նմանները և մեզնից լաւերը շատ կան.
Եւրոպական գրականութիւնը, հասարակութիւնը մեզ նման
անձերի շատ էլ պէտք չունի. մինչ մեր գրականութիւնը, մեր
հասարակութիւնը՝ կարօտ էր իր ուսեալ որդիներին... Եթէ ես,
որ հայրենիքիս անձամբ ծառայելու պարտաւոր եմ—դասալիք
լինեմ, իմ հանգստութիւնը մտածեմ—ի՞նչ կըլինի դրանից, նը-
ման չի՛ լինիլ այն որդուն, որ իր հօրը թշուառ վիճակի մէջ
թողած՝ հեշտակեաց կեանք է վարում...
Այստեղ յանկարծ, զգալով որ Վուլկանի խօսքերն է կըրկ-
նում, քիչ կարմրեց, քիչ լռեց և ապա աւելի ուժգին՝ շա-
րունակեց.
—Այո՛... Չէ որ իմ հայրենիքը ինձ ծնել է, սնուցել, իմ
մէջ ոյժ ու սէր դրել, որ ես ծառայեմ նրա բարեկեցութեան,
որ ես իմ շրջապատողներիս նուիրեմ իմ ոյժերը... Նոյն իսկ ոչ
իբր հայ, այլ իբր մարդ՝ ես պարտաւոր եմ օգնել և գործել
ինձ ծանօթ հասարակութեան համար... Ի՞նչ կանէիր դու
օրինակ, եթէ տեսնէիր փողոցում ընկած մի հիւանդի. կանց-
նէի՞ր մօտից առանց իջնելու կառքիցդ, առանց բանալու
մուշտակդ... Ո՛չ, դա մարդկութիւն չէ: Իբր մարդ և իբր հայ,
ես պարտական եմ եղբայրներիս...

—Իսկ, միջահատեց Էմման փորձիչ ձայնով—իսկ չէ՞ որ, ինչպէս դու էիր ասում միշտ, քո ազգակիցներից շատերը այդպէս են անում՝ նստած Եւրոպա... նոքա էլ, ասում ես, գործում են յօգուտ հայրենիքի:

—Ո՛չ, Էմմա, գլուխը թօթուեց Սուրէնեանը—ես սխալւում էի. մի՛յլ բան է հեռուից գոռալ, այլ բան՝ մօտից շօշափել և գործել: Եւրոպա նստողների գործունէութիւնը միմիայն տեսական՝ այն էլ յաճախ սխալ՝ բնաւորութիւն ունի. Հարկաւոր է գործնական դառնալ: Բժիշկը երբ հիւանդի մօտ են կանչում, նա իր տանը նստած չէ որ գրում է դեղագիրը, այլ գնում է հիւանդին շօշափելու մօտից... Եւրոպա նստող հայերի գործունէութիւնը նման է հեռու նստող բժշկի՝ հիւանդին տուած, վիրաւորին ուղարկած խորհուրդների. նրանք կամ քիչ են տալիս, չնչին օգուտ, կամ յաճախ վնաս:

Ու ինքն էլ, Սուրէնեանը այժմ մի տեսակ ոգևորութիւն էր զգում իր ասածներից, համեմատութիւնը հաճոյ էր թւում իրեն և գոհ էր. ուստի աւելի տաքացած, աչքերը Էմմայի ժպտուն դէմքին՝ շարունակեց.

—Տե՛ս, Էմմա՛. ես գիտեմ որ դու բարի, ազնիւ աղջիկ ես, որ դու հասկանում ես այդ բոլորը. մնում է այժմ քեզ ասել ինձ «Եթէ չես կարող օգուտ տալ հայրենիքիդ, գոնէ գիտցիր մեռնել նրա համար»...

Եւ յանկարծ Էմման, ուրախ, ցոլացող դէմքով ձեռքերը դրեց Սուրէնեանի ուսերին, յետոյ մէկէն գրկեց նրան և շշնջաց.

—Իրա՛ւ է այդ բոլորը. դու համոզուա՛ծ. անկե՛ղծ ես ասում. ֆրազներ չե՞ն... Խօսի՛ր, հաւատացրո՛ւ ինձ, որովհետև դու չըգիտես թէ որքա՜ն զարմանում եմ և... որքա՜ն ուրախանում. այո՛, իմ Սուրէն, հազա՛ր անգամ այո՛, եթէ չես կարող օգուտ տալ, մեծ, մե՛ծ լինել, գոնէ գիտցիր մեռնել ազգիդ համար... բայց, ասա՛ ինձ, դարձեալ միայն անցողակի ոգևորութիւն չէ՞ այդ բոլորը, ֆրազներ չե՞ն...

—Ֆրազնե՞ր... կարմրեց Սուրէնեանը—դու ինձ վիրաւորում ես, Էմմա՛...

Ասաց և նեղացած՝ հեռու գնաց նրանից: Բայց Էմման նո-

րից մօտեցաւ, ստիպեց նրան նստել կողքին, յետոյ կցկտուր, ուրախ և յուզուած շարունակեց.

—Ո՛չ, ո՛չ. չեմ վիրաւորւում. եթէ վիրաւորում եմ՝ ներիր. սխալւած եմ եղել, սաստիկ սխալուած... բայց ես ամէն բան, այժմ ամէն բան կասեմ քեզ... Ուրեմն դու նպատակ ունիս, սիրում եմ կարծել, մտածել՝ որ ունեցել ես և թագցրել ինձնից... ոչ, չեմ նեղանում, այլ ուրախանում եմ, պարծենում եմ... Երբ սիրեցի քեզ, կարծում էի թէ դու այն կռւող, մարտնչող, գործող անձերից ես, որոնց ես մի՛շտ երազել եմ... բա՛յց, մի՛ նեղանալ. յետոյ, հետզհետէ տեսայ, որ միակ նպատակդ սէրն է, միայն սէրը. սկսեցի տեսնել, զգալ, որ դու ոչնչով չես զանազանւում ուրիշներից, եթէ ոչ՝ փքուն... մեծ-մեծ խօսքերով... Նոյն իսկ յաճախ՝ հակասութիւններով... Դու մի՛ նեղանալ և լսիր ինձ: Երբ տեսայ որ քո միտքը քո սրտի հետ հաշտ չէ գնում, ես հիասթափւում էի, տխրում. բայց սիրել էի, սիրում էի քեզ և ուզեցի քեզ պահել ինձ մօտ, հետզհետէ նպատակ գոյացնել քո մէջ, մղել քեզ գործերի մէջ, նետել կռիւների ասպարէզները, հրել յորձանքների մէջ... բայց ես սխալուել էի. խօսիր այժմ, կլինիր որ դու մեծ ես, որ դու նպատակ ես ունեցել և որ մտքուդ գրած ես եղե՛լ մեծ լինելու և որ ես սխալուած եմ եղել քեզ վրայ կասկածելով...

Բայց այդ միջոցին դուռը բաղխեցին: Ծառան էր, որ նախաճաշ էր բերում:

—Աւելորդ էր. նկատեց Սուրէնեանը—ախորժակ չունիմ:

—Կե՛ր, ստիպեց սիրալիր Էմման—ոչինչ չես կերել այսօր... Նստիր այստեղ, ես կլցնեմ քեզ համար սուրճը:

Ապա ծառային դարձաւ և ասաց.

—Մի լաւ կառք՝ ժամով վարձեցէք. փակած կառք:

Ծառան խոնարհութիւն արաւ և դուրս գնաց:

—Նստիր, խօսեց Էմման—նախաճաշիր, յետոյ կառքով դուրս կըգնանք և կըշարունակենք մեր խօսակցութիւնը. ես դեռ շա՛տ բան ունիմ ասելու և մանաւանդ շա՛տ բան քեզնից լսելու:

Սուրէնեանը լուռ՝ սկսեց նախաճաշել, մինչև Էմման ոտքի ելած, ուրախ, բայց խոհուն դէմքով ճեմում էր սենեակում:

Զ.

Վերջանալու մօտ էր նախաճաշը, երբ նորից դուռը ծեծեցին։ Ծառան էր, որ ներս մտաւ և ասաց.

—Կոմս դը Բրէզան է, օրիորդ. կըհրամայէ՞ք ընդունել։

Էմման նեղացած մի շարժում գործեց։ Սուրէնեանը ելաւ։

—Մի լեհացի կոմս է. դարձաւ Էմման նրան—վաղուցւայ ծանօթ... թող գայ. ասաց յետոյ ծառային։

—Այժմ, վերարկուդ հագիր և գլխարկդ առ, որ տեսնէ թէ դուրս ենք գնում. ես էլ այս րոպէին կըհագնուեմ։

Ասաց Էմման Սուրէնեանին, միւս սենեակը մտաւ և դուռը փակեց։ Քիչ յետոյ սրահի դուռը կիսովին բացւեց և երևեցաւ մի երիտասարդի գլուխ։

—Կարելի՞ է մտնել, օրիորդ Էմմա, լսւեց մի հնչուն ու թարմ ձայն։

Սուրէնեանը քայլեց դէպի նա։

Ներս մտէք, պարոն. ասաց լեհացուն—օրիորդը այս րոպէիս կըգայ։

—Ա՛... զարմացաւ լեհացին ներս մտնելով ցիլինդրը ձեռքին—կարծեմ մենք ծանօթ չենք։

Հագնուած էր պերճ։ Խնամքով ածիլած ծնօտը, սրած ընչացքն ու օծած մազերը և առ հասարակ կեցւածքը ցոյց էին տալիս, որ լեհացի այդ գեղեցիկ, սպիտակ ու կանացի դէմքը Փարիզեան շիկ երիտասարդներից էր։

—Կոմս դը Բրէզա. ծանօթացրեց իրեն լեհացին։

—Սուրէնեան։

—Հայ էք անշուշտ. ժպտեց լեհացին—ձեր ազգանւան վերջաւորութիւնից իմացայ։ Զարմանալի օրիորդ է Էմման. ինչ ազգից ասէք՝ որ ծանօթներ չունենայ...

—Խնդրեմ նստեցէք, օրիորդը կըգայ։

—Դուք Փարիզ էք բնակւում, պարոն. հարցրեց լեհացին և նստեց։

—Ո՛չ. Ցիւրիխ և Լոզան։

—Շւէյցարիա ուրեմն. և երևի այնտեղ էք ծանօթացել օրիորդի հետ։

—Այո։

Լեհացին սկսեց զննել ուշադրութեամբ Սուրէնեանին, չընայելով որ իր զննողութիւնը նրանից ծածկելու համար, երբեմն պատերին էր նայում, հայելու մէջ իր դէմքը դիտում և ընչացքը գգւում։

Մի քանի րոպէ լուռ նստեցին երկուսն էլ, մինչև որ Էմման դուրս եկաւ գլխարկը դրած, սև հագնուած և վերարկուով։

—Ա՛ կոմս. ժպտելով ձեռքը պարզեց նա—բարի օր։

—Օրի՛որդ... ցատկեց տեղից լեհացին և համբուրեց պարզած ձեռքը—պարտք համարեցի գալ հարցնելու ձեր առողջութիւնը... բայց դուք երևի ուզում էք դուրս գնալ։

—Այո՛, կո՛մս, պ. Սուրէնեանը Փարիզը չէ ճանաչում. ուզում եմ քիչ ծանօթացնել... Գիտէ՞ք, պ. Սուրէնեան, պ. կոմսը իսկական փարիզցի է. մանկութիւնից այստեղ է և՛... այժմ էլ ուզում է քահանայ դառնալ...

Ու ծիծաղեց։ Սուրէնեանը զարմացած նայում էր երկուսին։ Լեհացին դէմքը կծկեց։

—Այո՛, ասաց նա հառաչելով—պիտի դառնամ... մենք—լեհացիքս կամքի տէր մարդիկ ենք և երբ սիրոյ մէջ անյաջող ենք լինում...

—Ա՛խ, դարձեա՛լ, կոմս, ընդհատեց Էմման—դարձէ՛ք, դարձէք քահանայ. գոնէ այն ժամանակ այլևս չէք խօսիլ սիրոյ մասին։

—Շատ անգութ էք, օրիորդ, շատ... շարժեց գլուխը կոմսը—և շատ անդրդւելի...

—Օ՛, այո՛, ասաց Էմման—դէհ, ցտեսութիւն, կոմս, ուրիշ անգամ մտէք. հայրս սիրում է ձեզ լսել. զւարճացնում էք նրան։

—Շատ ուրախ եմ, խոնարհւեց լեհացին։

—Դուք անշուշտ ծանօթացաք պարոն Սուրէնեանի հետ. աւելացրեց Էմման, դուռն հասնելիս—պարոնը հայ է։

—Իմացայ, ազգանունից իմացայ, ես հայ ծանօթներ ունիմ Փարիզում:

—Հայ ծանօթնե՞ր. հարցրեց Սուրէնեանը հետաքրքրութեամբ—ո՞վքեր են:

—Մի քանի վաճառականներ... նաև երկու ուսանող... եթէ կուզէք, կարող եմ նրանցից մէկին խնդրել որ գայ ձեզ մօտ. կամ եթէ դուք կուզենայիք գնալ...

—Ո՛չ. ասաց Էմման—պարոնը իմ հիւրն է, կոմս. իսկ եթէ դուք հանդիպէք մի հայ ուսանողի, կարող էք յայտնել իմ հասցէն:

Յետոյ դուրս գնաց նրբանցքը և սանդուղքների գլխին հասնելու ժամանակ, ձեռքը լեհացուն պարզեց, ժպտելով թողեց որ համբուրի և բարևերթ մաղթելով, ետ մնաց որպէս զի կոմսը հեռանար:

Երբ լեհացին իջել անհետացել էր, դարձաւ Սուրէնեանին և ասաց ժպտուն.

—Ինձ վրայ սիրահարւած է և քահանայ է դառնում, որովհետև ես մերժում եմ նրա սէրը:

—Դժբա՜խտը. ժպտեց Սուրէնեանը:

Էմման քրքիջ արձակեց:

—Դժբա՜խտ, ասաց նա - և դու կարծում ես որ քահանայ կըդառնա՞յ. անշուշտ եմ, որ նա այժմ գնաց մի Լուիզայի կամ մի Էօժէնի մօտ... Կոմսը բոլոր կանանց վրայ սիրահարւած է և անշուշտ բոլորին էլ սպառնում է քահանայ լինել՝ եթէ իրեն չսիրեն... Ես կարծում եմ որ մինչև իսկ ստեց նա, երբ ասաց որ ճանաչում է հայերին:

Խօսելով իջնում էին: Դռնապանը առաջ վազեց, ասաց որ կառքը պատրաստ էր, յետոյ դուռը բաց արաւ, օգնեց կառք նստելու և Էմման հրամայեց կառապանին, գնալ դէպի Բուլօյնի անտառակը:

Պահ մի երկուսն էլ լուռ էին: Սուրէնեանը կառքի լուսամուտից փողոցը, տներն ու անցուդարձն էր դիտում: Էմման նկատեց այդ և սկսեց յայտնի շէնքերը անւանել:

—Գեղեցիկ քաղաք է, չէ՞. աւելացրեց նա:

—Այո. պնդեց Սուրէնեանը—և բաւական նման է ժընէւին. ի զուր չէ որ ժընէւին կոչում են «փոքրիկ Փարիզ»:

—Ահա էյֆէլը. նայիր. գագաթը ամպերին է հասել: Կուզե՞ս կբարձրանանք վերը:

—Ինչպէս կուզես:

Էմման կռացաւ, նայեց նրա դէմքին, յետոյ զրկեց մէջքը և ժպտուն ու սիրալիր՝ ասաց.

—Դու իմ խօսքերից նեղացե՞լ ես, լսի՛ր ինձ. ես այդ բոլորը ասացի ո՛չ թէ քեզ վիրաւորելու, այլ ինձ նախատելու համար, որ կասկածել եմ քո մասին և որ ամիսների ընթացքում քեզ համարել եմ փրազեօր, միայն խօսքի մարդ, հակասութիւններով լի և այլն... ներիր ինձ այժմ և մոռացիր բոլորը:

Սուրէնեանը բռնեց Էմմայի ձեռքը և լռութեամբ շըրթունքներին տանելուց յետոյ, պահեց իր ձեռքերի մէջ և աշխատեց հանել նրա ձեռնոցը:

—Սպասիր ես հանեմ. ժպտեց Էմման և արագութեամբ կորզեց հանեց, յետոյ մերկ ձեռքը սեղմեց երիտասարդի ձեռքի մէջ:

—Դու ինձ սիրում ես, չէ՞. հարցրեց նա հմայիչ կերպով

—Այո. սիրում ես... մի՛ խօսիր. խօսքը աւելորդ է, ես այդ տեսնում եմ: Բայց ես ուզում եմ որ դու այդ սէրը քո երկրորդ նպատակը դարձնես և ո՛չ առաջինը, սիրելուց առաջ դու մարդ ես և ունիս գործելու ույժ... Ես ուզում եմ խօսել, մի՛ ընդհատիր ինձ և մի՛ նայիր ինձ վրայ: Դու յիշու՞մ ես թէ Լօզանում ինչ վշտով և ցաւով պատմում էիր հայրենիքիդ մասին տխուր մանրամասնութիւններ, երբ ես հետաքրքրւում էի: Յիշու՞մ ես, ասում էիր որ ամեն ինչ փչանում է, որ երիտասարդութիւն չըկայ. եղածն էլ քացախել է, պառաւ օրիորդի տպաւորութիւն է թողնում—չար, կրքոտ, աններողամիտ և եսասէր. ասում էիր որ մամուլը անկման նշաններ է ցոյց տալիս. որ՝ իւրաքանչիւր թերթ կարծես խմբագրի և մի խմբի լոկ դրամական շահի և կրքերի օրգան է դարձել, որ այդ խումբը իր ընթացքով աշխատում է իջեցնել հասարակութեան

հասկացողութեան նժարը և հասցնել իր շահերի գնահատման, սրբացման կէտին... Այդ բոլորը ես յիշում եմ և հօրս ոչինչ չեմ ասել այդ մասին: Պէտք չէր: Բայց ես ցաւ էի զգում և գիտեմ, քիչ ըմբռնում էի պատճառները: Դարաւոր ստրկութիւնը, Սուրէն, աւելի լաւ արդիւնք չէ տալիս, քան այդ. բացի դրանից ոչ մի տեղ կեանքը այնքան երկու ծայրայեղութիւններ չէ արտադրում, որքան արևելքի մեղկացած, ըստրկացած ժողովրդեան մէջ: Այդպէս էր նաև մեզնում, միջին դարերի ժամանակ. ինչու հեռու գնալ, այդպէս էր և այս երկրում—յեղափոխութիւնից առաջ, ամեն ինչ ծայրայեղ կէտերի վրայ, բնաւորութեանց ծայրայեղ հակումներ—չարը՝ զզւելի կերպով չար. բարին՝ անմտութեան չափ բարի, կեղտը՝ անտանելի, մաքրութիւնը եթէ լինի՝ հիւանդութեան հասցրած...

Սուրէնեանը դարձել և Իմմային էր նայում հիացածի նման և մտքումը նորից կրկնում էր թէ որքա՜ն սրամիտ էր այդ աղջիկը:

—Դու զարմանում ես. նկատեց այդ Իմման—ինչի վրայ. որ ես այդպէս եմ ըմբռնում դրութիւնը: Չըգիտեմ, գուցէ սխալւում եմ, բայց երևոյթները շատ պերճախօս են. եւրոպական ժողովրդի հոգեբանութիւնը բարդ է, ուսումնասիրել դժւար. իսկ արևելքի ժողովուրդինը պարզ է. առանց քո ասելուն էլ, ես այս ամիսների ընթացքում շատ կարդացի արևելքի մասին, շատ մտածեցի և իմ կարծիքն էր որ այժմ քեզ հաղորդեցի... Մի բան սակայն ինձ հետզհետէ տխրեցնում էր քո մասին—այդ այն ընդհանուր յատկութիւնն է, որով որոշւում են արևելքցիք. դուք բոլորդ նախ համակամութեան ոգով տոգորւած էք, ֆաթալիստներ էք և այդ սոսկալի բան է ոչ միայն անհատի, այլ և ազգի համար... ձեր մէջ պրակտիկական սառնարիւն, տոկուն և յարատև ոգին չըկայ. երեք յատկութիւններ, որոնց միացումը գոյացրել է մեր քաղաքակրթութիւնը, որոնց միացումը բաւական է եղել անգլիացու համար՝ հսկայական քայլերով անցնել Ովկէանոսից, Հիմալայից, ոտքի տակ տալ ամեն ժայռ, չորացնել ամեն ճահիճ, փշրել լեռներ և մշակելի հող դարձնել... Ես կուզէի քեզ անգլիացի տեսնել գործի մէջ:

—Այդ շատ լաւ կլինէր, ասաց խոհուն Սուրէնեանը—սակայն ես եղել աւելի երազող եմ, քան գործող:

Այս վերջին բառերը նա արտասանեց կծու և ակնարկը մի կողմ շրջեց:

—Դու դեռ նեղացած ես մնում իմ խօսքերից... Ոչինչ, նեղացիր, սակայն իմացիր որ այդ ճիշտ է... ձեռքդ մի՛ հեռացնիր. սիրիր դէմ առ դէմ լսել ճշմարտութիւնը, ապա թէ ոչ ես քեզ կատեմ: Այո՛, ինչու՞ ես կարծում որ կատարեալ ես, չունիս պակասութիւններ... Եւ յետոյ, ինչու՞ ես կարծում որ երազելը պակասութիւն է. երազիր միշտ, սակայն գործադրիր. աշխատիր գործադրել երազներդ. անհնարինի մասին երազդ նոյնպէս վնասակար չէ. նա բարձրացնում է մարդու, նա շատ վիշտ մոռացնել է տալիս... Ես էլ պակաս երազող չեմ և ահա մտածում եմ ներշնչել քեզ, չըթողնել որ ընկնես...

—Ես չեմ ընկնել առ այժմ. ասաց Սուրէնեանը—և շնորհակալ եմ քո խնամքից:

—Ո՛չ խնամք... նեղացաւ սաստիկ Իմման և ցնցեց երիտասարդի ձեռքը ուժգնութեամբ—դու ինձ չես հասկանում և կամ չես ուզում հասկանալ... Ես քեզ սիրում եմ. հասկանում ես և իմ մէջ սէրն է խօսում, իսկ սէրը և՛ բարի է և՛ երկայնամիտ, և՛ ամեն լաւ յատկութեան տէր... Ինչու թոյլ չես տալիս ինձ խորհուրդներ տալ քեզ. գոնէ մտքեր վերարտադրել քո մէջ. այնպիսի մտքեր՝ որոնցից մէկն ու մէկը կարող լինի ձեռք տալ քեզ: Եթէ լինէի քո երկրում, աւելի մօտ ծանօթ հանգամանքներին—անշուշտ եմ որ տւածս խորհուրդները շատ աւելի գործնական կլինէին. թէև երազող եմ, բայց հօրս գործնական ոգուց քիչ կայ իմ մէջ...

—Ինչու՞ ոչ. ցնցեց գլուխը Իմման—կարծում ես չեմ գալ, չեմ գործիլ... բայց առ այժմ այդ թողնենք. տեսնում ես որ անկարող եմ ծնողներ ունիմ... Այդ մասին յետոյ.. Այժմ թող որ մտքիս մէջ կուտակւածները պարզեմ քեզ. թող քիչ ենթադրութիւններ անեմ:

—Ի՞նչ ենթադրութիւններ:

—Պիտի տեսնես... Ի՞նչ է գանգատդ երկրիդ մասին: Որ երկտասարդութիւնը խրուած միայն իր նիւթական շահերի մէջ՝ փչացել է, ապականուել և որ գրականութիւնը ընկել, մամուլը ողորմելի է դարձել... Ինչո՞ւ լիզուր երեմիա՛անններ կարդալ: Գրի՛ր ինքդ, գնա՛, երիտասարդութեան մէջ նոր հոսանք մտցրու, ժողովի՛ր շուրջդ այն երիտասարդներին, որոնք դեռ չեն ապականուել: Հաւաքուեցէք, դպրոցներ բացէք, գրքեր հրատարակեցէք, հիմնեցէք նոր թերթ, շարժում ձգէք...

Սուրէնեանը չկարողացաւ իր ժպիտը թաքցնել:

—Որքա՜ն քիչ գիտես՝ մեր երկրի հանգամանքները. ասաց նա—նախ պիտի գիտենաս որ մեր մէջ անհնար է դպրոց բանալ, թերթ հրատարակելը ունի իր մեծ դժուարութիւնները, իսկ գիրք հրատարակելը փողով է լինում...

—Փո՞ղ... զարմացած գոչեց Իմման—և միթէ ձեր մէջ չըկայ մի հարուստ, որ կամենար դրամագլուխ դնել այդպիսի ձեռնարկութիւնների համար: Միթէ իսկապէս ձեր հարուստները վաճառականական խելք և յանդգնութիւն իսկ չունին: Այստեղ, մեզ մօտ, մի լրագիր հիմնել—նշանակում է ձեռնարկել մի շահաւէտ և միևնոյն ժամանակ պատուաւոր գործի: Ձեր մէջ, զգում եմ, հարկաւոր է ունենալ նաև զոհաբերութեան այն վեհ զգացմունքը, որ ամեն մի քաղաքակրթութեան պահանջն է... Չունի՞ք այդպիսի հարուստ:

Սուրէնեանը տխուր շարժեց գլուխը:

—Ուրեմն... ասաց Իմման լրջութեամբ—իսկապէս անբախտ ազգ էք և... հեռու չէ ձեր կորուստը...

Ու մտախոհ՝ լռեց: Երկուսն էլ չըխօսեցին, երկուսն էլ մտածում էին. իսկ կառքը սրանալով փողոցներից մտնում էր անտառակը արագ քայլերով:

Իմման հրամայեց կառապանին հանդարտեցնել քայլերը:

Ծառուղու կէսին յանկարծ մի ձիաւոր մօտեցաւ կառքին, հեռուից նշան անելով կառապանին՝ որ կանգնէ:

Կառքը սկսեց աւելի ծանր քայլել: Հասնելով բոլորովին մօտ, ձիաւորը հանեց գլխարկը և բարևեց: Իմման արագ

շարժմամբ ձեռքը դուրս պարզեց և ժպիտը երեսին ասաց ձիաւորին.

—Բարև, պարո՛ն. դուք էլ զբօսնելու էք ելել:

—Այո՛, օրիորդ. եղանակը շատ լաւ է: Կուզէ՞ք իջնել և քիչ ոտքով շրջագայել:

Իմման Սուրէնեանին դարձաւ հարցական դէմքով:

—Իջնենք. ասաց Սուրէնեանը:

Կառքը կանգնեցրին. բարոնը խկոյն ցած թռաւ և օգնեց Իմմային՝ դուրս իջնելու, մինչ Սուրէնեանը նրանց դիտելով, յիշեց որ բարոնի դէմքը տեսել էր Իմմայի ալբոմի մէջ: «Նշանածն» էր, Իմմայի նախասահմանեալը. մի համակրելի դէմքով ազնուական, որ հագել էր շքեղ և հեծած թանգագին նժոյգը ոտներով գետինն էր դոփում:

Իմման զգաց որ Սուրէնեանը ճանաչել էր բարոնին և ներկայացրեց նրանց միմեանց:

—Բարոն Շիւլց... պարոն Սուրէնեան:

—Ա՛, պարոն Սուրէննն է. ժպտեց բարոնը ձեռքը պարզելով—շատ ուրախ եմ որ տեսնում եմ քեզ. օրիորդը խօսել է ինձ ձեր մասին:

Իմման կարմրեց: Սուրէնեանը խոնարհութիւն արաւ:

—Ես վատ եմ խօսում ֆրանսերէն. շարունակեց բարոնը—բայց հասկանում եմ և հասկացնում: Ուրախ եմ որ ծանօթացանք, պարոն...

—Դուք մեզ մոռացել էք, բարո՛ն, ընդհատեց Իմման—երեք օր է որ ձեզ չենք տեսնում. հայրս անհանգիստ էր ձեր մասին:

—Շնորհակալ եմ, օրիորդ. քիչ զբաղումներ ունէի: Իսկ դուք երկար կըմնաք Փարիզ չէ՞, քանի որ պարոնն էլ եկել է:

—Օ՛, ոչ. ժպտեց Իմման—պարոնը երկար չի մնալ երևի... բայց դեռ որոշ ոչինչ չըգիտենք:

—Իսկ ի՞նչ լուրեր կան ձեր յարգելի մօրից:

—Ամեն օր հեռագիր ունենում ենք. երեկուանը շատ լաւ էր. երևի այսօր աւելի լաւը կունենանք:

—Ուրախ եմ... Ներեցէք, պ. Սուրէնեա՛ն, կարո՞ղ եմ

արդեօք ձեզ օգտակար լինել Փարիզում. կարծեմ դուք առա-
ջին անգամն էք այստեղ:

—Այո՛, բարոն:

—Ուրեմն պատրաստ եմ ձեզ ծառայելու. բաւական ծա-
նօթ եմ Փարիզին. գուցէ կըկամենայիք ձեր հայրենակիցներին
հետ տեսնուել. մենք կը որոնենք և կըգտնենք նրանց:

—Շնորհակալ եմ. դեռ այսօր եմ եկել և յոգնած եմ:

Խօսակցութիւնը, ըստ երևոյթին, չէր կպչում: Սուրէ-
նեանը շատ սառն էր պահում իրեն: Մի տեսակ խուլ նա-
խանձ ու կասկած նորէն սկսում էր մտնել սրտի մէջ: Ցան-
կութիւն էր զգում նորից կառք նստել և խլել Իմմային այդ
թեկնածուի հայեացքից անգամ: Մանաւանդ Իմման իր սիրա-
լիր վարմունքով բարոնի հետ՝ աւելի զայրացնում էր նրան. Սու-
մինչև իսկ ընդունեց բարոնի թևը, երբ սա առաջարկեց: Սու-
րէնեանը գունատուեց, երբ նրանց տեսաւ այդպէս: Իմման, երե-
ւի նկատեց Սուրէնեանի հոգեկան տանջանքը, որովհետև իս-
կոյն բռնեց նրա ձեռքից, մօտ քաշեց և ասաց.

—Կողքիցս քայլիր. ես կըցանկանայի որ բարոնի հետ
բարեկամանաս. երկուսդ էլ լաւ մարդիկ էք. արժանի է որ
լաւ մարդիկ միմեանց մտերմանան...

Քիչ-քիչ Սուրէնեանը խօսակցութեան մէջ մտաւ և երբ
կէս ժամ յետոյ Իմմայի հետ բարոնին ողջունում էր՝ կառք
նստելու՝ բարեկամաբար սեղմեց նրա ձեռքը:

Կառքի մէջ նա ոչ մի խօսք չըխօսեց բարոնի մասին:

Է.

Ճաշին Իմմայի հայրը չ՚եկաւ. լուր էր ուղարկել, որ մի-
այն երեկոյեան կըգայ և պատուիրել էր Սուրէնեանին պահել՝
մինչև իր գալը:

Ճաշելուց յետոյ, սրահի մէջ Սուրէնեանը ծխեց և Իմ-
մայի հետ զբաղուած էին այլ և այլ խօսակցութիւններով, երբ
ծառան Իմմային բերաւ մի այցետոմս:

—Ինձ համա՞ր է, կարդալուց յետոյ հարցրեց Իմման ծա-
ռային—այս անձին ես չեմ ճանաչում:

—Կարծեմ պարոնի համար պիտի լինի. այդ անձը հայ է:

—Հա՛յ. վեր թռաւ Սուրէնեանը:

Այցետոմսի վրայ գրած էր. «Գ. Սարգիս»:

—Խնդրեցէք. հրամայեց Իմման. յետոյ, երբ ծառան
դուրս էր գնացել, հարցրեց Սուրէնեանին.

—Ճանաչո՞ւմ ես այդ անձին:

—Ոչ... բայց ո՞վ է յայտնել որ ես այստեղ եմ:

—Գուցէ հիւրանոցումն է ապրում և ծառաներից է
իմացել:

Քիչ յետոյ ներս էր մտնում կոշտ գծագրութիւններով և
շատ հասարակ հագնուած թխադէմ մի երիտասարդ, որ Իմ-
մային տեսնելուն պէս՝ շփոթուած ետ քաշուեց և կմկմաց.

—Ներեցէք, սխալուած եմ. ինձ ասացին որ այստեղ մի
հայ կայ, մի ուսանող Զուիցերիայից:

—Այդ ես եմ. առաջ գնաց Սուրէնեանը և խօսեց ֆրան-
սերէն—դուք հա՞յ էք:

—Այո՛. Սարգսեան. ուսանող իրաւաբան:

—Ծանօթանանք. Սուրէնեան.

—Սուրէնեա՞ն. գոչեց ուսանողը—գիտեմ... շատ ուրախ
եմ ձեզ տեսնելով:

—Խնդրեմ ներս եկէք... ծանօթացէք այժմ օրիորդ Իմ-
մա Կարլսէնի հետ...

Իմման թօթուեց ուսանողի ձեռքը և երբ երեքն էլ նըս-
տել էին, ուսանողն էր որ խօսեց առաջ:

—Ինձ կոմս դը Բրէզան հանդիպեց... սկսեց նա:

—Ա՛... ծիծաղեց Իմման—կոմսը իր խօսքը պահել է.
լաւ է այդ. պէտք է շնորհակալ լինել նրանից... Ձեր ազ-
գանո՞ւնը, պարո՛ն:

—Սարգսեան:

—Սարգսեան... կրկնեց Իմման—միթէ բոլոր ազգանուն-
ները «եան»-ով են վերջանում:

—Գրեթէ բոլորը. սիրտ առաւ ուսանողը և շարունակեց

—Ես հետաքրքիր էի տեսնել այդ հային որ Զուրցերլիայից է
գալիս. ուզում էի թարմ լուրեր ունենալ... բայց ներեցէք
ինձ, պարոն Սուրէնեան...—և յանկարծ հայերէն լեզուով հար-
ցրեց—կարո՞ղ եմ ազատ խօսել օրիորդի մօտ...

—Այո, խօսեցէք անվախ. պատասխանեց նոյն լեզուով
Սուրէնը:

—Այդ ի՞նչ լեզուով էք խօսում, հետաքրքրուեց Իմման:

—Հայերէն է. ժպտեց Սուրէնեանը:

—Հայերէ՞ն... բայց այդ լեզուն չէ յիշեցնում այն ձեր
արտասանած ոտանաւորին:

—Նա հին լեզուն է, հայերէնի լատիներէնը:

—Այժմ, շարունակեց Սարգսեանը անհամբեր և ֆրան-
սերէն լեզուով—կուզէի ձեզնից թարմ լուրեր իմանալ. ի՞նչ են
անում մերոնք այնտեղ. արդեօք գնացողներ էլի եղե՞լ են. առ-
հասարակ ի՞նչ ժողովներ են տեղի ունեցել նոր և ինչ պատ-
րաստութիւններ են տեսնում...

Սուրէնեանը զարմացած նայում էր Սարգսեանին:

—Ի՞նչպէս... թոթովեց նա—գնացողնե՞ր... ժողո՞վ... ո-
չինչ չեմ հասկանում ձեր հարցերից... ես վերջերս Լօզան էի:

—Եւ մի՞թէ Լօզանում ոչինչ չըկայ կամ իսկոյն չեն ի-
մացնում ձեզ եղածները և կամ դուք չէք գնացել Ժընէւ՝ ժո-
ղովների ժամանակ:

Սուրէնեանը հետզհետէ աւելի շփոթւում էր: Ոչինչ չը
գիտէր, ոչինչ չէր լսել: Եւ այնուամենայնիւ Փարիզի ուսանո-
ղից էր իմանում որ «գնացողներ» կային, որ ժողովներ են
տեղի ունեցել, որ այնտեղ մարդիկ գործում են եղել... Վուլ-
կանն էլ իրեն ոչինչ չէր ասել: Ի՞նչ էր նշանակում այդ բո-
լորը. արդեօք ծածկում էին իրենից և կամ արդեօք ինքը չէ՞ր,
որ իր վարմունքով, խելքը-միտքը միայն սիրոյն տուած, չէր
հետաքրքրուել և հեռու էր մնացել ամեն բանից:

Եւ Սարգսեանի հետաքրքրող ու թափանցող հայեացքն
աւելի ևս ամաչեցնում էր նրան:

—Ուրեմն դուք ոչի՞նչ չըգիտէք... քիչ լռութիւնից յետոյ
դէմքը կնճռած՝ ասաց ուսանողը և շարժուեց ելնելու:

Իմման շտապեց Սուրէնեանին ազատել այդ դրութիւնից.
տուր ըմբռնողութեամբ հասկացաւ որ Սուրէնեանը դատապար-
տուած էր, եթէ մնար անտեղեակ բոլոր եղածներից:

— Խնդրեմ, ասաց նա ուսանողին—ներողութիւն կըտէք փոքր
ինչ մեզ հետ ժամանակ անցկացնելու և եթէ կարելի է հան-
գիստ տեղաւորուեցէք, մենք միասին թէյ կըխմենք:

—Շնորհակալ եմ, ես պիտի գնամ... շարժուեց ուսանողը:

—Ո՛չ այդպէս... մարդ այդպէս շուտով չի հեռանալ իր
հայրենակցից. դուք շատ խօսելու բաներ կունենաք միմեանց
հետ և իմ սրտիս էլ մօտիկ լինելով ձեր ազգի շահերը, ես էլ
կուզէի իմանալ, լսել և տեսնել թէ ինչով կարող եմ օգտա-
կար լինել:

Յետոյ, շնորհալի ժպիտով ելաւ, զանգահարեց, հրամայեց
ծառային թէյ բերել, աթոռը մօտ քաշեց Սուրէնեանին և
դառնալով ուսանողին, ասաց.

—Պէտք է անկեղծ լինել... Սուրէնեանը ահա երկու ա-
միս է, որ հայ ուսանողներից հեռու է և ոչինչ լուր չունի
եղածների մասին. սակայն այժմ, երբ նա աւելի առողջ է և
ես, որ սրտիս աւելի մօտիկ եմ զգում ձեր ազգի շահերը, կու-
զէինք ձեզնից իմանալ ամեն բան. թէ Սուրէնեանը և թէ ես,
պատրաստ ենք ամեն բան անել օգնելու, ձեռք տալու
եղած գործին:

—Բայց, տարօրինակը այն է, խօսեց ուսանողը—որ ես
լսել էի պ. Սուրէնեանի մասին իբր խառնւող հայ ուսանողու-
թեան մէջ. և ինձ ասել էին որ նա գրում է հայ թերթե-
րում. այժմ զարմանում եմ որ երկու ամբողջ ամիս կարողացել
է հեռու մնալ և չը հետաքրքրուել թէ որքան նոր գործեր են
կատարուել Ժնէւի հայ ուսանողութեան մէջ... Դուք լսե՞լ էք
օրինակ, Բարսեղի գնալը...

—Բարսե՞ղ... ոստնեց Սուրէնեանը—այդ այն կարճահասակ
կրակոտ, շարժուն և անկեղծ ուսանողը չէ՞, որի հետ Ժընէւում
ծանօթացայ... և ո՞ւր է գնացել նա:

—Այնտեղ՝ ուր գործելու բան կայ:

—Այնտե՞ղ... կրկնեց Սուրէնեանը և սիրտը սեղմուեց—բայց մէ՞ջէ նա աւարտեց ուսումը:

—Ո՛չ... սակայն գործի համար հարկաւոր է ամեն բան թողնել և գնալ... Դուք դուցէ չըգիտէք իսկ թէ ինչեր են կատարւում երկրի մէջ...

Սուրէնեանը լռեց և գլուխը խոնարհեցրեց: Իմման դէմքը կնճռեց. ամաչում էր Սուրէնեանի համար:

—Այնտե՞ղ, շարունակեց ուսանողը—ամեն բան շարժւում է. հայրենիքը իր կրթւած որդիներին կանչում է. ով կարող է, պիտի թողնի ամեն բան և գնայ... դուք աւարտե՞լ էք:

—Աւարտել է. խօսեց յանկարծ Իմման և վճռականօրէն աւելացրեց—պ. Սուրէնեանը նոր աւարտեց և շուտով հայրենիք պիտի գնայ:

Ու դէմքը լուրջ՝ նայեց Սուրէնեանին:

—Այո՛, ասաց վերջինս—պիտի գնանք հայրենիք՝ գործելու:

—Շա՛տ ուրախ եմ... ուրախ դէմքով ասաց ուսանողը—և լաւ էք արել որ առաջ Փարիզ էք եկել. ես ձեզ կըտանեմ մի քանիսների մօտ. խօսելու շատ բան կայ:

—Իսկ արդեօք չէ՞ կարելի է որ այդ մի քանիսները և դուք այստեղ, ինձ մօտ հաւաքւէք միշտ. ես ուրախութեամբ կըմասնակցեմ ձեր գործին և ինչով որ կարող եմ կ'օգնեմ. ասաց Իմման:

Սարգսեանը զարմացմամբ նայում էր օտար աղջկան:

—Դուք զարմանո՞ւմ էք... ժպտեց Իմման. յետոյ, պահ մի լռելուց յետոյ, դարձաւ Սուրէնեանին և դողդոջուն՝ ասաց գերմաներէն.

—Ներկայացրո՛ւր նշանածիդ այդ պարոնին:

Սուրէնեանը ցնցւեց առաջ, յետոյ մէկէն դէմքը պարզւեց: Նա ելաւ տեղից և հանդիսաւորապէս, դառնալով Սարգսեանին՝ ասաց.

—Պ. Սարգսեան, օրիորդը իմ նշանածն է... մենք միասին պիտի գործենք մեր երկրի համար:

Սարգսեանը յուզւած ոտքի ելաւ և բարևեց. յետոյ մէկէն մօտ գնաց, սեղմեց Իմմայի ձեռքը և ոգևորութեամբ գոչեց.

—Զգում եմ, օրիորդ, որ դուք ո՛չ միայն ձեր ամուսնուն պատիւ պիտի բերէք ձեր գործունէութեամբ, այլ բոլորիս պիտի ոգևորէք մեր ընթացքի մէջ...

—Շնորհակալ եմ. ժպտեց Իմման—ես ուզում եմ որ թէ Սուրէնը գործէ, թէ ես և թէ դուք բոլորդ, որոնք ունիք ոգևորութիւն և գործելու եռանդ... Այդպէս ուրեմն, հետաքրքիր ենք ծանօթանալ և խօսել բոլոր ձեզ նմանների և ձեզ հետ գործով ոգևորւողների հետ... այս երեկոյ իսկ, ժամը 8-ին ես և Սուրէնը ձեզ բոլորիդ կ'սպասենք այստեղ, ինձ մօտ:

—Անպատճառ. ասաց աշխուժով ուսանողը, յետոյ ոգևորութեան յուզմամբ առաւ ծառայի մատուցած թէյը և շտապով խմել սկսեց:

—Ես... կանգ առաւ կէսին և սկսեց խօսել—ես... շատ և շատ գոհ եմ, պ. Սուրէնեա՛ն, որ եկայ ձեզ մօտ. մտածեցի, որ հայ գրողը ամենից աւելի պիտի ոգևորւի հասարակական գործով. և չէի սխալւել. դուք մեզ, բացի ձեզնից տալիս էք նաև մի աշխուժով լի, մեր գործերով հետաքրքրւող և ազնիւ կին... այո՛, ազնիւ... կըցանկայի որ շատ հայ կին ունենար ձեր նշանածի կէսի չափ պատրաստականութիւն, եռանդ... այո... ներեցէք ինձ, ես սաստիկ յուզւած եմ...

—Հանգարտեցէք. պարոն, ժպտեց Իմման—ես իմ նշանածի հետ եմ միշտ և որպէս մարդ, զգում եմ պարտականութիւններ՝ դէպի անբախտները... բացի դրանից, ես շարժւել, գործել եմ ուզում:

—Օ՛, այո՛, տաքացած ասաց ուսանողը—գործ՝ որքա՜ն կամենաք. գործ շատ կայ. նոր է սկսում, բայց անելու շա՛տ բան կայ. շա՛տ եռանդ, մե՛ծ ոյժ, մեծ կամք և մեծ յարատևութիւն է հարկաւոր... կռիւ է, պիտի նետւել ասպարէզ... կանայք իսկ անելու շատ բան ունին... այո... պիտի տեսնենք... Շնորհակալ եմ թէյից. ինձ թոյլ տւէք իսկոյն գնալ և պ. Սուրէնեանի ու ձեր գալը հաղորդել ընկերներիս.. կուրախանան... բոլորը կուրախանան... Ամենքը արդէն շարժւում են, գործել են ուզում... մենք էլ կ'սկսենք, այստեղ, ձեզ մօտ...

շնորհակալութիւն և յարգանքս, օրիորդ… մենք երկար կըխօսենք դեռ…

Եւ յուզւած էր ուրախութիւնից: Էմման սեղմեց նրա ձեռքը և ուսանողը արագ՝ դուրս գնաց:

Նրա գնալուց յետոյ մի րոպէ լռութիւն տիրեց սենեակում:

Էմման պահ մի դիտեց գլուխը ձեռքին յենած Սուրէնեանին, երկու պտոյտ արաւ սենեակի մէջ, յետոյ եկաւ կանգ առնելու երիտասարդի առաջ և ասաց կտրուկ ձայնով.

—Քո կամքիդ հակառակ չէ՞ր ինչ որ քեզ անել տուի այժմ:

Սուրէնեանը ժպտելով նրան նայեց և ասաց.

—Բոլորովին ոչ, շատ շնորհակալ եմ որ դու խօսեցիր իմ փոխարէն: Ես վճռել էի գնալ հայրենիք գործելու. ինձ մընում է միայն հրճւել որ դու քաջալերում ես ինձ և ինձ հետ ես:

Էմման դրկեց նրան, գլուխը դրաւ կուրծքին և կցկտուր մրմնջաց.

—Ես լինեմ կամ չըլինեմ քեզ հետ, Սուրէն, յիշիր որ ով իր հայրենիքը չէ սիրում, նրա սիրոյ վրայ վստահել չի կարելի. ով պէտք եղած ժամանակ ամեն բան չէ զոհում իր եղբայրների, ծնողների համար, նա ընդունակ չէ մեծ սէր ունենալ դէպի կինը: Մեծ եղի՛ր, Սուրէն, մեծ՝ և իմ սէրը կըմեծանայ նոյն չափով…

—Իսկ դո՞ւ, գգւեց նրան Սուրէնեանը—դու չե՞ս գալ ինձ հետ:

—Առ այժմ չըգիտեմ. ոչինչ չեմ կարող ասել… գուցէ չըկարողանամ գալ. բայց, վաղ թէ ուշ՝ ես քեզ հետ եմ. Հեռւից կամ մօտից քեզ ձեռք եմ տալիս և ուզում եմ որ դու քայլես զինուորի նման, միշտ կուրծքդ ուղիղ, միշտ առաջ և անցնելով ամեն խոչընդոտների վրայից քաջաբար, առանց կասելու, առանց վարանելու…

Սուրէնեանը սիրով ու հիացմունքով կռացաւ դէպի այդքա՛ն ոգևորիչ խօսքեր արտասանող շրթունքները…

Նոյն երեկոյեան մի խումբ երիտասարդներ խմբւած Էմմայի շուրջը՝ բարեկամաբար և ոգևորութեամբ խօսակցում էին:

Այդ խօսակցութիւնից, ի միջի այլոց, Սուրէնեանը ամաչելով միայն նոր իմացաւ որ Ժընէւի իր ծանօթներից շատերը, նոյն իսկ Պօղոսեանը՝ հայրենիք էին գնացել, ոմանք կիսատ թողնելով ուսումը, ոմանք աւարտելով:

Այդ խօսակցութիւնից հիմք դրւեցաւ մի նոր խմբի, որի կեդրոնը ինքնաբերաբար Էմման էր լինում իր ոգևորութեամբ, պատրաստականութեամբ և եռանդով: Էմման խոստանում էր փող, իր աջակցութիւնը և մտնում էր ասպարէզ, որպէս հիմնադիր մի նոր շրջանի, որ պիտի իր ծրագիրը գծէր յաճախակի ժողովումներով, իր գործունէութիւնը սկսէր և իր եռանդը տարածէր շրջապատող հայ ուսանողութեան մէջ:

Եւ տասնևհինգ օրից յետոյ Էմման ու հայ ուսանողները գնացքով ճանապարհ էին դնում Սուրէնեանին դէպի հայրենիք, միմեանց խօսք էին տալիս անընդհատ թղթակցել, յարաբերութեան մէջ լինել:

Երբ հրաժեշտի ողջոյնն էին տալիս, Էմման դրկեց, երկար համբուրեց Սուրէնեանին և յուզւած ասաց.

—Քա՛ջ եղիր. երբ հնարաւոր լինի, իսկոյն պիտի գամ քեզ գտնելու. պատրաստի՛ր հող, գործի՛ր և մենք բոլորս կըգանք քեզ աջակցելու…

Յետոյ կռացաւ դէպի նրա ականջը և ասաց.

—Մեր պսակը կըկատարենք այնտեղ, մի հնադարեան և պատկառելի հայ եկեղեցոյ կամարների տակ, շրջապատւած երկրիդ թարմ, գործունեայ և եռանդոտ ընկերներով…

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ա.

Դուռը բաց արաւ ճաղատ գլխով և կովային լայն դէմքով հայ ծառան, որ ցցուեց Սուրէնեանի առաջ, առանց մի խօսք արտասանելու։ Ներսից լսւում էին վիճաբանութեան ձայներ։

— Կարելի՞ է խմբագրին տեսնել. հարցրեց Սուրէնեանը։

— Ո՞վ է այն, Փիլիպպոս. լսւեց մի հաստ ձայն՝ նախագաւթի նմանող փոքրիկ սենեակից, ուր, սեղանի առաջ նստող անձը, աչքերը ճպճպացնելով կիսովին բարձրացել՝ դուրս էր նայում։

Սուրէնեանը գլխարկը հանեց, փայտը դրեց մի անկիւն և ներս գնաց։

Թիֆլիսի հայերէն «Ձայն» լրագրի խմբագրատանն էր։

Կովկաս հասնելուն պէս՝ Սուրէնը առաջ Թիֆլիս էր եկել և Թիֆլիս մտնելուն պէս՝ մտածել էր խմբագրութիւնների հետ ծանօթանալ, ենթադրելով որ հայ ինտելլիգենտ ոյժերն անշուշտ պիտի խմբւած լինէին այդպիսի հաստատութիւնների շուրջը։

Երբ ներս էր գնում, միւս սենեակից դռան վրայ յայտնուեց մի երկրորդ անձ, կարճլիկ, չոր և սև։

—Պ. խմբագրին կուզէի տեսնել. դարձաւ նրան Սուրէնեանը և առաջացաւ դէպի միւս սենեակը։

Կարճլիկ անձը շտապով ներս էր քաշուել և այժմ վէճի ձայներն իսկոյն լռեցին։ Սուրէնեանը իրեն գտաւ չորս հասակաւոր անձերի մէջ, որոնք բոլորն էլ անմիջապէս պաշտօնական կերպարանք ստացան և սկսեցին զննել նորեկին։

—Ի՞նձ էիք կամենում տեսնել. հարցրեց մի ձայն, որ շատ նման էր կոկետութիւն անող կնոջ ձայնի։

Խմբագիրն էր։ Կլոր, առողջ կարմրաթուշ անձ, որ նստել էր սեղանի առաջ և ձեռքի կարմիր մատիտով կիսադէմքեր էր գծում լրագրի վրայ։ Ասելով այդ խօսքերը, նա ոտքի ելաւ։

Միւսները ետ քաշուեցին. մէկը նստեց երկրորդ գրասեղանի առաջ և գրիչը ձեռքն առաւ, երկրորդը տեղ բռնեց պատի տակ դրւած օթոցի վրայ և մի ինչ որ մեծ լրագիր ձեռքն առաւ, իսկ երրորդը թիկն տւաւ մի պահարանի, որի մէջ երևում էին հատորներով խոշոր գրքեր։ Բոլորն էլ սկսեցին նեղիչ կերպով զննել Սուրէնեանին. կովային դէմքով ծառան քսկ գլուխը ներս պարզած՝ նայում էր նրան։

Սուրէնեանը անւանեց իրեն, ասաց որ արտասահմանից նոր էր եկել և որ «Ձայն» թերթի թղթակիցն է եղել մի ժամանակ։

—Ես… թոթովեց խմբագիրը—ես չեմ յիշում. ասացէք որ Ցիւրիխ էք եղել։

—Բայց ինչպէս չէ. խօսեց սեղանի մօտ նստած անձը—պարոնը, իրաւ է, անցեալ տարի մեզ թղթակցել է Ցիւրիխից, «Սուր» ստորագրութեամբ։

Խօսողը կարճահասակ, նոյնպէս դեր և առողջ, սևախառն-գորշ երկար մօրուքով, փոքրիկ-շարժուն աչքերով անձ էր, որ անընդհատ՝ ընչացքն էր սրում աջ ձեռքով։

Սուրէնեանը նրան նայեց։ Լսել էր «Ձայնի» այդ մեծ դեր խաղացող աշխատակցի մասին, որը, նախկին խմբագրի գործից քաշուելուց յետոյ, նոր խմբագրին ձեռքի մէջ էր առել և ինքն էր գրեթէ թերթի ղեկավարը։

—Այո՛. ասաց Սուրէնեանը—թղթակցել եմ ձեզ անցեալ տարի. ցաւում եմ որ պ. խմբագիրը չէ յիշում:

—Ա՛հ, այո՛, այո՛. գոչեց յախուռն կերպով խմբագիրը—այժմ յիշեցի. այո՛, դուք լաւ էիք նկարագրում ուսանողների կեանքը...

—Բայց ո՛չ. նեղացած ձայնով գոչեց միւսը—պ. Սուրէնեանը գրում էր ցուցահանդէսի մասին. մեր յատուկ թղթակիցն էր. երևի չէք էլ կարդացել նրա գրուածքները:

—Ինչպէ՞ս չէ... թոթովեց խմբագիրը կարմրելով—կարդացել եմ... շատ ուրախ եմ: Եւ քիչ ժպտելով՝ աւելցրեց—խնդրեմ, խնդրեմ նստէք այստեղ: Դուք նո՞ր էք եկել. էլ՞ վերադառնալո՞ւ էք:

—Ո՛չ. պատասխանեց Սուրէնեանը—ես աւարտեցի:

—Աւարտացի՞ք... շնորհաւորում եմ. այդ լաւ է. իսկ ի՞նչ մասնագիտութիւն, ներեցէք հարցնել:

—Պատմական:

—Պատմակա՞ն... զարմացաւ խմբագիրը—կարծում էի թէ քիմիա կամ բժշկութիւն:

—Ինչո՞ւ. հարցրեց Սուրէնեանը—միթէ գտնում էք որ պատմական գիտութիւնները աւելորդ առարկաներ են:

—Բայց ո՛չ, ժպտեց նորից խմբագիրը—միայն գուցէ դուք չըգիտէք, որ այդ մասնագիտութիւնը ձեզ ո՛չ մի իրաւունքի տէր չէ դարձնում այստեղ. մինչ քիմիկոս եթէ լինէիք, կարող էիք մի լաւ պաշտօն ունենալ Բագւում:

—Ես կարիերի համար չէ որ ուսել եմ:

—Ա՛... լա՛ւ, լա՛ւ. իդէա՛լ... ի հարկ է: Սակայն, ներեցէք հարցնել թէ ինչո՞վ էք ուզում ուրեմն զբաղուել. ուսուցչութեամբ:

Այդ միջոցին յանկարծ ուժգին զանգահարութեան ձայն լսւեց, յետոյ դուռը բացւեց և ներս ընկաւ մի կարճահասակ շէկ և յիմար դէմքով երիտասարդ, որ գլխարկը ձեռքին մի դէրք էլ թևի տակ՝ քրտնաթոր և շնչասպառ սենեակ մտաւ ասելով.

—Ո՞ւր է պ. Սրապեանը...

Յետոյ գլուխը խմբագրական սենեակը պարզեց և ասաց.
—Ներեցէք... պ. Սրապեան... ընտրւեցին. վերջացաւ...
Սրապեանը, խմբագրութեան նշանաւոր անձը, այդ բա-
ռերը լսելով՝ թողեց ընչացքը և ցատկեց տեղից:
—Ներս եկէք. ձայնեց նա եկողին—ընտրւեցի՞ն ասում էք.
զուտ մերո՞նք ընտրւեցին:

—Այո՛, այո. շտապով ասաց լրաբերը—զուտ մերոնք...
«Լոյսի» կողմնակիցները սևացան: Աղմկեցին, գոռգոռացին,
բայց մեր ձայնը շա՛տ աւելի բարձր էր: Քիչ մնաց տուր ու
դմբոց դուրս գար... Մովսէսը մէկ ձեռքովը երկու լոյսական-
ների դուրս շպրտեց եկեղեցուց... Այո՛, մերոնք ընտրւեցին
բոլորը...

Սրապեանը, աչքերը ուրախութեամբ լի, վազեց գրասե-
ղանի մօտ, գրիչը ձեռքն առաւ և հարցրեց նորից լրաբերին.
ընտրւե՞ց Սահակեանը:

—Ապա՛... անուննե՞րը... Բոլորը, ինչ որ
—Ընտրւեց: Հովլւեանն էլ ընտրւեց... ընտրւեցին: Գիտէ՞ք, ես
նշանակել էիք թերթիկների մէջ՝ այնքա՛ն թերթիկներ եմ
երկու օր է, որ հանգիստ չունիմ. խոստումներ արել...
ցրւել, այնքա՛ն գոռգոռացել, Սուրէնեանին նայելով

—Լա՛ւ. այդ թողէք. գաղտագողի ընտրու-
ասաց Սրապեանը—դրանք աւելորդ խօսքեր են...
թիւնը շա՛տ աղմկալից էր:

—Օ՛, ո՞րքան կուզէք... լոյսականները ուզեցին ընտրու-
թիւնը ապօրինի հռչակել. գոռում էին որ քուէների մէջ
խարդախութիւն կայ և այլն և այլն... Բայց Մովսէսը այն-
պէս ճչում էր, այնպէս հրում-հրմշտկում բոլորին և այնպէս
ձեռքերը շարժում քահանայի վրայ...

—Քիչ հանդարտեցէք, պ. Դաւթեան. ասաց մեղմութեամբ
խմբագիրը:

Սուրէնեանը զարմացած դիտում էր բոլորը և ամենքին
էր նայում յաջորդաբար. իսկ խմբագրութեան միւս անդամնե-
րը անցած միւս սենեակը՝ փսփսում էին հաստամարմինի հետ:

—Գիտէ՞ք, ժպտալով բացատրեց Սուրէնեանին խմբագիրը
—մի ընտրութիւն կայ, որ ահա մի ամիս է, զբաղեցնում է

հասարակութեանը, տեղի են ունենում կուսակցական պայքար-
ներ, մեր կուսակցութիւնը յաղթել է... վերջացրէ՛ք, պ. Սրա-
պեա՛ն, դարձաւ նա աշխատակցին:

—Այո՛. վերջացաւ, ասաց Սրապեանը, արագութեամբ մի քանի տող գրեց թղթի կտորի վրայ, տուաւ ծառային և հըրամայեց.

—Շուտ տպարան տար:

Ապա ելաւ, վառեց պապիրոս և դարձեալ ընչացքը սկսեց ոլորել ջղայնութեամբ:

Լրաբերը դռան մօտ կանգնած, ճակատի քրտինքն էր սրբում: Սրապեանը այժմ միայն նկատեց, որ նա սպասում էր. մօտեցաւ և դուրս տարաւ:

Խմբագիրը միշտ ժպիտը դէմքին, դարձաւ Սուրէնեանին և շարունակեց.

—Այո... ասաց նա—դուք ասում էիք ուրեմն որ ուզում էք ուսուցչութեամբ զբաղուել... ինչ կայ, մենք ձեզ համար պաշտօն կ'որոնենք:

—Ես չ'ասացի այդ:

—Ա՛խ, այո... ներեցէք. ես էի հարցնողը: Գիտէ՞ք ինչ...

Եւ մինչ խմբագիրը խօսում էր, Սուրէնեանը լսեց թէ ինչպէս դրսում լրաբերը հարցնում էր Սրապեանին.

—Ուրեմն իմ պաշտօնը ապահովւա՞ծ է:

—Ի հարկէ. հոգաբարձուները այժմ մերոնք են, հէնց որ գործի սկսեն, ձեզ պաշտօն կըտանք...

Յետոյ ձայները մեղմացան և Սուրէնեանը էլ ոչինչ չըլսեց, բացի խուլ փսփսուքից: Խմբագիրը շարունակում էր խօսել: Սուրէնեանը նոր միայն սկսեց ականջ դնել նրան:

... Այդպէս. ասում էր խմբագիրը—ինչպէս ասացի, մեր երիտասարդները սխալ են գործում, որ արտասահման են գընում բարձրագոյն ուսման համար. ձեզ ես փաստեր տալի, որ այդ՝ պրակտիկական չէ...

—Ի՞նչ փաստեր. շփոթւեց Սուրէնեանը:

—Այն, որ նոքա, աւարտելուց յետոյ, ո՛չ մի խրաւունքի

տէր չեն դառնում մեզանում և բացի ուսուցչութիւնից, ոչինչ չեն կարող անել... ի հարկէ, եթէ քիմիկոս լինէին...

—Բայց ես մտադիր չեմ նուիրել ինձ ուսուցչութեան. միջահատեց Սուրէնեանը- ես մտածում եմ գրականութեամբ ըզբաղուել:

—Գրականութեա՞մբ... զարմացաւ խմբագիրը:

—Հը՛մ... արեց այդ միջոցին ներս մտնող Սրապեանը և հեգնող ժպիտ դէմքին, նորից նստեց գրասեղանի առաջ—պարոնը ուզում է գրականութեամբ զբաղուել... վատ չէ. իսկ դուք գրու՞մ էք երբեմն:

—Ես գրել եմ և գրում եմ. դարձաւ նրան Սուրէնեանը—չէ՞ որ ձեզ էլ թղթակցել եմ:

—Այդ ոչինչ. փորձեցէք ուրիշ բաներ գրել և բերէք տեսնենք...

—Բայց պարոնը ուրիշ բաներ էլ է գրում. մէջ մտաւ դռան մէջ եկած ալեխառն անձը, որ առաջին անգամն էր խօսում: Յետոյ կաչաղակային ձայնով աւելացրեց.

—Ես պարոնի գրուածքները յաճախ կարդացել եմ «Լոյսի» մէջ... լաւ է գրում:

—«Լոյսի» մէ՞ջ... ճչաց Սրապեանը—դուք «Լոյսի» մէջ գրե՞լ էք:

—Եւ եթէ չեմ սխալւում. աւելացրեց ալեխառնը—մի ամբողջ տարի գրում էր:

—Այո՛, այո՛. պնդեց սեւամորթ չոր մարդը, ներս գալով նոյնպէս—ես էլ եմ կարդացել... պարոնը լաւ գրիչ ունի:

Յետոյ երկուսն էլ—սեւամորթն ու ալեխառնը՝ միմեանց նայեցին և հեգնօրէն ժպտեցին:

—Այդ ճիշտ է. ասաց Սուրէնեանը քիչ շփոթուած այդ շեշտերից ու ժպիտներից—ես նրան աշխատակցել եմ...

—Բայց դուք մի՞թէ չգիտէք թէ ինչ փողոցային թերթ է այդ «Լոյսը». ասաց խմբագիրը և միւսներին դառնալով յարեց—սպասեցէք, պարոններ. պ. Սուրէնեանը անշուշտ այդ թերթի ուղղութեանը չէ պատկանում. սխալւել է, չէ ճանաչել թերթին:

Եւ բոլորն էլ, մեղադրողների պէս դարձան դէպի Սուրէնեանը՝ սպասելով որ «յանցաւորը» կամ ուրանայ կամ արդարանայ։

—Ես չեմ սխալւել. դարձաւ նա խմբագրին.—«Լոյսը», որպէս և մեր բոլոր միւս թերթերը, ուղղութեան մասին խօսք անել չեն կարող, եթէ կուզէք՝ բոլոր թերթերի մէջ կարող էք գտնել ազամտական յօղւած՝ պահպանողականի կողքին և եթէ լուրջ քննադատութեան ենթարկենք այդ թերթերը, դուրս կըգայ որ բոլորն էլ անգոյն և առանց որոշ ուղղութեան են ղեկավարւում, լինելով պահպանողական՝ երբ իրենց շահը պահանջում է, ազատամիտ՝ երբ կամենում են. նոքա նմանում են լրատուների, երբեմն ժողովածուների և երբեմն... տէրը գիտէ թէ ինչի...

—«Լոյսն» է միայն այդպէս. գոչեց ուժգնութեամբ Սրապեանը—նա ո՛չ ուղղութիւն ունի և ո՛չ գոյն և դրա համար էլ փողոցային թերթ է. իսկ մենք ունինք որոշ ուղղութիւն, որոշ գոյն... եթէ չըգիտէք, ես ձեզ կըբացատրեմ...

—Խնդրեմ. ասաց Սուրէնեանը չորութեամբ։

—Հը՛մ... արեց Սրապեանը, աջ ձեռքը միշտ ընչացքին—մեր թերթը ազատամիտ է. այս առաջին. հակակղերական է, յառաջադէմ և երբեմն արմատական...

—Ընդհանուր բառեր. ժպտեց Սուրէնեանը—եթէ կուզէք՝ «Լոյսն» էլ այդպէս է.—ազատամիտ, հակակղերական, յառաջադէմ և երբեմն՝ արմատական, և անշուշտ երբեմն էլ պահպանողական. այդ նշանակում է քամուց շարժւող մի եղէգն... «Ձայնը» երբէք պահպանողական չէ՜ եղել։

—Բոլորովին ոչ...

—Ներեցէք. ընդհատեց Սուրէնեանը—եթէ թոյլ տաք ինձ, ես կ՚ապացուցանեմ որ «Ձայնը» թէ՛ պահպանողական է, թէ՛ ազատամիտ, թէ՛ կղերական և թէ հակակղերական...

Բոլորը շարժւեցին բողոքելու. խմբագիրը զարմացած՝ Սուրէնեանին նայեց ակնապիշ։

—Դուք մեր թերթը կարծեմ քիչ էք կարդացել. ասաց նա մեղմութեամբ։

—Մի՛շտ կարդում եմ, ինչպէս նաև բոլոր միւս հայերէն թերթերը. «Ձայնը» պահպանողական է, որովհետև յայտարարում է «մի մազաչափ անգամ չը շեղւել» այն ուղղութիւնից, որ գծել է նրա համար նախկին խմբագիրը, սրանից քսան և հինգ տարի առաջ։ Կարծեմ ո՛չ ոք չի լինի այնքան անմիտ, որ պնդի թէ քսանևհինգ տարւայ ընթացքում չէ կարող լինել մտքերի, նոյն իսկ համոզմունքների որոշ յառաջադիմական բարեփոխութիւն... մի մարդ, որ մի մազաչափ անգամ չէ ուզում շեղւել քսանևհինգ տարի առաջւայ կարծիքներից—նա կոչւում է պահպանողական և եթէ աւելի ուղիղն ասենք—յետադիմական, անշարժ մնացող. մի մարդ, որ այդ տրադիցեաները պահպանում է անշեղ, առանց ուշադրութիւն դարձնելու ժամանակի փոփոխւող, այլ պահանջներ դնող ոգուն՝ նա կոչւում է պահպանողական։ Հետևապէս, «Ձայնը» պահպանողական է. գուցէ ազատ մտածող, բայց ո՛չ յառաջադիմող։ Բայց դուք ինքներդ հակասում էք ձեզ։ «Ձայնը» կամայ թէ ակամայ, ստիպւած է ժամանակի յառաջադիմող ոգուն հետևել, այլ պահանջներ ունենալ, համոզմունքների այլ շրջանի մէջ մտնել։

—Բայց... գոչեց Սրապեանը—դուք սխալւում էք...

—Թոյլ տւէք նախ ես վերջացնեմ. միջահատեց խստութեամբ Սուրէնեանը—դուք ինձ ստիպեցիք լերկ ճշմարտութիւնը դնել ձեր առջև և պարտաւոր էք առանց քաշւելու՝ նայել նրա մերկութեան վրայ։... Ի՞նչ էր ասում ձեր նախկին խմբագիրը, օրինակ, հայ հոգևորականութեան մասին։ Ասում էր որ նա «կղեր» է այնպիսի դասակարգային սկզբունքներով, որպիսին է կաթոլիկ կղերը։ Ապացուցւած է նախ, որ այդ սխալ է. հայ հոգևորականութիւնը դասակարգ չէ կազմում և «կղեր» չէ. նա չունի իր առանձին շահերը՝ հակադրւած ժողովրդի շահերին. նա ժողովրդական եկեղեցու ժողովրդական պաշտօնեայ է և ուրիշ ոչինչ։ Նա կարող է ապականւել, բայց դէմ գնալ ժողովրդի շահերին՝ երբէք։ Դուք ինձ կառարկէք նրանով, որ նա կամենում էր դպրոցների մէջ մտնել և կրօնական ոգով բթացնել մեր սերունդը։ Այդ նրան անկարելի եղաւ և անկա-

ընելի էլ կլինէր։ Դէմ չեմ, երբ դիմադրում էին նրա այդ ոտնձգութեան, բայց գիտէի, որ եթէ դէմ չըլինէին անգամ, դարերից 'ի վեր ժողովրդական հայ հոգեւորականութիւնը չէր կարող կղերական դասակարգ դառնալ եւ այնպիսի վնասներ տալ, որքան կաթոլիկ կղերը։ Համաձա՞յն էք ինձ հետ... Ո՛չ, ո՛չ. համաձայն չե՛նք։ Շատ լաւ. այդ խնդիրը դեռ թողնենք. դա մի այնպիսի խնդիր է, որ երկար վիճաբանութեան առիթ կըտայ. սակայն հայ պատմութիւնը կայ եւ նա ապացուցանում է փաստօրէն իմ ասածները։ Թողնենք այդ։ Դուք ասում էք, որ «Ձայնը» հակակղերական է եւ այդ նրանով է ապացուցում որ «Ձայնը» միշտ հարուածել է եւ դէմ խօսել Էջմիածնին, հայ հոգեւորականութեան, մի առանձին ոգեւորութեամբ արձանագրելով նրանց զեղծումները եւ այլն։ Շատ գեղեցիկ։ Եթէ այդպէս է, ինչու է, որ այս տարի «Ձայնը» նո՛յն ոգեւորութեամբ պաշտպանում է Էջմիածնական վարչութեան քայլերը, առաջին ոգեւորութեամբ գովաբանում է հոգեւորականների գործերը, մինչեւ իսկ պաշտպանողի դեր է ստանձնել, այլ եւ արձանագրում է թէ ինչպէս այս ինչ եպիսկոպոսը ճաշի վրայ լաւ ճառ խօսեց, այն ինչը իր տօնի օրը այսքան հեռագիր ստացաւ, այն միւս երրորդը այս եւ այն ընդունելութիւնը գտաւ իր ճանապարհորդութեան միջոցին եւ այլն եւ այլն։ Եթէ «Ձայնը» հակակղերական է, ինչու է այդքան գովաբանում, այդքան ուրախութեամբ արձանագրում հայ «կղերի» գործերը, հետաքրքրւում նրա այս կամ այն անդամի քայլերով...

— Հայ կրօնաւորութեան մէջ կան շատ արժանաւոր անձեր այժմ մանաւանդ. ասաց խմբագիրը — եւ մենք իրաւունք չունինք չըխօսել այդ մասին։

— Այո՛. պնդեց սեւամորթը — կան ազատամիտ, յառաջադէմ կրօնաւորներ։

— Ազատամիտ կրօնաւորնե՜ր... ժպտեց Սուրէնեանը — այդ երկու բառը հաշտեցնել միմեանց՝ ես չեմ կարողանում. կրօնաւորը ունի իր մտքի որոշ, գծւած սահմանը, որից դուրս գալուն պէս, նա այլ եւս կրօնաւոր չէ։ Եւ եթէ դուք ենթադրում էք որ կրօնաւորը կարող է լինել ազատամիտ, ուրեմն

պէտք չէ որ հակակրօնաւոր-հակակղեր լինէք սկզբունքով եւ դէմ սկզբունքին. ուրիշ է դէմ լինել անհատների, ուրիշ՝ ամբողջ սկզբունքի. այդ կընմանի նրան որ ասէք «բարեգործութիւնը վատ սկզբունք է, որովհետեւ երբեմն դուցէ եւ յաճախ, կան ապականող, շառլատան եւ այլն բարեգործներ»։ Ուրեմն դուք ո՛չ թէ հակակղերական էք, այլ կրօնաւորութեան որոշ զեղծումների, նրա որոշ, զեղծում գործող անդամների դէմ։ Այդ ի հարկէ, շա՛տ գովելի է, բայց այդ միեւնոյնը անում են նաեւ «Լոյսը», «Խելքը» եւ միւս թերթերը։ Սկզբունքը անձերի հետ մի՛ խառնէք. գործնականապէս դուք չէք էլ խառնում. իսկ ինձ, ի զուր էք կամենում համոզել որ դուք հակակղերական սկզբունքի պաշտպանն էք։ Եթէ ամփոփենք, կըտեսնենք որ դուք ազատամիտ էք, պահպանողական եւ նոյնպէս, եթէ ձեր այժմեան խօսքերի վրայ դատենք — նաեւ յետադիմական, որովհետեւ յայտարարում էք ձեզ պինդ կապած քսանհինգամեայ աւանդութիւնների։ Բայց դուք պինդ կապած չէք այդ աւանդութեանց, որովհետեւ ժամանակի ոգին քաշ է տալիս իր ետեւից «Ձայնին» եւ դուք ստիպւած էք յառաջդիմել։

Բոլորը զարմանքով նայում էին Սուրէնեանին եւ միմեանց։ Սրապեանը միայն գունատւում էր, կարմրում, ընչացքը ջըղայնութեամբ ոլորում եւ անդադար ընդհատել, խօսել ցանկանում։ Եւ երբ Սուրէնեանը քիչ լռեց. նա ելաւ տեղից, ձեռքերը գրպանի մէջ դրած քայլեց դէպի դուռը, ապա եկաւ կըթնելու պատին եւ ասաց.

— Ահա թէ ինչպիսի մտքեր են բերում մեզ Եւրոպայից մեր նոր երիտասարդները. նոքա այլեւս որոշ գոյն չունին. նոքա կամենում են ո՛չ կուսակցութիւն ճանաչել, ո՛չ ուղղութիւն, նոքա ուզում են «բարձր» մնալ ամեն կուսակցութիւններից...

Ու ծիծաղեց հեգնաբար։ Այդ ծիծաղը գրգռեց Սուրէնեանին. բայց նա շուտով զսպեց իրեն։

— Ես դեռ չըվերջացրի. ասաց այժմ քիչ զայրացած ձայնով — եւ դուք, պարո՛ն, պարտաւոր էք լսել թէ Եւրոպայից եկած երիտասարդները ինչպէս կարող են ճշմարտու-

թիւնը ասել ձեզ առանց քաշւելու: Ես գրել եմ «Լոյսի» մէջ և եթէ հրաւիրեն ինձ գրելու, դարձեալ պիտի գրեմ: «Ձայնի», «Լոյսի» կամ նոյն իսկ «Խնլքի» մէջ տարբերութիւն ես շատ քիչ եմ գտնում: Մինչև իսկ որոշ առաւելութիւններ գտնում եմ «Լոյսի» և «Խնլքի» մէջ. և այդ այն է, որ նոքա հեռատես են. այո, հեռատես. դուք մի զարմանաք այդ գովեստի վրայ: Նոքա զգում են որ այժմ քան երբէք պիտի աչքի առաջ ունենալ այն առածը թէ «ով հայրենի ցանկը կըպատառի, նրան կըխայթի օձն անապատի»... հարկ չըկայ կարծեմ բացատրել այս: Միայն թէ նոքա ևս յաճախ մոռանում են այդ առածը, երբ մանաւանդ իրենց շահերը երևան են գալիս: Եւ այդ հեռատեսները, քողարկելով իրենց անձնական շահը հէնց այդ առածի տակ, նոյնքան կատաղութեամբ յարձակւում են այժմ Էջմիածնի և այլի վրայ, որքան դուք՝ մի քանի տարի առաջ. դերերնիդ փոխուել է. պատճառն այն է միայն, որ այժմ ամեն բան ձեր ուզածն է, ձեր սրնգի տակ է պարում, իսկ միւս թերթերի ձայնը նշանակութիւն չունի և նրանց շահերը վնասւում են, նրանց ուզած մարդիկը չեն գործերի ղեկավարները: Եւ, ընթերցող հասարակութիւնն ապշած այդ բոլորից, շուտով էլ ոչխար դարձած հետևում է ձեր քայլերին. դուք բոլորդ էլ բռնել էք այս ոչխարը, ողորմելի հասարակութեան քթից և ձեր ուզած ժամանակ խրում էք նրան ցեխի մէջ, ուզած ժամանակ էլ դուրս հանում... Դուք հայհոյում էք —ձեր հասարակութիւնն էլ հայհոյում է. փառաբանում էք մէկին—հասարակութիւնն էլ նոյնն է անում: Այդ բոլորը ձեր թերթերի պատրաստած ամբոխն է, որ այժմ դարձել է մի անմիտ, գժուած ամբոխ, որը միմիայն արձագանք է տալիս ձեր բոլոր ասածներին... Մարդ երբէք չէ կարող երևակայել այս աստիճանի անկումն մի հասարակութեան, այս աստիճանի անկումն նրա մտաւոր նժարի: Դուք սակայն, խնդրեմ մի նեղանաք ասածներիս համար... եթէ սխալւել եմ, համոզեցէք ինձ, ուղղէք իմ սխալը և ես ուրախութեամբ կըլսեմ...

Դարձեալ Սրապեանն էր, որ տաքացած մէջ մտաւ:

—Դուք սխալւում էք, այո, գոչեց նա – դուք ինչ որ

կանխակալ կարծիքներով է որ խօսում էք «Ձայնի» մասին. այսօր յետին երեխան էլ գիտէ, որ մենք փոխանակ ձգելու, իջեցնելու ժողովրդի մտաւոր նժարը—բարձրացնում ենք, նրա մտքի զարգանալուն և ազատ զարգանալուն մեծապէս նպաստում: Այս րոպէիս մեր մէջ միակ սիրւած, միակ տարածւած թերթը «Ձայնն» է, նա է, որ ղեկավարում է հասարակական կարծիքը... իսկ դուք, պարոն, չընայելով որ Եւրոպայից էք գալիս, աւելի պահպանողական էք, քան «Խնլքը» և բոլոր նրա կուսակիցները, դուք «Ձայնի» մէջ գրել չէք կարող, ձեր կարծիքները, ձեր ուղղութիւնը խաւարամտային, ծթւած, փտած...

—Հանդարտեցէք, պ. Սրապեան. մէջ մտաւ խմբագիրը, զգալով որ այդպիսի խօսակցութեան հետևանքը վատ էր լինելու:

—Ես... ես հանդարտ եմ, պարոն, ես միայն զայրանում եմ, որ օրը ցերեկով և... Ալլահը գիտէ. ինչ դիտաւորութեամբ, գալիս մտնում են մեր խմբագրատուն և համարձակւում պաշտպանել փողոցային թերթերին և փողոցային ուղղութիւնները... Ես կըգրեմ այդ մասին, ցոյց կըտամ որ անգոյնութիւնը, այդպիսի ոչ—կուսակցական ուղղութիւնն աւելի վտանգաւոր է...

—Աւելորդ կը լինի գրելը. ասաց Սուրէնեանը—ձեր գրելը ոչինչ նշանակութիւն չի ունենալ. դուք միշտ պիտի աչքի առաջ ունենաք որ վաղ թէ ուշ՝ հասարակութիւնը կարող է հասկանալ, թէ հայհոյելը՝ համոզել չէ և թէ ամեն բան պարսաւելը՝ քննադատութիւն չէ... բայց այդպէս անում են բոլոր թերթերը. «Ձայնը» բացառութիւն չէ կազմում. ձեզնից իւրաքանչիւրի կռւելու, քննադատութեան զէնքը միմիայն ծամծմւած, հազար անգամ կրկնւած ֆրազներ են և ձեր պատասխանը՝ հայհոյանք... «պոռնիկ, գրչավաճառ, լիրբ, անզգամ, կլոուն»... ահա մեր թերթերի քննադատութեան արգումենտները...

—Այո... գոչեց ուժգնութեամբ Սրապեանը—կան մարդիկ, որոնց միմիայն այդպէս կարելի է պատասխանել:

— Բայց ո՛չ համոզել։

— Համոզել չենք էլ կամենալ. սապատողին միայն գերեզմանը կ'ուղղի և մենք աշխատում ենք տրորել, ոչնչացնել այդպիսի սապատողների, որոնք ուզում են հասարակական կարծիքն էլ իրենց սապատի պէս ծռմռել, հրէշացնել...

— Թողնենք այդ բոլորը. մէջ մտաւ խմբագիրը նորից, հաշտեցնողի ձևերով — հանդարտեցէք, պարոններ։ Ի հարկէ, պ. Սրապեան, պ. Սուրէնեանը իրաւունք ունի քիչ. ինչ հարկէ հայհոյել, երբ կարելի է համոզել, պատասխանել...

— Բայց... արեց Սրապեանը զայրագին։

— Խնդրեմ հանդարտեցէք, համոզեց նրան խմբագիրը — Միւս կողմից դուք էլ իրաւունք ունիք. կան մարդիկ, որոնց հայհոյելով պէտք էր միայն..

— Սխալ է այդ. բացագանչեց Սուրէնեանը։

— Անշուշտ դուք իրաւացի էք. դարձաւ նրան խմբագիրը — դա կարող է սխալ էլ լինել, որովհետև հայհոյանքը աւելի թանձրացնում է սիրտը. աւելի լաւ է մեղմ, քաղաքավարութեամբ...

— Այդպէս կաշին հաստ մարդկա՛նց... ասաց Սրապեանը.

— Ճշմարիտ է. դարձաւ նրան խմբագիրը — համաձայն եմ որ այդպիսի մարդկանց պիտի ոչնչացնել... Սպինօզան ասում է որ «Շունը մեղաւոր չէ, եթէ կատաղում է, բայց և մենք մեղաւոր չենք եթէ նրան սպանում ենք»... Կարծեմ Սպինօզան է ասել, չէ՞...

— Չը գիտեմ այդ. ասաց Սուրէնեանը — բայց ես այնքան գիտեմ որ զարգացած մարդը իրեն չի թոյլ տալ քննադատութեան մէջ հայհոյել փողոցային մարդու նման..

— Բոլորովին իրաւացի. միջահատեց խմբագիրը միշտ ժպիտը դէմքին — հասկացող մարդը իր սառնարիւնութիւնը կը պահպանի, մանաւանդ դատելու ժամանակ և...

Յանկարծ մի մեծ քրքիջ բարձրացաւ։ Սրապեանը, որ ելել էր խօսելու, նայեց քրքջացողներին, մի վայրկեան շփոթւեց, բայց իսկոյն հասկացաւ թէ բանն ինչումն էր և ինքն էլ ծիծաղելով նստեց։ Ծիծաղը զարմացրեց խմբագրին էլ. նա

նայեց ամենքին և ինքն էլ հասկանալով, կարմրեց, շփոթւեց ու կմկմաց.

— Ի՞նչ արած, պարոններ. հասկացող մարդը կռիւ չէ սիրում. ես ուզում էի հաշտեցնել...

Սուրէնեանն էր միայն որ չըհասկացաւ այդ յանկարծական քրքջի պատճառը և պահ մի կարծելով թէ իր վրայ են ծիծաղում, բարկացած ու բորբոքւած՝ ոտքի ելաւ հեռանալու։

— Խնդրեմ. պահեց նրան խմբագիրը — պարոնները ծիծաղում են նրա վրայ, որ ես կամենում էի հաշտութիւն ձգել ձեր մէջ։

— Պ. խմբագիրը հիանալի հաշտարար կըլինի. խօսեց սևամորթը - նա ամենքի հետ համաձայնւում է, միայն թէ կռիւ չըլինի։

Սրապեանը դադարեց ծիծաղելուց և բարկացայտ ակնարկ նետելով խմբագրի վրայ, գլուխը երերցրեց։

Բ.

Պահ մի լռութիւն տիրեց խմբագրութեան մէջ, որի ընթացքում սևամորթը միշտ գիրք էր թղթատում, ալեխառնը սկսեց ականջը մատով մաքրել, խմբագիրը վերսկսեց իր նկարը, իսկ Սրապեանը դէմքը կնճռւած, և շրթունքները պրկած, գրչով մեծ ստորագրութիւններ էր դրոշմում առջևի թղթի մեծ շերտի վրայ։

Բոլորն էլ կարծես ուզում էին ասել Սուրէնեանին թէ «ժամանակ է որ կորչես գնաս»։ Բայց Սուրէնեանը այդ չէր նկատում. նա դեռ յուզւած էր։

Գործերի այդպիսի դրութեան ժամանակ էր, որ դարձեալ լսւեց զանգահարութիւն, դուռը ճռնչաց և քիչ յետոյ ներս մտաւ մի երկարահասակ, քիչ կուզ երիտասարդ։

Նա լռութեամբ թօթւեց բոլորի ձեռքը, յետոյ ծանօթացաւ Սուրէնեանի հետ և աթոռ առնելով նստեց Սրապեանի կողքին։

— Գիտե՞ս, Սրապեա՛ն. խօսեց քիչ յետոյ — մերոնք ընտրւել են։

—Լուր բերին մեզ. պատասխանեց չոր ձայնով Սրապեանը և աւելորդ չըհամարեց մի բարկացկոտ հայեացք ուղղել դէպի Սուրէնեանը։

—Բայց աչագին ղալմաղալ է եղել. շարունակեց Նորեկը—ասում են որ մեր Մոլսէսը մի քանի լոյսականների դուրս է նետել եկեղեցուց։

—Յիմար բան է արել. խօսեց խմբագիրը—ինչ հարկ այդպիսի վայրենի միջոցների դիմել։

Սրապեանը նայեց միւսներին, ժպտեց արհամարհաբար և ուսերը շարժեց։

—Ասում են որ, էլի շարունակեց Նորեկը—լոյսականները, երբ թէ ուզել են ընտրողութիւնն ապօրինի հռչակել, բայց յաղթութիւնը էլի մերոնցն է մնացել։

—Իսկ ձեզ ինչ շահ դրանում. խօսեց սևամորթը—դուք խօ ուզում էք ձեր պաշտօնը թողնել։

—Այո, ես Բագու եմ գնում աւելի լաւ պաշտօնով. ուսուցչութիւնը զզւեցրեց։

—Այդպէս շուտ. ասաց խմբագիրը—երկու տարի չըկայ որ ուսուցիչ էք։

—Բագւում աւելի շահաւէտ պաշտօն են տալիս տարեկան 2000 րուբլի ռոճիկով։

—Լա՛ւ է... գոչեց ալեխառնը—ի հարկէ, դրանից յետոյ յիմարութիւն է ուսուցչութիւն անելը։

—Այնպէս չէ՞. ժպտեց Նորեկը—հանգիստ ու մաքուր պաշտօն է. Կարճիկեանի օգնականն եմ լինելու. իսկ նրան այժմ տւել են դիրեկտորի պաշտօն։

—Իրա՛ւ, ասաց սևամորթը—տեսնո՞ւմ էք ինչպէս առաջ է գնում այդ Կարճիկեանը... խելօք մարդ է, ճշմարիտ։

—Այո ճարպիկ է և միանգամայն գիտէ վարւել ամենքի հետ, ասաց խմբագիրը, յետոյ դարձաւ Սուրէնեանին և աւելացրեց.

—Այո, եթէ Բագու գնաք, Կարճիկեանը ձեզ շատ օգտակար կարող է լինել. դուք ծանօթ չէ՞ք նրա հետ։

—Ո՛չ, պատասխանեց Սուրէնեանը—բայց լսել եմ նրա մասին։

—Օ՛, նա շատ լաւ և զարգացած տղայ է. գովեց խմբագիրը—և իմ համալսարանական ընկերն է։

—Ինձ ասել են որ նա ֆրազեօր է և լաւ կարիերիստ միայն։

—Նա... բացագանչեց խմբագիրը—դուք սխալւում էք. ձեզ սխալ են ասել. գիտէ՞ք, նա բոլոր ազգային գործերում խառնւում է, ամեն տեղ կայ... նա մեր թերթի ջերմ կուսակիցն է։

—Գ. Սուրէնեանը երևի այդ պատճառով էլ նրա վրայ
վատ կարծիք կունենայ, ասաց Սրապեանը կծու ձայնով։
—Դեռ չըգիտեմ. ասաց Սուրէնեանը—ես ատում եմ կա-
րիերիստներին... բայց նախ, չըտեսած և չըխօսած անձամբ նրա
հետ, չէի կամենալ ուրիշի խօսքերով դատել նրան։
—Ուրեմն Բագու գնացէք. ասաց խմբագիրը—և դուք
այնտեղ աւելի լաւ պաշտօն կըգտնէք նրա միջոցով։
—Մոռանում էք սակայն, ասաց Սրապեանը ծաղրելով—
որ պարոնը վճռել է գրականութեան նւիրել իրեն և իր առա-
ջին քայլերը «Լոյսումն» էլ արել է։
Նորեկը Սուրէնեանին նայեց և զարմացած հարցրեց.
—Պարոնը «Լոյսի» աշխատակի՞ցն է։
Յետոյ միւսներին դարձաւ այնպիսի դէմքով, որ կարծես
ուզում էր հարցնել թէ ինչպէս լսամուտից դուրս չէին ըն-
պրտում «Լոյսի» աշխատակցին։
—Պարոնը անշուշտ սխալւած է եղել. ասաց խմբագիրը,
այժմ նա թողնում է այդ բանակը և ուզում է «Ձայնի» դը-
րօշի տակ մտնել. աւելի լաւ է ուշ՝ քան երբէք...
Սուրէնեանը ուզեց խօսել, բայց ուսերը միայն թոթւեց և
լռեց։
—Ինչ կայ, շարունակեց խմբագիրը—մենք ուրախու-
թեամբ տեղ կըտանք պարոնի յօդւածներին...
—Պայմանով միայն. միջամտեց Սրապեանը խստութեամբ
—որ նա միայն մեզ աշխատակցի և կորի ամեն յարաբերու-

թիւն «Լոյսի», «Խելքի» կամ նրա կուսակիցների հետ:

—Գիտէք ինչ. էլ չըկարողացաւ դիմանալ Սուրէնեանը և ասաց բարկութեամբ—ես իմ որոշ ուղղութիւնն ունիմ. ով կըտպէ, պատրաստ եմ. ով կըխոստանայ մի բառ իսկ չըջնջել գրւածքիցս առանց իմ համաձայնութեան—ես նրան կ'աշխատակցեմ:

—«Ձայնը» այդպիսի պայմաններ չէ ընդունում, խօսեց նորից Սրապեանը խստութեամբ բացի դրանից նա չէ կարող հանդուրժել որ իր թերթի մէջ գրողը աշխատակցի նաև հակառակորդ թերթի մէջ. . Նա այդպիսի Եւրոպայից նոր բերած մտքեր չէ ընդունում...

—Այո, պարոն դարձաւ նրան Սուրէնը, սոքա նոր մըտքեր են և շատ աւելի տրամաբանական, քան ձեր նեղ հայեացքները: Եթէ ես գրեմ գիտական, պատմական հարցերի մասին, պարտաւո՞ր եմ այդ հարցերը իմ հայեացքները դարձնել ըստ ձեր և կամ ձեր կուսակցութեան խնդիրների, ներքին շահերի: Ես մի անկախ գրող եմ, երբէք չեմ ուզում խառնւել խմբագրական օջախի մանր հաշիւների մէջ. գրելու եմ իմ ամբողջ ստորագրութեամբ, միմիայն ես պատասխանատու եմ իմ գրածներին և հասարակութիւնը՝ ինձ դատողը. ես իրաւունք չեմ տալ ո՛չ մի բառ ջնջելու, փոփոխելու և ոչ էլ թոյլ կըտամ որ յանձն առնէր ուրիշը իմ գրածների պատասխանատւութիւնը: Զօլան, Դաստաեւսկին, Դօդէն գրում են գրւածքներ առանց ուշադրութիւն դարձնելու թէ դոքա ինչ կուսակցութեան թերթի մէջ էին տպագրւելու, և եթէ, մի պահպանողական թերթ կամենար նոցա վէպերը տպագրել, միթէ նոքա պիտի ասէին «ո՛չ, պ. խմբագիր, ձեր թերթը պահպանողական է, իմ անունը այնտեղ երևալ չէ կարող». նկարը չէ գնահատւում այն բանով թէ նա ո՞րտեղ է նկարած կամ ո՞ր գործարանից առնւած կտաւի վրայ: Մեզ—գրողներիս համար, ձեր թերթերը կտաւներ են, որոնց վրայ մենք դրոշմում ենք մեր մտքերը. դուք չէք մեզ ներկողը, այլ մենք ձեզ: Այժմ, եկել եմ իմ գրական, անկախ գրողի աջակցութիւնն առաջարկել ձեզ. իմ պայմաններն ասացի, ես նկարում եմ և թոյլ չեմ տալ որ ուրիշը վրձին շարժէ նկարի վըրայ, թոյլ չեմ տալ մի բառ իսկ, առանց իմ համաձայնութեան, ջնջել կամ փոխել. համաձա՞յն էք ընդունել աշխատակցութիւնս. կըտեսնէք նկարս, գրածս—կըհաւանէք՝ տպէք. իրաւունք չունիք ասել ինձ որ ես նկարում եմ և այլ կտաւների վրայ... ինձ կըդատի ընթերցողը, եթէ նա միայն մտաւորապէս ոչխար չի դարձած լինի կուսակցական օդու տակ... Եւ այդ բոլորից յետոյ, ես ձրի էլ չեմ տալ գրածներս. դուք շահում էք թերթից, շահացրէք թերթը լցնողներին էլ:

Ասաց ու ոտքի ելաւ: Խմբագիրը տեսաւ, որ Սրապեանը պատրաստւում էր խիստ կծու պատասխանել, նրա առաջը կտրեց և ասաց.

—Ներեցէք, պ. Սուրէնեան, մենք չենք կարող ձեր առաջարկն ընդունել. նախ որ երբ մենք ջնջում ենք կամ փոփոխում յօդւածները, չենք հարցնում այդ մասին հեղինակներին. մենք նրանց գրւածքները յարդարում և յարմարեցնում ենք մեր ճաշակին, ուղղութեան կամ հայեացքներին: Երկրորդ՝ մենք չենք կարող ընդունել, որ մեր աշխատակիցը միևնոյն ժամանակ երևայ նաև միւս թերթերում...

—Իսկ ո՞րքան էք վարձատրում, երբ այդպիսի պայմաններ էք առաջարկում:

—Մենք վարձ տալ առ այժմ չենք կարող. դուք պիտի գիտենաք, որ մենք մեր աշխատակիցների և թղթակիցների հետ կապւած ենք բարոյական և ոչ նիւթական շահերով...

Սուրէնեանը ծիծաղեց և ասաց.

—Շնորհակալ եմ որ ասացիք ուղիղ. այժմ ես ձեզ ճանաչում եմ. մնաք բարև. գրագէտը օդով և «բարոյական շահով» միայն ապրել չէ կարող և ոչ էլ հանդուրժել խմբագրական ճնշումների և ստորացնող միջոցների...

Ասաց, թողեց միայն խմբագրի ձեռքը, միւսներին գըլխով թեթև բարևեց, շտապով փայտն առաւ ու ճնշւած սըրտով դուրս նետւեց այդ բնակարանից, լի բարկութեամբ, հետզհետէ աճող զայրոյթ զգալով դէպի այդ բոլորը...

Դղեակի մի պատը փլել էր: Որպիսի ելազներով և որ-

պիսի շքեղ դղեակ շինելով էր ներս մտել առաջին հայ խմբագրատունը և այժմ որպիսի դառն տպաւորութեամբ ելնում էր այնտեղից:

Բայց այդ դեռ մէկն էր: Եւ Սուրէնեանը մտածեց այժմ գնալ «Լոյսի» խմբագրատուն: Մտածեց բոլոր խմբագրատունները գնալ և որոնել թէ ո՞րի շուրջն էր ժողովւում հայ երիտասարդութիւնը: Այստեղ նա ոչինչ չէր տեսել, եթէ ոչ սահմանափակ ուղեղով մի քանի ծառայողներ, մի երկու, կուսակցական պայքարներից օգտւող պնակալէզների: Ո՞րտեղ էր ինտելիգենցիան, ո՞ր խմբագրատանը. ո՞ր թերթն էր որ կարողանում էր խմբել իր շուրջը և ուր նա կիմանար գոնէ թէ ինչ է կատարւում հայի մտաւոր ասպարէզում. ո՞ւր էին գրողները, որոնց մասին նա հեռուից լսել էր. ո՞րտեղ էին խմբւում նոքա, ո՞ր խմբագրութեան մօտ էին…

Այս և այլ հարցեր զբաղեցնում էին նրան և նա մտածելով էր որ հարցրեց «Լոյսի» խմբագրատան տեղը, գտաւ նրան ու դուռը հրելով՝ ներս մտաւ:

Մեծ սենեակի մէջ մի ծերունի և մի երիտասարդ՝ զբաղւած էին թերթեր ծալելով: Անշուշտ ծառաներն էին: Սուրէնեանը հարցրեց խմբագրին:

—Խմբագիրը այստեղ չէ:

—Ուրեմն խմբագրատունը փակ է:

—Ո՛չ. աշխատակիցը կայ. պարոն Մուրադեանը:

—Այո՛… կարդացել եմ նրա գրւածքերը. իսկ ե՞րբ է խմբագիրը այստեղ լինում:

—Միայն տօն օրերը. նա ուրիշ գործեր էլ ունի:

—Իսկ պ. Մուրադեանին կարելի՞ է տեսնել:

—Այո՛. ձեր ազգանո՞ւնը:

—Սուրէնեան:

Ծեր ծառան գլխով արաւ:

—Գիտեմ, ասաց—դուք մեր թերթի աշխատակից եղել էք:

Յետոյ մի փոքրիկ դուռ բաց արաւ, մի րոպէ ներսը մնաց և ապա եկաւ հրաւիրելու Սուրէնեանին:

Փոքրիկ, անշուք սենեակում, անշուք գրասեղանի առաջ

նստել էր երկար-քիչ ալեխառն մազերով ջղուտ մի երիտասարդ, որ իսկոյն ոտքի ելաւ, ժպտելով թօթւեց Սուրէնեանի ձեռքը, հրամցրեց նստելու և ասաց.

—Գալուստներդ բարի. դուք նո՞ր էք եկել:

— Երէկ միայն եկայ. ուզեցի պ. խմբագրին տեսնել:

—Ես այսօր նրան իմաց կըտամ և երեկոյեան 6-ին կարելի է նրան իր տանը տեսնել. դուք ծանօ՞թ էք նրա հետ:

—Այո, Եւրոպայից անցնելիս ծանօթացանք: Մի՞թէ նա միշտ չէ լինում խմբագրատանը:

—Ո՛չ. նա հազիւ է լինում. մասնաւոր գործեր էլ ունի:

—Իսկ թե՞րթը, երևի միայն դուք էք խմբագրում:

—Ո՛չ, ես նիւթերը հաւաքում եմ, ապա տանում խմբագրին և միասին ենք կազմում:

— Ուրեմն խմբագրութեան կազմութիւնը միայն ա՞յդ է:

—Միայն այդ. քի՞չ է թւում ձեզ… Մենք ունենք աշխատակիցներ էլ և յոյս ունիմ որ թերթը անբովանդակ չէք գտնում:

—Անբովանդակ՝ ոչ, բայց ցանկալի էր որ աւելի լինէր, քան ինչ որ է այժմ: Մի՞թէ դուք կարողանում էք խմբագրութեան վերաբերեալ բոլոր գործերը կատարել:

—Ունինք և սրբագրիչ… Սակայն այժմ քիչ ձեր մասին խօսենք. դուք երկա՞ր կըմնաք մեզ մօտ:

— Ընդ միշտ եկել եմ մնալու:

—Իսկ ինչով էք մտադիր զբաղւել:

—Ուզում եմ գրականութեան նւիրել ինձ:

Մուրադեանի դէմքը կծկւեց. նա պահ մի լռութեամբ խաղաց թղթերի հետ, մտածեց, յետոյ մէկէն գլուխը բարձրացրեց և ասաց.

—Գիտէ՞ք ինչ. ես ձեզ հետ անկեղծ կըլինեմ. միշտ հաճոյքով կարդացել եմ ձեր գրւածքները. տաղանդ ունիք և աշխոյժ: Բայց այդ դեռ բաւական չէ. ձեզ հարկաւոր է զինուել կամքով, ունենալ առողջութիւն՝ դիմանալու անօթութեան, թշւառութեան, հալածանքի և յաճախ իսկ ստորացումների… Դուք անշուշտ գիտէք որ գրագէտը մեր մէջ մի ամենաթշ-

ւաւ հալածական է և չքաւոր... Ի՞նչ գործ էք աւելացնում գըր-
չի զոհերի թիւը մէկով ևս...

—Բայց դուք չէ՞ որ ապրում էք գրականութիւնով:

—Իմ այս զբաղմունքը դուք գրակա՞ն էք համարում.
ժպտեց դառնութեամբ Մուրադեանը—գիտէ՞ք ամբողջ օրը ին-
չով եմ զբաղուած ես: Ահա՛, նայեցէք. կազմում եմ լուրեր, քա-
ղաքականը ժողովում, հեռագիրները թարգմանում, սրբագրու-
թիւն իսկ կատարում և այդ սև աշխատանքի համար է, որ վար-
ձատրում են ինձ... իսկ գրել, հեղինակել, ստեղծագործել՝ դա
չեմ էլ կարող. ոչ ժամանակ է մնում և ոչ էլ աշխոյժ: Աւե-
լացնեմ նաև, որ խմբագիրն էլ չէ ապրում գրականութիւնով.
գրեթէ ոչինչ գրելու ժամանակ չունի, եթէ նա մասնաւոր ար-
դիւնաւէտ ձեռնարկութիւններ չ'ունի, թերթը կըդադարի. դեռ
չեմ ասում այն, որ մինչև վիզը խրուած է պարտքերի մէջ...
Այդ է մեր թերթերի և նրա վրայ անմիջապէս աշխատողների
դրութիւնը:

—Բայց մի՞թէ թերթը այնքան բաժանորդներ չունի:

—Բաժանո՞րդ... ծիծաղեց Մուրադեանը—ինչպէս չէ. մի
քանի հարիւր հատ ունի, որոնց մի քառորդը վճարում է գըր-
ւելուց մի քանի տարի յետոյ. միւսները բոլորովին չեն ըս-
տանում, իսկ ուրիշներն էլ ձրի են ստանում:

—Սակայն չէ՞ որ երբ խմբագիրը—ինքը արտասահմանից
անցնում էր, ասաց որ «Լոյսը» շատ է կարդացւում:

—Եւ չէ սխալուել: Մեր թերթը կարդում են գուցէ
4-5000 հոգի: Բայց ա՛յլ բան է ընթերցող, այլ բան է ըն-
թերցանութեան համար վճարող: Կուզէ՞ք ձեզ օրինակներ
տամ... Դուք չէ՞ք ծխում. համեցէք. խնդրեմ հանգիստ նըս-
տէք. գրագէտներս պէտք չունինք երկար ծանօթութեան, որ-
պէս զի բարեկամ լինենք. մի ընդհանուր գաղափար մեզ՝ նոյն
իսկ միմեանց անձամբ չըտեսած, բարեկամացնում է... մա-
նաւանդ որ դուք մեր թերթի աշխատակիցն էլ էք: Այդպէս
ուրեմն, ես ձեզ օրինակներ տամ, թէ ինչպէս շատ կարդում են
թերթը, բայց շատ քիչ վճարում՝ կարդալու համար: Այս տա-
րի ես գնացել էի գաւառական մի քաղաք. մի օր այցելեցի

գրադարան և այն ժամանակ մտայ, երբ «Լոյսի» համարը
փոստից բերին: Նայում եմ: Մօտ տասը հոգի յարձակւեցին
համարի վրայ. մէկին յաջողւեց կորզել նրան, նստեց և սկսեց
կարդալ: Երկու հոգի նրա ուսերի գլխից էին կարդում, իսկ
միւսները նստած՝ սպասում էին իրենց հերթին: Այս այսպէս:
Ահա ձեզ և մի ուրիշ օրինակ: Գաւառական մի այլ քաղա-
քում մեր մի թղթակիցը ստանում է համար: Փոքրիկ վաճա-
ռական է, որ տնտեսական կապեր ունի քաղաքի հարուստնե-
րի հետ. նրանք բոլորն էլ գիտեն թէ համարը երբ է ստաց-
ւում և մի քանի ժամից յետոյ, մէկ էլ տեսար, մի հարուստ
աղա, փառահեղ ճաշելով, ծառային ուղարկում է մեր թըղ-
թակցի մօտ, թէ «Լոյսի նոր համարը ուղարկիր՝ կարդանք»:
Ինքը կարդալուց յետոյ, նա ուղարկում է մի ուրիշ աղայի.
այդպէս համարը պտոյտ է գործում ամբողջ քաղաքում, կար-
դում են և ետ են ուղարկում միայն այն ժամանակ, երբ նոր
համարն է ստացւել: Մեր խեղճ թղթակիցը կարո՞ղ է մի թեր-
թի համար, աղաների սիրտը կոտրել. չէ՞ որ նրանց հետ կա-
պեր, տնտեսական կապեր ունի, նրանից կախումն ունի...
Եւ դա կրկնւում է ամբողջ տարին, միշտ. իսկ աղաներից ո՛չ
մէկը չէ մտածում բաժանորդ գրուել. ինչու 10 ռուբլի տայ,
երբ ձրի է կարդում: Ուրեմն տեսնո՞ւմ էք, որ «Լոյսը» մօտ
5000 և գուցէ աւելի՝ ընթերցող ունի, բայց ո՛չ 500 բաժա-
նորդ...

Այդ միջոցին փոքրիկ դռնից ներս մտաւ մի սև ու աղ-
տոտ ձեռքերով գրաշար և տպուած սրբագրութիւնների ու
սևացած ձեռագիրների մի կոյտ դրեց Մուրադեանի առջև:

—Ուրիշ նիւթ պէ՞տք է. հարցրեց վերջինս գրաշարին.

—Դեռ երկու սիւնակ պակասում է. ասաց գրաշարը:

—Խմբագիրը ոչինչ չէ՞ ուղարկել:

—Հեռախօսով իմացրեց որ ձեզ դիմենք:

—Ինձ... ինձ... մռմռաց Մուրադեանը դժգոհութեամբ
—ո՞րտեղից լաւ նիւթ գտնեմ... հա՛, սպասիր. անցեալ համա-
րից ոչինչ չէ՞ մնացել. յիշում եմ, մի թղթակցութիւն կար:

—Նա էլ դրել ենք:

Մուրադեանը քաշեց իր կողքի դարանը, քիչ քրքրեց
կխտուած ձեռագիրները, ապա մէկը վերցուց, գրաշարին պար-
գեց և ասաց.

—Քանի՞ սիւնակ կըլինի:

Գրաշարը թերթեց ձեռագիրը, շուռ ու մուռ տւաւ և
ասաց.

—Սա շատ է. 5—6 սիւնակ կըլինի:

—Ոչինչ. շարէք և որտեղ կըկանգնէք՝ «շարունակելի»
գրէք:

Գրաշարը քիչ էլ շուռ ու մուռ տւաւ ձեռագիրը, յետոյ
գլուխը թօթւեց և դուրս գնաց:

Նրա դուրս գնալուց յետոյ Մուրադեանը ծխեց մի պապի-
րոս և քիչ լռելուց յետոյ՝ ասաց Սուրէնեանին.

—Այո, պ. Սուրէնեան... ահա թէ ինչ է նշանակում
նւիրուել գրականութեան: Այսպիսի հանգամանքներում, պարզ
է, որ մեր մամուլը չի վարձատրիլ. մանաւանդ եթէ ձրի գրող-
ներ էլ շատ կան: Օրինակ ես. երիտասարդական բոլոր ույժերս,
ընդունակութիւններս զոհեցի գրականութեան. այժմ ծերանում
եմ. այլ ևս իմ մէջ եռանդ չեմ զգում մի նոր ասպարէզ ընտ-
րելու, մի այլ գործի ձեռնարկելու, թէ չէ՝ ուրախութեամբ
կըթողնէի այս բոլորը: Իսկ դուք ուզում էք մտնել այս փը-
շերի մէջ, րոպէ առ րոպէ, ժամ առ ժամ արնոտելու ձեր
սիրտը, ձեր զգացումները և յետոյ, ամեն օր մտածելու՝ թէ
միւս օրը ինչ էք ուտելու... Ո՛չ. եղէք ուսուցիչ, հաշւապահ,
պրիկաշչիկ—ինչ որ կուզէք՝ բայց լիովին նւիրուել գրականու-
թեան—երբէք: Ո՞վ է ձեզ վարձատրողը, գնահատողը: Գրեցէք
որքան հմտալից յօդւած որ կուզէք. քանի ձրի գրողներ կան,
որոնք հրճւում են միայն նրանով որ իրենց անունը լրագրնե-
րի մէջ երևում է, քանի նրանք վարձ չեն պահանջում, այլ
մինչև իսկ աղաչում են որ իրենց գրւածքը տպւի—էլ ինչո՞ւ
փող տալ գրողներին: Կ'առարկէք թէ ընտիր գրողներ չենք
ունենալ, ընտիր յօդւածներով լի չի լինիլ մեր թերթերը: Ի՛հ,
ո՞վ է ուշադրութիւն դարձնողը. շատ էլ մի կարծէք թէ մեր
հասարակութիւնը պահանջող է. տւէք՝ ինչ կուզէք. թերթը

լցրէք. մի լուր այստեղից, մի թղթակցութիւն այնտեղից...
ինչ ուզում է թող լինի. մի պօլեմիկա, վերջապէս մի նոր
փորձողի ոտանաւոր, ո և է, իր անունը լրագրի մէջ տեսնե-
լու տենդով բռնւած թարգմանողի թարգմանական գրւածքը,
վէպը—և ահա թերթը պատրաստ է, և ձրիապէս լի յօդւած-
ներով... Եթէ այդպէս սիրահար գրաշարներ ու տպարանա-
տէրներ էլ ունենայինք!...

—Գուցէ և թուղթ տւողներ...

—Անշուշտ. ծիծաղեց Մուրադեանը—Ասածներս ճշմա-
թիւն է: Առ այժմ, հաւատացնում եմ ձեզ, մեր ո՛չ մի թեր-
թիւն է: Առ այժմ, հաւատացնում եմ ձեզ, մեր ո՛չ մի թեր-
թը գրողներին վարձատրելու հարկի մէջ չէ. մտէք խւրաքան-
չիւր խմբագրատուն և կոյտերով կըգտնէք ձրիապէս և նոյն
իսկ խնդրանօք առաջարկած յօդւածներ, թղթակցութիւններ,
մինչև իսկ լուրջ և լաւ գրւածքներ: Այդպիսի գրողներից մէկը
ղեկավարւում է այն մտքով, որ իր անունը կերևայ լրագրնե-
րի մէջ. միւսը՝ որ ինքը իր եղած քաղաքում կըհամարւի
թղթակից և դրա շնորհիւ ազդեցութիւն ձեռք կըբերի, վախ
կացնի... երրորդը—գուցէ ամենասակաւները—նրանով, որ «հար-
կաւոր է մայրենի գրականութեանը զարկ տալ»... Ես գիտեմ
մի թղթակցի, որ «Լոյսից» դէպի «Ձայնը» անցաւ, որովհե-
տև իր գրածների դէմ ուղարկած հերքումները տպագրեցինք...
Հա՛, ի դէպ. հետաքրքիր է իմանալ թէ ինչ կարծիք ունի
Եւրոպայի հայ ուսանողութիւնը «Ձայնի» վրայ այժմ:

—Բոլորը չեն ուրանում որ նա ճապաղ, անհամ և յաճախ
երբութեան հասած անմիտ է դարձել:

—Մեր թերթերին—բոլորին վիճակւած է այդպէս լինել.
խօսեց տխրութեամբ Մուրադեանը: Լսել էք, ժողովրդական մի
առած կայ թէ «էժան միսը կաթսան կըմաշի»... եւ ես
ասում եմ որ «ձրի յօդւածները լրագրին կըսպանեն»...
և սպանում են: Շատ պարզ է. խմբագիրը, սովոր չը-
վարձատրելու, եթէ ձրի եկած լաւ յօդւած չունենայ,
վճառն է դնում, ընտրութիւն անել չէ կարող... և այդ՝ լրա-
գրին թուլացնում է, ծիւրում և մահւան դուռը հասցնում:
Տեսնո՞ւմ էք. «Ձայնը» սկսում է ճապաղանալ, անհամա-

նալ, ընթերցանութեան քիչ նիւթ տալ. որովհետեւ նրա խմբագրութեան միջից ոչ ոք չէ կամենում իր գրպանը մտնող փողերից պակասացնել: Ձրի կըդրէք՝ լաւ, չէք դրել — մի՛ կարծէք որ հայ գրականութիւնը հոգս կանի. հայ գրականութիւնը այժմ աղպանոց է դարձել. ընթերցողներն էլ հաշտուել են այդ հանգամանքի հետ: Իսկ եթէ բողոք չըկայ մէկ կողմից և միւս կողմից էլ ցնցոտիական գրականութիւնը, յօդուտ իրենց շահերի, թերթերի կողմից ի ցոյց է դրւում որպէս անզուգական գրականութիւն — էլ ի՞նչ էք ուզում:

Այժմ նոյն իսկ լաւ գրողները եթէ աղաչեն էլ, նոցա վարձատրող չըկայ: Կուզէ՞ք ապացոյց: Մեր յայտնի գրողներից մէկը, քսան տարւայ սիրւած գրող, անցեալ օր պատմում էր որ դիմել է մի թերթի՝ խնդրելով 50 ր. ամսական, խոստանալով որ ոչ միայն կաշխատակցի իր գրւածքներով, այլ և համաձայն է խմբագրութեան մէջ մի գործ անել, այլ և այդ փողով գնալ խմբագրութեան ուղարկած տեղը՝ իբր թղթակից: Մերժւել է. ինչու տարեկան 600 ր. պակասեցնել թերթի տիրոջ գրպանից: Այս մէկ: Յետոյ նա դիմել է մի ուրիշ թերթի, խնդրելով որ տողահաշիւ վարձատրեն. ստացել է մի շատ քաղաքավարի պատասխան, թէ «առ այժմ» խմբագրութիւնը վճարել չէ կարող, բայց շատ շնորհակալ կըլինի, եթէ աշխատակցին իրեն — ի հարկէ ձրիապէս: Այս երկու: Իսկ երրորդը արդէն, ինքը — թերթն է դիմում գրողին, խնդրելով նրա գրական աջակցութիւնը և աւելացնելով՝ որ առ այժմ վարձատրելու փող չունի: Ի՞նչ կասէք այս բոլորին:

Ու լռեց: Սուրէնեանը, սիրտը սեղմւած, մի րոպէ ոչինչ չըկարողացաւ պատասխանել:

Գ.

«Լոյսի» խմբագրատանն էլ չըգտաւ Սուրէնեանը իր ուզածը: Մի ամբողջ ժամ նստեց այնտեղ, բայց ոչ մի մարդ չըմտաւ գրեթէ խմբագրատուն: Ո՛չ մի գրող: Մուրադեանը յայտնեց որ գրողները սկսել են լիովին դադարեցնել իրենց յարաբերութիւնները մամուլի հետ:

— Ձրի գրել չեն կամենում. ժպտեց նա — և նրանց վարձատրող էլ չըկայ. ի զուր էք խմբագրատների մէջ որոնում գրողներ, ինտելլիգէնցիա, երիտասարդութիւն և այլն: Խմբագրատները մի մի արհեստանոց են և միջի եղողները՝ ծառայողներ:

— Իսկ երիտասարդութիւնը ո՛չ մի կապ չունի՞ թերթերի հետ. գոնէ հայեացքների, ուղղութեան կապ:

Մուրադեանը ծիծաղեց:

— Ուղղութեա՞ն, հայեացքների՞... ասաց նա: Յետոյ, յանկարծ տաքի ելաւ, մօտեցաւ լուսամուտին և աւելացրեց.

— Նայեցէ՛ք խնդրեմ այդ մեծ տան գմբէթի վրայ. տեսնո՞ւմ էք այդ հողմացոյցը... Ունի՞ նա որոշ ուղղութիւն: Դուցէ ասէք թէ նորա ուղղութիւնն այն է, դէպի ուր փչում է հողմը... լաւ ուրեմն, մեր լրագրները ճիշտ նման են այդ հողմացոյցին. իրենց շահու հողմը դէպի ո՛ր կողմը փչեց՝ այն կողմն են դառնում... և այդ՝ այնպիսի վարպետութեամբ, որ իրենց հետ դարձնում են և ամբողջ նախիրներ, բռնած նրանց քթից... Գալով երիտասարդութեան, ինտելլիգէնցիային — միայն մի կարծիք ունիմ ես. նա չըկայ: Այո՛, ոչ երիտասարդութիւն կայ և ոչ ինտելլիգէնցիա. եղածը՝ մի ստւեր է, ուրւական անցեալի, բայց մի ծաղրաշարժ ուրւական:

Սուրէնեանը դարձեալ ոչինչ չըխօսեց և ելաւ մեկնելու:

— Գնո՞ւմ էք. ասաց Մուրադեանը — դուք տխրեցիք, շատ ուրախ եմ. միայն գիտէ՞ք, կարող էք ինձ չըհաւատալ. այն ժամանակ միայն մի բան կասեմ ձեզ — շօշափեցէք և ստուգեցէք... Երթաք բարև...

Ճնշւած սրտով դուրս գնաց Սուրէնեանը «Լոյսի» խմբագրատանից և որովհետեւ սկսել էր, մտադրեց այդ օրը գնալ նաև ուրիշ խմբագրութիւն:

Բայց ժամը 2-ն էր արդէն. խմբագրութիւններն անշուշտ փակ կըլինէին:

Ճաշից յետոյ, երեկոյեան դէմ նա դուրս գնաց մեծ փողոցի վրայ, յուսալով ծանօթների հանդիպել:

Երբ երկար անցուդարձ էր արել, հանդիպեց նորից Մու-

բադեանին, որ տաք խօսելով՝ գնում էր մի երիտասարդի հետ։

Մուրադեանը բռնեց Սուրէնեանին և ծանօթացրեց ըն-
կերոջ հետ։

—Ահա՛, պ. Սուրէնեան, ասաց նա—այս պարոնն էլ ըզ-
բաղւում է գրականութեամբ. «Ձայն» թերթի ձրի գրողներից
մէկն է. յանուն ազգային գրականութեան բարգաւաճմանը՝
ձրի գրող։

Նոր գրողը ուսուցիչ էր, կարճահասակ ու կլորիկ մի անձ,
որ Մուրադեանի երգիծական խօսքերից շփոթւեց։

—Այո, ճշմարիտ է. ասաց նա—բայց ես ձրի գրում եմ,
որովհետև ուզում եմ գրել. թերթն էլ վարձատրել չէ կարող.
ինչ արած։

—Ո՞վ, գոչեց Մուրադեանը—«Ձայնը» չէ՞ կարող. մտա-
ծո՞ւմ էք ձեր ասածի վրայ։

—Հը՛մ... կմկմաց ուսուցիչը—ինձ թւում է, որ քիչ կա-
րող են. բայց չեն ուզում. ինչ անել. չըտպէ՞լ գրածներս։

Սուրէնեանը քայլում էր նրանց կողքից և դեռ չէր խօ-
սում. լսում էր միայն։

—Ի հարկէ չըտպել. բացագանչեց Մուրադեանը բորբոք-
ւած—թո՛ղ ձեր գրւածքները մնան մկների կերակուր, թո՛ղ նը-
րանք ոչնչանան, բայց ո՛չ երբէք գնան աւելի լըբացնելու գը-
րականութիւնը շահագործող բուրժուաներին, որոնք ձեզ պէս
միամիտների ձրի ծառայութեան. շնորհիւ փողեր են դիզում.
կամ, եթէ չեն դիզում, գոնէ իրենք ապրում են ձեր իսկ
քրտինքով։ Ո՞վ է օրինակ «Ձայնը» պահողը. դուք և ձեզ
նմանները։ Ձեր գրւածքներն են, որ հռչակ են տալիս թեր-
թին և նրա բաժանորդները շատացնում։ Իսկ ո՞վ է այդ եկա-
մուտից օգտւողը—միմիայն նրանք, որոնք աղաների նման ձեր
անձնւիրութիւնից գոհ՝ վայելում են ձեր աշխատութեան ար-
դիւնքը... Այո՛, դուք ո՛չ միայն գործաւորներ էք և խմբագիր-
ները՝ աղաներ, այլ դուք ձրի գործող ստրուկներ էք, որոնց
ապրելու մի կտոր հաց իսկ չեն տալիս և որոնց աշխատու-
թեան արդիւնքը վայելում են ստրկատէրերը... Ա՛յ, նայեցէք
պ. Սուրէնեանի՛ն, արտասահմանից եկած, գրելու տաղանդ

ու եռանդ ունի. փորձով ապացուցել է այդ. ապրուստի միջոց
չունի, առաջարկում է իր աշխատակցութիւնը և նրան ա-
սում են.—«ձրի գրիր և անունդ մեր լրագրի մէջ երևալը
թող լինի քո վարձը»... Ի՞նչ կասէք. գրի՞...

—Ո՛չ, ի հարկէ. ասաց ուսուցիչը—պ. Սուրէնեանին պի-
տի վարձատրել. նա կոչումով գրագէտ է... եթէ միայն թեր-
թը միջոցներ ունենայ՝ պիտի վարձատրի։

—Դուք ծիծաղելի բաներ էք ասում. գոչեց Մուրադեանը
—ինչպէս թէ «եթէ միջոցներ ունենայ»։ Թերթը եթէ մի-
ջոցներ ունի խմբագրին ապրեցնելու և այն էլ լա՛ւ ապրեցնելու,
ինչո՞ւ չըպիտի ունենայ նաև թերթի գոյութիւնը, յաջողու-
թիւնը պահպանող գործաւորին՝ մի կտոր հաց տալու ի փո-
խարէն նրա աշխատութեան։ Օրինակ վերցնենք ամենախեղճ
թերթը, որ 800 բաժանորդ ունի։ Նայեցէ՛ք մէկ խմբագրին.
չէ՞ որ նա ապրում է բացառապէս իր լրագրի եկամուտով և
տարեկան մօտ 2000 ր. միայն իր վրայ է ծախսում։ Բայց ո՞վ
է որ գոյացնում է նրա համար այդ գումարը—թերթը. իսկ
ո՞վ է թերթին նիւթ տալիս—ես և դուք։ Ուրեմն ինչո՞ւ խըմ-
բագիրը, որ հազիւ մի քանի տող է գրում, երբեմն իսկ ոչինչ
չէ գրում—իրաւունք է համարում իրեն առնել 2000 ր., իսկ
աշխատողին ոչինչ չէ տալիս։ Ո՛չ միայն ոչինչ չէ տալիս, այլ
եթէ խօսք անես այդ մասին, կըգոռայ որ իրեն աշխատակցող-
ները շահասէր են, ազգասէր չեն և այլն և այլն։ Տեսէ՛ք մէկ,
զոհաբերութիւն նա պահանջում է իր թերթին և իրեն պա-
հողներից, իսկ ինքը, որ ամենամեծ պատառը, նոյն իսկ բո-
լոր պատառն է կլանում՝ չէ՛ մտածում ազգասիրութեան մասին։

—Համաձայն չեմ ձեզ հետ. խօսեց ուսուցիչը—թերթը
կանգուն է իր խմբագրով. նա է ուղղութիւն տալիս, նրանն
է ամենամեծ հոգսը, աշխատութիւնը և եթէ հազիւ հաց
թերթը տպագրում և ինքն էլ ապրում է, ինչ կարող է տալ
աշխատակիցներին։

—Սրա՞ն ինչ կասէք, պ. Սուրէնեան. ասաց Մուրադեանը
—նման չէ՞ այս սոֆիզմի։ Լսեցէք, պ. ուսուցիչ. ենթադրենք
թէ առանց դրամագլուխ գնելու, մի պատրաստ գործարան էք

ձեռք բերել. պատրաստ՝ իր բոլոր գործիքներով: Թերթն էլ այդպէս է. յաջողեցար հրատարակութեան իրաւունք ձեռք բերել, բարեկամս եղար՝ և ահա գործարանի տէր ես: Լաւ, եթէ այնքան եկամուտ միայն ունենաս որ գործաւորներիդ վարձատրես, ինքդ ապրես, կարո՞ղ ես սակայն ձրիաբար ձեռք բերել նիւթը, վառելիքը և այլն: Ծիծաղո՞ւմ էք: Իրաւունք ունիք. ձեր քթին կը խնդան, եթէ գնաք մի մագազին և ասէք. «Պարո՛ն, այս ինչ յօգուտ ազգային արդիւնաբերութեան՝ բաց եմ արել մի գործարան. ունիմ այնքան եկամուտ որ ապրեցնում է հազիւ ինձ և մեքենավարներին. սակայն ո՛չ վառելու նիւթ կայ և ոչ էլ գործելու նիւթ (մատերիալ). յանուն ազգասիրութեան, ձրի տուէք ինձ այդ նիւթը»... Եւ ի՞նչ կըկոչէք դուք այն նիւթ ունեցողին, որ ձրի կըտայ իր ունեցածը. խենթ չէ՞ք կոչիլ...

—Բայց դուք մոռանում էք. միջահատեց ուսուցիչը— որ մեր թերթի խմբագրներից շատերը թերթով ապրել իսկ չեն կարողանում և միշտ պարտքերի տակ ճնշուած են:

—Լաւ. ասաց տաքութեամբ Մուրադեանը--խմբագիրը ուրեմն պարտք է անում թերթի համար: Բայց ինչո՞ւ կտրելով իր բերանից, պարտք անելով՝ վարձատրում է գրաշարին, տպարանին, ինչո՞ւ է վճարում թղթի, մրի, իսկ չէ կամենում վճարել գրողներին, թերթին նիւթ տուողներին: Ինչո՞ւ մրի ծախսը նա անհրաժեշտ է նկատում, անխուսափելի, իսկ նիւթ տուողին վարձատրել՝ ոչ: Այդ բոլորի պատճառն այն է, որ կան խենթեր, որոնք սիրում են իրենց անունը «ազգասէր» և այլն լսել և ձրիասիրութեան են վարժեցնում նրանց, այնպէս անում, որ գրողներին վարձատրելը, երկրորդական, աւելորդ, միմիայն իբր շնորհ են նկատում... Մենք ենք մեղաւորը. օգտուելով մեր յիմար պատրաստականութիւնից, յանդգնութեան չափը այն աստիճանի են հասցրել, որ մեր նիւթը ընդունելը իբր շնորհ են համարում՝ արուած մեզ: Նման չե՞նք մենք այն ոչխարներին, որոնք իրենց մորթուելը, ուտուելը իբր մեծ շնորհ են համարում և աղաչում ասելով. «Կերէք մեզ, խնդրեմ ձրի կերէք, մորթեցէք մեզ, գլորցէք մեզմով»...

Այդպէս յիմար ոչխար երբէք չի լինիլ, բայց այդպիսի յիմար
մարդիկ շատ են... Եւ ահա մորթում են մեզ, ուտում, ապ-
րում, ապա, տարիներ յետոյ, մեր ջղերով, մեր արիւնով ա-
ճած թերթը մէկէն հազարներով ծախում, գնում հանգիստ
ապրելու և մեզ թողնում հրապարակի վրայ ճզմուած, անօթի
ու թշուառ... Ահա և մեր թերթերն ու նորանց խմբագիրները...
Ու քրքջաց դառնութեամբ «Լոյսի» աշխատակիցը, յետոյ,
ծերը անցնում էին մի ծառի մօտով, ձեռքի փայտովը մի ուժ-
գին հարուած տւաւ, փշրեց մի ճիւղ և ասաց.

—Ա՛յս էլ շնորհ է քեզ, անպիտան—այս էլ շնորհ է, որ
լայեղ եմ անում պոկել քեզ քո սնունդից, ձգել փողոցի վրայ
և թողնել որ ուրիշները, մանաւանդ իմ ոտի կոխանը լինելու
փառքը վայելես... Կուզէ՞ք, ես ձեզ մի նոր դէպք պատմեմ
մեր գրողներից մէկի կեանքից:

—Պատմեցէք, ասաց ուսուցիչը մտախոհ:

—Այդ գրողը 5—6 տարի էր որ ձրիապէս աշխատակ-
ցում էր թերթերից մէկին. մուրացկանի պէս էր ապրում,
խեղճ, թշուառ, միշտ անօթի... Մի օր, խմբագիրը նրան ասում
է ծիծաղելով. «Գիտէ՞ք, պ. գրող, դուք չէ՛ք կարող հրդրել և
տպուած չըտեսնել ձեր գրուածքը»... Հոգեբանական նուրբ դի-
տողութիւն է, չէ՞. քիչ խորը թափանցեցէք, խմբագրի այդ ասե-
լու հոգեբանութիւնը փնտռեցէք: Չէ՞ որ նա շատ լաւ հաս-
կացել է թէ գրողը արդէն իր ստրուկն է եղել և չէ՞ որ այդ
խօսքերը նշանակում են. «դու իմ ստրուկն ես այլ ևս, ողոր-
մելի, և եթէ փող իսկ ուզեմ քեզնից՝ գրուածքներդ տպելու հա-
մար—կըտաս»...

—Իսկ գրո՞ղը. գոչեց բարկութիւնից կարմրած ուսուցիչը:

—Լռել է, բայց հասկացել... Երբ ինձ պատմեց, կատա-
ղութիւնից լալիս էր. ստորացած, այս ճիւղի պէս ոտքի կոխան
եղած էր զգում. երդուեց հրդրել, հրտպել... բայց գրող է, կո-
չումով գրող, ի՞նչ անի...

—Ի՞նչ անի. ասաց ուսուցիչը զայրոյթով—թո՛ղ հրդրի,
թո՛ղ գրիչը կոտրի և դէն ձգի... Որպիսի՜ ստորացում. արժէ՞
այդպիսի խմբագրի երեսին նայել:

—Ա՛... ծիծաղեց Մուրադեանը—եկո՛ք իմ խօսքին։ Իսկ դուք ինչո՞ւ էք գրում, յանուն ինչի՞. գրականութեան բարգաւաճմա՞ն էք ծառայում, թէ՞ գրական բուրժուաների գիրացնելուն... Ազգը մեզ պէտք չունի, հասկանո՞ւմ էք, ազգը գրողների պէտք չունի, որովհետև նրան պահելու հոգսն անգամ չէ անում. ուրեմն ինչու ենք խծկւում մենք... Ի՞նչ, կարծում էք որ դուք ազա՞տ կըմնաք այդպիսի ստորայումներից. սպասեցէք, կըգայ մի օր, որ ձեզ էլ այդպէս կասեն. կըստորացնեն, անուշադիր կըթողնեն, գրւածքդ՝ իբր շնորհ՝ թերթի մի անկիւնը կըշպրտեն և երբ գրիչը ձեզ համար մոլութիւն, կոչում դառնայ, այն ժամանակ ստրկական օղը վզիդ, քարշ կըգաք նրանց դռներում... Կըծիւրւէք, կըտանջւէք, կըհալւէք և այդ բոլորը կանէք՝ որպէս զի գիրացնէք գրականութիւնից գիրացող խոզերի... Գիտէ՞ք, ես մի տեղ կարդացել եմ, որ Աւստրալիայում մի ցեղ կայ, որի իւրաքանչիւր անդամը երկնառաք շնորհ է համարում՝ եթէ թագաւորից ստանայ այդպիսի տիտղոսներ—«թագաւորի շունը, թագաւորի էշը»... Խմբագրի ստրուկը, խմբագրական ջո՛րի!... Աստւած ձեզ հետ, շարունակեցէք խմբագրական ջորի մնալ... իսկ առ այժմ, սրբագրութիւն ունիմ անելու, ցտեսութիւն...

Ասաց, թօթւեց ուսուցչի և Սուրէնեանի ձեռքն ու հեռացաւ։

Դ.

Մի քանի շաբաթ Սուրէնեանը ո՛չ մի խմբագրատուն չըգնաց. «Լոյսի» խմբագրին ծանօթացաւ դրսում։ Ծանօթացաւ նոր անձերի հետ ևս, հանդիպեց հին ծանօթների, յետոյ նրան մտցրին մի քանի տներ, ուր նա տեսաւ հայ գրողներից մի քանիսներին, որո՛նք բոլորն էլ ուսերը թօթւելով և արհամարանքով էին խօսում մամուլի մասին և խնդրում էին նրան չ՚երկարել այդպիսի խօսակցութիւնները. մէկը մինչև իսկ տրուկ կերպով ասաց նրան.

—Հայ մամո՞ւլ... չըկայ նա, կան մի երկու հատ մրոտ սաւաններ, որոնց ամեն անգամ հինգ կոպէկ պիտի տալ ու լւացարարին ուղարկել՝ որ մաքրւեն իրենց աղտերից։

Իսկ մի ծերունի գրող գայրացած գոչեց.

—Հայ թերթերը այն զզւելի գործարաններն են, ուր կիտւում են մեր քրտինքը և ստոր տեսակի կապիտալիստների ստամոքսը յափրացնում...

Սակայն Սուրէնեանը նկատում էր, որ հայ գրողները, մամուլից դուրս, մտածում էին հայ գրականութեան մասին, խօսում էին, ծրագրներ առաջադրում և ամեն կողմից, թարմ երիտասարդութիւնը միասին, պահանջ էին յայտնում ունենալու մի նոր թերթ, որ ազատ լինէր կապիտալիստական ձըգտումներից, հիմնւած ընկերակցական ձեռնարկութեամբ, ազատ թայֆայական կռիւներից. սկսէր մի նոր գործունէութիւն և իր բարձրութեամբ մաքրէր ասպարէզը՝ փչացած մամուլից։ Մինչև իսկ մի օր էլ ներկայ գտնւեց մի տան մէջ երկու գըրողների և չորս այլ ինտելլիգէնտների խորհրդակցութեան, երբ սոքա նստել հաշւում էին թէ որքան գումար է հարկաւոր մի նոր թերթ հիմնելու համար և թէ ինչպէս պէտք էր հրատարակել այդ նոր թերթը։ Խօսում էին ամսագիր հրատարակելու մասին։ Հետզհետէ տաքանալով, բացւեցաւ մի ընդհանուր վիճաբանութիւն, որ աւելի նման էր ոգևորւած երազատեսութեան։ Ամեն ոք երազում էր, ցանկութիւններ էր առաջադրում։

—Նոր թերթի իրաւունք ստանալը. ասում էր մէկը—կարող է ուշանալ, ո՛չ միայն ուշանալ, այլ և յաջողութիւն չըգտնել. պիտի մտածել ձեռք առնելու, ուղղակի գնելու՝ եղածներից մէկը, կամ բանակցելով խմբագրի հետ, առաջարկել նրան ընկերակցութիւն և թերթը մի նոր, արմատական փոփոխութեան ենթարկելով՝ ցոյց տալ որ հայ ժողովուրդը ա՛յնքան էլ տգէտ չէ, որքան մեղադրւում է և որ նա ուզում է կարդալ, բայց լա՛ւ բան կարդալ. որ նա գիտէ գնահատել, երբ նրան քարի փոխարէն՝ հաց տան։

—Շատ ճիշտ է. աւելացրեց մի գրող.—Ո՛չ մի խմբագիր չըկայ այսօր, որ չըգանգատւի՝ թէ հայը անընթերցասէր է։ Ի՞նչու այդ գանգատը. Ի՞նչու հայ ժողովուրդը չէ կարդում, փող չէ տալիս լրագիրների, ի՞նչ է պատճառը։ Չէ՞ որ պարզ

է. Երբ է հայ մամուլը տալիս ընթերցողին մի այնպիսի լրագիր, որ զերծ մնար անմիտ կուսակցական կռիւներից ու հայհոյանքներից և որ տար լաւ գրուածքներ, հեռու չմնար առօրեայ հարցերի լուրջ ուսումնասիրութիւնից և կամ որ լոկ արխիւ չլինէր: Ե՞րբ է հայ թերթը աշխատել ընթերցողին ուսուցանել. չէ՞ որ, ընդհակառակն նա, յանուն իր անձնական շահերի, լցնում է ամեն տեսակ ցանցառութիւններով, չէ՞ որ այդ թերթերը կղզիացածի նման, հայ ընթերցողին տալիս են մեր կեանքի միմիայն չնչին, մեռած հարցերի մասին ջրալի, անվերջ ճոռոմութիւններ. չէ՞ որ փորձն ապացուցել է թէ երբ լրագիրը լաւանում է, ժողովուրդը գիտէ նրան պահել, նրա պահանջը զգալ:

—Այդ բոլորը ապացուցանում է որ ժողովուրդը գիտէ գնահատել, ասաց առաջինը—գիտէ հասկանալ և որ միևնոյն ժամանակ կարող է թեփը՝ ալիւրից զատել:

Եւ այսպէս՝ սկսեցին ծրագիրներ կազմել:

Վերցնել, գնել մի թերթ, բարւոքել նրան: Ամենից առաջ վարձատրութիւն նշանակել բոլոր յօդուածների համար և մի անգամ այդպէս՝ խիստ ընտրութիւն անել, պարզ էր, որ ասպարէզից դուրս կընկնէին սիրողներն ու իրանց անունը թերթերի մէջ տեսնելու հաճոյքով դոհ անմիտ գրողները. Հայ գրականութիւնը կունենար պաշտօնով. կոչմամբ գրողներ, կօշկակարը այլ ևս հաց չէր թխիլ և կամ հացթուխը՝ կօշիկ կարիլ...

Եւ ահա երիտասարդները ոգևորուեցին, մտածեցին կամ «Թռչուն» շաբաթաթերթը և կամ «Միտք» ամսագիրը գնել. յետոյ սկսեցին երազել խմբագրութեան կազմի, թերթի բովանդակութեան մասին...

... Նախ կըկազմէին 3—4 հոգուց բաղկացած մի խմբագրական ժողով, և եւրոպական թերթերի նման, ամեն մի բաժին կըյանձնուէր մի որոշ խմբագրի: Մտնող յօդուածները, ըստ տեսակի, կըտրուէին խմբագիրներին, որոնք կարդալուց յետոյ, պարբերական ժողովներում տեղեկութիւն կըտային յօդուածի արժանաւորութեան, նիւթի և մշակման մասին: Իւրաքանչիւր խմբագիր կունենար իր որոշ ռոճիկը, իր որոշ զբաղումները.

նա կըբանակցէր իրեն յանձնուած յօդուածի հեղինակի հետ ամեն խնդիրներում և առանց նրա համաձայնութեան չէր փոփոխիլ կամ կըճատիլ—աղաւաղիլ գրուածքը...

Այստեղ յանկարծ, երիտասարդներից մէկը կարծիք յայտնեց, որ շաբաթաթերթը կամ մանաւանդ ամսագիրը չէր կարող հետևել առօրեայ հարցերին: Բայց նրան իսկոյն առարկեցին, որ մեր մէջ չեն լինում այնքան շատ երևան եկող և շուտ էլ մոռացուող հարցեր և որ ամսագիրն անգամ կարող է հասնել աւելի լուրջ ուսումնասիրութիւն տալու եղած հարցերի մասին:

Ու նորից սկսեցին ծրագրել, երազել:

... Թերթը այժմ կըսկսէր կանոնաւորապէս հրատարակուել ճոխ կազմութեամբ, բազմակողմանի, թարմ նիւթերով. կըտար մի լաւ առաջնորդող՝ օրւայ հարցերին նուիրուած, մի ներքին տեսութիւն, ապա ամփոփ ու լաւ պատմուած՝ արտասահմանի և մտաւոր, գրական և հասարակական շարժման. յետոյ, նա կ'ունենար շնորհալի թղթակիցներ վարձատրութեամբ գաւառներում, Թիւրքահայաստանում, Պարսկաստանում, Եւրոպայում, որոնցից եկած թղթակցութիւնները, եթէ ամսագիր կամ շաբաթաթերթ հրատարակէին, յանձնելով մի ընդունակ խմբագրի, կըկազմուէր քրոնիկներ, այդպիսով թերթը, ամփոփ, բայց առանց մոռացութեան տալու, տուած կըլինէր գործերի մասին: Այդ բոլորից յետոյ, մատենախօսութիւնը անպակաս՝ և ընդունակ ու անաչառ անձերի յանձնուած. խմբագրութիւնը լիովին իրեն հեռու կըպահէր կուսակցական ոգով ղեկավարուելուց. իսկ վէպեր և բանաստեղծութիւններ նա կըտար խիստ ընտրանօք և չէր ի նկատի ունենալ թէ գրողը այս կամ այն կուսակցութեան է պատկանում, այլ թէ գրուածքը որքան համապատասխան է իրեն—թերթի ունեցած ուղղութեան և հասարակական, զուտ հասարակական շահերը վեր դասող նպատակներին: Թերթը հեռու կըպահէր իրեն՝ չնչին պոլեմիկաներից և բանակռուի մէջ կըմտնէր միայն և միմիայն կարևոր և լուրջ հարցերի համար. հարցեր, որոնք ոչ թէ այս կամ այն անձնաւորութիւնը ի նկատի ունենային, այլ այս կամ

այն հասարակական, կենսական խնդիրները։ Լրագրին աշխա-
տակցելու կըհրաւիրուէին վարձատրութեամբ՝ բոլոր հայ գրողները
անխտիր, ենթարկելով նրանց գրածները լուրջ քննութեան և
ընտրութեան։ Իւրաքանչիւր գրող իր վարձը կըստանար իսկոյն,
սակայն խմբագրութիւնը հարկ եղած ժամանակ ուրախութեամբ
կ'օգնէր դրամով՝ կարօտ գրողներին և չէր թողնիլ որ նոքա,
նիւթական պակասութեան մէջ գտնւելով՝ տկարանային, կոր-
ցնէին ոգու ամրութիւնը և եռանդը...

Ա՜խ, այդ բոլորը որքա՜ն լաւ երազներ էին։

Եւ Սուրէնեանը, իր խառնւածքի ուժով, ո՛չ միայն սկսել էր
ոգևորւել այդ երազներով, այլ և այժմ ինքը աւելի առաջ անցաւ
մտածութիւնով, դադարեց խօսողներին լսելուց և նրանց ձայ-
ների մէջ՝ ընկղմած իր մտքերում, շարունակեց երազել մի առ
մի, մինչև իսկ մանրամասնութիւններ...

Ահա, օրինակ, խմբագրութիւնը։ Իւրաքանչիւր խմբագիր
կ'ունենար իր առանձնասենեակը ընդունելութեան, զբաղւելու
և բանակցութիւնների համար։ Խմբագրութիւնը կունենար իր
մատենադարանը և ընթերցարանը՝ անդամների և աշխատա-
կիցների համար։ Ապագայում, կարելի էր իրաւունք խնդրել
այդ ընթերցարանը բանալու թերթի բոլոր բաժանորդների
առաջ՝ ձրիապէս. ամեն մարդ, թերթի վերջին համարը եթէ
ցոյց տար, կամ բաժանորդ լինելու անդորրագիրը, կըմտնէր և
կըկարդար... Խմբագրութիւնը կունենար իր պարբերական ժո-
ղովները յօդւածների ընթերցանութեան, ընտրութեան, ներքին
գործերի, մտածելու համար... Կարող էր և լաւ էլ կըլինէր,
կէս տարին մի անգամ՝ հրաւէր կարդալ իր բոլոր բաժանորդ-
ներին՝ խմբագրութեան ուղարկել գրաւոր կերպով՝ ցանկութիւն-
ներ, առաջարկներ՝ թերթի բարւոքման մասին և խմբագրութիւնը
ի մի ժողոված այդ բոլորը կըխորհէր, կ'ուղղէր թերթի պակա-
սութիւնը, կըլրացնէր պակասը՝ հնար եղածին չափ, նոյն իսկ
հրապարակօրէն անկեղծ հաշիւ կըտար իր գործունէութեան
մասին...

Բէհ, երազներ, թռէք այժմ, սլացէք աւելի առաջ. մը-
տածեցէք որ ինչպէս թերթի առաջին ընտիր համարը դուրս

գալուց յետոյ, մի ընդհանուր ցնցում կ'ընկնի հայ գրականու-
թեան մէջ իր նոր ձևով, իր նոր, թարմ և տրամաբանական
վարմունքով... Թէ ի՛նչպէս միւս թերթերը աշխատելու էին
անպատճառ խծբծել այդ նոր մրցողին, բայց ժողովուրդը պի-
տի դատէր—ինքը անկախօրէն և ինքը—ժողովուրդը պիտի
լինէր նոր գործի գործնականապէս քաջալերողը։ Մի տարի շա-
րունակել հետզհետէ բարւոքելով, անշուշտ ամսագիրը կամ
շաբաթաթերթը կըհասնէր ունենալու 1500—2000 բաժանորդ
և գուցէ դեռ շատ աւելին... Ի՞նչու ոչ. հայ ժողովրդին այն-
քան խաբել են, այնքան հարստահարել յանուն գրականու-
թեան, հայ ընթերցողին այնքան կերակրել են սնոտի խոս-
տումներով, որ նա, իրաւամբ, չէ՛ հաւատալ նոր խոստումնե-
րի, եթէ գործով չի տեսնիլ նրա իրականացումը։ Մէկ տարի
բաւական է համոզելու, որ նոր գործը խայծ չէ կամ լոկ խօս-
տում և կամ շահագործելու նոր միջոց։ Երբ նա կըտեսնի որ
թերթը զգալի կերպով ճոխանում է, ո՛չ մի հարց բաց չէ թող-
նում, ոչ մի նորութիւն մոռացութեան չէ տալիս, որ իր տր-
ւած նիւթերի, յօդւածների մէջ կեանք կայ, շարժում կայ և
որ այդ թերթը կըտայ մտաւորական բազմակողմանի լուրջ պա-
շար, տարեկան 10 րուբլի ուրախութեամբ կըտայ։ Այլ ևս ա-
ւելորդ են գործակալներ, միջնորդներ, պրօպագանդ անողներ
և այլն և այլն, որոնք բոլորն էլ թերթի վարկն են միայն
ձգում և որոնք ձանձրացուցիչ, ստորացուցիչ միջոցներ են,
քանի որ ժողովուրդը—ինքը չէ պահանջողը... Թող ուտողը
գնայ հաց փնտռելու և ոչ թէ հացը՝ ուտողին... Պէտք է
թերթին այնքան ույժ, այնքան ճոխ բովանդակութիւն տալ,
որ նա խլխլի ձեռքէ ձեռք և ո՛չ թէ զանազան խնամիներ
և գործակալներ գնան այս և անձի խնդրեն, ստիպեն, ամա-
չեցնեն և թերթին բաժանորդ գրել տան...

Այսպէս դեռ երկա՛ր երազեց Սուրէնեանը, ընկղմած բազ-
կաթոռի մէջ։ Իսկ երիտասարդները դեռ վիճում էին տաք-
տաք, առաջադրութիւններ անում և այժմ աւելի գործնական
հողի վրայ հասած՝ մտածում էին թէ որտեղից և ինչպէս գտ-
նել պէտք եղած դրամագլուխը և կամ եղածներից որը գնել։

—«Միտքը» պէտք է գնել. ասում էր մէկը—պէտք չէ դեռ օրաթերթ պահել, ղեկավարելը թէ դժւար է և թէ շատ դրամի պէտք կըլինի:

—«Թռչունը» գնենք, առաջարկում էր մի ուրիշը—շաբաթաթերթ է և որովհետև մեր մէջ հարցերը շուտ չեն հնանում, եթէ քիչ էլ ճոխացնենք, կարող ենք օրաթերթերի հետ մրցել...

—Բայց ինչով, պարոններ, ինչով... աղաղակում էր մի գրող:

Ու յանկարծ բոլորը լռեցին: Սուրէնեանը այդ լռութիւնից՝ սթափւեց և սկսեց խօսողներին լսել:

—Այո, ինչո՞վ. կրկնեց պահ մի յետոյ գրողը—մեզնից ո՞վ այդքան փող ունի կամ ո՞ր մի փողատէրը մեր մէջ յանձն կառնի մեր ձեռքը փող տալ, այն էլ այդպիսի անշահաբեր գործի համար... երեխայ ենք բոլորս, բոլորս երեխաներ ենք, որ օդի մէջ դղեակներ ենք կառուցանում...

—Ակցիոներական ընկերութիւն կըհիմնենք. ասաց մէկը:

—Իրաւունք պիտի խնդրել և դա՝ մի թերթի իրաւունք խնդրելու պէս բան է. կամ չեն տալ և կամ երկար կըձգձգեն:

—Ընկերակցական բաժիններ... առաջարկեց մի ուրիշը:

—Դատարկ բաներ, խօսեց գրողը—դրանք օդ են, միայն օդ. եկել նստել ենք այստեղ, գրպաններումս մի կոպէկ չունինք և ձեռնարկութիւն ենք ուզում անել. հերի՛ք է «բարէ» կանչելով կերակրւենք... գնանք, գնա՛նք, «մեզնից քարւան կտրող» չի դուրս գալ...

Սուրէնեանը, որ լսում էր, յանկարծ յիշեց Էմմայի իրեն, մի ժամանակ արած խոստումը և երբ գրողը խօսելուց յետոյ ոտքի ելաւ, նա դարձաւ դէպի իր աթոռի մէջ և մեղմ ձայնով հարցրեց.

—Իսկ ո՞րքան պէտք է, գործը ձեռնարկելու համար...

—Ի՞նչ է... հարցրե՞ց գրողը նրան դառնալով—էլի՛ ըսկսենք ջուր ծեծել. միևնոյն չէ՞, 100 րուբլի կամ 10,000. մեզնից ո՞վ ունի տաս րուբլուց աւելին՝ թող մէջ տեղ գայ և հաշիւ տեսնէ:

Սուրէնեանը ժպտելով ոտքի ելաւ և նստեց գրասեղանի մօտ:

—Հաշւենք, ասաց—գուցէ փող գտնենք:

—Տօ, հաշւել ենք, հաշւել. ասաց գրողը—առ նւազն 20,000 րուբլի է պէտք...

Սուրէնեանը մտքումը հաշւեց թէ 20,000 րուբլին որքան ֆրանկ է անում.

—45,000 ֆրա՜նկ... մտածեց նա—կըտա՞յ այսքան փող, ունի՞... երբէք չեմ հարցրել...

Եւ սակայն յիշում էր, որ Էմման ասել էր իրեն թէ եթէ կամենար նոր թերթ հիմնել, մի գործի ձեռնարկել, թող չըմտածէր դրամագլխի մասին:

—Պարոննե՛ր, խօսեց նա ամենքին դառնալով և մտախոհ—եթէ ինձ ժամանակ կըտաք 15 օր, ես ձեզ կասեմ թէ որքան կարող եմ գտնել այդ նպատակի համար...

—Ինչ է ասո՜ւմ... գոչեց զարմացած գրողը և նստեց—դուք հարուստ էք, ինչ է...

—Ես ոչինչ չունիմ. ժպտեց Սուրէնեանը—բայց ճանաչում եմ մի անձ, որ ինձ յայտնել է թէ կըտայ որքան կամենամ... 15 օր ժամանակ տւէք ինձ գրելու և պատասխան ստանալու համար:

Այնուհետև բոլորը թափւեցան նրա վրայ. մէկը հարցնում էր թէ ո՞վ էր այդ ազգասէրը, ազնիւ մարդը, թէ ո՞րտեղ էր նա, ինչ մարդ էր և թէ հաստատ բան էր այդ, լոկ խօստում չէ՞ր և այլն:

—Հանդարտեցէք. ասաց Սուրէնեանը—ես ձեզ առ այժմ ոչինչ չեմ ասիլ նրա մասին. բաւական է ձեզ իմանալ՝ որ նա կըկատարի իր խոստումը... Սակայն ինձ հարկաւոր է կէտ առ կէտ իմանալ թէ ո՞րքան պէտք է... նախ գնելիք թերթին վճարելու, յետոյ՝ գոնէ մի տարի ապահովեցնելու տպագրութեան և այլ ծախսերը...

—Տօ, այդ վերջինները ոչինչ... գոչեց նորից գրողը—մենք բոլորս ձրի, ձրի, շան պէս կաշխատենք մէկ տարի և ինքը թերթը կըհոգայ իր բաժանորդներով—որքան էլ քիչ լինի—

տպագրութեան ծախսը. դուք այն ասէք թէ հաստատ բան է այդ:

—Հաստատ է, ասում եմ...

—Կեցցէ... դուաց գրողը—կեանք եմ ստանում... տղերք, գործե՛նք, դէհ, վաղուանից շուտ չըկայ, ես ինքս Սուրէնեանի հետ կերթամ «Մխտքի» կամ «Թուչունի» մօտ, կըխօսեմ, հրէայի պէս կըսակարկեմ, կըխլեմ այդ շահագործողների ձեռքից թերթերից մէկը, յետոյ մենք կըլւանք, կըմաքրենք նրանց աղտոտութիւնները...

—Այո՛, ասաց մէկը, պէտք է նախ թերթն առնել:

Եւ այսպէս մինչև կէս գիշեր բոլորն էլ ոգևորւած խօսեցին, գոռեցին, իսկ երկու գրողները կէս գիշերից յետոյ իսկ Սուրէնեանին տարան մի գարեջրատուն, ընթրիքի նստան և երկա՛ր մեծ եռանդով խօսում էին, գոռում, ծրագիրներ կազմում ու երազում...

Ե.

— Հմայեա՛կ... նամակներ չըկա՞ն, տո՛ւր... բարև, Սահակեա՛ն...

Խմբագիրն էր, որ իր սրահից խմբագրատուն մտաւ, ծառայի ձեռքից առաւ նամակները և բարևեց գրասեղանի առաջ նստած խմբագրատան միակ գործավարին: Սա սրբագրութիւն էր անում. առանց շարժւելու ընդունեց բարևը, յետոյ երբ խմբագիրը նստած մի սեղանի ծայրին տենդօրէն պատռտում և կարդում էր ծրարները, ասաց.

—Գրաշարները փող են ուզում...

—Դեռ փող չըկայ... բաժանորդագներ չե՛ն ստացել:

—Ոչ ոք չէ բերել:

—Ինչո՞ւ, ես Հմայեակին չե՞մ ասել որ գնայ ժողովէ... ա՛յ տղա՛յ, ինչո՞ւ չըգնացիր:

—Չեն տալիս դեռ, պ. խմբագիր, արդարացաւ ծառան:

Խմբագիրը մի չոր ու նիհար մարդ էր, հիւանդոտ դէմքով: Երբէք հանգարտ չէր նստում: Նամակները ծւատելով, պատռտելով լափում էր, կողքին նետում, եկած տպագրելի

նիւթերը մի ձեռքի մէջ սեղմում, ապա մի թուղթ այստեղեց վերցնելով ուրիշ կողմ դնում և երբ այդ էլ վերջացրեց, մտաւ դարձեալ ներս, մի րոպէից յետոյ եկաւ, մի բան վերցուց, նորից գնաց ու ամեն գալիս՝ կամ ծառային մի հրաման էր հաղորդում կամ գործավարին մի բան հարցնում:

—Խառն լուրեր պատրա՛ստ են... ո՞րքան երես է շարւած... Հմայեա՛կ, մէկ վազիր տպարան և ասա որ շուտ շարեն... Պ. Սահակեա՛ն, քանի՞ երես է Միքայէլեանի յօդւածը... ահա Մոսկւայից էլի մի յօդւած, տպագրել...

—Բայց սա խօ նոր ստացւեց.

—Այո՛... լաւ գրող է դա. ինքներդ կարդացէք, ես ժամանակ չունիմ, այժմ պիտի գնամ... Հմայեա՛կ... գնա՞ց... Սահակեան, մէկ զանգը խփիր որ միւս ծառան գայ, ո՞ւր է կորել... ռուսերէն թերթեր բերե՞լ են...

—Միքայէլեանի յօդւածը երեք երես է... ասաց սառնութեամբ Սահակեանը, որ սովոր էր խմբագրի շուտիկութեանը —այս նոր յօդւածը այս անգամ չի տպւիլ:

—Ի՞նչու... ա՛յս անգամ պիտի դրւի... Մարկո՛ս, ասա շուտ որ չայ տան ինձ... այո՛, այս անգամ դրէք... Միքայէլեանի յօդւածը պիտի քիչ դնել:

—Արդէն շարւած է բոլորը:

—Ոչինչ, կէսը թող մնայ. այս թող շարեն... Մարկո՛ս, Մարկո՛ս, ո՞ւր գնաց անպիտանը, դռան զանգն են խփում... Մարկոս, դուռը բաց արա՛... Այսօր չէ՞ եկել ոչ ոք:

—Ոչ ոք.. այս յօդւածն էլ եթէ դնենք, էլ ուրիշ յօդւած չէ կարելի, վէպն էլ երկու երես է...

—Իսկ ես մի բան եմ գրում ախր...

—Տեղ չըկայ...

Այդ միջոցին բաց դռնից երևացին երկու անձեր:

—Ա՛... սեղանի վրայից իջաւ և դէպի դուռը վազեց խըմբագիրը ուրախութեամբ—այդ դո՞ւք էք, պ. Յակոբեան, ո՞ր խաչից էք մտնում մեր խմբագրատունը... համեցէք:

Գրողն էր, որ Սուրէնեանի հետ ներս մտաւ:

—Խնդրեմ ծանօթացէք...

Խմբագիրը և գործավարը թոթւեցին երկուսի ձեռքն էլ։

— Համեցէք, աթոռ հրամցրեց խմբագիրը և նորից գրողին դարձաւ քաղցր դէմքով — ինչու էք մեզ մոռացել, ոչինչ չէք ուզում գրել «Թռչունի» մէջ...

— Ծուլացել եմ, եղբայր, ասաց Յակոբեանը — էլ ոչ մի թերթի մէջ չեմ գրում, ծուլացել եմ... մէկ էլ, գիտէ՞ք, պէտք է ապրել. ամեն օր մտածում եմ թէ ինչ պիտի ուտել... հա՛, հա՛, հա՛... այնպէս չէ՞, պ. Սահակեան, ես էլ խօ խմբագիր չեմ, որ միշտ փող ունենամ ու հանգիստ նստեմ — գրեմ...

— Լա՛ւ միշտ փող ունիմ... ասաց խմբագիրը — պարտքերի մէջ խրւած եմ, բաժանորդ չըկայ, եղածն էլ միշտ ապառիկ...

— Է՛, ծախէք թերթը ուրեմն.

— Ծախե՞մ... ինչու չէ, կըծախեմ, բայց ո՞վ է առնողը։

— Ես...

Խմբագիրն ու գործավարը ծիծաղեցին։

— Ի՞նչու էք ծիծաղում, ես կառնեմ ասաց լրջութեամբ գրողը — օրինակ, քանիսո՞վ կըտաք «Թռչունը»...

— Կանխիկ փողո՞վ, կատակեց խմբագիրը։

— Կանխիկ փողով. պնդեց լրջութեամբ գրողը։

— Է՛, հանաքը մի կողմ թողնենք, ասեց խմբագիրը։

— Ի՛նչու հանաք, եղբա՛յր, ասում եմ քեզ որ կառնեմ...

— Ապա ասում էիր թէ հացի փող չունիս...

— Քե՞զ ինչ. դու ասա թէ ի՞նչ տամ «Թռչունին»...

— Հարիւր հազար... ծիծաղեց խմբագիրը։

— Յետո՞յ. ասեց գրողը լրջութեամբ — ձեզ բա՛ն եմ ասում և չեմ կատակում. այո, պ. Սուրէնեանը ուզում է մի թերթ ունենալ և եկել ենք «Թռչունը» առնելու. շատ էլ մի լաւ թռչուն չէ, քոսոտել է, բայց յոյս ունինք խելք-խելքի տալ... է՛, քանի՞ տանք։

— Լո՞ւրջ էք խօսում։

— Շատ լուրջ... գինդ ասա՛.

— Լաւ ուրեմն, եթէ հանաք էլ էք անում, ես լուրջ կասեմ. տուէք յիսուն հազար՝ տամ. ես էլ արդէն յոգնել եմ ու հիւանդ եմ և կուզէի թողնել այս գործը։

— Յետո՞յ, ասեց լրջութեամբ գրողը։

— Յետոյ ի՞նչ. շա՞տ ասացի.

— Դուք էլի կատակ էք անում. գի՛ն ասացէք, կատակը մէկ կողմ մնայ.

— Կատակ չեմ անում, 50,000-ով կըտամ։

— Եթէ առնող լինի՝ ի հարկէ կըտաք... բայց դժւար թէ գտնւի այդպիսի անխելք մարդ... դուք ո՞րքան էք ծախսել դրա վրայ։

— Վնասնե՞րս ասեմ։

— Ո՛չ, առա՛ջ՝ ձեռք բերելու գումարը։

Խմբագիրը լռեց և քիչ կարմրեց։

— Տեսնո՞ւմ էք. ուրեմն ոչինչ չէք ծախսել. այժմ վնասներն ասացէք. միա՛յն, զգուշացնում եմ որ նախ ձեր ասածները պիտի ապացուցանէք՝ վկայագրներով, հաշւով, իսկ երկրորդ մի գործի վրայ արած վնասները ո՛չ թէ գործի գինը բարձրացնելուն է ծառայում, այլ ընդհակառակն՝ ապացուցանում է որ նա աւելի պակաս արժէք ունի...

— Բայց դուք իսկապէս լուրջ էք խօսում. գոչեց խմբագիրը զարմացած — պ. Սուրէնեանը ուզում է առնե՞լ «Թռչունը»։

— Այո՛, ասաց Սուրէնեանը որ մինչև այդ՝ լուռ էր — կառնեմ, եթէ արժէքը իմանամ և յարմար լինի ինձ...

Այն ժամանակ խմբագիրը ելաւ և ասաց.

— Անցնենք ուրեմն սրահը և հանգիստ խօսենք։

Յետոյ գրողի և Սուրէնեանի հետ մտան միւս սենեակը, որ մի ճոխ զարդարւած սրահ էր։

Սուրէնեանն առաջին անգամն էր տեսնում մի այդպիսի լաւ զարդարւած, մաքուր հայ խմբագրատուն։ Օթոցներ, թաւշեայ կահկարասիք, լաւ պատկերներ, պատերի վրայ զարդեր, ճենապակէ նկարներ, մօզայիքներ, ապա մի յարմար գրասեղան՝ խմբագրի համար։ Երևի այն սենեակը, ուր առաջ մտել էինք, աշխատանոցն էր, որովհետև այնտեղ էին դիզւած փոստ

տանելիք համարները և այնտեղ ամեն ինչ անկանոն ու տակն ու վրայ էր:

Խմբագիրը հրամցրեց նոցա նստելու, յետոյ երբ քիչ լը-ռել էր, ուզեց խօսել, բայց գրողը նրան ընդհատեց:

—Այս ինչ է. ասաց նա—լաւ խմբագրատուն էք սար-քել և դեռ միշտ գանգատում էք որ քիչ բաժանորդ ունիք, վնասւում էք և այլն:

—Ինչպէս տեսնում էք... ժպտեց խմբագիրը:

—Ուրեմն շա՞տ բաժանորդ ունիք:

—Բաւական ունինք:

—Ո՞րքան... ցոյց տուէք մեզ ձեր գրքերը:

Խմբագիրը ետ քաշեց ձեռքի տակ եղած գիրքը և ասաց.

—Ինչ հարկ կայ դրան. խմբագրութիւնը սովորութիւն չունի հաշիւ տալ ամենքին:

—Լսեցէք ինչ կասեմ, պ. խմբագիր, ասաց լըջութեամբ գրողը—դուք մեզ հետ կատակներ մի՛ անէք: Եթէ համաձայն էք «Թռչունը» ծախել մեզ, ցոյց տուէք նրա ստացած օգուտը կամ վնասը, յետոյ, ըստ այնմ, նշանակեցէք գին և վերջացնենք:

—Շատ լաւ. ես ձեզ իմ գինը կընշանակեմ, միայն ո՛չ մի եկամուտ կամ վնաս ցոյց չեմ տալ, այդ աւելորդ է:

—Ծիծաղում էք մեզ վրայ. ժպտեց գրողը—մի գործա-րան երբ ծախում են, ցոյց են տալիս նրա դրութիւնը գնողին, այլապէս ինչպէս գնահատել... Ո՞րքան եկամուտ ունի գործը...

—Մօտ 9,000 ռուբլի:

—Ուրեմն 900 բաժանո՞րդ ունիք—այդ շատ լաւ է. ցոյց տուէք մեզ ձեր գրքերը:

—Դուք միթէ չէք հաւատում ինձ:

—Է՛հ, պ. խմբագիր, խաղեր մի խաղաք. առևտուրի մէջ վկայագրերից աւելի ճշտախօս չըկայ. ցոյց տուէք ձեր գրքերը...

—Բայց դա երկար կըլինի. ես ձեզ ասեմ բերանացի. ու-նիմ 8,000 ռուբլի արդիւնք և 6,000 ծախս...

—Ուրեմն զուտ մնացորդ՝ 2,000... իսկ դուք քիչ առաջ ողբում էիք որ փող չունիք, որ բաժանորդ չունիք, որ ապա-ռիկ են շատերը...

—Իրաւ է, ապառիկներ շատ կան, բայց միշտ հաւաք-ւում են... դուք ինձ ձեր տալիք գինն ասացէք:

Գրողը քիչ լռեց, յետոյ մէկէն ոտքի ելաւ և ասաց.

—Երկար չըխօսելու համար ասեմ ձեզ որ 15,000 ռուբլի կարող ենք տալ, բայց ոչ մի կոպէկ աւելի.. Եւ այդ 15,000 ռուբլին դուք գրեթէ գտած փող պիտի համարէք:

—Գտած փո՞ղ:

—Այո. պնդեց գրողը—տարիների ընթացքում, ոչնչից գոյացրել էք այս գործը, որ ձեզ կերակրել է և այժմ էլ 15,000 էք շահում... համաձա՞յն էք մեր տուած գնին:

Խմբագիրը ծիծաղեց:

—Ծիծաղո՞ւմ էք:

—Այո... ես էլ իմ վերջնական գինը կասեմ. 30,000 ռուբլի և այս տարուայ մինչև այժմ ստացած բաժանորդների փողն էլ վրան:

—Ուրեմն մօտ 50,000 ռուբլի. էլի ձեր ասածն եղաւ. ո՛չ, եղբայր, աւելորդ փող չունինք: Գնանք, պ. Սուրէնեան, «Թըռ-չունը» շատ բարձրից է թռնում, չընայելով որ փետուր չի մնացել վրան .. Ծառայ ենք, պ. խմբագիր:

Ու քայլեց դէպի դուռը: Խմբագիրը նոր միայն ըմբռնեց, որ գրողը կատակ չէր անում: Մինչև այդ՝ չէր հաւատում: Այդ ինչ Սուրէնեան էր. Բաղդուցի մի հարուստ արդեօք. ո՞վ էր, որի անունն իսկ չէր լսել: Բայց, ինչ որ էլ լինէր, հա-ւատալի լինէր կամ ոչ, նա մտադիր չէր 30,000-ից պակաս տալ իր թերթը, մանաւանդ այժմ, երբ գիտէր որ ուրիշ թեր-թի իրաւունք գրեթէ անհնար էր ստանալ:

Ուստի երբ գրողն ու Սուրէնեանը ոտքի ելան, նա չը-պահեց, այլ ժպիտը դէմքին ասաց.

—Լաւ մտածեցէք. դեռ էլի կըխօսենք. մտէք նորից, երբ վճռած կըլինէք ըստ արժանւոյն գնահատել «Թռչունը»:

—Բայց, պ. խմբագիր, գոչեց քիչ բարկութեամբ գրողը—մենք այստեղ գալուց առաջ արդէն վճռել ենք մեր տալիքը: Դուք մոռանում էք որ եթէ թերթը առնում ենք, ոչ թէ նրանից շահելու նպատակով է, այլ լոկ գրականութեան ա-

ւելի լաւ ծառայեցնելու համար նրան. դուք միշտ ճառեր էք կարդում ազգասիրութեան, աշխատասիրութեան և այլն և այլն, յայտարարում էք ձեզ զոհ, նահատակ... մի խօսքով մի մարդ, որ իր կեանքը դնում է ազգային գրականութեան բարգաւաճման համար. ինչու ուրեմն այդքան շահասէր էք դառնում, երբ ձեզ տալիս են 15,000 րուբլի կանխիկ փող մի բանի համար, որի վրայ դուք ոչինչ չէք ծախսել և որից դուք միշտ օգուտ էք ունեցել...

—Իսկ իմ աշխատութիւնը, իմ քրտինքը...

—Բայց չէ որ ձեր աշխատութեան փոխարէն՝ դուք ապրել էք և ապրում էք այսպէս շքեղ, ամառանոց էք դնում, արտասահման գրօնում, հագնում էք լաւ, ամեն զւարճութիւն վայելում. և, բացի դրանից, չէ որ դուք ձեր քրտինքի փոխարէն շահել էք անուն, հռչակ...

Խմբագիրը ծիծաղեց ցենիկաբար:

—Տեսնում էք, գոչեց գրողը—երբ դրամի խնդիր է գալիս մէջ տեղ, մոռանում էք և՛ ազգասիրութիւն և՛ զոհողութիւն և՛ գրականութիւն... Գնանք, պ. Սուրէնեան, աւելի լաւ է փողը ջուրը ձգել, քան տալ այս պարոնին... մնաք բարև. դուք մտածեցէք, եթէ 10,000 րուբլիով կըտաք...

—Բայց դուք 15,000 ասացիք առաջ:

—Այդ շատ է, ես նոր անդրադարձայ... շա՛տ շատ է և 10,000-ը, բայց տալիս ենք. մինչև վաղը առաւօտ կըսպասենք ձեր պատասխանին. ցտեսութիւն. 10,000 րուբլի և ոչ մի կոպէկ աւելի... և այս տարւայ բոլոր ստացած զուտ արդիւնքն էլ մեզ կըտաք, մինչև այժմ եղած ծախսերը հանելով...

—Օ՛. այդ արդէն չափազանց է. Բաղուից 25,000 առաջարկող է եղել և...

—Գիտեմ, գիտեմ, արեց գրողը—վաճառականական այդ ձևը հնացել է և դուք յաճախ գործածել էք. ուրիշ բան մտածեցէք այժմ, ուրիշ բան...

Եւ դուրս գնացին. խմբագիրը տարաւ նրանց մինչև դուռն ու գւեթէ պատկառանօք էր, որ սեղմեց Սուրէնեանի ձեռքը: Զգում էր, որ այդ պարոնի գրպանը գոնէ լի է:

—Այս բոլորը որքան զզւելի է. ասաց Սուրէնեանը գրո-
գլին, երբ փողոց էին ելել—սա՛ էր «Թռչունի» խմբագիրը:
—Դա էր. ինչ խմբագիր է դա. մի ցած տեսակի վաճա-
ռական—ահա բոլորը:
—Այժմ ինչ անենք, գնա՞նք «Մոքի» մօտ, նա էլ արդեօք նոյն կերպ չի՞ լինիլ:
—Տեսնենք, եկէք «Մոքի» խմբագրին ընկերակցութիւն
առաջարկենք, մի նոր խմբի յանձնելու՝ ինքն էլ գլխաւոր
խմբագիր լինելու պայմանաւ: Նա «Թռչունի» խմբագրի պէս
խմբագիր լինելու պայմանաւ...
տգէտ վաճառական չէ. թէև քիչ այլանդակ, գրեթէ պու-
խօպատ մարդ է, բայց զարգացած և հասկացող:
Եւ երկուսն էլ մտան «Մոքի» խմբագրատուն:
Մեծ սեղանի առաջ նստել էր խմբագիրը և գրում էր:
Գրողը նրան ծանօթ էր, ծանօթացրեց Սուրէնեանին: Ո՛չ մի
գործավար կամ ծառայող չէր երևում: Ինքն խմբագիրն էր
անում ամեն բան:
Համբերութեամբ և ուշադրութեամբ լսեց ասածները,
յետոյ լաւ զննեց իր հետ խօսողներին և հարցրեց.
—Իսկ որքան է ձեր դրամագլուխը:
Սուրէնեանը շփոթւեց. ինքն էլ չըգիտէր այդ: Այնուամենայնիւ, քիչ մտածելուց յետոյ, ասաց.
—Ոչ պակաս՝ քան 20.000 րուբլի:
Խմբագիրը ապշեց. գումարի մեծութիւնը կարկամեցրեց
նրան:
—Այդ... այդ խոշոր գումար է... և այդ փողը ձե՞րն է,
ուզում էք գործադրել «Մոքի» վրայ. ասաց նա:
—Պ. խմբագի՛ր, խօսեց այժմ գրողը—դուք նախ յայտնեցէք մեզ ձեր պատասխանը և ապա ձեզ կասենք թէ դա
ինչ փող է և ինչպէս են մտադիր գործադրել:
Բայց խմբագիրը ուշք հըդարձրեց նրան և դէմքը Սուրէնեանին, սկսեց հարցաքննել թէ որտեղացի է, ո՞վ է հայրը,
ինչ գործով է զբաղւում և ինչ է ուսել: Յետոյ, երբ այդ բոլոր հարցերին պատասխանեցին, նա քիչ լռեց, ապա խօսքերը
ծորեցնելով՝ ասաց.

—Իսկ… իսկ դուք ձե՞ր կողմից էք խօսում, թէ ո և է կուսակցութիւնից էք ուղարկուած:

Գրողը ոտով շօշափեց Սուրէնեանի ոտքը և ժպտեց: Խմբագիրը, սկսում էր իր տարօրինակութիւնները:

—Մենք ձեզ յայտնեցինք, ասաց գրողը—մեզ ուղարկել է մի խումբ, որ իր մէջ խորհել է, վճռել և դիմումն է անում ձեզ. այդ խմբի տրամադրութեան տակ է դրել պ. Սուրէնեանը՝ իր գումարը:

—Կարելի՞ է իմանալ ձեր ընկերների անունները, դիմեց խմբագիրը Սուրէնեանին—Լոյսականնե՞ր են, թէ Ձայնականներ:

—Այստեղ, պ. խմբագիր, խօսեց Սուրէնեանը—ոչ Լոյսականութիւն կայ և ոչ էլ Ձայնականութիւն. ժողոված երիտասարդները բոլորն էլ համալսարանական, գործելու եռանդ ունեցող մարդիկ են:

—Անւանեցէք խնդրեմ. չէ՞ որ ես պիտ իմանամ թէ ովքեր են «Մտքին» այդ առաջարկ անողները:

Սուրէնեանը գրողին նայեց. սա ուսերը թօթւեց:

—Մէկը, օրինակ Սարգիս Մարտիրոսեանն է. ասաց նա:

—Մարտիրոսեա՞ն. ասաց լրջութեամբ խմբագիրը—դա նա չէ՞, որ սրանից մի քանի տարի գրել էր թէ՝ «Միտքը» ընկսում է թուլանալ և թէ նրա ոտանաւորները անհամ են… այո, յիշում եմ… այս րոպէիս ձեզ կասեմ թէ «Ձայնի» ո՞ր համարումն է. այստեղ է… պահած ունիմ…

Ու վերկացաւ, ձեռքը դրեց «Ձայն» թերթի մի փոշոտ կապոցի վրայ:

—Այստեղ. ժպտեց նա—ես հաւաքում եմ «Մտքի» դէմ բոլոր գրածները…

—Բայց աւելորդ է այդ. ասաց Սուրէնեանը—Մարտիրոսեանը զարգացած, անկեղծ տղայ է և…

—Ա՛, ո՛չ… միջահատեց խմբագիրը կիսովին դառնալով—ո՛չ, նա զարգացած և անկեղծ չէ. առաջ գրում էր «Մտքի» մէջ, իսկ յետոյ… այս րոպէիս, գտնենք այդ համարը:

Գրողը ոտքի ելաւ:

—Ո՛չ, ո՛չ. շարունակեց խմբագիրը՝ աշխատելով կապոցը

բանալ - ո՛չ. նա «Մտքի» դէմ գրել է… իսկ ուրիշ ո՞վ է.
անւանեցէք խնդրեմ…
--Յովսէփ Ստեփանեան:
—Ահա՛. տեսնո՞ւմ էք. Ստեփանեան, մի ինչ որ Լոյսա-
կան. միշտ «Լոյսի» մէջ է գրում և երբէք «Մտքին» չէ աշ-
խատակցել, համակրութիւն . էլ չէ ցոյց տւել: Ոչ. եթէ ձեր
խումբը այդպիսի անձերից է, լաւ չէ կազմւած:
Յետոյ, չըկարողանալով կապոցը քանդել, մի կողմ դրեց.
նստեց և ծանրութեամբ մի պապիրոս վառելուց յետոյ, ասաց.
—Բայց, եթէ կուզէք, ես ձեզ մի առաջարկ կանեմ:
Մենք վաճառականական գործառնութիւն սկսենք: Դուք հո-
գացէք «Մտքի» ծախսերը, բաժանորդներ գտէք, ես կըմնամ
նրա լիազօր տէրը և խմբագիրը… այո. իսկ ձեզնից ով կուզէ
աշխատակցել, ես նրա յօդւածները կընայեմ, եթէ յարմար
գտայ—կըտպագրեմ: «Մտքի» եկամուտը ամբողջապէս ձեզ կը-
լինի և ինձ դուք ռոճիկ կըտաք տարեկան 2,000 րուբլի.
կարծեմ շատ չէ…
—Այդ չէ խնդիրը, միջամտեց նորից գրողը—այլ այն
թէ՝ ընդունո՞ւմ էք խմբագրական ժողով, այսինքն խմբագրու-
թեան անդամներ, խմբագիրներ, իսկ դուք կըմնաք խմբա-
գրապետ՝ մէկ և կէս ձայնով…
—Ինչպէ՜ս… ես միայն կէ՞ս ձայն աւելի. ո՛չ. ես չեմ ըն-
դունում այդ. ես ուզում եմ մնալ լիազօր խմբագիր և ամեն
տնօրինութիւն, որ վերաբերի բովանդակութեան, պիտի մնայ
միմիայն իմ իշխանութեան ներքոյ: Բայց… եթէ կուզէք,
ես ձեզ երկուսիդ կընդունեմ իմ խորհրդական-աշխատա-
կիցների շարքում…
—Իսկ ի՞նչ էք հասկանում դուք այդ բառերով. հարցրեց
գրողը:
—Շատ պարզ է. երբ պէտք եմ ունենում նրանց խոր-
հրդին, հարցնում եմ. միայն կարող եմ լսել ու գործադրել այդ
խորհուրդը կամ ոչ—դա ինձնից է կախւած:
—Սուրէնեանն էլ ոտքի ելաւ, նայեց գրողին և երկուսն
էլ գլխարկնին առին:

—Դուք գնում էք, ասաց խմբագիրը—ուրեմն համաձայն չէք... բայց ես մի բան էլ մոռացայ... Այո, դուք պիտի տաք նաև «Մտքի» պարտքերը...

Քիչ մնաց գրողը մի կծու խօսք ասէր, բայց զսպեց իրեն և սառնութեամբ ասաց.

—Ներեցէք. ձեր պայմանները մենք կըյայտնենք մեր ընկերներին...

—Այո, ժպտեց խմբագիրը՝ նոյնպէս ոտքի ելնելով—ձեր առաջարկների վրայ դեռ էլի հարկաւոր է մտածել... այդպէս շուտ վճռել անխոհեմութիւն է... Ասացէք որ 20,000 րուբլի... լաւ գումար է. «Միտքը» մօտ 3,000 րուբլի պարտք ունի. այդ գումարից կարելի է տալ պարտքը: Իսկ դուք համակրում էք «Մտքին», կաշխատէք այդ մասին... սակայն, դուք կարող էք էլի գալ. կըխօսենք... ինձ պէտք է խորհրդակցել աշխատակիցներիս հետ:

—Բայց ձեր աշխատակիցներից մէկն էլ կայ մեր մէջ. ասաց Սուրէնեանը—Մովսիսեանն էլ մեզ հետ է:

—Ա՛, Մովսիսեա՞նը... Այո, նա մեր աշխատակիցն է, սակայն ոչ խորհրդակից. նա միայն վիպագիր է և նրան տեղ է տրւում «Մտքում»:

—Ձեր թերթի ամենալաւ գրողն է. խօսեց խստութեամբ գրողը:

—Այդպէ՞ս էք կարծում. ժպտեց խմբագիրը—երևի դուք «Միտք» միշտ չէք կարդում: Կարդացե՞լ էք օրինակ մեր նոր աշխատակից «Որոտի»—դա կեղծ անուն է—«Խոստումներ» վէպը. յետոյ մեր միւս աշխատակից Իմաստունեանի—դա ևս. կեղծ անուն է—«Զոհեր» պատմւածքը: Դրանք գլուխ-գործոցներ են. այո: Մովսիսեանը վատ գրող չէ, բայց այժմ «Միտքը» աւելի լաւ գրողներ ունի, նոր ույժեր, նոր բանաստեղծներ...

—Ուրախ ենք. ասաց Սուրէնեանը և երկուսն էլ համոզւեցին, որ այլ ևս ոչինչ չէր մնացել խօսելու:

Ու տխուր՝ դուրս գնացին խմբագրատնից:

—Բայց սա յիմար է. գոչեց Սուրէնեանը երբ փողոց էին ելել:

—Յիմար չէ. մի տեսակ հիւանդոտ մարդ է. մի մարդ, որ իրենից և իր շրջանից դուրս ոչինչ չի տեսնում, չէ ուզում տեսնել... մեր բոլոր թերթերը այդպէս են. իսկ «Մտքի» խըմբագիրը, աւելացրէք դրա վրայ՝ շուտիկ մարդ (чудакъ) էլ է...

—Ոչինչ յոյս չըկայ դրանից... Արդեօք չէ՞ր ծախիլ թերթը, եթէ առաջարկէինք:

—Կրծախի. խօսք եղել է այդ մասին. 25,000 է ուզում, 3,000 էլ պարտքի վճարում և այն պայմանով՝ որ խմբագրի ընտրութեան մէջ ինքը տայ վերջին հաւանութիւնը...

Սուրէնեանը ծիծաղեց:

—Մի բան ինձ ասում է, ասաց նա —որ թէև խմբագիրների մէջ դուցէ ամենամաքուրը սա է, բայց միւս կողմից հէնց իր այդ դրաւիչ կողմով էլ՝ ամենավտանգաւոր շահագործողն է...

Զ.

Եւ այսպէս ի դերև ելան խմբի յոյսերը: Գրողի բուռն ոգևորութիւնը սկսում էր մեղմանալ: Միայն և միմիայն մտածում էր թէ ինչ պէտք է անել: Վեցամսեայ հանդէս. բայց չէ՞ որ այդպիսի ուշ-ուշ հրատարակւող հանդէսը լոկ գրական ժողովածու միայն կարող էր լինել և իրաւունք էլ չէր ունենալ առօրեայ հարցերի մասին գրել. գրել էլ եթէ ուզենար, հարցերը շատ կըհնանային...

—Այնուամենայնիւ, ասել էր նրան Սուրէնեանը - ես կըգրեմ նրան, որից դրամը պիտի ստանալ, կըյայտնեմ դումարի մօտաւոր մեծութիւնը և մինչև պատասխան գալը՝ կըմտածենք:

Ու գրեց Էմմային:

Մինչ այդ, գրողը մի օր գտաւ մի ինչ որ պարոնի, որը յայտնի էր Թիֆլիսում «Էշն Աւարայրի» պատւաւոր տիտղոսով և համոզեց նրան թերթի իրաւունք ստանալու ձեռնարկել: Տարաւ նրան մի անկիւն, ստորագրութիւն առաւ որ թերթի իրաւունքը ստանալուց յետոյ «Էշն Աւարայրին» միայն անունով խմբագիր պիտի կոչւէր և որ թերթը լիովին պիտի

յանձնէր խմբին, փոխարէնը մի որոշ գումար ստանալով։

Յարմար անձն էր. Իշն Աւարայրին ճանաչուած էր իբր բացարձակ բարեյոյս մարդ, ունէր կապեր—նրան հանդուրժում էին, որովհետև իր յիմարութիւններով ծիծաղեցնում էր—համոզուած էին, որ այդ անմիտից ոչ մի վտանգ չէր լինիլ և դուցէ իրաւունք տային։

Իշն Աւարայրին իսկոյն գլուխն առաւ։ Ամբողջ երիտասարդութիւնը քրքջաց, թերթերից մէկը մինչև իսկ կալամբուրներ նետեց նոր թերթի հասցէին, բայց Թիֆլիզից լաւ ցուցումներ գնացին Իշն Աւարայրու վրայ և սա, կիսովին իր փառասիրութիւնից և կիսովին սպասուած գումարի յոյսով՝ տաքութեամբ կպել էր գործին։

Սուրէնեանը, այդ ձևով ստանալիք թերթի իրաւունքի վրայ շատ յոյս չդրած, մտածեց մի առ ժամանակ Բագու գնալ և այնտեղ էլ տեսնել հայ երիտասարդութիւնը, մանաւանդ թէ ասել էին և թէ ինքն էլ գիտէր որ երիտասարդութիւնը ամեն կողմից կենդրոնանում էր նէֆտային քաղաքի մէջ։

Եւ իրաւ, գործարանական այդ քաղաքը մի տեսակ քաշող ույժ դարձած՝ Կովկասի ամեն կողմից իր մէջն էր քաշում թարմ և ինտելլիգէնտ ույժերը. մինչև իսկ գրողներից մի քանիսը գնացել էին այնտեղ և յոյսերը կտրած գրականութեամբ ապրելու, զանազան պաշտօններն էին մտել։

Այժմ Սուրէնեանը այլ ևս որոշ ծրագիր չունէր։ Թիֆլիզում եղած ժամանակ պահ մի ոգևորուել էր և երազել իրենց ձեռքն անցնելիք թերթերով, բայց երբ փորձերը ի դերև ելան և Իշն Աւարայրու ստանալիք իրաւունքն էլ մի տեսակ խաղի կերպարանք ստացաւ—նորից նա սկսեց թուլանալ, կորցնել ոտքի տակի հողը, նորից շւարել թէ ինչ անէ, ինչպէս գործէ, ինչ նպատակի դիմէ։

Էմմայից նամակներ միշտ ստանում էր. այժմ միակ մխիթարիչ, միակ նրա սպասած բանը՝ Էմմայի նամակներն էին, որոնց նա միշտ կարդում էր, միշտ մտքովը Եւրոպա գնում, իր եղած տեղերը երազում և կարծես ցանկանում էր թողնել

այս թմրած կեանքն ու անտանելի հասարակութիւնն ու գնալ ապրելու Էմմայի կողքին։ Բայց երբ յիշում էր Էմմայի խօսքերը—զայրանում էր որ չէր կարողանում մի ասպարէզ գտնել՝ արդարացնելու համար աղջկայ յոյսերը։

Թիֆլիզից գնալուց առաջ նա փնտռեց, գտաւ և տեսնւեց Եւրոպայից յանձնարարած մարդկանց հետ. երկար խօսեց, երկար լսեց նրանց և ճնշուած սրտով տեսաւ, որ խնամիականութիւնը, կուսակցական կոչւող անձնական շահերի կռիւը մտել էր և' այդտեղ, ինչպէս հասարակական բոլոր գործերի մէջ։ Նրա վրայ իսկ սկսեցին կասկածանօք նայել, որովհետև գիտէին, որ երբեմն աշխատակցել է «Լոյսին» և վերջերս՝ «Ձայնին»։ Այնտեղ՝ Ձայնականներ էին. տարօրինակ արագութեամբ տարածւել էր նրա ունեցած խօսակցութեան մասին՝ «Ձայնի» խմբագրատան մէջ. երևի խմբագրատան անդամներն էին տարածել և ով գիտէ որպիսի ազաւաղումներով սրան- նրան հաղորդել իր խօսածները։ Տեսել էին նրան նաև «Լոյսի» աշխատակցի հետ ման գալիս և այն համոզումն էր կազմւել նրա մասին, որ նա կամ «անգոյն» է և կամ խաւարամիտ—պահպանողական։ Եւ նրան չէին բացւում, նրանից խուսափում էին այն մարդիկ, որոնց ձեռքումն էր այդ ժամանակ հասարակական գլխաւոր գործերի ղեկը։ Այդ գործերի գլուխ անցածները յափրացած այժմ, եկամուտ տւող բոլոր ձեռնարկութիւններն իսկ շահամոլաբար բաժանում էին իրենց և խնամիների մէջ, թեթև պատառները թողնելով քծնողներին. . բացի դրանից, եթէ շահամոլներ չէին, գործերը բոլոր ձեռք առած՝ խաղալիկի պէս նետում էին այս-այն կողմ, մաշում, ծիբում նրանց և եթէ գործը վնասւում էր, չէին դժւարանում իսկ հասարակութեան առաջ հակառակ արդիւնք ցոյց տալ, յենւելով քծնողներից և խնամիներից կազմւող մեծամասնութեան ձայնի վրայ։ Մամուլի ձայնին ուղղութիւն էին տալիս նրանք և հարկ եղած ժամանակ ամեն տեսակ զէնքերի առաջ չէին կասում…

Այդ բոլորը, ի հարկէ, նոր չէին Սուրէնեանի համար, բայց նա հեռուից էր միայն լսել և շատ հաւատ չէր ընծայել և եր-

քեմն իսկ մտածել էր թէ դուցէ անձնական կրքերի, յաղթող վատ կուսակցութեան չարախօսութիւններ էին։ Իսկ այժմ, երբ անձամբ խօսեցնում էր, լսում ամենքին, երբ ամեն ինչ տեսնում էր—սկսում էր համոզուել որ մի սոսկալի, խայտառակ պառակտումն ապականել է ամեն ասպարէզ և մամուլն էլ, եթէ ասպարէզի տէրը իւրայիններն էին – ոսկեզօծում էր, մինչև իսկ երկինք բարձրացնում այդ ապականութիւնները։

Կուսակցական պայքարները այլ ևս վաղուց դուրս էին եկել գաղափարների հողի վրայից և դարձել թերթերի խմբագիրների և նրանց շուրջը ժողովւած խմբերի անձնական կռիւներ։ Մարդ ականատես էր թէ ինչպէս մի բուռ ժողովուրդ, իրենց մէջ մաս-մաս եղած, իւրաքանչիւրը զգզում էր, վընասում միւսին։ Բաւական չէր և այդ, այլ և ներքնապէս նա բաժանուել էր բազմաթիւ միմեանց ատող, միմեանց ոչնչացնող այնպիսի մասերի, որոնք յիշեցնում էին Հայաստանում միմեանց կոտորող քրդական ցեղերին...

Մի խաօս, մի ողբալի խաօս, ուր եղբայրը եղբօր գլուխն էր փշրում, որդին հօրն էր դաւաճանում, կինը ամուսնուն արհամարհում և արտաքին թշնամին, օգտուելով մեր տխմար, եղբայրադաւ կռիւներից, աւելի և աւելի համարձակօրէն կարկուտ էր տեղում մեր գլխին, փշրում, ջարդում... ու ծիծաղում։

Եւ այն մի ամբողջ ամիսը, որ գործադրեց Սուրէնեանը՝ ծանօթանալու համար երիտասարդութեան, մամուլի, գրողների, ինտելիգէնցիայի հետ —ամեն օր դառնանում էր, որովհետև ամեն քայլում նրանք բոլորն էլ, առանց բացառութեան, միմեանց ամբաստանում էին, միմեանց մէջ միմիայն կեղտոտ յատկութիւններ գտնում, միմեանց ցեխոտում, հայհոյում և անմտաբար՝ լոյսական կամ ձայնական, մտքական կամ խօսքական լինելու և չըլինելու նժարն էին գործածում մէկին բոլորովին ցեխը կոխելու կամ երկինք հանելու համար։ Լոյսականը խռով էր ձայնականի հետ. նրան դաւաճան, ազգադաւ, խարդախ էր անուանում։ Ձայնականը՝ լոյսականին տալիս էր «եզւիտ, տիրացու, տգէտ, խաբեբայ և աֆերիստ» տիտղոսները։ Մտքականը ծաղրում էր լոյսականին, ձայնականին, խօսքականը՝ բոլորին։ Սա նրան, նա՝ սրան... Ո՛չ մէկը չըկար, որ միւսի մէջ ո և է արժանիք տեսնէր, որ միւսի հետ կամենար խօսել, անձնական կապեր ունենալ. եթէ գտնւում էր աւելի լայն հայեացքներով մէկը, որ կուսակցական այդ խայտառակ չափանիշը (կրիտերիւ) մի կողմ էր նետում—նրան կոչում էին «անգոյն, եզւիտ...»

Մի փոքրիկ դէպք մի օր այնքան դառնացրեց Սուրէնեանին, որ նրա մէջ ծնեցուց խորին ատելութիւն դէպի այդ բոլոր «կուսակցութիւնները» անխտիր։—Թշւառների համար բաց էին արել մի ձրի ճաշարան, ուր տալիս էին նաև թէյ։ Մի օր Սուրէնեանը պատահմամբ մտաւ այնտեղ։ Մուրադեանի հետ եղած և իրեն ծանօթ ուսուցիչն այդ օրը հերթապահ էր մի քանի օրիորդների հետ. իսկ մի տգէտ և սրիկայի նմանող մարդ դաւաթներն էր լւանում։ Ուսուցիչը դիմաւորեց Սուրէնեանին, նստեցրեց և տեղեկութիւններ տուաւ։ Այդ միջոցին դաւաթներ լւացողը կռացաւ դէպի ուսուցիչը և փսփսալով մի բան հարցրեց նրանից։ Ուսուցիչը ծիծաղեց և բարձրաձայն պատասխանեց.

—Չէ, Մարկոս, պ. Սուրէնեանը լոյսական չէ։

—Հա՜... ասեց Մարկոսը լրբենի ժպիտով—թէ լոյսական կուլէր...

Եւ սպառնալից՝ Սուրէնեանին նայեց։

—Տեսնո՞ւմ էք Մարկոսին. խօսեց մի օրիորդ—երկու օրւայ մէջ թունդ ձայնական դարձրինք. անցեալ օր մի այնպիսի մուշտի նստացրեց մի լոյսականի մէջքին՝ որ քէֆդ գայ։ Մարկոսը մի բանտարկեալ է թեթև գողութեան համար. ուղարկել են՝ որ մեզ օգնի. մենք կարդալ ենք սովորեցնում նըրան. այժմ «Ձայն» է կարդում և սաստիկ ատում է «Լոյսին»...

—Ի հարկէ, մուշտիներով էլ այդ ապացուցանում է. հեգնեց Սուրէնը։

Ճաշարանի օրիորդները ծիծաղեցին և մի առանձին պարծանքով նայեցին Մարկոսին, որ այժմ աւելի սիրտ առած՝ գոչեց.

—Վա՛յ իս «Ջայնի» հոգո՜ւն մեռնիմ... դուք էլ խօմ «Ջայնական» էք, պարո՛ն...

—Ո՛չ, Լոյսական եմ. ասաց սառնութեամբ Սուրէնեանը։

—Հանաք կուլիս անում... Լոյսականները շնիր են, մարդ խօմ չին...

Եւ ծիծաղեց. օրիորդներն էլ քրքջացին։

Սուրէնեանը վրդովուած՝ դուրս գնաց ճաշարանից։ Ահա և ամբոխը պառակտած, կապիկներ շինած, միմեանց դէմ անգլի-տալցական ատելութեամբ զինած... Խնդիրը նրանումն էր, որ Փարիզում, Էմմայի շուրջը խմբուած երիտասարդները պարտականութիւն էին դրել Սուրէնեանի վրայ, ծանօթանալ երկրի հայ ինտելիգենցիայի հետ և տեսնել թէ ինչ կարելի էր անել...

Եւ ահա այժմ նա Թիֆլիզից յոյսը կտրած էր մեկնում։

—Գուցէ բոլոր թարմ և լաւ ոյժերը Բաքու են, մտածեց նա—և գուցէ կան այնտեղ շրջաններ, կան մարդիկ, որոնց հետ կարելի կլինի միանալ ու գործել։

Յիշեց որ իր ընկերներից և փրնէլի ծանօթ հայ ուսանողներից մի քանիսը Բաքու էին։ Մտածեց մի առ մի այցելել նրանց, տեսնել թէ ինչ են անում. խօսել, մտնել նրանց շրջանի մէջ և գոնէ մխիթարական լուրեր հաղորդել Փարիզում իր նամակներին սպասող անձերին։ Մտածեց նաև որ թերթ հրատարակելու մասին կարելի էր խօսել այդ հին ընկերների հետ, գուցէ նոքա մի միջոց ցոյց տային... Մի խօսքով, Սուրէնեանը յուսալից էր, որ Բաքու հասաւ։

Է.

Հարուստ, նէֆտային գործերով գրեթէ միլլիոնատէր եղած Խաչատրեանի որդու հարսանիքն էր։ Սուրէնեանի վաղեմի ծանօթներից էր. նրան էլ հրաւիրել էին։

—Քաղաքի ամբողջ ինտելիգենցիան մեզ մօտ կլինի. ասել էին նրան։

Եւ դա էր, որ գրաւեց Սուրէնեանին։ Հետաքրքիր էր և

լաւ առիթ էր տեսնել նրանց, ծանօթանալ այդ ինժիներ ու համալսարանական պարոնների հետ, լսել և տեսնել նրանց շրջանները։

Չքեղ տան լայն ու մեծ սրահները լոյսով ողողուած էին։ Հետզհետէ հասնող կառքերը դռան մօտ էին իջեցնում զարդարուն, գոյնզգոյն հագուստներով կանանց, հանդիսական տարազով հարուստների։ Եւ երբ կեդրոնական մեծ սրահի դռնից ներս մտաւ Սուրէնեանը, այնտեղից դուրս ժայթքեցին ասիական երաժշտութեան և ոգևորող ծափահարութեան ձայներ։ Եռանդուն պար էր սկսել. սրահի պատերի տակի աթոռները գրաւած մեծ շրջան էին բաց արել և աշխուժով ծափահարում պարող զոյգին, որոնք թեթևութեամբ սահում էին մոմած յատակի վրայ։ Հասակաւոր տղամարդիկ շրջապատել էին քահանային և մի անկիւնից դիտում։ Կողքի սենեակում, կարմիր լոյսի տակ պատկերանում էին խաղամոլների 8—10 խմբեր, որոնք ներս մտնելուն պէս սկսել էին թղթախաղը և մինչև լոյս շարունակելու էին՝ առանց ուշադրութիւն դարձնելու շրջապատին։ Սրահի մի դուռն էլ հանում էր դէպի պատշգամը։ Այնտեղ առաջնորդեց փեսան Սուրէնեանին և ծանօթացրեց բոլորի հետ։ Փողովել էին քաղաքի ինտելիգենտ երիտասարդները և ռուսերէն լեզուով մի տաք խօսակցութիւն սկսել։ Երկաթեայ ճաղերին մէջքով կռթնած, երեսը դէպի ընկերները ուղղած, իր հնչեղ ձայնով բորբոքուած խօսում էր մի կարճլիկ, կարճավիզ և հաստափոր պարոն, որ համալսարական էր և նէֆտային գործերի մէջ մեծ պաշտօն ունէր։ Կարճլիկի կողքին կանգնել էր հաստաբուն ու կարճոտն իրաւաբան Մատթէոսեանը՝ կապոյտ ակնոցը ցաւագար աչքերին կպցրած։ Նա էր, որ երբեմն ընդհատում էր կարճլիկին և մռմռում.

—Բայց ներեցէք...

—Սպասիր դեռ... բռնում էր նրա թևից կարճլիկը և շարունակում։ Մի կողմ քաշուած՝ Սուրէնեանը սկսեց լսել։ Միւսներն էլ լսում էին, իսկ կարճլիկը վարդապետական ձայնով՝ ասում էր.

—...Ո՛չ, պարոններ, ինչ կուզէք ասէք, բայց ամենա-

տարրական լօգիկան ձայնում է, որ երբ փաստերը կուտակուած են, վճիռն անխուսափելի է լինում, երրակացութիւնը պարզ։ Խնդիրը սկզբունքով քննելով, գտնում եմ ես, որ հարկաւոր է այդպիսի տգեղ երեւոյթները դուրս շպրտել մեր միջից. ինտելլիգէնցիան աղբանոց չէ և ես կրկնում եմ ձեզ, որ մի շրջանի այն ժամանակ զօրեղ է լինում, երբ իր միջի հրէշներին ոչընչացնում է. ես լաւ գիտեմ որ բոլորդ համաձայն էք ինձ հետ. ես պնդում եմ ուրեմն…

—Բայց լսիր դեռ… ընդհատեց Մաթթէոսեանը.

—Սպասիր… ասածդ ինչ է, միթէ ճիշտ չեմ ասում… Գնում են Եւրոպա, մի քիչ այս ու այն մտքերն ուսումնասիրում, անգիր անում, նրանով ոգեւորւում և նետւում մեր մէջ իրենց ցնորքներով… Ես ինքս սիրում եմ բարձր մտքեր, հաւասարութիւն, արդարութիւն և այլն. ո՞վ կարող է դէմ լինել իդէալներին. ես ինքս համոզմունքով Մարքսիստ եմ, ես ինքս վշտանում եմ՝ տեսնելով անիրաւութիւններ և, դուք ասացէք, հազար անգամ չե՞մ գոչել ինժինէրներին, կառավարիչներին թէ՝ «եղբայր, այսպէս չի կարելի, բանւորը շատ թշուառ է, եկէք—ժողովենք, մի բան մտածենք, թեթեւացնենք նրանց վիճակը»…

—Բայց սպասիր…

—Ա՛խ, զզուեցրիր դու ինձ, Մաթթէոսեան… Կրկնում եմ. ես այս րոպէիս էլ պատրաստ եմ… մեզնից իւրաքանչիւրի ցանկութիւնն է այդ… Բայց, թոյլ տալ որ մի ինչ որ պրիկաշչիկ, հաշւապահ, որի միակ առաւելութիւնն այն է, որ արտասահման է գնացել և համալսարան եղել, որ ով գիտէ փողով է գնել իր դիպլօմը…

—Անշուշտ փողով. Գերմանիայում այդպէս է, պնդեց մի ինժինէր։

Ի հարկէ. շարունակեց կարճլիկը—միթէ ես չգիտեմ։ Ասում եմ, թողնել մի այդպիսի մարդու՝ անպատիժ կեղտով ցեխոտել ամեն մի պատուաւոր անձի—այդ արդէն հանդուրժելի չէ. ես շատ համբերող եմ, ներողամիտ եմ, բայց… Ասա խընդ-

րեմ, Արտէն, (դարձաւ նա յանկարծ՝ ներս մտնող փեսային) այն շառլատանին էլ ես հրաւիրել։

—Ո՞ր շառլատանին. հարցրեց փեսան զարմացած։

—Այդ Վարդանեա՞ն է, ինչ է. ասաց հեգնանքով կարճլիկը։

—Ի հարկէ. հայրսի մօտիկ ազգականն է և իմ հին դասընկերը։

—Ահա՛, տեսնո՞ւմ էք. գոչեց մի ինժինէր բարկացած—որտե՞ղ գնում ես, այդ խենթը առաջդ է դուրս գալիս. կլուբում խաղալիս՝ աչքդ բարձրացնում ես-կողքովդ է անցնում. այգիում օրիորդների հետ խօսելիս՝ տեսար քեզ է նայում և միշտ իր հեգնող կծու ժպիտը դէմքի վրան. փո՛ւհ, անտանելի է, Աստուած վկայ…

Այդ բոլորը սկսում էր հետաքրքրել Սուրէնեանին. ո՞վ պիտի լինէր այդ Վարդանեանը, որին այդքան գզգզում էին ինտելլիգէնտները։

—Բայց ի՞նչ է արել, նորից հարցրեց փեսան ծիծաղելով։

—Դու միայն ծիծաղում ես. գոչեց կարճլիկը—իսկ եթէ իմանաս թէ երէկ երեկոյեան ոպիսի՜ սկանդալ է սարքել կլուբում…

—Ապա՛, պատմեցէք, ես չեմ լսել։

—Թող Մաթթէոսեանը պատմի. նրա հետ է եղել այդ։

—Թող Մաթթէոսեանը—

—Ի՞նչ պիտի լինէր, եղբայր. պատմեց Մաթթէոսեանը—ես նստել էի Գրիգորեանի, Մալխասեանի և Յակոբեանի հետ՝ խաղում էինք մեզ համար ու խօսում մէկ-մէկ էլ, երբ տեսնենք յանկարծ Վարդանեանը մօտ է գալիս, կռանում մեզնից քիչ հեռու նստած երկրորդ սեղանի վրայ և խօսում այն գրողՍտեփանեանի հետ։ Մենք մեզ համար խօսում ենք, ծիծաղում ու խաղում… Մէկ էլ տեսնեմ դարձաւ դէպի ինձ ու գոչեց «—Լէ՞րբ»… ո՞նց թէ լիրբ… բոլորս ապշեցինք, ինչ է եղել։ Ես վեր եմ թռնում ի հարկէ.—«Լէ՞րբ» կանչում է նա աւելի բարձրաձայն—այո՛, դուք ոչ միայն լիրբ էք, այլև անասնացած մի շուն, որին պիտի անխնայ սատկեցնել»… Ես ուզում եմ խփել. մէջ են մտնում, մեզ բաժանում իրարից. եթէ Յակոբեանը չլինէր՝ գլուխը կջարդէի»…

—Բայց ինչու, ինչ էր եղել, հարցրեց փեսան—առանց պատճառի ինչու պիտի այդպէս անէր:

—Ես էլ այնտեղ էի. ասաց մի յաղթանդամ կառավարիչ—այ, բանն ինչումն էր. այդ խենթը լսել էր որ սրանք խաղալու ժամանակ իբր թէ բոլոր անցնող կանանց մասին կլտի, աղտոտ ակնարկութիւններ էին անելիս եղել... տօ, քեզ ինչ, չիմա՛ր, իրենց համար նստել են և խօսում, ոչ մի տիկին էլ չէ լսել ոչինչ. բայց չէ, Վարդանեանը զայրացել է, որովհետև իր քոյրն էլ անցած միջոցին, այս չիմարը չէ նկատել որ Վարդանեանի քոյրն է և եղբայրն էլ լսում է իրենց՝ ասել է թէ «ինչ լաւ գիշերւայ բան է...» Ու ասա՝ որ կասես. սկանդալ, կռիւ, ղալմաղալ... հազիւ բաժանել ենք միմեանցից:

—Պէ, ես ինչ գիտէի որ նրա քոյրն էր. ծիծաղեց ցինիկաբար Մաթէոսեանը—լաւ փափլիկ բան էր, կողքիցս անցաւ, ես էլ տեսայ՝ քէֆս եկաւ...

Մի րոպէ լռութիւն տիրեց: Փեսան առանց մի ձայն հանելու՝ հեռացաւ. Սուրէնեանը վրդոված և բարկացած էր նայում Մաթէոսեանի ժպտող դէմքին:

—Գիտէ՞ք ինչ կայ. ասաց լռութիւնը խզելով՝ յաղթանդամ կառավարիչը—ես պսակից իսկոյն տուն կերթամ, ճաշին չեմ մնալ. գիտեմ այն խենթը այստեղ էլ սկանդալ կըսարքի. բանն այն է, որ ինձ դէմ էլ բարկացած է նա. չըգիտեմ ինչ է եղել. մի առանձին հրճւանքով, որտեղ հանդիպի, կծու խօսք է նետում դէպի ինձ:

—Ես բացատրեմ, մէջ մտաւ կարճլիկը—ո՛, ես հասկանում եմ այդ Դոնքիշոտի հոգեբանութիւնը: Ուզում է ցոյց տալ թէ ինքն ազնիւ է, իդէալիստ է և որ մենք բոլորս փչացած ինտելլիգէնտներ ենք, կարիերիստներ, որ իբր թէ ինքը հասարակութեան շահերի համար մտածող է, իսկ մենք մեր գըրպանի, փառքի և փորի ետևից ընկածներ... Կեղծութիւն ի հարկէ. այդ բոլորը անում է նրա համար, որովհետև դուրս են արել իրեն պաշտօնից և ահա 3—4 ամիս է պարապ պըտըտում է: Միթէ ես որ կամենայի՝ չէի կարող նրա համար պաշտօն գտնել, քի՞չ մարդու եմ տեղաւորել, ձեզնից շատերին

ես չե՞մ տեղ գտել... բայց նրա համար ո՛չ միայն չեմ կամենում աշխատել, այլ և ես էի, որ Հայրապետեանին խորհուրդ տւի չըպահել այդպիսի խենթին, արդէն իրենք էլ դժգոհ էին. վեր է կենում ու տիրոջ վաճառականական ձեռնարկութիւնները դատում, խաբեբայութիւն կոչում... տօ, քե՞զ ինչ, ախմախ, դո՛ւ ես մնացել խրատողը...

Բոլորը ծիծաղեցին «խենթի» վրայ:

—Իսկ ինձ, ինձ դէմ ինչ ունի. հարցրեց յաղթանդամ կառավարիչը:

—Միթէ դեռ չես հասկացել: Առաջ մի խեղճ ուսուցիչ էիր, այժմ ահա թէև բարձրագոյն ուսում չունիս, բայց խելքովդ ու ճարպիկութեամբդ կարողացել ես բարձր պաշտօնի հասնել—և այդ՝ նրա աչքը ծակում է, նախանձի բան է. անաջողները միշտ յաջողների դէմ զայրանում են այնպէս՝ ինչպէս կապւած շունը հաչում է ազատ շան վրայ... Իսկ նա ասում է որ իբր թէ դու կարիերիստ ես, բուրժուա կըդառնաս և աւելի վատ բուրժուա քան անկիրթ հարուստները... և դեռ ինչեր չէ ասել...

—Այդպէ՞ս է ասել. բացագանչեց կառավարիչը, կարմրելով բարկութիւնից—այդպէ՞ս է ասել:

—Ի զուր ես զայրանում. ժպտեց կարճլիկը—վրդովւել միայն կարելի է, որովհետև նա ամեն նստած տեղ ասում է որ դու մի փչացած ինտելլիգէնտ ես, ազգային գործերի մէջ էլ եթէ մասնակցում ես՝ մարդկանց աչքում թող փչելու համար է միայն...

—Լաւ, ես նրան ցոյց կըտամ, ասաց կառավարիչը—նա կըտեսնէ թէ ես ինչ եմ:

—Իսկ ինքը ինչ է, գոչեց Մաթէոսեանը—ոչ մի ազգային գործի մէջ չէ խառնւում, ամենքին վիրաւորում է, ոչ մի սկզբունքի կամ իդէալի չէ ծառայում:

—Ինչե՞ր ես ասում. ասաց կարճլիկը—եթէ կամենար իսկ մտնել ազգային գործերի մէջ՝ ո՞վ կըթողնէր նրան: Կարելի՞ է միթէ այդպիսի մարդու գործի մէջ առնել. ո՞վ կարող է վըստահել նրա վրայ—կըքոտ, կռւարար, դիսցիպլինի անընդունակ

նակ և բացի դրանից, մինչև այժմ ոչ մի գործունէութիւն էլ չունի արած:

—Ինչ որ է, տղերք, մէջ մտաւ ինժիներ Մաքուրեանը —եթէ եկաւ և այստեղ էլ կլուբի պէս չարաւ այս երեկոյ—լաւ է:

—Ըհը, ա՛յ, Սէրգէյ Պաւլիչն էլ եկաւ. ամենայն ինչ կատարեալ է. Վարդանեանը մի լաւ թափ է տալու նրան:

—Վարդանեա՞ն... դէմքը կնճռեց եկող երիտասարդը— մի՞թէ նա այստեղ է:

Եւ շուրջը նայեց: Սէրգէյ Պաւլիչը քաղաքի հարուստ հանքատէրերից մէկն էր: Ոչ մի տեղ չէր ուսել, բայց ամբողջ քաղաքի ինտելլիգէնցիան պնդում էր որ նա շնորհալի տղայ էր և որ մանաւանդ... շատ փող ունէր:

Երիտասարդները ծիծաղեցին՝ երբ նա շուրջը նայեց: Կարճլիկը մտերմաբար թօթւեց նրա ձեռքը և ասաց.

—Ոչինչ, Սէրգէյ Պաւլիչ. մենք նրան ամեն կողմից կըռմբակոծենք, եթէ էլի համարձակւի կծու խօսքեր ասել:

—Ընդլիտանը գիտէ՝ թէ ո՛ւմ որ կողմից պիտի վիրաւորել. ասաց մի ինժիներ—ա՛յ, Սէրգէյ Պաւլիչին վիրաւորում է նրա ոտանաւորներով:

—Ցիմարը անգիր է արել մինչև իսկ տողերը. ասաց Սէրգէյ Պաւլիչը սնոտի հպարտութեամբ—իմ «Ծովը» ամբողջ անգիր գիտէ:

—Գէ՜հ, եկէք և խնդրենք մի կոչէք դրան. ասաց Մաքուրեանը—ինչո՞ւ է նստել այդ 10—12 տող ոտանաւորը անգիր արել:

—Պարապութիւնից. գիտեց կարճլիկը:

—Իսկ ինձ թւում է. մէջ մտաւ կառավարիչը (որ Սէրգէյ Պաւլիչի գործերի կառավարիչն էր), ինձ թւում է որ մարդը անգիր է անում միայն ա՛յն ոտանաւորները, որոնց շատ է հաւանում... Սէրգէյ Պաւլիչի «Ծով» բանաստեղծութիւնը իսկապէս մի հրաշալիք է:

Բանաստեղծը նրան նայեց շնորհակալութեամբ:

—Հը՛մ... վատ չէ. ասաց նա կեղծ համեստութեամբ—

ես ինքս էլ եմ հաւանում դրան. իսկ ես ընդհանրապէս դըժգոհ եմ միշտ գրւածքներիցս:

—Այո՛. մէջ մտաւ կարճլիկը—ես էլ կարդացել եմ «Մըտքի», թէ «Ձայնի» մէջ...

—«Մտքի» մէջ. ուղղեց Սէրգէյ Պաւլիչը:

—Ասում եմ. կրկնեց կառավարիչը—երևի խոր տպաւորութիւն է թողել ոտանաւորը այդ կւաւրարի վրայ... Եւ իրաւ, ինչ կայ աւելի գեղեցիկ՝ քան սոյն տողերը.

Ծովը շողում է, ծովը փայփլում,
Վերից լուսինը...

—Սխալ ես ասում. միջահատեց Սէրգէյ Պաւլիչը և ինքը վերսկսեց.

Ծովը շողում է, ծովը փայփլում,
Լուսինը վերից՝ նրան է գգւում:

Ու կանգ առաւ:

—Խնդրեմ, խնդրեմ, միւս երկու տողն էլ. գոչեց Մաթէոսեանը:

Սէրգէյ Պաւլիչը կարմրեց, հազաց ու արտասանեց.

Ծովը շողում է, ծովը փայփլում,
Լուսինը վերից նրան է գգւում.
Հազար, բիւր կայծեր, որպէս դրամներ,
Խաղում, ցայտում են իր երեսն ի վեր...

—Որպէս դրամնե՜ր... գեղեցիկ է. ասաց մի ինժիներ՝ ձեռքերը շփելով—յետո՞յ, յետո՞յ...

Պարասրահում այդ միջոցին երաժշտութիւնը դադարել էր և երևում էին նոր եկող հիւրեր: Պարն էլ կանգ առաւ, շրջանը քանդւեց, մի ընդհանուր տեղափոխութիւն տեղի ունեցաւ և տղամարդիկ սկսեցին լցւել կողքի սենեակը, ուր հաւաւ պիտի օրհնէին:

Եւ այդ բոլորի մէջ լսւում էր Սէրգէյ Պաւլիչի չոր ձայնը, որ իր ոտանաւորն էր արտասանում...

Խաղում, ցայտում են, պսպղում, փայլում,
Եւ յիշողութիւններ խօսում իմ սրտում.
Ասա ինձ ծովակ, ինչո՞ւ այդ կաքաւ,
Ո՞վ քեզի այդպէս ուրախ դարձրաւ...

Այդ միջոցին մի ինժինէր, երևի մտքերի կապակցութեամբ, գոչեց յանկարծ.

Ձայն տուր ով ծովակ, ինչո՞ւ լռում ես...

Սէրգէյ Պաւլիչը դէմքը այնպէս ծամռեց, որ Սուրէնեանը չկարողացաւ ծիծաղը զսպել ու քրքջաց։ Յետոյ, նկատելով որ բոլորը զայրացած իրեն էին նայում, դուրս գնաց պատշգամից։

—Ո՞վ էր այդ... հարցրեց միւսներին Սէրգէյ Պաւլիչը։

—Է՛հ, ո՞վ գիտէ. ուսերը թօթւեց կարճլիկը—էլի արտասահմանի «բարի պտուղներից» մէկն անշուշտ... Արսէնը ասում էր որ Ցիւրիխ է աւարտել... մի երկրորդ Վարդանեան գուցէ մեր գլխին...

—Ինձ գրել են նորա մասին. խօսեց Մաթէոսեանը—ասում են որ «Լոյսական» է։

—Հա՞... արեց կարճլիկը։

—Հը՛մ... վրայ տւաւ կառավարիչը։

Եւ ներսից լսւող քահանայի աղօթքը եկաւ խանգարելու երիտասարդների խօսակցութիւնը։ Բոլորն էլ միմեանց ետևից, փեսային պատւելու համար՝ ներս մտան։

Ը.

Եկեղեցուց վերադառնալով, հրաւիրեալները մօտեցան պատրաստւած սեղանին. բայց Սուրէնեանը խնդրեց փեսային՝ ծանօթացնել իրեն Վարդանեանի հետ։

Ծանօթութիւնը կատարւեց։ Թշնամանւող, ամենքից ատ-

ւած Վարդանեանը կռթնել էր մի աթոռի և մելամաղձոտ ու ձանձրացող հայեացքով զննում իր մօտից անցնողներին։

—Ծանօթացէք, ասաց նրան փեսան—Սուրէնեանն էլ արտասահման է ուսել։

Եւ ժպտելով թողեց երկուսին ու հեռացաւ։

Երկու երիտասարդները լռութեամբ մի րոպէ զննեցին իրար։

—Դուք ո՞րտեղ էք աւարտել. հարցրեց Վարդանեանը սառնութեամբ։

—Ցիւրիխ... Ներեցէք, ես շատ տարօրինակ կերպով էր որ մօտեցայ ձեզ. բայց ձեր մասին լսեցի...

—Այո՞... ժպտեց Վարդանեանը—այդ կառավարիչներն ու ինժինէրները անշուշտ խօսեցին... և անշուշտ լաւ «գովասանքներ» լսած կլինէք։

—Այո, վատ էին խօսում ձեր մասին։

—Ի՞նչ կայ. ուսերը թօթւեց Վարդանեանը—սովոր եմ դրան. ինձ ոչ ոք չէ սիրում այստեղ... մանաւանդ այդ «ինտելլիգէնտ» համարւողները։ Ոյժը նրանց կողմն է. ինձ մնում է միշտ այդպիսի գովասանքներ լսել... Իսկ դուք գիտէ՞ք թէ ինչու ինձ չեն սիրում։

—Զգում եմ... ձեզ խռովարար, կռւարար են համարում։

—Շատ ճիշտ է. ինձ համարում են ըմբոստ... և ահա մի քանի ամիս է որ այն խրատն եմ լսում, թէ պէտք է վարժւել վարւելու, խոնարհւելու... և քանի լսում եմ, այնքան դառնանում... Ներեցէ՛ք, դուք մտադի՞ր էք մնալ խընջոյքին։

—Ո՛չ... շատ էլ ախորժակ չունիմ։

—Լաւ ուրեմն, եթէ կուզէք՝ դուրս գնանք այս տնից և պարտէզը մտնենք. այնտեղ այժմ լուռ է և քիչ կըխօսենք։

Երկու երիտասարդները դուրս եկան և հասարակական պարտէզը մտան։ Այնտեղ, լուսընկային, քաշւեցին մի հեռաւոր ծառուղու մէջ և նստեցին առաջին հանդիպած նստարանի վրայ։

Մի քանի րոպէ երկուսն էլ լուռ՝ նստած մնացին։

—Այո. խօսեց Վարդանեանը—ինձ համարում են խռովարար... Պէտք է ուրեմն իջնել, նրանց պէս դառնալ, կոպտանալ, ողնասիւնը ծռել, լեզուն կաշկանդել և լռութեամբ տանել ամեն խօսք, ամեն ստորացումն. ոչ միայն տանել, այլ և քաջալերել աւազակութիւններ, գծուծութիւններ. պէտք է իդէալացնել կարիերի համար գործ դրած բոլոր միջոցները, պէտք է մտնել այդ կրթուած աւազակների թևերի տակ, շոյել նրանց ճարպացած մտքերը, բնական համարել նրանց շառլատանութիւնը, զանազան լաւ մտքերով խաղալը... պէտք է ուրեմն կեղտի մէջ մնալ և գոչել որ մաքրութեան մէջ ես զտընւում—որպէսզի քեզ համարեն լաւ, վարւեցող, պատուական մարդ... Վայրկեաններ են լինում, որ մտքովս անցնում է թէ հարկաւոր են այդպիսի զիջումներ: Եւ ահա այդ մտքի ծագումն իմ մէջ՝ զայրացնում է ինձ, մանաւանդ երբ զիջումները կամենում եմ արդարացնել յանուն գործի...

Սուրէնեանը սկսում էր չըհասկանալ այդ ջղային երիտասարդին, որ մի տեսակ գրգռականութեան էր հասնում և խօսքերը աւելի կցկտուր, աւելի մթին էին դառնում:

—Դուք այդ չէ՞ք զգում. հարցրեց յանկարծ Վարդանեանը դառնալով նրան—ես զգում եմ. երկար, երկա՛ր տատանումներից յետոյ վճռեցի և ոչ մի չնչին, ամենաչնչին զիջողութիւն չանել: Il n'ya que le premier pas qui coute (առաջին քայլն է դժւարը), լսե՞լ էք այդ առածը... Այո՛. առաջին քայլը.. Մի չնչին զիջողութիւնն առաջ է բերում մի ուրիշը, դա էլ երկրորդը և ահա, չնչին զիջողութիւնների խումբը ձեզ անզգալապէս տանում է մեծ զիջողութիւնների: Յետոյ, ահա թէ ինչ է կատարւում: Դուք արդարացնում էք ձեր առաջին քայլը և այդ արդարացումը ձեզ ձգում է մի ուրիշ զիջողութեան մէջ... և այդպէս, մանր, աննկատելի ալիքները կուտակւելով՝ կոհակներ են կազմում: Մի անգամ հասած այդ դրութեան՝ դուք վարժւում էք... Այդպէս է վարժւում ստրուկը իր օղին, աւազակը՝ արիւնին. այդպիսի շրջաններից է անցել այդ ձեր տեսած ինտելլիգէնցիայի անդամներից իւրաքանչիւրը և նոցա մէջ այժմ ամեն ինչ

փոխուել է, ապականուել... Ես ձեզ ձանձրացնում եմ երևի...

—Դուք վաղո՞ւց է որ այստեղ էք. հարցրեց մեղմութեամբ Սուրէնեանը:

—Մի տարի է:

—Եւ ձեզ դեռ չէ՞ յաջողւել մի գործի մտնել:

—Յաջողւել է: Երկու անգամ գործի եղել եմ և երկու անգամ էլ դրեթէ վռնդւել: Ինձ հնազանդութեան, դիսցիպլինի անընդունակ գործաւոր են համարել:

—Հասկանում եմ... իսկ այժմ ի՞նչպէս էք ապրում: Ներողութիւն այս հարցիս համար. եթէ կուզէք՝ կարող էք չըպատասխանել:

—Կըպատասխանեմ: Ես այժմ միմիայն բեռ, անտանելի բեռ եմ մեծ եղբօրս. բայց շուտով կըգնամ. Թիֆլիզ կերթամ, այնտեղ գուցէ յաջողւի հաց գտնել:

Յետոյ, երբ այդ ասել էր, մէկէն դարձաւ դէպի Սուրէնեանը և աւելացրեց.

—Իսկ դո՞ւք, երևի եկել էք գործ գտնելու:

Սուրէնեանը գլուխը թօթւեց.

—Ո՛չ այնքան. ժպտեց նա—եկել եմ ընկերներ որոնելու:

—Ընկերնե՞ր. ինչ բանի համար:

—Գործելու...

Վարդանեանը մի րոպէ թափանցող ակնարկով նրան նայեց, յետոյ յանկարծ ծիծաղեց:

—Գործելո՞ւ... ասաց նա—ընկերնե՞ր և Բագւի մէջ. նէֆտային գործ—այո, կըգտնէք ձեզ կողոպտել, եթէ փող ունիք. ձեր գրպանը դատարկել ուզող ընկերներ և շա՛տ կըգտնէք. ձեզ կըշոյեն, եթէ տեսնեն որ իդէալների մասին էք խօսում՝ թունդ իդէալիստ կըձևանան—վարպետ են դրա մէջ, ձեզնից աւելի իդէալիստ. յետոյ ձեր գրպանը կըդատարկեն, ձեզ կըքամեն և դէն կընետեն՝ ինչպէս սարդը, ճանճի հիւթը ծծելուց յետոյ՝ չոր մարմինը դուրս է շպրտում: Եւ ի՞նչ գործ էք ուզում սկսել, ասացէք խնդրեմ. ի՞նչ գործ կայ անելու այստեղ, ուր միակ գործը, միակ Աստուածը, միակ իդէալը նէֆտն է և

նրանով հարստանալը, իսկ միակ զւարճութեան խումբն է՝
կին, խաղ և գինի… Վաղո՞ւց է այստեղ էք:

— Վեց օր է միայն:

— Վեց օ՞ր… և առաջի՞ն անգամն է.

— Առաջին:

Վարդանեանը ծիծաղեց:

— Ծանօթներ ունի՞ք:

— Մի քանի ընկերներ, որոնք ինձ հետ են եղել Եւրո-
պայում:

— Դեռ չէ՞ք տեսել նոցա:

— Ոչ դեռ ևս:

— Ի զուր. գնացէք մի առ մի տեսնելու և եթէ նոքա էլ
ձեզ նման խօսեն, այսինքն, նէֆտից դուրս ուրիշ գործի ա-
նուն գիտենան՝ այն ժամանակ ես սխալուած եմ այսպէս յուսա-
տես լինելով… Բայց, ինձ հետաքրքրում է թէ ի՞նչ էք ու-
զում անել, ի՞նչ գործ… Նախ, իմացէք, որ հասարակական
ամեն գործ, այդ տեսածդ ինտելլիգենտների մենավաճառն է
եղել (մոնոպոլ) և նոքա չեն դիմանում, եթէ իրենց գոյացրած
ճահիճի մէջ ուզենայ մի թարմ ջրի կաթիլ ընկնել… Յետոյ
այստեղ գործելու ասպարէզն այն չէ, ինչ որ Թիֆլիսում կամ
ուրիշ տեղ. այստեղ աւելորդ ժամանց են համարում գրակա-
նութիւն, թատրոն, դպրոց, բարեգործութիւն և այլ աւելի
բարձր գործեր… լոկ ժամանց: Կուզէք փորձեցէք մի ինտելլի-
գենտի հետ խօսել գրականութեան մասին. նա յօրանջելով,
արհամարհութեամբ կլսի, ամէն բան վար կըզարնի՝ ինչ որ
մերն է (որովհետև իբր հայ իր վրայ պարտաւորութիւններ
կան և նա ուզում է թօթւել վրայից այդ պարտաւորութիւն-
ները), ամեն բան կըծաղրի. փորձեցէք խօսել թատրոնի մա-
սին — ձեզ կըպատասխանի որ օտար թատրոնների դերասանու-
հիները աւելի լաւ են (որովհետև սիրուն են) և որ մեր թատ-
րոնը տգեղ բան է (որովհետև տգեղ են դերասանուհիները).
խօսեցէք դպրոցի մասին, նա կասի որ՝ դպրոց չունինք… և
դա՝ մի տեսակ ուրախութեամբ կասի, որովհետև ազատւել է
դէպի դպրոցն ունենալիք պարտականութիւններից: Ի՞նչ մը-

նաց այլևս. ա՜հ, այո, հայրենիքի գործերը… փող պէտք է
տալ, չէ՞… լաւ ուրեմն, եթէ դուք տեսնէք թէ հայ ինտելլի-
գենտը հայրենիքի համար աւելի փող տայ քան ինչ որ նա
տալիս է մի պոռնիկի, այն ժամանակ նշանակում է որ ես
իրա՛ւ հրէշ եմ և որ չարժէ ինձ հետ այլ ևս մի խօսք խօ-
սել… Գնանք այժմ տուն:

Սուրէնեանը ոտքի ելաւ և սկսեցին քայլել:

— Այո, շարունակեց Վարդանեանը — դուք այստեղ կըգըտ-
նէք երկու կարգի մարդիկ. նախ գռեհիկներ, որոնք փողի տէր
լինելով՝ լողում են պերճութեան մէջ և անզգայ են դէպի ա-
մեն վիշտ. երկրորդ՝ ինտելլիգենտներ, որոնք հարստանալով
ապրում են աղտի մէջ և որոնց իդէալների երրորդութիւնն է
կին, խաղ և գինի… Ես գուցէ չափազանց խիստ եմ խօսում.
գուցէ կան բացառութիւններ, այսինքն նորեկներ, որոնք դեռ
չեն ընկել բոլորովին… գուցէ… և Աստուած տայ որ հանդի-
պէք այդպէսների. բայց, ես ձեզ կասեմ, եթէ ընկերներ գըտ-
նէք և ինձ ևս պէտք ունենաք՝ պատրաստ եմ:

— Շնորհակալ եմ. ե՞րբ տեսնւենք նորից:

— Ամեն երեկոյ ես զբօսնում եմ այստեղ: Եւ դուք էլ լաւ կա-
նէք, որ գաք զբօսնելու, երբեմն էլ այդ կլուբը մտէք. ձեր բո-
լոր ծանօթներին գուցէ այստեղ գտնէք կամ խաղասեղանի,
կամ շիշերի և կամ կանանց կողքին…

Թ.

— Ո՞վ է այն, Իւան…

— Մենք ենք, պարոն կառավարիչ… լսում է մի դող-
դոջուն ձայն դռան մօտից:

— Ի՞նչ էք ուզում, ներս եկէք, տեսնենք:

Ու սենեակ են լցւում միմեանց ետևից 5—6 աղտոտ շո-
րերով, սև, կեղտոտ ձեռքերով ու դէմքով գործաւորներ:

— Լա՛ւ, լաւ, այդտեղ, դռան մօտ կանգնէք և ասէք
տեսնենք ի՞նչ էք ուզում:

Գործաւորները կծկւում են դռան կողքին ու յոգնած,
դողդոջուն ասում:

Սուրէնեանը իր նախկին ընկեր, Ցիւրիխի համալսարանն աւարտած, յետոյ մի քանի տարի էլ Ռուսաստանի մայրաքաղաքներում անցկացրած Կարապետեանի մօտն էր: Այժմ այդ պարոնը Բալախանիում մի հարուստ հանքատիրոջ գործերի կառավարիչն էր:

Շատ լաւ էր ընդունել Սուրէնեանին, խնամատար ժպիտով իր մօտ նստեցրել, կոնեակ խմեցրել, յետոյ կոֆէ, ճաշ և այդ գիշեր հիւր պահել: Երեկոյեան էլ, իր նախկին ընկերին՝ տեղական ինտելլիգէնտների հետ ծանօթացնելու համար, հեռախօսով հրաւիրել էր 5—6 ինժինէր, համալսարանական, նախկին հայ-ուսուցիչների և այժմ երկու սեղան դրած՝ թուղթ էին խաղում, մինչև որ ընթրիքը պատրաստւէր:

Կարապետեանը Սուրէնեանին իր մօտ էր նստեցրել և շատ մտերմաբար, խաղի ընթացքում, խօսում էր, վիճում, հին ծանօթների կիշողութիւններից պատմում, Ցիւրիխի իր հին ծանօթների մասին հարցնում և միւս կողմից սակայն երբէք չէր սխալւում խաղալը:

—Հարիւրանոցը իմն է, գոչում էր նա:

Եւ երբ նոր խաղաթղթեր էր բաց անում, սեննակի դուռը ճռնչացել էր և շէմքի վրայ երևացել մութ ու աղտոտ դէմքերը:

—Հ՞ը... շարունակեց Կարապետեանը իր խաղը և առանց գործաւորներին նայելու—ասէք տեսնենք, ինչ էք ուզում... էտքան հոգի ինչու՞ էք եկել, գործ չունի՞ք...

— Ոչ, աղա, ասաց մէկը — մենք պրծել ենք մեր գործից:

Ցետոյ քիչ առաջ եկաւ և աղերսաւոր՝ աւելացրեց.

—Խղճա մեզ, պ. կառավարիչ, հախները մի՛ կտրիր. մենք ինչ անենք, որ անցեալ գիշեր...

—Հ՞ը, ինչ... միջահատեց նրան Կարապետեանը զայրացած—էլի՛... չէ՛, չէ՛, գնացէք, իզուր խօսքեր պէտք չեն... գնացէք այժմ հիւր ունիմ:

—Պ. կառավարիչ, արզըս առ մէկ... Անցեալ գիշեր որ այն գործիքները գողացել են, հրամանքդ գիտես որ մենք չենք

գողը, ինչու՞ տասն հոգու մի քանի ամսւայ քրտինքը կըտրում ես...

Կարապետեանը բարկութիւնից զունատ, թղթերը ձեռքին վեր թռաւ ու գոռաց,

—Դո՛ւրս, դո՛ւրս, անպիտաններ. դեռ շնորհակալ չէ՛ք որ բոլորովին չեմ արձակել ձեզ, բանտ չեմ ուղարկել. ձեր հերթապահութեան ժամանակն է գողացւել՝ ուրեմն դուք էք արել: Ես իմ գրպանի՞ց տամ գործիքների գինը. ինչ պարտաւոր եմ ձեզ, ինչու՞ խաղէինը (հանքատէրը) ինձ վրայ խօսի... դուրս գնացէ՛ք. ձեր ռոճիկները չէ՛ք ստանալ մինչև գողացած ապրանքը չըգտնէ՛ք...

—Պ. կառավարիչ...

—Խօսք պէտք չէ՛... աւելի բարկութեամբ և բարձր գոռաց Կարապետեանը — Իւան, դուրս ձգիր այդ յիմարներին...

Ռուս ծառան դուրս սկսեց հրել խօսողներին և նրանց հետ մթան մէջ դողդողացող թշւառներին:

Կարապետեանը նստեց նորից, խաղաթղթերը զննեց և խաղը շարունակեց:

Սուրէնեանը ճնշած սրտով տեսաւ ու լսեց բոլորը: Երևի Կարապետեանը զգաց որ այդ տեսարանը վատ ազդեց Սուրէնեանի վրայ, ուստի դարձաւ դէպի նա և ասաց.

—Ահա՛, Սուրէն, դու խօսում ես սկզբունքների, իդէալի, խօսում ես գործի և այլն մասին... Այդպիսիների մէջ և այսպիսիների համար գործել. գործիքները գողանում են, ծախում, կառավարչին վատ դրութեան մէջ դնում և դեռ համարձակւում են... Ո՛չ, սրանք միայն մտրակի են սովոր և առանց կոպտութեան սրանց հետ խօսել չի լինի, իսկոյն գլխիդ են նստում, երես առնում, գործն էլ փչացնում և քեզ տիրոջդ մօտ խայտառակ դարձնում:

—Բայց գուցէ իրաւապէս մեղաւոր չեն դոքա, առարկեց Սուրէնեանը...

—Մեղաւոր չէ՛ն... ձայնեց մի նախկին հայ ուսուցիչ—դուք դեռ նոր էք և չըգիտէք մեր ճայտեղի գործաւորներին.

եթէ չըգողանան՝ կարո՞ղ են ամսական 15 րուբլիով ապրել,
հագնուել, կիրակի օրերը քէֆի գնալ և գեռ իրենց ընտանի-
քին էլ մի բան ուղարկել:

—Իսկ ես ձեզ կասեմ, որ դուք էք սխալը. մէջ մտաւ մի
ինժինէր—գոնէ սխալ էք տրամաբանում այստեղ, գործաւորը
կարող է գողութիւն չանել և այնուամենայնիւ այդ բոլոր ձեր
ասածները, բացի քէֆից, անել: Ես տեսել եմ և գիտեմ թէ
նոքա ինչպէս են ապրում. մեր շների ապրուստը նրանցից լաւ
է... իսկ թէ այդ եկող գործաւորները գործիքները գողացել
են կամ գիտեն թէ ով է գողը—այդ փաստ է, ես նրանց դէմ-
քի վրայ կարդացի այդ:

Ինժինէրի գլուխը քիչ տաք էր և այդ էր պատճառը որ
այդ տաք գլխի մէջ հին իդէալիստի մտքերը խառնւում էին
նոր կարիերիստ եղած անձի մտքերի հետ ու միմեանց հակա-
սում:

—Դուք բոլորդ ոչինչ չըգիտէք, յանդգնութեամբ ստեց
Կարապետեանը—իսկ ես ճիշտ լուր ունիմ որ գողերը դոքա են,
բայց դուրս չեմ անում, որովհետև նախ որ գողացած բանը
մի քանի չնչին երկաթի կտորներ են՝ հազիւ 10–20 րուբլի
արժողութեամբ և երկրորդ որ դոքա լաւ գործաւորներ են:

—Անշուշտ ռոճիկներիցը հանել ես ապրանքի գինը, խօ-
սեց սառնութեամբ մի ուրիշ ինժինէր—իմ սովորութիւնն այդ
է, ես երկար-բարակ քննել-բան չըգիտեմ. ի գուր ժամանակ
է կորսւում. ուղղակի ռոճիկներից կտրում եմ և վերջացաւ.
այդ է պատճառը որ ինձ մօտ գողութիւն երբէք չէ պատա-
հում:

—Ես էլ այդպէս եմ արել. ասաց Կարապետեանը—տես-
նում եմ որ միակ միջոցն այդ է. սկզբում քննութիւն էի բաց
անում, երկար-բարակ կանչում, հարցափորձի ենթարկում,
խուզարկութիւններ անել տալիս՝ և անհետևանք մնում...

—Այո, ժպտեց հեգնութեամբ ինժինէրը — անփորձ ես
եղել:

—Իսկ այժմ, շարունակեց Կարապետեանը—ուղղակի... և
վերջացաւ, ժամանակ էլ չեմ կորցնում որոնելու թէ գողը ով

է եղել... բայց շարունակենք խաղը... Իւա՜ն (դարձաւ նա ծա-
ռային)—ընթրի՜քը...

—Դեռ պատրաստ չէ, ձերդ ազնուութիւն.

—Ըհօ՜, ծիծաղեց հայ ուսուցիչը—ձերդ ազնուութիւն ես
դարձել:

—Դու ի՜նչ գիտես, յանդիմանեց նրան ինժինէրը—ռուս
ծառան պատկառանք է զգում միայն դէպի «ձերդ ազնուու-
թիւնները»... Կարապետեանը գիտէ այդ բոլորը... Դու չես
խաղում, ինչ է.

—Ո՛չ, ես միաս. ասաց հայ ուսուցիչը:

—Դու արդէն վաղուց միաս ես, քրքջաց Կարապետեանը
—կոնեակը զօռ է տուել հա՜ ա՜... Ապա՜, մէկ թառդ ձեռք առ, մի
լաւ սէգեահ՚ածիր՝ լսենք... Դու ինչպէս ես ասիական երաժշտու-
թեան հետ, Սուրէնեա՛ն, սիրո՞ւմ ես:

—Սիրում եմ...

—Գիտե՞ս ինչ է, մենք ասիացի ենք, մեր ականջը վարժ-
ուել է մեր եղանակներին, մեր ջղերը՝ մեր սովորութիւններին,
մենք եւրոպացի չենք կարող լինել, չէ:

—Տեսնում եմ այդ. ասաց Սուրէնեանը—Եւրոպայում դու
ուրիշ էիր. թունդ սոցիալիստ, գործաւորների դրութեան վը-
րայ ցաւող, երազներ կազմող, իդէալների մասին ճառող...

—Հա՜, հա՜, հա՜... քրքջաց Կարապետեանը—ճիշտ որ, յի-
շում եմ, այո... ինչ կատաղին էի է՜, ցոյց չէր լինի, որ ես
չըմասնակցէի, ամեն տեղ ես կայի, խօսում էի... Էհ, եղբայր,
նրանք երեխայութիւններ էին, ջահելութիւն... Այս մեր եր-
կիրներին, այս նէֆտի մէջ ի՜նչ երազներ, ինչ իդէալներ... Ի՞ն-
չու, ո՞ւմ համար. մարդիկ առանց դրանց աւելի լաւ են ապ-
րում: Բաւական չէ՞ գոնէ, որ ոչ խլում եմ, ոչ էլ հարստահա-
րում. գլուխս քաշ իմ գործին եմ և ոչինչի չեմ խառնւում...
Ւ սաղա՜, Մելքօն, ահա կողը... Եւ ինչու խառնւել, հա՜, երբ
քեզ չեն հասկանում, երբ իդէալներդ, ձգտումներդ ծաղր են
շարժում... Ահա մի կողը էլ, այդ իմն է... մանաւանդ երբ
տեսնում ես որ ասածներդ ո՛չ միայն չինարէնի պէս անհաս-
կանալի են, այլ և քեզ անօթի ու մերկ են թողնում..

Յետոյ լռեց, կաւիճով մի քանի թիւ գրեց սեղանի վրայ և երբ նորից թուղթ էին բաժանում, նայեց ուղղակի Սուրէ-նեանի երեսին ու ժպտելով աւելացրեց.

—Եւ երբ մանաւանդ՝ տեսնում ես որ բոլոր իդէալ կո-չածներդ մի նշանախեց անգամ չեն շեղում մարդկանց այն ցե-խոտ ճանապարհից, որով քայլում են և որից գոհ են...

—Ի՞նչ արած. եղբա՛յր, խօսեց հայ ուսուցիչը, որ թղթախաղը լարելու ժամանակ լսել էր Կարապետեանի վերջին խօսքերը—ի՞նչ արած. ինչ որ անես՝ մեզ մօտ ճանապարհները միշտ ցեխոտ, նէֆտոտ կըմնան. ուզես՝ չուզես՝ ճանապարհդ այդ է. խօ օդով չե՛ս թռչելու...

—Շատ ճիշտ է, ասաց Կարապետեանը Սուրէնին—խօ օդով չե՛ս թռչելու...

—Ի՞նչ կուզէք ասէք, մէջ մտաւ մի համալսարանական —ես սիրում եմ այդ ցեխոտ ու նէֆտոտ ճանապարհները և մի առանձին հաճոյքով ոտքս կոխում եմ նէֆտի, ցեխի մէջ.. կեանք կայ այդ ցեխի մէջ, փող կայ... Նէֆտը գիտէ՞ք ինչ բան է. արիւն է արիւն... առանց նրան ապրել չէ կարելի այստեղ:

—Փոքրոգի ես դարձել. մրմնջեց Սուրէնեանը Կարապե-տեանին:

Կարապետեանը չըվիրաւորուեց, միայն հեգնութեամբ ժպտեց և շարունակելով խաղալ՝ ասաց.

—Մի ձեռքը ծափ չի տալ, եղբա՛յր. և եթէ շարժես էլ, երեսիդ ապտակ կըտաս... Ամբողջ 3—4 ամիս ես էլ քեզ նը-ման էի մտածում. բաւական թփրտացի, դոռացի. բայց ինձ վրայ նախ ծիծաղեցին, յետոյ անօթի թողին... իդէալիստ մարդկանցից խորշում են... Դու կարդացե՞լ ես Իբսէնի «Վայ-րենի բադը»:

—Կարդացել եմ:

—Յիշո՞ւմ ես վերջին արարուածը, երբ ըստ ձեզ «ցինիկ», իսկ ըստ մեզ «կեանքի գործնական մարդ» բժիշկ Րէլլինգը ասում է Վերլէ-որդուն թէ՝ «Մի գործածէք այդ *օտար բառ*—իդէալը»... և աւելացնում է թէ՝ «կեանքը կարող է գեղե-

ցիկ լինել, եթէ միայն մեզ ազատէին այնպիսի մարդկանցից,
որոնք խծկւում են մեր մէջ՝ իրենց «իդէալներով»...
– Այդ ինձ ես ակնարկում. դէմքը կնճռեց Սուրէնեանը:
—Քե՞զ... հա՛ հա հա՛... բայց ոչ. ինչու ես կարծում որ
—Քե՞զ... հա՛ հա հա՛... բայց ոչ. ինչու ես կարծում որ
դու իդէալիստ ես. դու միայն «նոր» ես, ուրիշ ոչինչ. ամեն-
քըս ենք քեզ պէս եղել սկզբում. բայց կըզգաստանաս, միայն
մի քանի ամիս՝ և էլ ո՛չ մի իդէալ, ո՛չ մի երազ՝ գլխումդ.
միայն նէֆտ, նէֆտ և նէֆտ... այդ կըտեսնես... դու կըտես-
նես որ մեր՝Եւրոպայից բերած նոր քամիներով մենք խծկւում ենք
միայն այնտեղ, ուր մեզ և մեր քամիներին սկի պէտք չունին...
Զգոյշ կաց որ 13-րդը լինելուց շուտ ազատուես. այդ աւելի
խելօք բան կըլինի... թէ չէ՝ վաղ թէ ուշ՝ էլ ո՛չ մի քամի
չի մնալ գլխումդ... Դէհ. վարժապետ, մի լաւ բան ածիր որ
Սուրէնեանը լսի... Հօ քաղցած չե՛ս, Սուրէն, մի գակուսկա
արա՛...
—Ո՛չ, շնորհակալ եմ, դու ինձ կըշտացրիր:
—Ո՛չ, շնորհակալ եմ, դու ինձ կըշտացրիր:
—Փո՛ւհ, ի՞նչ սանտիմանտալութիւն... իդէալը, եղբա՛յր,
հաց չէ տալիս, իդէալը այսպէս տաք օթոց չէ մատակարա-
րում և ոչ էլ կոնեակ... իդէալը միշտ անօթի է, լալկան և ո-
ղորմելի... իսկ նէֆտը—դա ուրիշ բան. դա ոյժ է, բռունցք
է, անկախութիւն է... արիւն է... Խաղացէք, թղթերս լաւ
են, հոգիներդ պիտի հանեմ...
Ու մի զւարթ ծիծաղ արձակեց:
Ուսուցիչը սկսեց նայել: Սուրէնեանը լուռ և դառնա-
ցած՝ մի գիրք առաւ ու սկսեց ջղայնութեամբ թղթատել:
—Դեռ նոր է, կըվարժի... լսեց յանկարծ մի ձայն սե-
նեակի անկիւնից:
Միւս սեղանի մօտ նստող ինժինէրներից մէկն էր, որ
միայն այդ բառերը արտասանեց ամբողջ երեկոյեան ընթաց-
քում:
Սուրէնեանը բարկութեամբ գիրքը դէն շպրտեց և ոտքի
ելաւ:
—Ես չեմ մնալ այստեղ որ վարժուեմ տիղմի ասաց նա
ղողդոջուն—ես կըհեռանամ Բագուից:

Կարապետեանը մի քրքիջ արձակեց ու ասաց.

—Տասներեքերորդը, ուզում է 13-րդը լինել... խեղճ Սուրէնեան:

Եւ ուսուցիչը ուշադրութեամբ նայում էր, խաղացողները ծիծաղելով շարունակում էին խաղը ու դրսից լսում էին շոգեկառքերի, մեքենաների գրգռիչ—մի ճնշող, կարծես խեղդող գրգռիչ:

Փ.

Սիրելի Էմմա.

Գրում եմ քեզ Բաքուից և փախչում այդ քաղաքից, ինչպէս ժանտախտի բնից: Մտաւոր ժանտախտը սպանել է այստեղ և սպառնում է սպանել ամեն ինչ որ լաւ է, ինչ որ մաքուր է, ինչ որ ազնիւ է: Ով մտնի այստեղ, վաղ թէ ուշ, մնում է երկու բան անել. կամ խրւել տիղմի մէջ մինչև վիզը և կամ, քանի շուտ է, փախչել այստեղից, փախչել որքան կարելի է շուտ, փախչել առանց ետ նայելու. Թող քեզ փոքրոգի, թոյլ կոչեն, բայց փախնելը ամենալաւ, ամենաարժանաւոր միջոցն է՝ ազատւելու տիղմից, չկորցնելու մէջդ եղած մի բուռը լաւ բանը. Թող որ ես փոքրոգի լինեմ, բայց մի ամիս եւս մնալ, այդ նշանակում է ոչնչանալ, այդ նշանակում է գործի փոխւել և ճահիճի մէջ որոնել հանգստութիւն...

...Գործելու ասպարէզ չըկայ, բոլորովին չըկայ, (գրում էր Սուրէնեանը քիչ յետոյ) մարդ պարտաւոր է սոսկալի խղդութիւնների ականատես լինել, ստիպւած է լռել՝ որովհետև անապատի մէջ է հնչում ձայնդ... կաշկանդւած ամեն կողմից՝ երկու ճանապարհ է մնում. կամ թաթախւել եղած ցեխումը և ապրել նրա մէջ և կամ իբր խենթ, խռովարար, հիւանդ նկատւել, քշւել հեռու, խուսափել ամենքից և յոկ երազել...

Այո, կասես դուցէ Դոքտոր Շտոկմանի պէս՝ թէ «Մինակ մարդը ամենքից զօրեղն է»: Համաձայն եմ՝ այդ խօսքերը վերացականապէս հասկանալով. բայց գործնականում չեմ կարող կարծել որ մինակ մարդը կարող լինի գործելու մտածել. ինչ գործի՝ իր զօրեղութեամբն հանդերձ. գոռայ անապատի մէջ, կոկորդը պատռի աւազներին խօսելով և միայն իբր պատասխան՝ քրքիջ ստանալով.. Մենք պալիաներ ենք եղել, մեզ հիւանդ, խենթ են անւանում: Ի՞նչ անել ուրեմն. երազներով կերակրւել, օդի մէջ դղեակներ կառուցանել: Ո՛չ, սա անտանելի է և ես վճռում եմ թողնել ամեն բան և գալ քեզ մօտ... և կամ, և կամ .. գնալ մտնել ժողովրդի մէջ կենդանի խօսքերով. միանալ այն անձերին, որոնք ապագայ մեծ յոյսերով՝ գնում են անձնազոհ լինելու և գիտեն մեռնել...»

Սիրելի Սուրէնեան.

Չես զարմանում որ Էմման հայերէն է գրում քեզ. անշուշտ կըզարմանաս. բայց գնալուցդ ի վեր ես պարապում եմ այդ լեզուով և ահա մի ժամ նստելուց յետոյ կարողացայ այս երկտողը հայերէն լեզւով գրել քեզ: Գիտէի, ամեն բան զգում էի. շատ ցաւում եմ որ շուտով յուսահատւեցիր.. բայց ներիր, էլ հայերէն գրել չեմ կարող. մնացածն էլ գերմաներէն կըգրեմ:

(Գերմաներէն) Նամակդ ստացել եմ. ես պատրաստ եմ փող գնել, եթէ լրագիր հրատարակելու միտքդ յաջողւէր. վերջին նամակդ տխուր էր: Մի հնարք է մնում և այդ ես գործադրում եմ: Ահա՛: Հաշւիր նամակս ստանալուցդ մինչև ճիշտ 30 օր և 30-րդ օրը Օդեսսա եկ ու երկաթուղու կայարանում սպասիր ինձ: Զարմանո՞ւմ ես որ գալիս եմ: Այո, գալիս եմ և մի հայ պարոն էլ, քեզ ծանօթ Փարիզի պարոնն էլ ինձ հետ: Մենք մի բան ենք մտածել և գալիս եմ քեզ մօտ, քո կողքին լինելու, որ միասին գործենք: Ես դեռ յոյս ունիմ, ես մտածում եմ որ կարելի է շատ բան անել, որ կարելի է ճահիճի մէջ թարմ ջուր բաց թողնել: Եւ գալիս եմ: Հայրս ու մայրս խրատունք տւին ինձ այս ամառ գալ քեզ մօտ, յետոյ, ձմեռը կըվերադառնանք: Այդ յետոյ կըմտածենք: Անհամբեր եմ դեռ գալու, աչքովս տեսնելու ամեն բան: Այդպէս ուրեմն, իմ սիրելի Սուրէն, քաջ կաց, ես գալիս եմ: Մի ամսից յետոյ քեզ

մօտ կըլինեմ և երբ Օդեսսա հասնես, հեռագրիր ինձ հասցէդ, որ ես հեռագրեմ թէ երբ կըհասնեմ: Նամակ գրիր մինչև այն ժամանակ և դարձեալ ուսումնասիրիր ազգդ. քիչ էլ գաւառները գնա, թող այդ երկու քաղաքները, թող Բագուն. ինձ ասել են որ դա մի assomoire է, մի զզուելի աղբանոց... Թող, գնա գաւառները, քիչ շրջիր և աւելի ծանօթացիր նոցա հետ: Եւ, եթէ կարող ես, գտիր ինձ համար այդ «խենթ, անվարւեցող, կռւարար» կոչուող անձերից որքան կարող ես՝ շատ. դոքա են այն մարդիկ, որոնց խմբուած ոյժը պիտի ապագայում չորացնի ճահիճներ, ծաղկեցնի անապատը և մաքրի աղբանոցը... Գտիր և խմբիր նոցա մինչև գալս...

Դու ինձ գրել ես մի քանի գրագէտների և մի Վարդանեանի մասին. մի թողնիր որ նոքա հոգեպէս ընկճւին և հայի համար՝ ստիպւին «զիջողութիւններ» անել ու «վարւեցող, խելօք, համակերպող» դառնալ. թող գոռան, թող կռւեն, թող խռովեն ամենքին, թող միշտ բռունցքը սեղմած, լեզուն խայթիչ, ճիրանները սրած պահեն. օգնիր նոցա փողով, փոխ տուր, ամեն բան արա, միայն թէ թող միշտ մնան այդպէս «խռովարար, ըմբոստ և խենթ»... Բոլոր վերանորոգիչները կոչուել են այդպիսի պատուաւոր տիտղոսներով. ես ուրախ եմ որ կան ձեր մէջ այդպիսի խենթեր, մի թողնիր որ ոգեսպառ լինին, քեզ չէկ եմ ուղարկում 1000 ֆրանկի, տուր նոցա, թող միշտ խենթ ու ըմբոստ մնան, թող անխնայ ձաղկեն աջ ու ահեակ եղած ճահիճը, խայթեն «խելօքներին», բռունցքով արնոտեն «վարւեցողների» քիթն ու բերանը, ճիրաններով ծւատեն «համակերպող» ինտելլիգենցիային... Այդպիսի մարդիկ, այդպիսի զինուորներ են պէտք մեզ... Այդպէսներով կարելի է տիղմը չորացնել և վարդ բուսցնել նրա վրայ: Ձեռք տուր նոցա, պինդ սեղմիր այդ ձեռքերն ու ճիրանները և վառ պահիր նոցա մէջ եղած ու եռացող սիրտը և... որքան կարող ես, որոնիր, գտիր ու համախմբիր այդպիսի «խենթերը» ու թքիր «խելօքների» քրքիջների, «վարւեցողների» լուտանքների վրայ...

Աշնան սկիզբներին, Երասխ գետը անցնելով Պարսկաստան էին մտնում հինգ ճանապարհորդ: Ֆրանսերէն էին խօսում, բայց տիկիններից մէկն էր միայն օտարազգի, իսկ երեք պարոնները և երկրորդ տիկինը հայեր էին:

Բոլորն էլ Թաւրիզ էին գնում: Երասխից անցած նոքա կառք նստան: Երկու տիկինները իրենց ամուսինների հետ տեղաւորուեցին մեծ կառքի մէջ. ունեցած բեռները կապեցին ջորիների վրայ, իսկ պարոններից երրորդը ձիով քայլում էր կառքի կողքից և մասնակցում խօսակցութեան:

Խօսում էին գիւղերի, տպարանի, թերթի, նոր շրջանի և նոր գործունէութեան մասին. խօսում էին տաք-տաք, վիճում էին, ծրագիրներ կազմում և անհամբերութիւն էին ցոյց տալիս շուտով տեղ հասնելու:

—Բժշկին հեռագիր տուիր այստեղից, Սուրէն, հարցնում էր օտարազգի կինը իր ամուսնուն:

—Տուել եմ, անհոգ կաց. վաղը չէ, միւս օրը նա մեր հանդէպ կըգայ իր տիկնոջ հետ:

—Գիտես, ես շատ ուրախ եմ որ այդպիսի մի տիկնոջ պիտի ունենամ ընկերուհի. պարոնը (և նա ցոյց տուաւ ձիաւորի վրայ) ասում է թէ նա լաւ գիտէ անգլիերէն և ֆրանսերէն... գիտես, մինչև իմ լաւ հայերէն սովորելը...

—Բայց դուք արդէն քիչ խօսում էք և բաւական հասկանում. ասաց կառքի միջի հայ տիկինը դժուարութեամբ ֆրանսերէն խօսելով:

—Եւ բացի դրանից, տիկին, մէջ մտաւ ձիաւորը—այնտեղ կան պատուական վարժուհիներ և ուսուցիչներ—բոլորն էլ լաւ մարդիկ, որոնք երկու ամսուայ մէջ ձեզ կըսովորեցնեն մեր լեզուով ազատ խօսել:

—Դուք ինձ միշտ քաջալերում էք. ժպտեց նրան օտարազգի տիկինը—կուզէի շուտ հասնել այդ բոլորի հետ ծանօթանալու, բոլորին իմ շուրջս ունենալու համար:

—Միթէ այս ճանապարհորդութիւնը քեզ չէ հետաքրքրում, Էմմա. հարցրեց ամուսինը—չէ՞ որ առաջին անգամն է

որ մտնում ես արևելք. անմշակ անապատ, կարաւաններ քարւանսարաներ...

—Այո, ի հարկէ. բայց միտքս այժմ գործով է զբաղւած. յետոյ, յետոյ. երբ քիչ կըհանգստանանք, քիչ գործի կըսկսենք, այն ժամանակ դուրս կըգանք՝ երկրի հետ լաւ և մօտից ծանօթանալու համար։

—Իսկ տպարա՞նը, տպարանը ասացիք լա՞ւ է. հարցրեց կառքի միջի միւս երիտասարդը՝ ձիաւորին։

—Ինչպէս ասել եմ ձեզ՝ վատ չէ. տառեր ու մի քանի գործիքներ են պակաս, դրանց էլ բերել տալը դժւար չէ։ Եղածով կարելի է առ այժմ մի բան անել։

—Քո միտքը միշտ թերթի հետ է, Վարդանեան, ասաց զւարթութեամբ Սուրէնեանը՝ ընկերոջ—բայց չես մտածում որ դա դեռ հեռաւոր ապագայի ծրագիր է։

—Ո՛չ, ո՛չ, մէջ մտաւ Խմման, երբ թարգմանեցին նրան Սուրէնեանի ասածը—առանց ուշացնելու՝ այդ մասին էլ կըսկսենք հոգալ. ինչ պակաս է՝ կըգրենք կուղարկեն, յետոյ կաշխատենք արտօնութիւն ստանալ և երբ այդ բոլորը եղաւ, Թիֆլիզից կըկանչենք մեզ մօտ երկու գրողներին...

—Այդ բոլորը լաւ է, բայց փող շատ կերթայ. ասաց մըտախոհ՝ Վարդանեանը։

—Ի՞նչ հոգ. գոչեց Խմման ժպտելով—հայրս ինձ օժիտ է տւել. բոլորը, մինչ յետին կոպէկը գնում եմ այդպիսի գործերի համար... համաձայն չե՞ս, Սուրէն։

—Բոլորովին, ծիծաղեց Սուրէնը և ապա՝ աւելացրեց—հոգ մի անիլ, մենք մի-մի թեթև գործ կըգտնենք՝ հաց ունենալու համար։

—Իսկ թերթի անո՞ւնը, անո՞ւնը. բացագանչեց Վարդանեանը բորբոքւած—անուն դեռ չեմ գտնում։

—Դեռ չըգտա՞ր. ծիծաղեց կինը—Նախիջևանից ի վեր անուն ես որոնում։

—Նայիր, Խմմա՛, ասում էր այդ միջոցին Սուրէնեանը Խմմային—ահա ուղտի կարաւան է գնում. ֆանտաստիքական է չէ՞. այդ անապատը, ամայի ահագին տարածութիւնը, ջինջ

երկինք, ուղտերի վզի զանգակները... ուղտապանները պարսիկ չըկարծես, թուրքեր են. պարսիկները շա՛տ աւելի ազնիւ դըմագծեր ունին և շատ նման են եւրոպացոց։

Եւ կառքը փոշի հանելով անցաւ հանդարտ ու օրօրւելով քայլող ուղտերի շարքի մօտով։

Ճանապարհորդները, ինչպէս երևի արդէն իմացաւ ընթերցողը, Սուրէնեանն էր իր կնոջ՝ Խմմայի հետ. ամուսնացել էին Անի, Վարդանեանն էլ ամուսնացած մի հայ վարժուհու հետ և Պարսկաստան քանիցս ուսուցիչ եղած կովկասցի մի պարոնի ընկերացած գնում էին Թաւրիզ։

Գնում էին ոգևորւած. դպրոց, լրագիր, գրականութիւն, հասարակական այլ գործեր, ժողովրդի մէջ մտնել, խօսել, սովորեցնել—ահա նոցա ծրագիրը։ Գնում էին հող պատրաստելու, կեդրոն լինելու այնտեղ գտնւող, բայց դեռ ցրւած երիտասարդութեան, գնում էին համախմբելու և կազմելու մի նոր շրջան՝ հեռու Կովկասի քացախած ու ապականութեան համակերպող ինտելլիգէնցիայից. գնում էին՝ գումարելով իրենց շուրջը բոլոր «խենթ, ըմբոստ, կռւարար և անվարւեցող» կոչւած երիտասարդները և երազելով կազմելու հայրենիքի մի անկիւնում մի նոր ինտելլիգէնցիա՝ նոր հովերով և նոր, մաքուր վսեմ անկեղծ ձգտումներով...

Իսկ թէ որքա՛ն պիտի յաջողեն նոքա—այդ ապագան ցոյց կըտայ։

Անկարելի ոչինչ չէ կարող լինել շարժուն, գործել ցանկացող, նիւթական միջոցներից ո՛չ զուրկ և գործին նուիրւող երիտասարդութեան համար. մանաւանդ այնտեղ, ուր հնարաւոր էր բորբոքեցնել և ազատ աճել տալ Կովկասի ինտելլիգէնցիայից հալածւող կենսական ու յառաջադէմ մտքերը...

Մինչև այժմ էլ այնտեղ են նոքա. Պարսկաստանի մէջ տարածւած երկրի զանազան խորշերում և միշտ եռանդուն, միշտ համեստ և միշտ շարժուն։

Այնտեղ է Խմման, որ տարին մի անգամ գնում է ծնողների տեսնելու, քիչ կազդուրւելու և ապա վերադառնում է

...ССР

թարմ ույժերով։ Այնտեղ է Սուրէնեանը—այժմ ուսուցիչ, գրող քաջալերուած Իմմայի օրինակից. այնտեղ է և՛ Վարդանեանը՝ ջերմ խօսող, շարժուն գործող։

Իսկ երբ յաջողւի թերթի հրատարակութիւնը, այնտեղ կը-գնան և ա՛յն հայ գրողները, որոնք վաղուց ի վեր զզուած ու հեռացած կովկասահայ մամուլի աղտոտ, անկեալ և իր անկումովը պարծեցող դրութիւնից—հեռու կանգնած՝ սպասում են մի նոր միջոցի՝ իրենց կուտակած և պայթելու պատրաստ ույժերը երևան հանելու համար։

Եւ Իմման, որ ոգին է այդ բոլոր շարժման, Իմման, այդ *օտարազգի աղջիկը*, իր օժիտի, իր աշխատութեան վարձի յետին կոպէկները չխնայելով մէկտեղ՝ այնպէս է գրաւել և այնպիսի եռանդուն կերպով օգնում է գործին, որ իր ամբողջ վսեմ ընթացքովն 'ներկայացնում է մի ուժգին, կարմրեցնող ապտակ՝ նետուած հայ հարուստ, օժտուած և կարող աղջիկների դէմքերին...

Վ Ն Ր Զ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հեղինակի միւս, առանձին գրքերով լոյս տեսած աշխատութիւնները.

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ . . . . (1891)
ՃԳՆԱՒՈՐ ԵՂՕ . . . . »
ԵՆԻՉԵՐԻ . . . . »
ԼԱԼՕ . . . . »
ԹՕՓԱԼ . . . . »
ՊԱՐՍԿԱԿԱՆ ՋՐՈՅՑՆԵՐ . . . . »
ԳԻՆԵԳՈՐԾԻ ԱՂՋԻԿԸ . . . . (1892)
ԵՐԵՔ ՊԱՏԿԵՐ . . . . »
ՔՐՔԻՋՆԵՐ . . . . »
ԹՈՄԱՍ ՔՈՅԱՐԻՍ . . . . (1898)
ՄԱՐԴԸ՝ ՄԱՐԴՈՒՆ ԳԱՅԼ . . . . (1890)
ԽԱԹ-ՍԱՔԱ . . . . (1896)
ՏՈՒՐԻՍՏԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . (1898)
ԱՆՅԱԳԸ . . . . (1899)
ՍԱ՛ՆԹՕ . . . . (1900)
ԳԾԵՐ . . . . (1901)
ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ . . . .

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

ճանապարհածախսով 1 ր. 25 կ.